2154

Rechentafel

84
Z-66

Johann Ehrenfried
1868



2011

84-31
3/6

Աստրախան

ար.

ՎԻՊԹՈՐ ՀՅՈՒԳՕ

ԹՂՈՒԱԹՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԴՐ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Երկրորդ հատոր

ՏԻՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԻՏԻԵԱՆ

2003

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԻՏԻԵԱՆ
1868

ԹՂԹԱՏՈՒՆԻՑ

15193

84
Հ-66

ՎԻԳՖՕՐ ՀՈՒԳՕ

ԹՂՈՒԹՔՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Գ.Ր. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ.— ՓԱՆԹԻՆ

Երկրորդ հատոր

1003
31/55

ՏԵՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԳՈՐԾՈՅՍ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՒԱՆ

ՀԱՓԲՈՒՓԵԱՑ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՒԵՆ

1868

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
С.С.Р.А.
7/XI-1922
Москва, Мясницкая
Ա. ՅՈՎՍԵՓՅԱՆԻ ԱՆՎԱՆ

37010 ան.

ԹՂՈՒԱԹՆԵՐ

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ՅԱՆՁՆԵԼԸ ԵՐԲԵՄՆ ՄԱՏՆԵԼ Է

ՓԼՈՒԹՈՍ ԱՔԱՁԱԾ

ՄԱՑՈՐ ՄԸ ՈՐ ՈՒՐԻՇՄԱՑՈՐԻ ՄԸ ԿԸ ՀԱՆԳԻՊԻ

Ներկաց գարուս սկիզբները Մօնֆերմէյլ գիւղին մէջ՝ որ Բարիզի մօտ է՝ անշուք խոհատուն մը կար։ Այս խոհատունը քանեցնող անձերը երկու հոգի էին, էրիկ և կնիկ, և կանուանէին Թենարտիէ։ Պուլանժէլի պզտի փողոցին քովը էր այն, և դռան վերևը պատին վրայ բևեռուած տախտակ մը կը տեսնուէր։ Այս տախտակին վրայ քանի մը նկարուած էր և կը նմանէր կոնակը ուրիշ մարդ մ'առած մարդու մը, կըռնակի մարդը արծաթեայ լայնաձև խաչերով զօրապետի մեծ ուսադիրներ ունէր, 'ի նշան արեան կարմիր բիծեր կը նըշմարուէին, իսկ պատկերին մնացորդ մասը միզապատ էր՝ դուցէ պատերազմ մը նեղկայելու համար։ Պատկերին վարը գրուած էր

ՎԱԹԵՐԼՕՑԻ ՅԻՇՆԱՊԵՏԻՆ

Պանդոկի մ'առջև հատարակօրէն խճակիր սայլ մը կամ սայլիկ մը կրնայ դանուիլ։ Բայց 1818ի գարնան ժամանակ իրիկուն մը Վաթերլոյի Յիսնապետին խոհատունին առջև կառք մը կամ լաւևս է ըսել կառքի մաս մը կար որ ճամբան կը թափանէր, և որ իր ծաւալովը կրնար պատկերահանի մ'ուշ

21152-60 ք

շադրութիւնը պրաւել եթէ իրօք պատկերահան մ'անոնցմէ ըլլար անկէ։

Անտառուտ երկիրներու մէջ գործածուող թեղօշի հաստ տախտակները եւ ծառի կոճղերը կրելու ծառայող յատ սայլի մը յատկացման էր այդ կառքը։ Այս յատկացմանը ոչ այլ ինչ էր բայց եթէ առանցք մ'ունեցող երկաթեայ միաձոյլ մեծ մը, որու ծայրը քեղի մ'ապուցուած էր եւ որ երկու ահագին անիւներու վրայ կը կռթնէր։ Անիւը մէկ հատոտաձեւ, ամենամեծ եւ ուժեղ բան մ'էր։ կարծես թէ ահագին թնդանօթի մը սայլն էր։ Անիւի հեռաքերը անիւներուն եւ առանցքին շրջանակներուն, միջնանիւներուն, մոյթին եւ քեղիին վրայ տղմի խառն մը կազմեր էին. այս խառնը դեղինի նման սեւ գոյն մ'էր, եւ բաւական կը նմանէր այն գոյնին, որով հագուեցեալը կը ներկուին մեծ եկեղեցիներու պատերը։ Փայտը տղմին եւ երկաթը ժանգին տակ մնալով չէր երեւար։ Մոյթին տակէն կրկնուած հաստ շղթայ մը կախուած էր։ Կալեսի երդնադործին արժանի շղթայ մ'էր այդ։ Այս շղթան տեսնողը միտքը կը բերէր չէ թէ այն կոթողները զոր փոխադրելու պաշտօն ունէր, այլ այն մռայլ եւ մահաբեր եւ մահն ըսուած կենդանիները որոնք կրնային լծուիլ նոյն շղթայով. թիւրանի, բայց կիղոպեան եւ պերմարդկային թիւրանի մը յատկացեալ շղթայի մը կը նմանէր, եւ կարծես թէ դևի մը վրայէն հանուած էր։ Այս շղթայով Հոմերոս՝ Բօլիֆէմը եւ Շէյքսբէրն ալ Գալիլեանը կրնար կապել։

Ինչո՞ւ սայլի մ'այն յատկացմանը փողոցը եւ հոն կը կեցնար։ — Նախ անցուդարձը խափանելու, երկրորդ կատարելապէս ժանգոտելու համար։ Ընկերային հին կարգաւորութեան մէջ խել մը հիմնարկութիւններ կան զոր մարդս այսպէս իր Ճամբուն վրայ կը նշմարէ եւ որոնց հոն գտնուելուն պատճառը ոչ այլ ինչ է, բայց միայն Ճամբան խափանել եւ ժանգոտիլ։

Շղթային կեդրոնը մոյթին տակէն դրեթէ դեռնին դպնա-

լու մօտ կախուած էր, եւ ծայր կողմին վրայ՝ իբր չուանի մը որորանին վրայ՝ այն երկուքն լաւ մէկմէկ դրած երկու պղտի աղջիկ նստած էին միատեղ։ Ասոնց մին դրեթէ երկուք ու կէս տարեան, միւսը տասն եւ ութը ամսուան էր, պղտիկը մեծին գիրկը կը նստէր։ Զիրնալու համար երկուքն ալ աղէկ մը կապուած էին։

Մայր մ'այս տեսակի շղթան տեսնելով ըսած էր։ Ահա գաւառներուս համար խաղալիկ մը։

Զմտածեցինք ըսել թէ երկու մանուկները վայելուչ կերպով եւ տակաւ ինչ պաճուճանքով հագուած էին եւ գնաւորիթէն կը փողփողէին. կարծես թէ հին երկաթներու վրայ դրուած երկու վարդ էին. ամէն մէկուն աչերը յաղթանակ մ'էր. ամէն մէկուն թարմաւէտ այտերը կը խնդային. մին շագանակի գոյն ունէր, միւսը թխղոյն էր։ Երեսնց մանկային կերպարանքը յափշտակեալով պարմացող դէմքի կը նմանէր. ծազկաւէտ թուփ մը որ հոն քիչ մ'անդին կը գտնուէր, անցորդներուն անոյշ հոտեր կընծայէր, բայց կարծես թէ այս հոտերը այն երկու մանուկին կը բուրէին։ Տասն եւ ութ ամսուանը մանկային անմեղ յանդգնութեամբ մը իր մերկ բայց սիրուն փորը կը ցուցնէր։ Սայլին ահագին յատկաձեւը որ ժանգէն սեւցած եւ դրեթէ ահարկու երեւոյթ մ'առած էր, ծաղոտումները դիծերով եւ տախտակի անկիւններով խառնուած-ըլլալով, կարծես թէ այրի մը սրահին պէս՝ այն երանելի մեծամեծ շաղախուած ու ըղյսով թաթաւուած երկու փափուկ դալկիներուն վերջը եւ բոլորտիքը բոլորնալով դմբեթի մը կը կազմէր։ Քանի մը քայլ անդին Ճաշարանին շեմին վրայ կին մը կճկուելով նստած էր, անոնց մայրն էր այս կինը որ դրեթէ անշնորհ կերպարան բայց նոյն պահուն սրատուչ դիրք մ'ունէր. երկաթ չուանով մը մանուկները կորորէր, եւ վանդի մը հաւանականութեան վախով պրաւուած՝ աչերը դարձեալ անոնց վրայ կը հաստատէր այն անասնային եւ երկնային նայուածքով որ մայրութեան սեղմական հանդամանք

մ՛էջ. ամէն անգամ որ շղթայն կերթար ու կուգար, սոսկալի օղակները բիրտ ձայն մը կը հանէին, որ բարկալի աղաղակի մը կը նմանէր, և նորածիլ աղջիկները կը հրճուէին. որևէ որ մարը կը մանէր՝ անոնց ուրախութեան հետ կը խառնուէր. շատ սիրուն բան մ՛էր դիպուածին այս կամահաճութիւնը որ տիտանեան շղթայով մը քերովբէներու որոթան մը շինած էր։

Մայրը իր երկու մանկիկը որօրելու առեն անհամ ձայնով մը յետադայ երգը կեզէր որ այն առեններուը նշանաւոր էր.

Պեղտք է, կըսեր, մի մարտիկ.

Խելքը միտքը իր երգին և աղջիկներուն տուած ըլլալով չէր առնները փողոցին մէջ անցած գացածը։

Սակայն իր երգին առջի տունը սկսելու առեն մէկը մօտեցած էր իրեն. և ահա յանկարծ ձայն մը լսեց որ իր ականջին մօտ կըսէր.

— Տիկին, կը տեսնեմ որ երկու աղուոր մանկիկ ունիք։

Գեղանի Իմօժինին.

Պատասխանեց մայրը՝ իր երգը շարունակելով, յետոյ գլուխը դարձուց։ Տեսաւ որ առջևը և իրմէ քանի մը քայլ անդին կին մը կար։ Այս կինը նոյնպէս մանկիկ մ՛ունէր գոր գիրկը առած էր։ Նաև գիշերուան բաւական մեծկակ ատլաս մ՛ունէր որ շատ ծանր կերևար։ Այս կնոջ մանուկը այն երկնային էակներէն մին էր, զոր մարդ քիչ անգամ կը տեսնէ։ Երկու կամ երեք տարեկան աղջիկ մ՛էր ան։ Իւր հագուստը այնքան պչրանք ունէր որ կրնար մրցիլ միւս երկու մանկիկին հագուստին հետ. աղնիւ կտաւէ պզտիկ մ՛ունէր. բաճկոնակը ժապաւէններով և գտակը ճլպանիչէն պոռնիկացով զարդարուած էր. մէջատգեստը վեր եղած և ծալ մը կազմած ըլլալով, մանկան ազդրը կերևար, որ սպիտակ, լեցուն և հաստատուն էր։ Վարդի նման հիանալի գոյն մ՛ունէր ան և քաջողջ էր։ Գեղանի մանկիկը տեսնողը անոր խնճորանման

այտերը խածնելու փափաք կզգար։ Արդէն կը դուշակուէր թէ աչերն ալ որշափ յօնքեր ունէին, մեծ աչեր պիտի ըլլան։ Այս մանուկը կը քնանար։

Կը քնանար՝ իր հասակին սեպհական եղած բացարձակ վստահութեամբ ննջելով։ Մայրերու թևերը խնդապատանքով շինուած են. մանուկները խորունկ կերպով կը քնանան առնոց վրայ։

Իսկ մայրը անշուք և տրտում կերպարան մ՛ունէր։ Գիւղացի ըլլալու միտղ բանուորի մը պէս հագուած նորաձի կին մ՛էր։ Գեղանի էր արդեօք.— Գուցէ. բայց այն հագուստովը գեղեցիկ չէր երևար։ Արօնասէր կնիկի մը պէս ձև և նեղ գլակ մը գլուխը անցուցած և ծածկած, նաև կղակին տակէն հաստատուն կերպով կապած ըլլալով՝ բոլորովին անտեսանելի էին իր մազերը որոնցմէ խարտեշագոյն տրձակ մը դուրս կախուած էր։ Խնդումը գեղեցիկ ակռաները երևան կը հանէ, եթէ խնդացողը ունի գեղեցիկ ակռաներ. բայց այս կինը չէր խնդար։ Կերևար թէ դեռ քիչ մ՛առաջ արտասուեր էր։ Գունատ, յոգնած ու փոքր ինչ հիւանդ կերևար։ Գիրկը քնացող աղջկան կը նայէր իր զաւակը ինք անող մայրի մը սեպհական նայուածքով։ Ծերուկն գինուորներուն քիթ սրբելու համար գործածած թաշկինակներուն նման կապտագոյն մեծ թաշկինակ մը ծալած և պառանոցը անցուցած ըլլալով ձեռ կերպով մը իր հասակը կը ծածկէր։ Ձեռքերը խոշտակահար, և կարմիր բիծերով բոլորովին ծակուած էին. բթամատը կարծրցած և ասեղէն ծակծկուած էր. վրան վարնոց շլացուցիչ թխպագոյն վերարկու մ՛առած, կտաւեայ ըօպա մը հագած և ոտքերուն հաստ մուճակներ անցուցած էր։ Այս կինը Գանթինն էր։

Այո՛, Գանթինն էր. դժուարին էր ճանչնալ զինքը։ Սակայն ուշադրութեամբ նայող մը պիտի դիտէր որ տակաւին գեղեցիկ էր ան։ Ըստ կոզմի այսին վրայ տրամալի ծալ մը կար որ կը խորշոմէր զայն, և որ հիւանդութեան սկզբնաւորու-

թեան մը կը նմանէր։ Իսկ իր առջի պաճուճանքը, շղարշէ և ժապաւէններէ բաղկացող այն օդային և կարծես զուարթութեամբ, զուարճութեամբ և երաժշտութեամբ կազմուած պաճուճանքը, որ պզտի գանգակներով լի էր ու շեփորուկի հոտերով կը բուրէր, անհետ եղած էր այն ապխտակափայլ եղեամներու պէս որոնք արեւուն մէջ ադամանդի կը նմանին և որոնք երբ կը հալին, ոտքը բոլորովին սև կը թողուն։

« Այն Համով կատակէն » 'ի վեր տասն ամիս անցեր էր։

Լքումէն եաք նեղութիւնը եկած էր։ Փավուրիթ, Տալիա և Զէֆին շուտ մը Փանթինէն բաժնուեր և անբնակելի եղեր էին, յարաբերութեան կապը ինչպէս մարդերուն, նոյնպէս կենիներուն կողմէն խզուած էր. այս կենիները պիտի զարմանային եթէ տասն և հինգ օր եաք բսուէր իրենց թէ Փանթինի բարեկամուհիներն էին. այս բարեկամութիւնը ծնալու պատճառ չկար ալ։ Փանթին միտքի մնացած էր։ Երբ իր զաւկին հայրը մեռնէր, — Բա՛ըէ, այս բաժանումները անդառնալի են, — բոլորովին առանձին մնայ. մանաւանդ թէ աշխատելու սովորութիւնը նուազած և ընդհակառակն զբօսասիրութեան ճաշակն ալ աւելցած էր։ Թօլօմիէսի հետ ունեցած յարաբերութենէն դրդուելով իր պիտոյած պզտի արհեստը արհամարհած և ապրուստը հոգացող միջոցները զանց ըրած էր. հետևաբար այս միջոցներէն ալ զրկուած էր։ Ամենևին ապաւէն մը չունէր։ Փանթին հազիւ թէ կարդալ գիտէր, իսկ գրել չէր գիտեր. մանկութեանը ժամանակ մինակ տասը րոպէ րութիւնը դնել սորված էր. հասարակաց դրպրի մը ձեռօք Թօլօմիէսին երեք անգամ նամակ գրած էր՝ առանց պատասխան մ'առնելու։ Օր մը քանի մը շաբաթ կիներ անոր աղջկան նայելով ըսին. — Մի՛թէ պէտք է բանի տեղ դնել զանոնք, առանց հոգ ընելու երեսի վրայ ձգելու է այս տեսակ զաւակները։ Փանթին երբ լսեց այս խօսքը, միտքը բերաւ Թօլօմիէսը, որ 'ի նշան ատելութեան ուսերը կը շարժէր և կարհամարհէր իր զաւակը։

Փանթին ասի յիշելովը սիրտը ախրեցաւ այն մարդուն նկատմամբ։ Ինչ ընթացք բռնելու էր, ալ չէր գիտեր թէ որն դիմէ։ Ցանցանք մը զործած էր, բայց՝ ինչպէս ընթերցողը կը յիշէ՝ իրապէս պարկեշտ և առաքինի բնաւորութիւն մ'ունէր ան։ Անտրամաբանօրէն զղաց Փանթին թէ փիչ օրէն սոսկալի կարօտութեան մէջ պիտի իյնար և թէ աւելի դէշ կացութեան մը պիտի վիճակէր։ Մտածեց իր ծննդեան երկիրը դառնալ, որ էր Մ. . . . Հոն գուցէ գինք ճանչցող մը պիտի գտնուի և իրեն գործ պիտի տայ. այո՛, բայց պէտք էր իր յանցանքը պահել, ուստի խոտն 'ի խուռն կերպով կը գիտէր թէ առջի բաժանումէն աւելի դառն բաժանումի մ'ենթարկուելու պիտի ստիպուէր։ Սիրտը դառնապէս յուզուեցաւ, բայց որոշեց դիմաւորութիւնը զործադրել։ Ինչպէս պիտի տեսնուի, Փանթին կեանքի անողոք արիութեամբը գինուած էր։ Արդէն արիաբար գործած էր պաճուճանօք հագուիլ շքեղելէ, և պարզ կտաւէ զգեստներ հագած էր. իր բոլոր մետաքսեղէնները, զարդերը, ժապաւէնները և բոլոր պանդելանէրը աղջիկին տուած էր. վասն զի ան էր ալ իր միակ փառասիրութիւնը, նուիրական փառասիրութիւն։ Բոլոր ունեցածը ծախեց, որով երկու հարիւր ֆրանգ անցաւ ձեռքը. մանր մունր պարտքերը վճարելէն եաք միայն ութսուն ֆրանգի մօտ զումար մը մնաց իրեն։ Քսաներկու տարեկան հասակին մէջ՝ գարնան օրերէն առաւօտ մը Բարիզէն մեկնեցաւ՝ զաւակը կռնակը առած հետը առնելով։ Ով որ տեսնելու ըլլար այս երկու էակներուն անդնդիլը, արդարհատանք պիտի զգար։ Այս կինը աշխարհիս մէջ մի միայն այս մանկիկը ունէր, և այս մանկիկն ալ աշխարհիս մէջ այն կինէն 'ի զատ տէր մը չունէր։ Փանթին կնիք կոթ տուած էր իր զաւկին. այս պատճառաւ կուրծքը յողնեցուցած էր, և քիչ մը կը հազար։ Պ. Ֆէլիքս Թօլօմիէսի վրայ ալ խօսելու տրիճ չգիտի ունենանք։ Բաւական կը համարինք ըսելը թէ քանի տարի եաք Լուվր-Փիլիփի իշխանութեան ժա-

մանակ պատուի երևելի փաստաբան, հարուստ և ազդեցու-
թեան տէր, խոհեմ ընարող և խիստ անաչառ դատաւոր, և
պատճառն պէս զքօսումը սիրող մարդ մ'էր:

Փանթին հետի քայլելով, և հանդստանալու համար ե-
րեսունամի ամէն մէկ մղոնին համար երեսուն կամ քառասուն
փարա տալով այն ատեններըը Բարիզի շրջականերուն Պլաթ
կառքերը ըսուած կառքերով ճամբորդած և կէս օրին մօտ
Մօնֆերմէյլ գալով Պուլանժէի պլաթ փողոցը հասած էր:

Թէնարաիէյի խոհատունին առջևէն անցած ատեն տիտան-
եան օրորանին վրայ հրճուող երկու նորաբոյս մանկուհիները
տեսնելով հիացեր, և այս ուրախալի տեսարանին առջև
կանգ առեր էր:

Ցանկութիչ հրապոյրներ կան: Արդ այն երկու մանկուհի-
ները իրօք յանկուցիչ հրապոյր մ'ունէան այս մայրին համար:

Փանթին դլխովին յուզուած՝ անոնց կը նայէր: Հրեշտակ-
ներու նմանութիւնը արքայութեան աւետում մ'է: Այս
խոհատունին վերևը տեսնել կարծեց նախանձնամութեան
մատովը դրուած խորհրդաւոր բան մը որ էր ՀՈՍ: Այն ե-
րկու մանկուհիները հարիւր երջանիկ էին: Այնքան արդա-
հատանօք կը նայէր և կը զարմանար անոնց վրայ որ անոնց
մայրը իր երկին մէկ ոտդէն միւսը սկսելու ատեն երբ շունչ
մ'առած էր, Փանթին չկրնալով զսպել ինքզինքը ըսաւ սա
խօսքը զոր քիչ մ'առաջ յիշեցինք.

— Տիկին, կը տեսնեմ որ երկու աղուոր մանկիկ ունիք:

Ամենէն անդութ արարածները կը մեղմին երբ իրենց ման-
կիկները զգուանք մը կընդունին:

Մայրը գլուխը վերցուց, շնորհակալ եղաւ, և դառն նըզ-
տարանին վրայ նստեցուց անցորդուհին՝ նոյն իսկ ինքն ալ
շեմին վրայ նստած ըլլալուն համար: Երկու կինն սկսան խօ-
սակցիլ:

— Անունս տիկին Թէնարաիէ է, ըսաւ մանկուհիներուն
մայրը: Այս պանդոկը մենք կը բանեցնենք:

Յետոյ՝ խելքը միշտ իր երկին ըլլալով կրկնեց կամաց ձայ-
նով մը.

Պէտք է երթամ Պադեստին
Քանի որ ասպետ մի եմ.

Այս տիկին Թէնարաիէն կարմրագոյն, մսոտ և անկիւնա-
ւոր կին մ'էր. կին—գինուոր ըսուած արարածին տիպարն էր
անոր բոլոր ստեղծութեամբը: Աւելի զարմանալին սա է որ
շինծու ձևեր ունէր զոր վիպային ընթերցումներէ ստացած
էր: Նպղելը սիրող առնանման կին մ'էր ան: Հին վէպերը
երբ այս տեսակ խոհակերուհիներու երևակայութենէն վրայ
թղթատուելով կը պատռտուին, այս հետևանքը կունենան:
Տիկին Թէնարաիէ տակաւին երիտասարդական հասակին մէջն
էր. հազիւ հազ երեսուն տարեկան կար: Այս կինը որ կըճ-
կռուած էր, եթէ ուղիղ կայնած ըլլար, իր բարձր հասա-
կաւը և դնայուն արձանի մը պէս ունեցած թիկանց լայնու-
թեամբը որ տօնավաճառներու վայել բան մ'էր, զուգէ 'ի
սկզբան ճամբորդուհիին վախ տար, անոր վստահութիւնը
վրդովէր և պատճառ չըլլար տեղի տալու այն դէպքերու
զոր պիտի պատմենք: Անձ մը փոխանակ ոտքի վրայ կայնած
ըլլալու նստած կըլլայ. և ահա այս պարագայով ճակատա-
գիրներ կը փոխոխուին:

Ճամբորդ կինը իր պատմութիւնը փոքր ինչ փոփոխութեամբ
պատմեց: Ըսաւ թէ բանուոր մ'էր ինք. թէ էրիկը մեռած էր.
թէ Բարիզի մէջ գործ չէր գտեր և թէ ուրիշ տեղ կերթար,
իր քաղաքը կը գտնար գործ գտնելու համար. թէ նոյն օրը
առաւօտուն Բարիզէն եկած էր հետի քայլելով, թէ զաւակը
հետը առած ըլլալուն համար յոգնութենէն զգայեր և վիր-
մմպլի կառքին հանդիսելով մէջը մտեր էր. թէ Վիլմմպլէն
հետի քայլելով մինչև Մօնֆերմէյլ եկած էր. թէ մանկիկը
սակաւ ինչ քայլած էր և ոչ թէ շատ՝ վասն զի գեռ շատ
պզտիկ էր. թէ ստիպուեր էր նորէն գիրկը առնուլ, և թէ
իր գոհարը քնացած էր:

Այս վերջին բառին վրայ դուրսբռնաք համբուրեց իր աղջիկը։ Համբույրը արթնցուց մանուհին։ Բայաւ աչերը, որոնք իր մորը աչերուն պէս կապտագոյն և մեծ էին, և նայեցաւ՝ առանց բանի մը նայելու, կամ լաւ ևս է ըսել՝ առանց բանի նայելով մանկիկներու այն ծանր և երբեմն խիստ նայուածքով, որ մեր առաքինութիւններու խաւարումին մէջ անոնց լուսափայլ անմեղութեան մէկ գաղտնիքն է։ կարծես կղզան անոնք թէ իրենք հրեշտակ են, իսկ մենք մարդ։ Յետոյ մանուհին խնդալ սկսաւ, և՝ թէև մայրը չուզեց հաղորդել այլ անի վարել ուզող պզտի անձի մ՚առղծելի զօրութեամբը գեռինը սպրդեցաւ։ Ցանկարծ որբանը դանուղ միւս երկու մանկուհիները տեսաւ, խնդոյն կանգ առաւ, և լեզուն քաշեց, որ զարմացումի նշան է։ Թէնաբութիէ խաթունը աղջիկները քակեց, որոնցմէն վար իջեցաւ, և ըսաւ.

— Երեքնիդ մէկ խաղացէք։

Այս հասակի էակները շուտ մը կընտանենան. սակայն մեր Թէնաբութիէի պզտիկները նորեկին հետ կը խաղային հոգին մէջ ծակերը բանալով. ինչ մեծ զբօսում։

Նորեկ պզտիկը շատ զուարթ էր. մայրին բարեսրտութիւնը մանկիկին ուրախութեան մէջ նշանակուած է։ Մանկիկը փայտի շիւղ մ՚առած էր երբ թէ զործածելու համար, և բոլոր ուժովը փոս մը կը փորէր ուր կրնար ձանձ մը դնել։ Գերեզմանափորին ըրածը երբ մանկան մը կողմէն կըլլայ, զուարճալի կը համարուի։

Երկու կիները դեռ կը խօսակցէին։

— Ի՞նչ է պզտիկիդ անունը։

— Գօզէթ։

Գօզէթը կարդա՛ Էօֆրազի։ Պզտիկին անունը Էօֆրազի էր, բայց մայրը Էօֆրազի անունը Գօզէթի դարձուցած էր մայրերու և ժողովուրդին այն քաղցր և սիրուն դրդումով, որ Ժօզէֆան Բէրլիթայի և Ֆրանսուազը Սիլվէթի կը դարձնէ։ Ասի այնպիսի ածանցում մ՚է, որ սառուպաբաններու բոլոր

դիտութիւնը կաւբէ և կը շփոթէ։ Մենք մամի մը ձանձցանք որ Թէօոթր անունը կնոջի դարձունելու յաջողած էր։

— Քանի տարեկան է, հարցուց Թէնաբութիէ խաթունը։

— Երեքին մէջն է։

— Ուրեմն առջինեկիս հասակին ունի։

Սակայն երեք մանկուհիները խորունկ անձկութեան և երանութեան դիրքով մը խմբուած էին, վասն զի դէպք մը տեղի ունեցեր էր. դանդին մեծ որդի մ՚ելեր էր, և մանկուհիները կը վախնային ու միանդամայն կափշէին։ Երեքին հուհիները կը վախնային ու միանդամայն կափշէին։ Երեքին շողշողուն ճակատները իրարու կը հպէին. կարծես թէ մէկ պսակով զարդարուած երեք գլուխներ էին։

— Մանկիկները, պօռաց Թէնաբութիէ խաթունը, նայէ՛ ինչպէս շուտ մը ընտանեցան. տեսնողը կրնայ երդում ընել թէ երեք քոյր են։

Այս աղաղակը դուրէ միւս մայրին սպասած կայծն էր։ Թէնաբութիէ կնոջ ձեռքը բռնեց, ուղղակի անոր նայեցաւ և ըսաւ.

— Կուզե՞ս քովդ առնուլ զաւակս։

Թէնաբութիէ խաթունը զարմացման շարժում մ՚ըրաւ, շարժում մը որ ոչ հաւանիլ և ոչ ալ մերժել կը նշանակէր։

Գօզէթին մայրը շարայարեց.

— Աղջիկս չեմ կրնար քաղաքս տանիլ։ Աշխատողի մը նեղրելի չէ այս։ Ձաւակ մ՚ունեցողը տեղ մը չգտներ բանուրութիւն ընդունելու համար։ Ո՛րքան ծիծաղելի են այն քաղաքի մարդերը։ Աստուած ուզեց որ պանդոկիդ առջևէն անցնիմ։ Երբ տեսայ թէ որքան աղուոր, մաքուր և զոհ են պզտիկները, խոովեցայ։ Ինքնին ըսի. Ահա բարի մայր մը։ Իմ ուզածս ալ սա է. իմինիս հետ երեք քոյր կըլլան։ Մանաւանդ թէ քիչ մը ժամանակէ ետք պիտի վերադառնամ։ կուզե՞ս քովդ պահել զաւակս։

— Քիչ մը մտածելու է, ըսաւ Թէնաբութիէ խաթունը,

— Ամիսը վեց ֆրանգ կուտամ։

Նոյն պահուն Ճաշարանին մէջէն մարդու ձայն մը պոռաց. — Եօթ ֆրանկէն վար չըլլար, և վերջ ամուսանն ալ կանխիկ կուզեմ։

— Վերջ անգամ եօթը քառասուն և երկու ֆրանգ կընէ, ըսաւ Թէնարտիէյի խանմուհը։

— Կը հաւանիմ տալու, ըսաւ մայրը։

— Ասկէ ’ի զատ նաև տասն և հինգ ֆրանգ տալու էք ա՛ռաջին ծախուց համար, վերջապէս մարդու ձայնը։

— Ընդ ամէնը յիսունը եօթ ֆրանգ կընէ, ընաւ տիկին Թէնարտիէ։ Եւ այս թիւերուն հետ անորոշապէս նաև կերպէր.

Պէտք է, կըսէր, մի մարտիկ.

— Լաւ, կը վճարեմ, ըսաւ մայրը, ուրեմն ֆրանգ ուզեմ։ Քաղաքս երթալու համար ինծի ալ բան մը կը մնայ, բաւական է որ հետս քայլեմ։ Հոն տակաւ պիտի վաստկիմ, և երբ տակաւ ինչ դումար մը կազմեմ, պիտի դամ սիրելի զաւակս առնելու։

— Պզտիկը ձերմակղէն և զգեստներ ունի՞։

— Հարցնողը էրիկս է, ըսաւ Թէնարտիէյի կինը։

— Անշուշտ ձերմակղէն և զգեստներ ալ ունի խեղճ դանձս։ Արդէն հասկցայ որ էրիկդ է ան։ Եւ ինչ աղուոր ձերմակղէններ և հագուստներ. տեսնողին խելքը գլուխէն կերթայ. ամէն տեսակէն ալ առաւօրէն կայ, և տիկինի մը պէս մանաւանդ բօպաններ ալ ունի։ Ամէնն ալ սա գիշերուան տոպրակիս մէջն է տես։

— Պէտք է ամէնն ալ տալ, կրկնեց մարդու ձայնը։

— Ես ալ գիտեմ որ պիտի տամ, ըսաւ մայրը։ Ապուշ մ’ըլլալ պէտք էի որ բոլորովին մերկ ձգէի աղջիկս։

Տիրոջ դէմքը երևնալով,

— Լաւ, ըսաւ։

Սակարկութիւնը որոշուեցաւ։ Մայրը գիշերը Ճաշարանը մնաց, տտակը տուաւ և զաւակը հոն թողուց, նորէն կապեց

իր գիշերուան տոպրակը որ պարպուած և թեթևցած էր ա՛լ, և հետևեալ օրը առաւօտուն մեկնեցաւ՝ քիչ ժամանակէն վերադառնալու յոյսով։

Այսպէս հանդարտօրէն մեկնիլ կարելի է. բայց հանդարտ կերպով մեկնիլ չէ այն այլ յուսահատութեամբ։

Թէնարտիէներուն դրացուհիներէն մին Ճամբան հանդիպեցաւ այն մայրին որ գլուխը առած կերթար, և եկաւ ըսաւ անոնց.

— Կին մը տեսայ քիչ մ’առաջ որ փողոցը կուլար, խըղխըշուք բան մ’էր լացը։

Երբ Գօզէթին մայրը մեկնեցաւ, մարդը կնոջ ըսաւ.

— Ասոր պիտի կարենամ վճարել հարիւր տաս ֆրանգոնոց պարտամուրհակս, որու պայմանաժամը վաղը կը լրանայ։ Ցիսուն ֆրանգ կը պակսէր։ Եթէ այս չըլլար, բողոք պիտի ըլլար ինծի դէմ և դատի պիտի կոչուէի։ Պզտիկներուդ լաւ ականատես մը դործը կատարեցիր։

— Առանց պարակուսելու, ըսաւ կինը։

ԳԼՈՒԽ Ը.

ԵՐԿՈՒ ԿԱՍԿԱԾԱԼԻ ՊԱՏԻՒՆԵՐՈՒՆ ԱՓԱՋԻՆ ԹՐԱԴԻՐԸ

Թուղուզ մուկը շատ պզտիկ բան մ’էր. բայց կատուն նաև նիհար մուկ մը բռնած ատեն կուրախանայ։

Ի՞նչ տեսակ մարդեր էին այս Թէնարտիէները։

Հիմայէն քանի մը բան ըսենք։ Ծրագիրը եաքէն կը կատարելագործենք։

Այս անձերը այն կարգի մարդերէն էին որոնք ստորին վիճակէ բարձրացող մարդի և վերին վիճակէ իջնող խեղճ անձերու խորհրդաւոր դասը կը կազմեն, որոնք միջակ ըսուած և ստորին ըսուած դասերուն մէջ տեղը կը գտնուին և որոնք առաջինին քանի մը պակասութեանց հետ երկրորդին դրեթէ բոլոր մելամիւնները ունին՝ առանց ունենալու ոչ բանաս-

3133
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Щольничная Библиотека
7/II--1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
2152-60

բին վեմ եռանդը և ոչ ալ քաղաքային պարկեշտ կաթ-
դասիրութիւնը :

Թէնարտիէները, այն թզուկ բնաւորութիւններու կը վե-
քաբերին, որոնք եթէ պատահաբար մխուր կրակով մը
տաքնալու բլլան, շուտ մը ձիւաղ կը դառնան : Կինը ա-
նասունի մը և մարդը աւազակի մը տիպ ունէր : Երկուքն
ալ կատաբելապէս ընդունակ էին այն սոսկալի յառաջադի-
մութեան որով մարդ դէպ 'ի չարութիւն կը դիմէ : Կան ա-
նանկ խեղդեցիկի նման արարածներ որոնք շարունակ եռ կեր-
թան դէպ 'ի խաւարը յառաջանալով, կեանքի ասպարէզին
մէջ աւելի կը յետագիմեն քանթէ կը յառաջադիմեն, փոր-
ձառութիւնը իրենց ձևութիւնը աւերելու կը զործածեն,
անընդհատ կը վատթարանան, և հետ դէեմ կը շաղուին
անութեամբ մը որ հետզհետէ կաճի : Թէնարտիէ և իր կինը
ահա այս արարածներուն կարդէն էին : Մանաւանդ Թէնար-
տիէն իր կերպարանովը կրնար ձանձրոյթ պատճառել դիմա-
դէմի մը : Կան այնպիսի մարդեր որոնցմէ կասկածելու հա-
մար բաւական է անոնց մէջ նայիլ անոնց, վասն զի կզգանք
թէ անոնց երկու կողմը խաւարին է : Եանէնին անհանդարտ,
իսկ առջևնին ապառնալի է : Ըրածնին ալ, ընելիքնին ալ
անծանօթ է : Ոչ ոք կրնայ երաշխաւորել անոնց թէ ըրածը
և թէ ընելիքը : Այսպիսիներու նպատակին մէջ մթութիւն
կայ որով կը մառնուին : Միայն խօսք մ'ըսելնին լսելով,
կամ շարժում մ'ընելնին տեսնելով մարդ ազէտաւոր պատ-
կերներ կընդունարէ անոնց թէ անցեալին և թէ ապագային մէջ :

Եթէ իր խօսքին հաւատալ պէտք է, այս Թէնարտիէն
գինուոր մ'է եղեր, յիմնապետ, կըսէր ինք. հաւանական
է որ 1815ի պատերազմին մէջ դտնուած էր, և կրնայ թէ
բաւական արիութեամբ կռուեր է : Եթէ պիտի տեսնենք
թէ իրաւ է այս թէ սուտ : Իր խոհասունին դրոշմագոյցը
անոր ռազմական քաջութեանց մէկուն ակնարկութիւն մ'էր :
Նոյն իսկ ինք նկարած էր դրոշմագոյցը, վասն զի ամէն

քան ընելու փոքր ինչ կարող էր, դեղութիւն մ'ալ այս է :

Այն ժամանակները դասական հին վիպասանութիւնը որ
Գէյնի ըլլալէն եռք ալ Լօռճէռօ եղած էր և որ թէև ա-
ռաջուան պէս վեմ էր, այլ երթալով դունդիկ դրուածնե-
րու կը նմանէր՝ օրիորդ Սիուտերիէն դէպ 'ի տիկին Պաւ-
նօն-Մաքարմ, և տիկին Լաֆայէթէն դէպ 'ի տիկին Պար-
թելմի-Հասօ լլչնելով և նուաստանալով, Բարիզի դռնա-
պանուհիներուն սիրաւէտ սիրտը կը հրդեհէր և փոքր ինչ
շրջականերուն մէջն ալ աւերումներ կընէր : Տիկին Թէնար-
տիէ այս տեսակ պիրքերը կարդալու և հասկնալու չափ խելք
ունէր : Ուստի անոնցմով կը սնէր : Իր փառաքի ուղեղը
այն վիպասանութեանց մէջ կը խնդդէր : Այս ընթերցումնե-
րուն չնորհիւ երիտասարդութեանը ժամանակ, նաև քիչ մ'ալ
հաքէն տեսակ մը խորհուրդ դիրք կառնուր իր երիկին քով,
որ կերպիւ իւրք սրամիտ սրիկա մը, առանց քերականութիւն
կարդացած ըլլալու դրագէտ բոզմամբ մը (ruffian), տարդի
ու միջոցային վարպետորդի մը, սակայն զգացումի վերա-
բերեալ իրերը, նաև՝ ինչպէս կըսէր իր խառնիճաղանճ լեզ-
ուաւ, «էզ սեռին վերաբերող ամէն բան» հասկնալու
համար Բիկօ Լըպրէօնի վէպերը կարդացող, ու զուտ և ան-
խառն ապուշ մ'էր :

Կինը իրմէ տասնեքլուս կամ տասն և հինգ տարի պզտիկ
էր : Եաքէն երբ սկսան ալեւորիլ իր մազերը որոնք դիւ-
ցազնուհիի մը մազերուն մէջ կը սփռուէին և կը կախուէին,
երբ Բամպա մ'ըլլալէ գադրելով Մեժեր մը[1] դարձաւ, այլան-
դակ վիպասանութիւններով անուած անձնեսպ չարասիրտ կին մը
եղաւ : Ադդ պլանդպակութիւններ կարդացողը անպատիժ չվար-
դար : Վիպասանութեանց ընթերցումին իրը հետևութիւն իր
առջինեկ աղջիկը Էպօնին անուանեց, իսկ կրտսերը քիչ մնաց
որ Կիւլնար անունը պիտի առնուր : Բարեբաղդաբար մայրը
Տիւքեյ-Տիւմինիլին մէկ վիպասանութիւնը կարդալով չկո-
ղաւ ինչպէս եղաւ որ Ազնէսա անուանուեց խեղճ աղջիկը :

Բայց հոս հարկ կը համարինք ըսել թէ ամէն բան ծիծաղելի և առերևոյթ չէր այն հետաքրքրական միջոցին մէջ որու կանդրկենք հոս, և որ կրնայ միտքերուն անուններու անիշխանութիւն անուանիլ: Այս վիպական տարրին քով զոր վերը նշանակեցինք, ընկերային ախտանշան մը կայ: Այսօր կրնան պտուտիլ անդէորդի ծառաները որոնք վէպերէ առնուած անուններ կրեն, ինչպէս են Արթուր, Ալֆրէտ կամ Ալֆոնս անուններըը, կարելի է նաև որ դերասիմա մը, — եթէ տակաւին դերասիմաներ կան, — Թոմմաս, Պետրոս կամ Յակոբ անուանի: Հաւասարութեան պայման մ'է այս տեղափոխութիւնը, որով «ազուր» անուններըը ամիկին՝ և գոհիկ անուններն ալ աղնուականին կը յատկանան: Նոր շունչը ինչպէս ամէն բանի ներխուժէս և այս անուանափոխութեան մէջ թափանցած է իր անդիմադրելի զօրութեամբը: Այս առերևոյթ անհամաձայնութեան ներքև մեծ և խորունկ բան մը կայ որ է դաղղիական յեղափոխութիւնը:

ԳԼՈՒԽ Գ.

ՈՐՈՁԸ

ԲԱՐԵՐԱՍՏՈՐԻՆ յառաջանալու համար չարաչիրա ըլլալը չբաւեր:

Խոհարարը աղէկ չէր բաներ: Ճամբորդ կնիկին յիսուն և եօթ ֆրանգին շնորհիւ Թէնարտիէն կրցեր էր բողոքի տակ չկենալ և իր ստորագրութիւնը յարդել: Հետևեալ ամիսը դարձեալ ստակի պէտք ունեցան: Կինը Գօղէթին հագուստները և զարգերը Բարիզ տարաւ և Մօն–որ–Բիէթէյէն[2] վաճառուն ֆրանգ փոխառնելով դրաւի դրաւ դանոնք: Երբ այս դումարն ալ վատնեցին, Թէնարտիէները սովրեցան ամէն այնպէս սեպհլու թէ ողորմութեան համար իրենց տունը առած են մանկուհին և ըստ այնմ վարուեցան անոր հետ: Մանկուհին իր դերասուհիէն զրկուած ըլլալուն համար, պղտիկ Թէնարտիէներուն հին միջազգեստները և հին շապիկները այլևս չկրցան հագցնել անոր: Ամենուն կերածին հետ յագըցաւ, այսինքն շունչ մը քիչ մ'աւելի աղէկ և կաուէ մը քիչ մ'աւելի պէշ կերակրեցին զան: Մանաւանդ թէ շունը և կատուն իր սովորական սեղանակիցներն էին. Գօղէթին սեղանին տակ անոնց հետ և անոնց պէտք սկսաւ նման սկսաւ մը ալ կուտէր իր կերակուրը:

Գօղէթին մայրը, ինչպէս տեսէն պիտի տեսնենք, Մ... քաղաքը հաստատած էր իր բնակութիւնը, ուսկից ամէն ամիս նամակ կը դրէր, կամ լաւ ևս է ըսել՝ դրել կուտար իր մանկան վրայօք լուր առնելու համար: Թէնարտիէները անփոփոխ կերպով կը պատասխանէին. Գօղէթի վիճակը քաջալաւ է:

Երբ առջի վեց ամիսը լրացաւ, մայրը եօթներորդ ամսուան համար եօթ ֆրանգ զրկեց, և բաւական ձգտութեամբ ամէն ամիս զրկեց նոյնչափ դումար մը: Դեռ տարի մ'անցած չէր, և ահա Թէնարտիէ ըսաւ.

— Մխիթ կը կարծէ թէ մեզի մեծ չնորհք մը կ'ընէ. եօթը ֆրանքը ինչի՞ն կրնայ բաւել:

Անկէ ետք նամակ դրեց ամիսը տասներկու ֆրանգ պահանջելու համար: Մայրը որու կը հաւատացնէին թէ զաւակը երջանիկ էր և թէ «աղէկ կը նայուէր», հնազանդեցաւ և տասներկու ֆրանգը զրկեց:

Կան բնութիւններ որոնք չեն կրնար մէկ կողմէն սիրել առանց ատելու ուրիշ կողմ մը: Թէնարտիէի կինը իր երկու աղջկիկը դուրգուրալով կը սիրէր, և այս պատճառաւ կատէր օտարուհին: Կը տարակինք երբ կը մտածենք թէ մայրի մը սէրը կրնայ զձուձ կերպարան մ'ունենալ: Գօղէթին անոր տան մէջ կերածը և հագածը թէև ոչինչ էր, բայց Թէնարտիէի կինը կը կարծեր թէ իր զաւկներուն իրաւունքը անոր կանցնէր և թէ այն պզտիկը իր աղջիկներուն ծծած օդը կը նուազէր: Այս կինը՝ իրեն նման շատ կիներու պէս՝ ա-

մէն օր շատ մը պղտանք , նաև Թշնամանք կը վատնէր : Եթէ Գօղէթ չըլլար , յայտնի է թէ միայն իր աղջիկները պիտի մաբսէին իրենց մօր պղտութիւնները հետ նաև անոր Թշնամանքը , թէև խիստ սիրելի էին անոր : Բայց օտարուհին միայն ինք ընդունելով հարուածները՝ անոնց ծառայութիւն մ'ըրած եղաւ : Թէնարտիէի աղջիկները միայն պղտանքը վայելեցին : Գօղէթ ամէն անգամ որ շարժում մ'ընելու ըլլար , կարկուտի պէս սաստիկ և անիրաւ պատիժներ կը տեղային իր գլուխն վրայ : Քաղցր և տկար արարած որ ոչ այս աշխարհիս նպատակով և ոչ ալ Աստուծոյ նպատակով բան մը կրնար հասկնալ , անընդհատ կը պատժուէր , կը յանդիմանուէր , խստութիւններ կը կրէր , ծեծ կուտէր և իր քով իրեն նման երկու պզտիկ արարածներ կը տեսնէր որոնք արշալուսանեան Ճառագայթի մը մէջ կապրէին :

Թէնարտիէի կինը Գօղէթին նկատմամբ չարասիրտ ըլլալէն , Էբօնին և Աղէլմա ևս չարասիրտ եղան : Մանուկները այս հասակին մէջ իրենց մօրը օրինակները կըլլան : Մայրը աւելի մեծ օրինակ մ'է . ահա այս է միայն իր տարբերութիւնը :

Տարի մ'անցաւ , յետոյ տարի մ'ևս անցաւ : Գիւղացիները կըսէին . — Սա Թէնարտիէները բարեսիրտ մարդեր են : Թէև հարուստ չեն , բայց իրենց տունը Թողուած խեղճ մանուկի մը կը նային ձրիաբար :

Ոչ կարծէին թէ մայրը մոռցած էր Գօղէթը :

Բայց Թէնարտիէն չգիտեմ ինչ դաղտնի միջոցներով խմացած ըլլալով թէ մանկուհին անհայր էր , և թէ մայրը չէր կրնար խոստովանիլ թէ իրն է այն զաւակը , ամիսը տասն և հինգ ֆրանգ պահանջեց , ըսելով թէ պզտիկը կը մեծնար և կոթոթէր , և սպառնալով տունէն վռնտել զան : « Թող « գլուխ չցաւցնէ , կը պօռար , թէ ոչ պզտիկին կից մը կու « տամ և իր դաղտնիքը յայտնելով կը խայտառակեմ զինքը : « Պէտք է աւելցնել ամսականը » :

Մայրը տասն և հինգ ֆրանգն ալ վճարէց : Տարուէ տարի

մանկուհին մեծցաւ , և իր հետ Թշուառութիւնն ալ մեծցաւ : Գօղէթ ամենափոքր հասակին մէջ միշտ միւս երկու մանկուհիներուն ծաղրի առարկան էր . երբ սկսաւ սակաւ մը մեծնալ , այսինքն հինգ տարեկան հասակը մտնելէն առաջ ան սպասուհին եղաւ :

Հինգ տարեկան հասակի մէջ անհաւատալի է այդ , ըսուի մեզ դուցէ : Բայց , մեր ըսածը Ճշմարիտ է : Ընկերային վիշտը ամէն հասակի մէջ կսկսի : Մինչ մօտ օրերս Տիմօլար անուն աւազակի մը դատը չտեսանք , որ որբ է եղեր , և որ պաշտօնական թուղթերու ըսածին նայելով , աշխարհիս վրայ անոք ըլլալով ապրելու համար « կաշխատէր , և զոհութիւն կրնէր » :

Դուբսէն պէտք եղած բաները առնելու , սեղանները , պաւիլիոնը և փղոսկրը աւելցնելու , սեղանին սպասները լուալու , նաև բեռ կրելու ծառայութիւնները Գօղէթ կը կատարէր : Թէնարտիէները մանկուհիին հետ այսպէս վարուելու ալ աւելի իրաւունք ունենալ կարծեցին երբ մայրը որ միշտ Մ . . . կը բնակէր , սկսաւ ուշացնել ամսականին վճարումը : Քանի մ'ամիսէ անվճար մնաց :

Երեք տարիէն ետք եթէ այս մայրը Մօնֆերմէյլ դարձած ըլլար , ամենին չպիտի Ճանչնար իր մանկիկը : Հիմա նիհար և դունատ էր Գօղէթ , մինչդեռ այս տունը եկած առեն խիստ ազուր և խիստ թարմ մանկուհի մ'էր : Չգիտեմ ինչ չիմացուն պնացք մ'ուներ ան : Զարմիմ , կըսէին Թէնարտիէները :

Կրած անիրաւութենէն պատճառաւ վիատութիւն մ'եկած էր վրան , և Թշուառութենէն պատճառաւն ալ ապեղացած էր : Ա'ր ունեցածը միայն իր պեղեցիկ աչերն էին որոնք տեսնողին վիշտ կը պատճառէին , վասն զի մեծ աչեր ըլլալով կարծես թէ անոնց մէջ նշմարուած տրտմութիւնն ալ նոյնպէս մեծ էր :

Սրտաճմլիկ բան մ'էր ձմեռուան մէջ տեսնել այս մանկուհին որ դեռ վեց տարեկան չէր և որ պատառուն հին քուրջեր հագած՝ ցրտահար տանջուելով՝ արևը ծագելէն առաջ

փողոցը կաւէը իր շատպոյն պզտի ձեռքը ահագին աւել մը և մեծաձև աչերուն մէջէն ալ արտօսր մ'ուռնեցնելով։

Քաղաքին մէջ Արտոյտ կանուանէը ան։ Ծաղկավաճառը որ դէմքը կը սիրէ, համաձեր էր այսպէս անուանելու այս անտիսկան էակը որ թռչուններ մ'աւելի մեծ չէր, որ դողալով, վախնալով, սարսռելով ամէն առաւօտ տան և դիւղին մէջ ամենէն առաջ կարթննար, արշալոյսէն առաջ միշտ փողոցը կամ դաշտերը դտնուելով։

Միայն թէ խեղճ արտոյտը ամենևին չէր երգեր։

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Է Զ

ԳԼՈՒԽ ԱՔԱԶԵՏ

ՍԵՒ ԱՊԱԿԻԻ ԱՐՀԵՍՏԻՆ ՄԷՋ ՑԵՒԱԶԵՏԻՄՈՒԹԵԱՆ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Բաւց այն մայրը որ Մօնֆերմէյլի դիւղացիներուն կարծիքին նայելով կերեսար թէ պատակը երեսի վրայ թողած էր, ինչ եղած էր, ուր էր, ինչ կրնէր։

Իր պզտի Գօզէթը թէնարտիէներուն ձգելէն ետք՝ չամրան շարունակած և Մ... հասած էր։

Ընթերցողը կը յիշէ անշուշտ թէ Ֆանթին 1818ին պատահէն բաժնուած և Մօնֆերմէյլէն իր երկիրը վերադարձած էր։

Ֆանթին իր ծննդեան երկրէն մեկնած ըլլալէն՝ի վեր տասը տարիի չափ անցած էր։ Մ... տարբեր կերպարան առած էր հիմա։ Մինչդեռ Ֆանթին թշուառութենէ՝ի թշուառութիւն կիջնէր յամրաբար, իր ծննդեան երկիրը բարեբաստօրէն յառաջադիմած էր։

Գրեթէ երկու տարիէ՝ի վեր հոն տեղի ունեցեր էր այն հնարագիտական եղելութեանցմէն, որոնք պզտի քաղաքներու մեծ դէպքերը կը համարուին։

Ասի կարևոր պարադայ մ'է, զոր օդտակար կը համարինք գայն պարզել, նաև ստորագծելը (souligner)։

Հին ժամանակներէ՝ի վեր Մ...ի արհեստներուն մէն էր անգլիական դուննաւոր ապակիներուն և Վենետիկի սև ա-

պահեղէններուն նման ապակեղէններ չկրնար։ Այս արհեստը միշտ անհատաբար էութիւն մ'ունեցած էր առաջնական նիւթերուն պատճառաւ որուն հետևութիւնն էր փառքի շինողչէք տալ բանուորներուն։ Ֆանթին Մ... վերադարձած ժամանակ այս «սև ապրանքին» արտադրութիւնը անցուր կերպարանափոխութիւն մ'առած էր։ 1815ին վերջերը մարդ մը, անծանօթ մը այն քաղաքը եկած և հաստատուած էր, և այն ապակեղէններու պիւբաշինութեան համար ունէին սեղ գոմ (gom-laque) պործածելու և՝ մանաւանդ պէս ապահանջանքի շինութեան համար՝ փակած թիթեղէ օղեր պործածելու սեղ պարզապէս քով քովի բերուած թիթեղեայ օղեր պործածելու դպրոցները երկներ էր։ Այս ամենափոքր փոփոխութիւնը յեղափոխութիւն մ'եղած էր։

Եւ իրօք այս ամենափոքր փոփոխութեան շնորհիւ առաջնական նիւթին գինը շատ վար իջած էր. այս աժանութեան հետևութիւնն եղած էր նախ բանուորին աւելի շինողչէք տալ, և շինողչէքի այս յաւելումը բարիք մ'էր քաղաքին համար, երկրորդ շինութիւնը բարւոքել. ան ալ ապրանքը պործածողին համար առաւելութիւն մ'էր, երբորդ երեքպատիկ շահ տալովը հանգերձ գործակալ աժան ծախել ապրանքը, և ան ալ վաճառողին համար շահ մ'էր։

Այսպէս մէկ դպրոցը երեք հետևութիւն ունեցած էր։

Այս դպրոցը երկնողը երեք տարի չանցած ոչ միայն ինք հարստացեր էր, այլ նաև իր բոլորքիքը պանուղներուն ալ հարստութիւն տուած էր։ Հարստացնողը աղէկ բան է, իսկ ուրիշին ալ հարստութեան պատճառ ըլլալը աւելի աղէկ բան է։ Գաւառին մէջ օտարական մ'էր ան։ Իր ժէ և ինչ ըլլալը ամենեին յայտնի չէր. իսկ երբ գործի ձեռնարկելը սակաւ ինչ յայտնի էր։ Կը պատմուէր թէ խիստ քիչ տակովի, առ առաւելն քանի մը հարիւր ֆրանկով քաղաքը եկած էր։

Անի թէ իր և թէ բոլոր քաղաքին հարստութիւնը ահա այս փանաքի դրամագլխով գոյացուցած էր՝ զայն հանճա-

բաւոր դպրոցի մը գործադրութեան գործածելով, բարեկարգութեամբ և խելացութեամբ արդիւնաւորելով։

Կերևայ թէ կռնակը մեծ տոպրակ մը և ձեռքը փշոտ գաւազան մ'ունենալով դեկտեմբեր ամսոյ մէջ իրիկուն մ'երբ քաղաքը եկած էր ծածկաբար, նոյն իրիկունը մեծ հրդեհ մ'երեր էր տեղական իշխանութեան տունէն։ Այս մարդը կրակին մէջ նետուած և կեանքը վտանգի դնելով երկու մանուկ ազատած էր, որոնք ոստիկաններու դնդապետին զաւակներն էին. այս դէպքին չնորհիւ և ոչ մէկուն միտքը իսկ եր անոր անցյայտիրը հարցնել։ Անկէ 'ի վեր ամէն մարդ տեսած էր անոր անունը որ էր Մադըլէն անպատ։

ԳԼՈՒԽ Ը.

ՄԱՏԸԼԻՆ

Այս անձը դրեթէ քառասունը հինգ տարեկան մարդ մ'էր. մտատանջութեամբ մը դրաւուած կերեւար և բարի անձ մ'էր։ Իր վրայօք ահա այսքան էր ամենուն գիտցածը։

Այն արհեստը զոր այնքան սքանչելապէս վերակազմած էր ան, քիչ ժամանակուան մէջ մեծ յառաջադիմութիւն ընդունելը Մ... առուտուրի ընդարձակ կեդրոն մ'եղած էր։ Ամէն տարի մեծամեծ յանձնարարութիւններ կուղային Սպանիայէն ուր սև ապակեղէնը շատ կը գնուի։ Այս առուտուրին մէջ Մ... Լոնտրայի և Պերլինի հետ կը մրցէր։

Մադըլէն անպատը այնքան ստակ վաստկիլ սկսած էր որ երկրորդ տարին կրցած էր մեծ դործարան մը շինել տալ, որու մէջ երկու ընդարձակ արուեստարան կային՝ մին մարդերու և միւսը կիներու համար։ Անօթի ըլլալը կրնար աշխատելու դալ, և ապահով էր թէ հոն գործ և հայց պիտի գտնէր։ Մադըլէն անպատը մարդերէն ժրութիւն, կիներէն մաքուր վարք և ամենէն աւ ուղղութիւն կը պահանջէր։ Արուեստարանները զատել տուած էր՝ երկու սեռը իրարմէ բաժ-

նելու համար, որպէս զի կիները եւ աղջիկները խոհեմութեան չշեղին: Այս մասին անողոքելի էր: Միայն այս մասին ներողամտութիւն չունէր: Այսպէս խստութեամբ վարուելուն պէտք պատճառ մ'ալ սա էր որ Մ... պահպան զօրը ունեցող քաղաք մ'ըլլալով, ապահանութեան ատիճները խիստ շատ կը պահանջէին: Վերջապէս իր գալուստը բարիք մը, եւ ներկայութիւնն ալ նախախնամութիւն մ'եղած էր: Մաթըէնի գալուստէն առաջ երիցին մէջ ամէն բան նուաղման վիճակի մէջ էր, մինչդեռ հիմա ամէն բան աշխատութեան առողջաւէտ կենդանութեամբը կապրէր: Առատ շրջաբերութիւն մ'ամենուն կենդանութիւն կուտար եւ ամենուրեք կը թափանցէր: Առուտուրի գործարքը եւ թղթատուութիւնը անծանօթ բաներ էին: Ամենէն պատարի դըպանները մէջ սակաւ ինչ սակ, ամենէն անշուք բնակարաններուն մէջն ալ փոքր ինչ ուրախութիւն կար:

Մաթըէն ախպարը ամէն մարդու գործ կուտար: Թէ մարդերէն եւ թէ աղջիկներէն կը պահանջէր որ պարկեշտ ըլլան: Այս գործօնէութեան ժամանակ, որու պատճառը եւ առանցքը ինքն էր, Մաթըէն ախպարը հարստութիւն կը դիզէր. բայց ամենեւին չէր երեւար թէ իր գլխաւոր նպատակը հարստանալն էր, թէեւ առուտուրով զբաղող հասարակ մարդու մ'այս պիսի գլխաւոր նպատակ չունենալը զարմանալի թուի: Կերեւար թէ ուրիշներուն հոգը կը տանէր քանիէ իրը: Ամէն մարդ գիտէր թէ 1820ին անի վեց հարիւր հազար ֆրանկի գումար մ'ունէր, զոր Լաֆիթի սեղանատունին քով շահու դրած էր, բայց իր անձին համար այս գումարը պահելէն առաջ քաղաքին եւ աղքատներուն համար մէկ միլիոն ֆրանկէն աւելի սակ ծախս ըրած էր: Հիւանդանոցին հաստատութիւնը փառքի բան մ'ըլլալով, իր ծախքովը տասն անկողին հաստատած էր ամէն պիտոյքովը: Մ... քաղաքը երկու մասի կը բաժնուի, մին վերին քաղաք, եւ միւսն ալ ստորին քաղաք կըսուի: Ստորին քաղաքը ուր ինք կը բնակէր, մէկ դպրոց ունէր միայն որ անպիտան եւ խարխուլ տուն մ'էր. ուստի Մաթըէն երկու նոր դպրոց շինել տուած էր՝ մին արու եւ միւսը էգ սեռին համար: Երկու վարժապետները իր քսակէն պատ ամսականս կուտար, որ պաշտօնականն ամսականին կրկինն էր: Մարդ մ'անոր այս առատաձեռնութեան վրայ զարմանալուն համար, Մաթըէն օր մ'ըսաւ անոր. «Տէրութեան առաջին պաշտօնեաներն են դայեակը եւ վարժապետը»: Իւր ծախքովը ապաստանարան մ'ալ հաստատած էր պզտիկ մանկանց համար. այս տեսակ հաստատութիւն մը այն ժամանակները դեռ Ֆրանսայի մէջ անծանօթ բան մ'էր. նաեւ օդնութեան սնտուկ մը հաստատած էր ծեր եւ հիւանդոտ բանուորներու համար: Իր դրամարանը կիզրան մ'ըլլալուն համար, անոր բոլորտիքը շուտ մը նոր թաղ մը կազմուած էր ուր բազմաթիւ չքաւոր ընտանիք կար եւ ուր ձրի դեղարան մը հաստատած էր: Այլ ժամանակները բարեմիտ անձինք երբ անոր գործի ձեռնարկելը տեսան, ըսին թէ հարստանալ ուզող սմանդուկ մարդ մ'է ան: Երբ տեսան թէ իրեն համար հարստութիւն պիղծ առաջ քաղաքը ճոխացուց, մի եւ նոյն բարեմիտ անձերը ըսին թէ փառասէր մ'է ան: Այս կարծիքը հաւանական կերեւար, մանաւանդ որ այն մարդը կրօնասէր մ'էր, եւ կրօնական պարտաւորութիւններն ալ փոքր՝ի շատէ կը կատարէր. այն ժամանակները շատ դժուար բան մ'էր այս: Ամէն կիրակի կանոնաւորապէս եկեղեցի կերթար ցած ձայնով մատուցուած պատարագին ներկայ գտնուելու համար: Այս կրօնասիրութիւնը շուտ մը սկսաւ մտածուք պատճառել տեղական երեսփոխանին որ ամենուրեք իրեն հակառակորդ մը նշմարել կը կարծէր: Այս երեսփոխանը՝ որ կայսրութեան օբէնադիր ժողովին անդամներէն մին էր՝ կրօնական կարծիքներու մասին համամիտ էր Օրաթուարի միաբաններէն մէկուն հետ, որ Օլիմպանիի գործք Փուշէ կանուանէր եւ որու աքսորած ու բարեկամ եղած էր ան: Առանձնութեանը մէջ

Աստուծոյ վրայ կը խնդար : Բայց երբ տեսաւ որ Հարուստ դործարանապետ Մաթըէնը ժամը ութին պատարագ մատի ընելու կերթար , կարծեց թէ կընար իր տեղ երեսփոխան ընտրուիլ ան , և որոշեց պերազանցել զան . ժիզուիթ խոստովանահայր մ'ունենալ , և թէ առաւ և թէ իրիկուն նկեղեցի երթալ սկսաւ հանդիսաւոր պատարագ լսելու և երեկոյեան ժամերգութեան ներկայ գտնուելու համար :

Այն ժամանակները ամէն փառասէր առանց արդել և խոչընդոտ նայելու ուղղակի դէպ 'ի նպատակը կարշաւէր : Երեսփոխանին այս երիւղէն թէ աղբատները և թէ Աստուածօդուտ մը տեսան , վասն զի պատուաբժան երեսփոխանն ալ հիւանդանոցին մէջ երիու անկողին հաստատեց , որպէս զի աւելցած անկողիններուն թիւը տասներկու եղաւ : Բայց 1819ին առաւօտ մը քաղաքին մէջ լուր եղաւ թէ պարոն կառավարչին յանձնարարութեան շնորհիւ , և քաղաքին մատուցած ծառայութեանցը համար Մաթըէնն ալ պատուոյ հրամանագրով մը Մ . . . ի քաղաքապետ պիտի անուանի : Որոնք որ այս նորութիւնը « փառասէր մը » համարած էին՝ ուրախութեամբ սկսան զրոյն աղաղակել ինչպէս որ ամէն մարդ կը փափաքի այսպիսի լուր մը . — Միթէ չէինք ըսեր թէ փառասէր մ'էր ան : Ամբողջ քաղաքին մէջ իրարանցում մը տիրեց : Լուրը իրաւ էր : Քանի մ'օրէն նոր Մաճիներդը Մաթըէնի քաղաքապետ անուանելը հրատարակեց : Հետեւեալ օրը ասի մեծ ժեզ քաղաքապետութեան պալտոնը :

Մի և նոյն տարին , այսինքն 1819ին , Մաթըէնի հնարած նոր գործողութեան արդիւնքը Ճարտարութեան արուեստանոցները դրուելով , գործաւորաց մասնաժողովին տեղեկագրին համաձայն թագաւորը Լեժիոն Տ'ընէօր ասպետ անուանեց հնարողը : Պէտի քաղաքը նորէն իրարանցումի ինկաւ : — Եհ , հիմա հասկցաւեցաւ որ խաչ մը կուզէ եղեր , ըսին : Մաթըէնն ալ խաչն ալ մերժեց :

Անտարակոյս հանդոյց մ'էր այս մարդը : Բարեմիտները

ձայներնին քաշեցին՝ ըսելով . վերջապէս բաղդաթխտիք մ'էր ան : Ինչպէս տեսանք , քաղաքը շատ կը պարտաւորէր անոր , իսկ աղքատները ամէն բան անոր կը պարտաւորէին , այնքան օգտակար էր այս մարդը որ վերջապէս հարկ եղած էր պատուել զան . նաև այնքան հեզահամբոյր էր որ վերջապէս հարկ եղած էր սիրել զան : Մանաւորապէս իր բանւորներէն կը պաշտուէր , և ամլամաղձային ծանրութիւնամբ մը կընդունէր անոնց սիրոյ այս եռանգալի հաւաստիքը : Երբ Հարուստ լսեցաւ Հաստատուեցաւ , « ախտաւոր անձերը » բարեւեցին զինքը . և քաղաքացիք ալ սկսան Պարոն Մաթըէն անուանել : Բանւորները և մանուհիները առաջուան պէս Մաթըէն սխալեցան անուանելէն . երբ այսպէս կանուանէր , ծովերականէն աւելի կը ժպտէր : Քանի որ կը բարձրանար , հրաւէրներ կը տեղային իր վրայ : « Ախտաւոր անձերու ընկերութիւնը » կը պահանջէր զան : Մ . . . ի երեւելի մարդերու պղտի այլ շքեղ սրահները հիմա բաց էին Մաթըէնի համար , վասն զի մլիոնատուր մ'էր , մինչդեռ յայտնի է թէ առջի աստիճանները դոց պիտի ըլլային , վասն զի արհետատուր մ'էր : Զինքը վասակելու համար հազար ու մէկ ողբալի կերպեր բանեցուցին , բայց ինք չուզեց ետնառիլ անոնց հետ : Այս անդամ ալ բարեմիտները չկրցան զսպուիլ , և ըսին . — Տգէտ և անկիրթ մարդ մ'է : Յայտնի չէ թէ ում և ինչ է : Ընկերութեանց մէջ մտնել եղելը ատոր գործը չէ : Կարդալ գիտնալը ամպամ ապացուցուած չէ — :

Երբ ատակ վաստակիլը տեսան , ըսին . Վաճառական մ'է : Երբ տեսան թէ իր ատակը ամէնուն համար ծախս կընէ , ըսին . Փառասէր մ'է : Երբ տեսան թէ ամէն պատիւ և աստղութիւն կը մերժէր , ըսին . Բաղդախնդիր մ'է : Երբ տեսան թէ կը մերժէ նաև ակնառուր մարդերու ընկերութիւնը , ըսին . Ցաւտնակ մ'է :

Բայց 1820ին , այսինքն քաղաքը գալէն հինգ տարի ետք անոր Մ . . . ի համար ըրած աղէկութիւնները այնքան մեծ

և շատ էին, բոլորը երկրին բնակիչներուն փափաքը այնքան միահամուռ և համաձայն էր որ Թագաւորը նորէն քաղաքապետ անուանեց զան։ Նորէն մերժեց, բայց կառավարիչը հակառակեցաւ անոր մերժումին, բոլոր ախանաւոր մարդիկ եկան աղաչեցին որ ընդունի այն պաշտօնը. ժողովուրդը փողոցը խմբուելով կաղերսէր, վերջապէս այնքան սեխպեցին զինքը որ ալ հաւանեցաւ ընդունելու։

Հասարակ պառաւ կին մ'իր դռան շեմին վրայէն սրբատնեղութեամբ յետադայ դրեթէ բարկալի յանդիմանութիւնը ուղղեց անոր. Թոքի փալաքանչ ս'օգիպակը քան ս'է. ինչե՞ մարդ կրցած քարտուղարը ընելէ կը նահանջի՞։ Դիտող եղաւ թէ քաղաքապետութեան յանձնառու ըլլալուն առաջին պատճառ դրեթէ պառաւին այն յանդիմանութիւնն եղաւ։

Մատրէնի բարձրացման երրորդ եղանակը այսպէս եղաւ ահա։ Մատրէն սխալը Պ. Մատրէն եղած էր, յետոյ Պ. Մատրէն պարոն քաղաքապետ եղաւ։

ԳԼՈՒԽ Գ.

ԼԱՓԻԹԻՆ ՔՈՎ ԳՐՈՒԱԾ ԴՐԱՄՆԵՐ

Աջև սակայն իր առաջուան պարզութիւնը պահած էր։ Մաղերը ալևոր, նայուածքը ծանր, դէմքը բանուորի մը դէմքին պէս արևահար և կեղտարանն ալ փիլիսոփայի մը կերպարանին պէս խորհուն էր։ Սովորաբար լայնեզր գլխարկ կը դնէր և հատ չուխայէ աչքէն մը կը հաղնէր զոր մինչև կզակը կը կոճկէր։ Քաղաքապետութեան պաշտօնի պարտաւորութիւնները կը կատարէր, բայց ուրիշ բանի չվառնուելով առանձնաբէն կապրէր։ Քիչ մարդու հետ կը խօսէր։

Քաղաքավարական ձևերու ենթարկուելէ կզգուշանար, անտարբեր ձևով մը կը բարևէր, շուտ մը և գաղտնապես կը փախչէր, չխօսակցելու համար կը ժպտէր և չժպտելու համար

քան մը կուտար։ Ինչերը լաւ արջ մ'է ան, կըսէին։ Իր պաշտպանն էր դաշտերու մէջ պարսիլ։

Միշտ միևնոյն կերևէր՝ առջևը բայց դիրքը մ'ուրիշով զոր կը կարդար։ Պզտի և լաւ դրքատուն մ'ունէր։ Գիրքերը կը սիրէր, գիրքերը անտարբեր և ապահով բարեկամներ են։ Քանի որ կը հարստանար և հետևաբար աւելի պարապ ժամանակ կունենար, կարծես թէ փրկուէտ առթի մը կը համարէր իր պարապ ժամերը միտքը մշակելու յաճախանալը։ Մ... նկատ ըլլալէն յետոյ ամէն մարդ կը դիտէր որ առաւել առաւելի քաղաքավար, աւելի մարգարէ և աւելի անոյշ կերպով խօսիլ կը սովրէր ան։ Պարտեզու պայման ժամանակ հետը կամովին հրացան մը կը առնէր, բայց քիչ անգամ կը դործածէր։ Երբ պատահաբար դործածել հարկ ըլլար, հրացանը անանկ ձշդութեամբ կը նետէր որ առնողին վախ կուտար։ Ամենևին անձնաց կենդանի մը չէր մեղցներ։ Ամենևին պզտիկ թռչունի մը վրայ հրացան չէր պարպեր։

Թէև ալ երիտասարդ չէր, կը պատմուէր սակայն թէ առյին ոյժ մ'ունէր։ Պետք ունեցողին կօդնէր ուժովը, ձի մը վեր կը վերցնէր, տղին մէջ խրող անիւը կը հրէր կը հանէր, և փախչող ցուլը եղջիւրներէն բռնելով կը կեցնէր։ Դուրս ելած ժամանակ միշտ քսակը ստակ կը լեցնէր, և պարապելով ետ կը դառնար։ Երբ դիւղէ մը կանցնէր, կիսամերկ մանուկները զուարթօրէն եռևէն կը վազէին և ձանձիկնեբու երամի մը պէս կը շրջապատէին զան։

Կը կարծուէր թէ ժամանակաւ երկարօրծութեամբ ապրող մարդ մ'էր ան, վասն զի ամէն տեսակ օդտակար գաղտնիքներ դիտէր և դիւղացիներուն կը հաղորդէր։ Ցորենին ցեղը ջնջել կը սորվեցնէր որ էր ջուրի մէջ հասարակ աղ լուծել և այն ջուրը շտեմարանին մէջ սրսկել. նաև ձեղուններն ձեղերը անոյշ ողողել. ուտիճներն ալ հալածելուն կերպը կը սորվեցնէր որ էր օրվիօ (orviot) բռսած ծաղկաթուղնիկը թէ պատերուն և յարկերուն վրայ, թէ աթոռներուն

և տուներուն մէջ և ամենուրեք կախել։ Դաշտի մը մէջէն արջնդեղը, վիկը, լիւզէրն (luzette), կավերօլ (gaverolle) և աղուխագի ըսուած տունկերը, և յորենը ուտող ուրիշ անձն անպիտան բոյսերը արմատովին խլելու կերպերը դիտէր։ Ճապարանոց մը մուկերուն յարձակումներէն ազատ պահելու համար մի միայն Պարպարիայի պզտիկ խազի մը հոտը կը սփռէր անոր մէջ։

Օր մը տեսաւ որ քաղաքին մարդերէն ոմանք եղէնները կը խլէին և կը նետէին. այս արմատաքի խլուած և արդէն չորցած տունկերուն կոյտը նայէլէն եաք, ըսաւ. Ա՛լ մնան այս տունկերը։ Բայց կրնային օգտակար ըլլալ անոնք եթէ դարձածելուն կերպը գիտցուէր։ Եղէնը երբ նորաբոյս է, տերևը պատուական բանջարեղէն մ՚է. երբ կը ծերանայ, կանեփին և վուշին պէս նուրբ և երկայն թելերը և թելիկները (filaments) ունի։ Եղէնի կատաղ ալ կանեփի կատաւին արժէքն ունի։ Եղէնին մանրուածը հաւի կեր կըլլայ, իսկ փրչուածը եղջերաւոր կենդանիներու կը տրուի։ Եղէնին կուտը եթէ խոտին հետ խառնուելով անասնոց տրուի, ասոնց մազը փայլուն կառնու. իսկ արմատը եթէ աղին հետ խառնուի, աղտոտ դեղին գոյն կարտադրէ։ Մանաւանդ թէ պատուական խոտ մ՚է այն և կրնայ երկու անգամ հնձուիլ։ Եւ ինչ պէտք է եղէնը արտաբերելու համար։ Սակաւ ինչ երկիր, իսկ խնամքի և մշակութեան ամենևին հարկ չկայ։ Միայն թէ կուտը քանի որ կը հասունցնայ, կը թափի, և հաւքերը դժուար է։ Ահա բոլորը պէտք եղածը։ Մարդ եթէ քիչ մ՚աշխատելը յանձն առնու, եղէնը կրնայ օգտակար ըլլալ, բանի տեղ չդրուելուն համար է որ ձեռասակար կըլլայ, հետևաբար կը խլուի և կը նետուի։ Ո՛րքան մարդիկ կան որք եղէնին կը նմանին։ Պահ մը լռելէն եաք, շարայարեց. Բարեկամներ, պիտանաք որ ոչ անպիտան խոտ կայ և ոչ ալ անպիտան մարդ. մշակները միայն անպիտան են։

Մանուկներէն սիրուելուն ուրիշ պատճառ մ՚ալ ունէր. յաւրդով և հնդիկ ընկոյզներով պղտիկ և սիրուն խաղալիկներ շինել գիտէր։

Երբ կը տեսնէր թէ եկեղեցիի մը դուռը սևերով ծածկուած է, ներս կը մտնէր. ինչպէս ուրիշները սգոյտ թեան հանդիսի մը պատուիրել կուզեն, ան ալ թաղման հանդիսի պատուիրել կուզէր։ Կարի յոյժ քաղցրաբարոյ ըլլալուն համար կերթար ուր որ այրի մը կամ դժբաղդ մը կար. սգաւոր բարեկամներու, սևեր հագուղ սգաւոր ընտանիքներու, և դպաղի մը բոլորտիքը հեծոց եկեղեցականներու հետ կը պտտար։ Կարծես թէ յօժարակամ իր խորհրդածութեանց բնաբան կընէր այն տխուր տաղտկութիւնները, որոնք ուրիշ աշխարհի մը տեսիլով լի են։ Աչքը երկինք կը վերցնէր և անդրդուելութեան ամէն պաղտնիքը ընդունարելու փափաքով մը համակուած մտիկ կընէր այն տրամալի ձայները որոնք մահուան խաւարամած անդունդին առջև կօրհնաբանեն։

Շատ բարի գործեր կընէր, չար գործեր ընդդէմ մը պէտ պահուըտելով։ Իրիկունը պաղտնապէս տուները կը մտնէր, ծածուկ կերպով տանդուղներէն վեր կելնէր։ Այս կամ այն խեղճ մարդը երբ իր տնակը կը մտնէր, կը տեսնէր որ տապակայութեանը ժամանակ իր դուռը բացուած էր, երբեմն ալ խորտակուած։ Խեղճ մարդը կը պօռար. Զարագործ մ՚եկած ըլլալու է։ Բայց ներս մտնելով նախ և առաջ կարտիլի մը վրայ մսեցուած ոսկի մը կը նշմարէր։ Եկող «չարագործը» Մատուլէն անպարն էր։

Հնգաքարոյ և տրտում էր ան։ Ծոցնուլուրդը կըսէր. Ահա հարուստ մարդ մը որ հպարտ չերևար. ահա երջանիկ մարդ մը որ դոհ չերևար։

Ոմանք կը պնդէին թէ խորհրդաւոր (mystérieux) մարդ մ՚է ան, և կը հաստատէին թէ բնաւ ոչ ոք կը մտնէր այնոր սենեակը որ Ճիշդ ճղնաւորի մը միաբանին կը նմանէր և որ աւագի թեաւոր ժամացոյցներով, խաչաձև խտուցներով և մեռելի գլուխներով զարդարուած և շահուած էր։ Այն-

քան շատ խօսուեցաւ այս նիւթի վրայ որ օր մը Մ. . . ի գե-
ղեցիկ և նորատի կիներէն քանի մը չարամիտներ անոր տունը
եկան և ըսին. — Պ. քաղաքապետ, հաճեցէք ձեր սենեակը
մեզի ցուցնելու, կըսուի թէ այր մ'է այն: Ծպտեցաւ Մատը-
էն, և անմիջապէս այն այրը մտցուց զանոնք: Միճապէս պատ-
ժուեցաւ իրենց հետաքրքրութիւնը, վասն զի պարզապէս ա-
ղաւէս բաւական տպեղ կարասիներով զարդարուած էր այն
և պատերն ալ տասներիւ ոսկի[3] արժէք ունեցող թուղթերով
ծածկուած էին: Հին ձեւով շինուած երիւ աշտանակ տեսան
միայն, որոնք չվինեէային վրան էին, և որոնք արծաթեայ կե-
ըեայն, վասն զի «դրոշմուած» էին: Ասի պղպեղ քաղաք-
ներու մէջ լմասասալից պիտոյութիւն մ'է:

Այլ սակայն գարձեալ կըսուէր թէ ոչ ոք այն սենեակը
կը մտնէր, և թէ անասասականի խոռոչ մ'է, երազներու
տեղ մ'է, ծակ մ'է, դերեզման մ'է:

Ամանք փոխանակով կըսէին նաև թէ Լաֆիթին քով «ան-
բաւ» գումարներ դրած էր՝ ուշած ժամանակ անվիջապէս ի-
րեն յանձնուելու մասնաւոր պայմանով, հետևաբար կը շա-
բայարկէին անոնք, Պ. Մատըէն կրնար առաւօտ մը Լաֆի-
թին ներկայիլ, ընհալափիր մը առորագրել և երիւ քա-
պէի մէջ իր երիւ կամ երեք միլիոնը առնուլ և տանիլ: Ի-
րապէս այս «երիւ կամ երեք միլիոնը», ինչպէս որ ը-
սինք արդէն, վեց հարիւր երեսուն կամ քառասուն հազար
ֆրանգ էր:

ԳԼՈՒԽ ԳՓ

Պ. ՄԱՏԸԼԷՆ ԿԸ ՍՊԱՍՈՒԻ

1821ի սկիզբները օրագիրները Պ. Մերիէլի մահուիլ
ծանուցին, որ գերապատիւ Պէնվէնիւ մահանուով Տ. . . ի ե-
պիսկոպոսն էր, և ուխտուները երիւ տարեկան հատկին մէջ
վախճանած էր սուրբի անուն մը թողլով:

Բայց պարագայ մը կար զոր օրագիրները մոռցեր էին յի-
շել: Տ. . . ի եպիսկոպոսը մեռած առնն արդէն քանի մը
տարիէ՝ի վեր կոյր էր, և զոհ էր կոյր ըլլալուն, վասն զի
քոյրը իր քոյրն էր,

Հոս տեղն է ըսելու թէ կոյր ըլլալ և սիրուիլը իրօք այս
աշխարհիս մէջ ուր կատարեալ բան մը չկայ, երանութեան
ամենէն տարօրինակ ու միանգամայն պատուական ձևերէն մին
է: Շարունակ քովդ ունենալ կին մը, աղջիկ մը, քոյր մը,
սիրուն անձ մը որ պատրաստ կսպասէ իրմէ հարիւրութիւն
ունենալուդ համար և որ նոյնպէս չիրնար քեզմէ բաժնուիլ,
պղտ թէ անհրաժեշտաբար հարիւրը ես որու որ քեզի կա-
րևոր է, անընդհատ սերդ կարենալ համոմատել անոր ձե-
ռնտուութեան քանակութեանը հետ զոր քեզ կը նուիրէ, և
ըսել ինքնին. Քանի որ իր բոլոր ժամերը ինձ կը նուիրէ,
ըսել է թէ իր սրտին տէր ես եմ. դէմքին տեղ միտքը և
աշխարհիս խաւարման մէջ անձի մը հաւատարմութիւնը տես-
նել, ճոչունի մը թևերուն ձայնին պէս շրջապատող մը քըս-
ուիլը զգալ, անոր երթալ և գալը, ելնելը, մտնելը, խօս-
իլը և երգելը լսել և մտածել թէ այս քայլերուն, խօս-
քին և երգին առարկան դուն ես. ամէն մէկ րոպէին նոյն խոհ
քու ձգողական զօրութիւնդ արտայայտել, պղտ թէ ուրբան
աւելի հեռանդ ըլլաս, այնքան աւելի զօրաւոր ես. մտու-
թեան մէջ և մտութեամբ ըլլալ ասոր մտորութիւնը
կը գտնայ այն հրեշտակը. ուհ, ասի այնպիսի երջանկու-
թիւն մ'է որու հաւատարը քիչ կը գտնուի այս աշխարհի
մէջ: Պետնքի գերագոյն երջանկութիւնն է համոզուիլ թէ
սիրուած ես. թէ նոյն իսկ քեզի համար կամ՝ լաւ ես ը-
սել՝ առանց քու կամքիդ սիրուած ես. կոյրը ահա այս հա-
մոզումը ունի:

Այսպիսի դժբաղդութեան մը մէջ խնամուիլը պզուիլ է:
Այսպիսի կոյրի մը ինչ կը պակսի. — Ոչինչ, վասն զի ամ որ
աչը կը վայելէ, ըլլալը վայելելէ գադրած չհամարուիր, մա-

ֆաւանդ ամէնէն սէր մը որ բոլորովին առաքինութեամբ կազմուած է : Ուր որ սուղութիւն կայ , հոն կաւրութիւն չկայ : Հոգին խարխափումով հոգի մը կը փնտռէ և կը գտնէ : Այս գտնուած և յայտնուած հոգին կին մ'է : Ձեռք մը կայ որ կօգնէ քեզի , աչքը ձեռքն է այն , շուրթերը կան որոնք ճակատիդ կը հպին , անոր շուրթերն են անոնք , քովէդ շընչառութիւն մը կը լսես , և ահա կզգաս թէ քովդ կայնողը ան է : Ամէն բան անորմէ սառնալը , ոչ միայն պաշտպանել նաև անոր պատուիրանը վայելելը , ամէնէն չքաղցրը , ուրիշներու համար քաղցրահամբոյր սիրոյ արարածը որ քեզ ձեռնտու է , կը մնայ այս անդրդուելի եզերքին վրայ , ձեռքովդ նախանձամտութիւնը բռնել և կարենալ քնդրկել զան , մի խօսքով զԱստուած ջջափելը հիանալի երանութիւն մ'է : Սիրտը , որ երկնային մթահար ծաղիկ մ'է , խորհրդաւոր փթթումով կը բացուի : Այս մթութիւնը չես տար , եթէ նախ արևին բոլոր լոյսը իրը փոխարէն տուած քեզ : Հրեշտակներուն հոգին այս մթութեան մէջն է , անընդհատ հոն է , եթէ պահ մը հեռանայ , նորէն կուգայ , երազին պէս կանհետի և իրութեան պէս նորէն կերևայ : Ջերմութիւն մը կզգաս որ կը մօտի , ահա եկաւ , քովդ է այն : Պայծառութեամբ , ուրախութեամբ և հիացումով դլուխին կը համակուիս . մտքին մէջ ճառագայթ մ'ես : Հապա ան՞ր թողուցիր այն հաղարաւոր պզտի խնամիները և ոչինչ բաները որոնք ահագին կերեւան այսպիսի զրկումի մ'ենթարկուողին : Կնային ձայնի մ'ամենէն անպատում եղանակները քեզ օրօրելու կը ծառայեն , և կըլլան քու սիրեցեալ փոխանակ իրական սիրեցեալդ որու տեսքէն զրկուած ես : Քեզի պղտուղը հոգի մ'է : Բան մը չես տեսներ , բայց կզգաս թէ կը պաշտուիս : Այսպիսի կեանք մը խաւարին դրախտի մը մէջ ապրիլ է :

Պիէնվընիւ եպիսկոպոսը ահա այս դրախտէն հանդերձեալ աշխարհի դրախտը փոխադրուած էր :

Իր մահուան լուրը նաև Մ...ի տեղական լրագրին մէջ

հրատարակուեցաւ : Հետևեալ օրը պ . Մատրլէն սև հագուեցաւ և փեղջրին վրայ սև շղարշ մը դրաւ :

Քաղաքին մէջ այս սգաւորութիւնը դիտուեցաւ և շաղակրատութեանց տեղի տուաւ : Այս սգաւորութիւնը պ . Մատրլէնի սկզբնաւորութեան նկատմամբ նշոյլ մը համարուեցաւ : Իրը հետևութիւն կարծուեցաւ թէ պատկառելի եպիսկոպոսին հետ խնամութիւն մ'ուներ ան : Տ...է եպիսկոպոսին տոքը կը պահէ , ըսին վերին դասու մարդերը . այս սգաւորութեան պատճառաւ պ . Մատրլէն աւելի բարձր դիրք մը ստացաւ , և Մ...ի ազնուականներուն դասին մէջ յանկարծ և անվիճելի տեղ համարում մը ստացաւ : Քաղաքին ազնուականաց մանրադիտական արուարձանը կարծելով թէ եպիսկոպոսին ազգականն է , մտածեց տոքթրինայն հանել պ . Մատրլէնը : Ասի իր յառաջանալը նշմարեց՝ տեսնելով որ պատաւ կիները աւելի յարգանք կը վարուէին հետը և երիտասարդուհիներն ալ աւելի կը ժպտէին : Երիկուն մ'այս պզտի ազնուականներէն հասակաւոր կին մը՝ իր հնութեան պատճառաւ ամենէն աւելի հետաքրքիր ըլլալու իրաւունքն ունենալ կարծելով՝ համարձակեցաւ հարցնել : — պ . քաղաքապետ , կարծեմ թէ Տ...ի հանդուցեալ եպիսկոպոսին եղբօրորդին էք :

— Ոչ , տիկին , պատասխանեց :

— Բայց ինչո՞ւ ուրեմն իր սուգը կը պահէք , հարցուց պատաւ հետաքրքիրը :

— Վասն զի երիտասարդութեանս ժամանակ անոր ընտանիքին քով սպասաւոր էի , կրկնեց պ . Մատրլէն :

Ուրիշ բան մ'ալ կը դիտուէր . ամէն անգամ որ Ճամբորդութիւն ընդ և մաքրելու համար ծխան փնտռող երիտասարդ Սավուայի մը կանցնէր քաղաքէն , պարոն քաղաքապետը կանչել կուտար զան , անունը կը հարցնէր և ստակ կուտար անոր : Պզտի Սավուացիները իրարու հետ այս մասին կը խօսակցէին , և Մ...էն ալ ասանկ Սավուացիներ շատ կանցնէր :

ԳԼՈՒԽ Ե՛

ՀՈՒՅԶՈՆԻՆ ՎՐԱՑ ԸՆՈՒՑՈՒՑ ՓԵՏԼԵՑԻՆԵՐ

Կարաւան համայ և ժամանակ անցնելով, ամէն հակառակ իւրթիւններդ գադրեցան։ Ի սկզբան պ. Մաարլէն բամբասանքի և զրպարտութիւններու ենթարկուեցաւ. ամէն բարձրացող համար այսպիսի ենթարկութիւն մը կարծես թէ օրէնք մ'եղած է. եարէն այս բամբասանքները և զրպարտութիւնները՝ չարաճճութեան և ատ ալ չարախօսութեան փոխուեցան. յետոյ ասոնց ամէնն ալ գադրեցաւ. ամէնէն ալ անթերի, միահամուռ և սրտագին կերպով յարգուեցաւ, և 1821ին միջոցները եղաւ ատեն մ'ուր «պ. քաղաքապետ» խօսքը Մ...ի մէջ արտասանուեցաւ մի և նոյն եղանակաւորով 1815ին Տ...ի մէջ կարտասանուէր «Գերազանցութիւն» խօսքը։ Ըստ մարդիկ տասը մղոն հեռաւորութիւն ունեցող տեղէն քաղաքը կուգային պ. Մաարլէնին խորհուրդ հարցնելու համար։ Գէշերը կը կարգադրէր, պատերը կարդիլէր, թշնամիները կը հաշտեցնէր։ Իւրաքանչիւր ոք իր իրաւունքին դատաւոր կը կարծէր զան։ կարծես թէ բնական օրէնքի մատեանն էր անոր հոգին։ Վեց կամ եօթ տարուան մէջ կարծես թէ համաճարակ պատահանք մը հետզհետէ ամենուն վրայ տարածուելով բոլոր երկրին բնակիչները զրաւած էր։

Քաղաքին և շրջականերուն մէջ այս համաճարակ պատահանքէն մարդ մը միայն չզրաւուեցաւ, որ՝ պ. Մաարլէնի ըրած ամէն աղէկութեանց հակառակ՝ անդրդուելի մնաց, և կերևայ թէ անուղղելի և անխռով բնազդումի մը մղուելով արհամարհանքով կը կենար։ Իրօք կան մարդիկ որոնք կարծես թէ ձիշդ անանցային բնազդում մ'ունին, որ ամէն բնազդումի պէս զուտ և անթերի է և որ համակրութիւն և հակակրութիւն կը ներշնչէ, որ հարիւրապատիկ բնաւորու-

թիւն մը միւս բնաւորութիւնէ մը կը զատէ, չվարանիլ, չխռովիլ, չնեղիլ և բնաւ իր պիտացէն չձգիլը, մարդին մէջ կը տեսնէ, անսխալելի և խրոխտ է. մարդին ամէն խրատները և բանաւորութեան ամէն եղրակացութիւնները կը մերժէ յամառութեամբ, և որ՝ ձակատագրական իրենը ինչ կերպով ուղէն ծոզ նախատեսմանուած ըլլան, մարդ–կատուին էութիւնը մարդ–շունին, և մարդ–առիւծին էութիւնն ալ մարդ–ազուէսին կիմացնէ պաղատանօք։

Շատ անգամ երբ պ. Մաարլէն փողոցէն կանցնէր հանդարտօրէն, գործավանօք և ամենուն օրհնութիւնը վայելելով, երիտասարդ մը հիմնոյ մը հաղնոյ, ձեռքը հատ գաւազան մ'առած, տափաձև (rabattu) գլխարկ մը գրուած բարձրահասակ մարդ մը յանկարծ եռին կը դառնար, պ. Մաարլէնի եռանէն կը նայէր մինչև անոր անհետանալը, թևերը կուրծքին վրայ կը դնէր խաչաձև, համայ համայ գլուխը կորորէր, և վերին շուրթը վարի շուրթին հետ մինչև քիթը կը բարձրէր. նշանական տեսակ մը չարժուած մ'էր այս որ կրնայ յետագայ միտքով թարգմանուիլ. «Թայց մվ կրնայ ըլլալ այս մարդը։ Աստուածոյս տեղ մը տեսած եմ գինքը։ Թայց մվ կուզե ըլլալ, իրմէն բնաւ չվախնալ խաբուիմ միամտութեն»։

Այս անձը որ գրեթէ ազատական ծանրութիւն մ'ունէր, այն անձերու կարգէն էր, որոնք նաև արտաքին նշմարուելով գիտցին մնատանջութիւն կրնան։ Անունն էր Ժավէր, և ոստիկանութեան պաշտօնեայ էր։

Մ...ի մէջ ոստիկանի գժուարին այլ օտակար պաշտօնը կը վարէր։ Մաարլէնի սիրընտրութիւնները տեսած չէր։ Ժավէր պ. Շապույեէի պաշտպանութեան շնորհիւը առած էր իր պաշտօնը. պ. Շապույեէ այն ժամանակ Թարիզի ոստիկանութեան պաշտօնեայ և Տէրութեան պաշտօնաւոր Անկլէս կոմսին քարտուղարն էր։ Երբ Ժավէր Մ... եկած էր, մեծ գործարանապետին հարստութիւնը արդէն կազմուած, և Մաարլէն տեղապահը պ. Մաարլէն եղած էր։

Աստիկանութեան պաշտօնաւորներէ ամենք մտածուր կերպարան մ'ունին որ իշխանական երևոյթի մը հետ խառնուած հնազանդութիւն մ'ունի : Ծավէրը այս կերպարանը ունէր , բայց ոչ հնազանդութիւնը :

Եթէ հոգիները տեսանելի ըլլային , մեր համոզումը ունեցող մարդիկ տարօրինակ բան մը պիտի նշմարէին որոշակի . պիտի նշմարէին որ մարդկային ազգի անհատներուն ամէնքին մէկը անտանային աշխարհի ազդերէն մէկուն հետ համեմատութիւն ունի , և դիւրութեամբ պիտի տեսնէին սա ձշմարտութիւնը զոր մտածելու սովորողները հազիւ հազ ընդունած են . թէ ոտարէէն սկսելով մինչև արծիւին , խոզէն մինչև վագրին , վերջապէս ամէն անտանուններուն տեսակական յատկութիւնները մարդու մէջ ունի , և թէ մարդ մը այն յատկութիւններուն միացումն ունի : Երբեմն ալ մէկ քանին միասին կը տեսնենայ :

Անտանունները ոչ այլ ինչ են թէ ոչ մեր առաքինութիւններու և մտքութիւններու պատկերները որոնք մեր աչերուն առջև կը թափառին իբր մեր հոգիներու տեսանելի ուրուականները : Ատուած կը ցուցնէ մեզ զանոնք որպէս զի մտածենք : Բայց որովհետև անտանունները միայն տուեերներ են , Ատուած գաստիարակութեան կարողութիւն տուած չէ անոնց . դաստիարակիլ բառը հոս իր կատարեալ նշանակութեամբը առնելու է , և ինչ հարկ կար դաստիարակելի տեղծել զանոնք . բայց ընդ հակառակն մեր հոգիները իրութիւնները ընդլայնով և իրենց յատուկ վախճան մ'ունենալով , Ատուած իմացականութիւն այսինքն հնարաւոր գաստիարակութիւնը տուաւ անոնց : Ընկերային գաստիարակութիւնը եթէ լաւ կերպով արուի , միշտ կրնայ որ և է հոգւի մը պարտնակած օգտակարութիւնը արտաքերել :

Բայց հարկ է դիտնալ թէ այս խնդիրը երկրային առեղծուածի կեանքի նկատմամբ կը քննենք , և չենք նախադատելը (préjuger) մարդէս տարբերող էակներուն նախկին կամ ապագայ անձնատանութեան ծանրակշիռ խնդիրը : Տեսանելի կամքը (moi) մտածողին ամենին չները որ անտեսանելի կամքը ուրանայ : Այս զգուշութիւնը ընելէն ետք անցնինք :

Հիմա եթէ ընթերցողը պահ մը միտի հետ հաւանի թէ ամէն մէկ մարդ տիեզերքի մէջ պտնուած կենդանիներուն առանձնութիւնը մէկուն յատկութիւնը կունենայ , դիւրութեամբ պիտի կրնանք ըսել թէ ինչ էր ոստիկանութեան առաջ Ծավէրը :

Ամենուան պիւղայինները համոզուած են թէ ամէն էգ գայլի նորածին պատիկներուն հետ շուն մ'ալ կը ծնի , զոր մայրը կը մեռցնէ , որպէս զի մնծնալով չդիշատակ իր միւս ձագերը :

Մարդկային դէմք մը առած գայլէ մը ծնած այս շունին , և ահա Ծավէրին ինչ ըլլալը կիմանաս :

Ծավէր բանակի մը մէջ ծնած էր Մուղթ թափող գնդապետ մը որու երիկը թիարան նետուած էր : Ծավէր երբ տարիքը առաւ , մտածեց թէ մարդկային ընկերութենէ դուրս կը պտնուի և ալ անոր ծոցը վերադառնալու յոյսը կարեց : Դիտեց որ երկու դաս մարդի մարդկային ընկերութենէ դուրս կը ձգուին առանց ներելու . մին է ընկերութիւնը հալածողներուն դասը . միւսն ալ պահպանողներուն դասը . Ծավէր ստիպուած էր այս դասերուն մին կամ միւսը ընտրել . միանգամայն իր սրտին մէջ անաչառութեան , կանոնաւորութեան և ուղղամտութեան չգիտեմ ինչ տեսակ զգացում մը կար , որ անմեկնելի ատելութեամբ մը խառնուած էր , ատելութիւն այն պնչուներու յեղին դէմ , որմէ ինք յատաջ եկած էր : Ուստի ոստիկանութեան պաշտօնաւ վրան : Կամաց կամաց յառաջացաւ յաջողութեամբ : Քառասուն տարեկան հասակը մտած էր երբ տեսչութեան պաշտօնը ընդունեցաւ :

Երիտասարդութեանը ժամանակ հարաւային թիարանին մէջ բանտարկուած թիապարտներուն պահնորդութիւն ըրած էր :

Աւելի հետև երթալէ առաջ բացատրենք թէ ինչ է այդ

մարդային դէմք ըսուածը զոր քիչ մ'առաջ ծավէրին կու տայինք :

Ծավէրին մարդային դէմքն էր տափաձև քիմք մը երիւ խորունկ ուռնդերով. այտերուն վրայէն երիւ ակռին կիսամօրուս կը սարածուէին դէպ 'ի այն ուռնդերը : Աջին անդամ մարդ անհանգստութիւն մը կզգար երբ կը տեսնէր այս երիւ անտառը և երիւ խոռոչները : Ծավէրը քիչ անդամ և սոսկալի կերպիւ կը խնդար. և երբ կը խնդար, նըրբաձև շուրթերը կը բաժնուէին և կը յայտնէին անոր ոչ միայն ակռաները, այլ նաև լինդերը, և իր քթին բոլորտիքը կարճ, տափարակ և վայրենական ծալ մը կը կազմուէր ձիւղ վայրենի պաղանի մը կոճղիին վրայ կազմուած ծալի մը պէս: Ծավէրը երբ ծանր կը կենար, ամէնէ շունի մը կը նմանէր. երբ կը խնդար, վագրի մը կը նմանէր : Մանաւանդ թէ դանիկը փոքր, ծամառանը մեծ էր. մազերը ձակատը կը ծածկէին և յօնքերուն վրայ կիյնային. երիւ աչերուն մէջ կիպրոնական մշտահոյ պատուհի մը կը նշմարուէր բարիալի ասպղի մը պէս. նայուածքը մթին, բերանը ձմլուած և ահարկու էր. կերպարանն ալ պաղատնաբարոյ հրամանատարի մը կերպարանին կը նմանէր :

Այս մարդը երիւ զգացումէ կը բաղխտար, որոնք խիստ սրտով և յարաբերաբար խիստ բարի էին և զոր սակայն՝ չափազանցութիւնը կը վատթարէր. այս զգացումներուն միսն էր իշխանութիւնը յարգել. միւսն էր ապստամբութիւնը սանել. և Ծավէրը դողութիւնը, մարգասպանութիւնը, ամէն ոճիրները ապստամբութեան ձևեր կը համարէր : Գրեթէ կոյր և խորին հաւատարմութեամբ մը կը յարգէր ով որ սէրութեան կողմէն պաշտօն մը կը վարէր, առաջին պաշտօնեայէն սկսեալ մինչև պաշտապահը : Իսկ ով որ անդամ մը չարութեան օրինաւոր սահմանէն դուրս եղած էր, անոր արհամարհութեան, սանելութեան և դժխամակութեան կենթարկուէր բոլորովին : Ծավէրը բացարձակ էր, և բացառութիւն չէր ընդուներ : Մէկ կողմէն կըսէր. պաշտօնատարը չկրնար սխալիլ. պատասխանը բնաւ յանցանք չունի : — Միւս կողմէն ալ կըսէր. — Անդամանելի կերպով կորսուած են անոնք : Աղէտութիւն մը չեն կրնար ընել բնաւ : Բոլորովին համամիտ էր այն ծայրայեղ միտքերու հետ որոնք կը կարծեն թէ մարդկային օրէնքը չդիտեմ ինչ կարողութիւն ունի հրեշտները կազմելու, կամ լաւ ևս է ըսել անոնց հրեշտութիւնը հաստատելու, և որոնք բնակութեան ատորոտ Սթիքս՝ մը կը դնեն: Ծավէրը սատկական, ծանրակաց, անաչառ, սխալ մտածող և մտածանդներու պէս խոնարհ և հպարտ էր : Նայուածքը դայլկոն մ'էր : Անզգայ էր այն և կը ծակէր : Իւր բոլոր կեանքը սա երիւ բառով կամփոփուէր. Հսկել և պահպանել. աշխարհիս ամենէն դերբուկ ասպարէզին մէջ անծուղող դիծ մը հաստատած էր, ուսկէ չէր շեղեր. իր օգտակարութիւնը ինքն ալ գիտէր. իր պաշտօնը իր կրօնն էր. և ինչպէս եկեղեցական մ'իր պաշտօնը կը վարէ, նոյնպէս ան ալ լրտես ոստիկանի պաշտօնը կը վարէր : Վայ անոր որ իր ձեռքը կիյնար : Եթէ հայրը անդամ թիմարանէն փախչելու ըլլար, կը բռնէր. եթէ մայրը անդամ աքսորէն փախած ըլլար, կը մատնէր, և այսպէս վարուելովը պիտի զգար այն ներքին գոհունակութիւնը, զոր առաքինի մարդ մը կզգայ : Հարկ է նաև ըսել թէ զրկումներով, առանձնութեամբ և անձնուրացութեամբ կապրէր ան՝ առանց երբեք զբօսում մը վայելելու : Պարտաւորութիւնը անողոքարար կը կատարէր. ոստիկանութեան ինչ ըլլալը՝ Սպարտացիներուն Սպարտիայէ ինչ ըլլալը հանկարծակի պէս կը հանկնար. անդուխ պահնորդ մը, անընդհատ պարկեշտ մը, անողոք լրտես մը, վհատուկ ու միանդամայն Պրութիւս մ'էր ան :

Իր բոլոր անձէն կը հանգուէր թէ ծավէրը լրտեսդ և պահուզ մարդ մ'էր : Ծօզէֆ Տը Մեսթրի միսթիզական դպրոցը, որ այն ժամանակ բարձր աշխարհիս կազմութեան քնական հետևութիւն մը կը համարէր ինչ որ անդրանիկնա-

կան օրագիրներ կանուանէր , անշուշտ չգիտէր թե սենեակ մը կրնայ ծաւէրը խորհրդաւոր պահակը մ'ըլլալ : Չէր տեսնուեր ծաւէրին ձախատը որ գլխարկին տակ կաներևութեանար . չէին տեսնուեր աչերը որոնք յօնքերուն տակը կը պահուէին . չէր տեսնուեր կզակը որ իր փողկապին մէջ կերկննար . չէին տեսնուեր ձեռնոցները որոնք իր թեզանիներուն մէջ կը մնային ; չէր տեսնուեր նաև իր գաւազանը զոր թիկնոցին տակ կը պահէր : Բայց երբ առիթը պատահէր , գարանէ մ'ելլելու պէս յանկարծ բոլոր այս միջոցներէն անկիւնաւոր և ուղիղ ձախատ մը , աղեղաւոր նայուածք մը , սպառնալի կզակ մը , ահագին ձեռներ և սոսկալի գաւազան մը կելլէին :

Պարապ ժամերը , որք քիչ էին , ընթերցումով կանցուներ , թէև գիրքերը կատէր . ըսել է թէ բոլորովին անուս չէր , խօսելու առեն սեթևեթով մը կը խօսէր , և ասկէ ալ կը հասկցուէր անուս չըլլալը :

Ինչպէս ըսինք , ամենևին մոլութիւն մը չունէր : Երբ ինքն իրմէ գոհ ըլլար , քաշ մը քթախոտ կը վայելէր : Ասով միայն մարդկութեան կը յարէր : Դիւրին է երևակայել թէ ծաւէրէն կը վախնային բոլոր այն անձերը , զոր արդարութեան պաշտօնատուներն տարեկան վիճակագրութիւնը խափարշան անյիշատակներուն ներքև կը նշանակէ : Այս տեսակ մարդերը ծաւէրին անունը լսելնուն պէս լեզապատառ կը գրուէին , առնոր դէմքը տեսնելու առեն քար կը կտրէին :

Ահա այսպիսի անձ մ'էր այն սոսկալի մարդը : Ծաւէրը միշտ Պ . Մաթրէնի վրայ նայող աչ մ'էր . կարծես կասկածով և կարծիքով լի աչ մ'էր : Պ . Մաթրէն վերջապէս դիտած էր այս նայուածքը . բայց կարծես թէ անոնցմէ բան մը համարեց զայն : Եւ ոչ իսկ հարցում մ'ըրաւ ծաւէրին . ոչ կը փնտռէր զան և ոչ ալ կզգուշանար անոր մէ . ուշադրութիւն չընել ձևացնելով այս տաղտուկ և պրծիլ ծանրակիր նայուածքին համբերութեամբ կը տանէր : Ինչպէս ամէն մարդու , նոյնպէս ծաւէրի հետ ընտանեբար և մարդասիրաբար կը վարուէր :

Ծաւէրին բերնէն փախած քանի մը խօսքերը լսող մը կը դուշակէր թէ անի Մաթրէն ախպարի ուրիշ տեղ մը ձգած բոլոր նախնական հետքերը պաղտնաբար փնտռած էր այն հետաքրքրութեամբ որ ցեղի յարակից յատկութիւն մ'է և որ հաւասար կամքով ու միանգամայն քնազդումով կը բաղկանայ : Կարծես պիտէր , և երբեմն թապուն խօսքերով ալ կըսէր թէ մարդ մը քաղաքի մը մէջ աներևութացած ընտանիքի մը նկատմամբ քանի մը տեղեկութիւններ ստացած էր : Անգամ մ'ալ իւրովի խօսելու առեն ըսաւ . — կարծեմ թէ վերջապէս ձանչցայ զայն ըլլալը : Ցետոյ երիք օր մտածումով անցուց առանց խօսք մը հանելու բերնէն : Կերևայ թէ սըբբուած էր այն հետքը զոր նշմարած ըլլալ կը կարծէր :

Կան բաներ որոնց նշանակութիւնը կրնայ խիստ բացատրակութիւն ալ ամբաց կըլլանք միանգամայն՝ ըսելով թէ մարդկային արարածը իրապէս անսխալ բան մը չկրնար ունենալ , և քնազդումի բուն յատկութիւնն ալ շփոթիլ , յայտնուիլ և շեղիլ է : Եթէ այսպէս չըլլար քնազդումը , իմացականութենէ դերադոյն կըլլար , և անասունը մարդուս ունեցած լոյսէն լաւագոյն լոյս մ'ունեցած կըլլար :

Ցայտնի է թէ ծաւէրը փոքր ինչ շփոթուած էր Պ . Մաթրէնի քնական մարդասիրութիւնը և հանդարտութիւնը տեսնելով , բայց օր մը իր տարօրինակ ընթացքը Պ . Մաթրէնի վրայ կարծես տպաւորութիւն ըրաւ յետագայ առիթով :

ԳԼՈՒԽ Զ .

ՓՈՇԼԻՎԱՆ ԽՕՓԸՐԸ

ՊԱՐՈՆ Մաթրէն առաւօտ մը երբ կանցնէր պզտիկ փողոց մը որ քարայատակ չունէր , աղմուկ մը լսեց և քիչ մ'անդին բազմութիւն մը տեսնելով դէպ 'ի հոն ուղղեցաւ : Տեսաւ որ Փոշլեվան ախպար անունով ծեր մարդ մը

էր սայլին տակ մնացած էր, և սայլին ձին ինկած էր։

Այս Փոշլուվանը Պ. Մաարլէնի այն ժամանակ դեռ ունեցած սակաւաթիւ թշնամիներէն մին էր։ Պ. Մաարլէն Մ... քաղաքը եկած առեւտրերը Փոշլուվան որ վաղիմի նօտար և պրեմիէ պրոպէտ պիւզայի մ'էր, առուտուր մը կընէր։ Այս առուտուրը սկսեր էր աղէկ չգանել։ Փոշլուվան տեսած էր որ այն պարզ բանուորը կը հարստանար մինչդեռ ինք որ վարպետ էր, կաղքատնար։ Այս պատճառաւ սաստիկ նախանձ մը պատած էր, և Պ. Մաարլէնի պէշտիթիւն ընելու համար ինչ որ կրցած էր ընել, ըրած էր։ Նաքը մնանկանալով, և ծերութեանը մէջ սայլէ և ձիէ մ'ի զատ բան մը չունենալով, մանաւանդ թէ բնտանիք և զաւակ ալ չունենալով՝ սայլորդութիւն ընել սկսած էր ապրելու համար։

Ձին՝ երիւ ապրերը կարուած ըլլալուն համար չէր կրնար ելնել։ Ծերունին երիւ անիւներուն մէջ մնացեր էր։ Անանկ ձախող կերպով ինկած էր որ ամբողջ սայլը կուրծքին վրայ կը ծանրանար։ Սայլը բաւական ծանր կերպով բեռնաւորուած էր։ Փոշլուվան ախտարը ազատելին ձախով կը հոնչէր։ Ձինքը ազատելու փորձ մ'եղած էր, այլ 'ի զուր։ Անկարող չնաղութիւն մը, ձախողապէս օդնութիւն մը, սխալ շարժում մը կրնար մեռցնել զան։ Կառքը տակէն վեր վերցուելով միայն կարելի էր ազատել ինքը։ ուրիշ կերպով անհնարին էր։ Ծավէը՝ վառնդը տեղի ունեցած պահուն հասած ըլլալով, մարդ մը ղրկած էր որ երթայ բառնալի (cric) մը գտնէ և բերէ։

Երբ Պ. Մաարլէն եկաւ, տակն մարդ յարգանք մէկ կողմ քաշուեցաւ ճամբայ տալու համար։

— Օդնութիւն հասէք, կը պոռար ծեր Փոշլուվանը։ Բան մը զաւակ մը չկայ ծեր մը ազատելու համար։

Պ. Մաարլէն դէպ 'ի բազմութիւնը դառնալով, բառնալի մը կայ, հարցուց։

— Մարդ ղրկուեցաւ որ երթայ գտնէ և բերէ, պատասխանեց գիւղացի մը։

— Ո՞րքան առեղուան մէջ կրնայ գալ բառնալին։

— Ամենէն մօտակայ տեղը Ֆլաշօն է ուր պայտար մը կայ, մարդը հոն ղրկուեցաւ, բայց և այնպէս առ նուազն քառորդ մը սպասել պէտք է։

— Քառորդ մը, պոռաց Մաարլէն։

Օր մ'առաջ անձրև եկած, և գետինը թրջուած ըլլալուն համար, սայլը հետ գհետէ գետնին մէջ կը խրէր և հետ գհետէ ալ աւելի կը ճնշէր ծեր սայլորդին կուրծքը։ Ցայտնապէս կը տեսնուէր որ եթէ այսպէս հինգ վայրկեան եւս անցնելու ըլլար, ծերին երիւ կողն ալ պիտի խորտակուէր։

— Անկարելի է քառորդ մը սպասել, ըսաւ Մաարլէն գիւղացիներուն որոնք կը նայէին։

— Հարիւր կը պահանջէ սպասել։

— Բայց այն առեն ալ օգուտ մը չպիտի ընէ։ Մի'թէ չէք տեսներ սայլին խրիլը։

— Իրաւ կըսէք։

— Նայեցէք ինչ կըսեմ, կրկնեց Մաարլէն, կառքին տակ տակաւին բաւական տեղ կայ, ուր կրնայ մարդ մը սպրդիլ և կռնակովը վեր վերցնել կառքը։ Սրտոտ և գեռոտ մէկը կայ մէջերնիդ. հինգ լո՞է ո՛չ կուտամ յանձնառու ըլլողին։

Բազմութեան մէջէն և ոչ մէկը տեղէն շարժեցաւ։

— Տասը ռսկի, ըսաւ Մաարլէն։

Ներկայ գտնուող մարդիկ ամչնալով առջևնին կը նայէին։ Ասոնց մին մրմռալով ըսաւ.

— Ահագին ոյժ ունենալու է սայլը վերցնելու համար։ Մանաւանդ թէ տակը մտնելու և ճնշուելու վտանգն ալ աչքը առնելու է։

— Օ'ն, քաջալերութիւն, քսան ռսկի, ըսաւ Մաարլէն։ Մի և նոյն լռութիւնը շարունակեց։

— Տրամադրութիւն ունին, բայց, — ըսաւ ձայն մը...

Մաարլէն եռանդը գառնալով տեսաւ որ ծավէրն էր խօսողը։ Եկած առեն նշմարած չէր զան։

— Այժ չունին, շարայարեց ծավէրը։ Հսկայազօր մարդ մ'ըլլալու է այսպիսի կառք մը կռնակի վրայ վերցնել կարենալու համար։

Ցետոյ ուղղակի Պ. Մաարլէնի նայելով, և արտասանած խօսքերուն ամէն մէկը շեշտելով շարայարեց.

— Պ. Մաարլէն, սա ուզածդ ընելու կարողութիւն ունենալով միայն մէկ մարդ ճանչցած եմ մինչև հիմա։

Մաարլէն սաքսուռ մը դրաց։

Ծավէրը անտարբեր ձեւով մը, այլ նայուածքը առանց հեռացնելու Մաարլէնի վրայէն կրկնեց.

— Ան ճանչցած մարդս թիապարա ելեւնադործ մ'էր։

— Ա՜հ, ըսաւ Մաարլէն։

— Թուլօնի թիարանը բանտարկուած։

Մաարլէն գեղնեցաւ։

Բայց սայլը կամաց կամաց և շարունակ կը խրէր։ Փօշլեվանն ախտարը կը հռնչէր և կոռնար։

— Հոգիս բերանս կուգայ։ Կողերս կտոր կտոր եղան. քառնալի մը չկայ. քար մը չկայ. ա՜հ։

Մաարլէն չորս կողմը նայեցաւ։

— Վերջապես չկայ մէկը որ քանի ոսկի վաստկիլ և սա խեղճ ձերը ազատել ուզէ։

Նեկայ պտուղներուն և ոչ մին տեղէն շարժեցաւ։ Ծավէրը կրկնեց.

— Մինչև հիմա միայն մէկ մարդ ճանչցած եմ որ կրնար բառնա ին մը գործը ինք կատարել. դատապարտեալ եղեռնագործ մ'էր ան։

— Ա՜հ, ա՛լ կը ճգմռիմ, աղաղակեց ծերունին։

Մաարլէն գլուխը վերցուց, ծավէրին բազէի մը պէս միշտ իրեն նայիլը տեսաւ, նայեցաւ նաև դիւղացիներուն որք անշարժ կը կենային, և արտմօրէն ժպտեցաւ։ Ցետոյ առանց բան մ'ըսելու, ծունկի վրայ ծռուեցաւ և ոյնքան արագութեան կառքին տակը մտաւ որ բաղմութիւնը և ոչ իսկ տպաւորութեան մը հանդելու ժամանակ ունեցաւ։

Սոսկալի վայրկեան մ'անցաւ երբ ամէն հանդիսականներըը կը համբերէին և կը լռէին։

Տեսան որ Մաարլէն այն ահագին բեռին տակ դրեթէ փորին վրայ երկնցած երկու անդամ աշխատեցաւ արմուկները ծունկերուն մօտեցնել, այլ չի դրաց։ — Մաարլէն ախտար, ելիք, դուրս ելիք, աղաղակեցին ամէն կողմէն։ Նոյն իսկ ծեր Փօշլեվանը անդամ բսաւ.— Պ. Մաարլէն, ելիք, հեռացէք։ Ա՛լ պէտք է որ մեռնիմ. թողէք զիս։ Հիմա ուր որ է, դուք ալ պիտի ճզմուիք։ — Մաարլէն պատասխան չի տուաւ։

Ներկայ անձինք կը թասկին։ Անիւները հետ գհետէ թրթռէին, և ա՛լ դրեթէ անկարելի էր որ Մաարլէն սայլին տակէն ելնէր։

Ցանկարծ ահագին մարմինը դղրդիլ սկսաւ, սայլը կամաց կամաց վեր կելնէր, անիւները կիսովին դուրս կելնէին հետքէն։ Ձայն մը լսուեցաւ, որ խղդուողի մը ձայնին պէս կը թուար.— Վազեցէք, օդնութեան հասէք։ Ձայն հանողը Մաարլէնն էր որ յետին ջանք մ'ալ ըրած էր։

Ամէնքն ալ վազեցին հասան։ Մէկուն անձնուիրութիւնը ամէնուն ալ ոյժ և քաջութիւն տուած էր։ Քսան թեւ սայլը բռնելով վերցուց, և Փօշլեվան ախտարը ազատեցաւ։

Մաարլէն ելաւ կայնեցաւ։ Դէմքը դունատ էր, թէև ամէն կողմէն քրտինք կը թափէր։ Զգեստները պատռտուած և տիղմով շաղախուած էին։ Ամէնքն ալ կուլային. ծերունին անոր ծունկերը կը համբուրէր և բարերար Աստուած կանուանէր զան։ Իսկ Մաարլէնի դէմքին վրայ չգիտեմ ինչ երանաւէտ և երկնային վշտի մը պատկերը կը նշմարուէր, և հանդարտօրէն ծավէրին կը նայէր որ իր նայուածքը չէր հեռացներ անոր վրայէն։

ԳԼՈՒԽ Ե.

ՓՈՇԼԵՎԱՆ ԲԱՐԻԶԻ ՄԻՋ ՊԱՐՏԻԶՊՈՆ ԿԸԼԼԱԾ

ՓՈՇԼԵՎԱՆԻ ծունկին ոսկրը փրթած էր խնամքովը։ Մասըլէն ախպարը զան հիւանդարան մը ղրկից ղը ինք իր բանուորներուն համար նոյն իսկ իր գործարանին մէջ հաստատած էր, և ուր երկու գիմուխեան քոյրեր հիւանդները կը խնամէին։ Հետևեալ օրը առաւօտ ծերունին իր դիւղուան սեղանին վրայ հազար ֆրանքնոց դրամատոմս մը դտաւ, նաև թուղթի մը վրայ սա խօսքը զոր Մասըլէն ախպարը իր ձեռքովը գրած էր։ Սայլը և Յիր ծախու կառնուի։ Սայլը խոտակուած և ձին մոռած էր սակայն։ Փոշլեվան ուրախացաւ, բայց ծունկը հաշմուած մնաց, և ալ վիրցաւ շարժիլ։ Պ. Մասըլէն գիմուխեան քոյրերուն և իր ժողովրդապետին յանձնաբարութիւններովը Բարիզի Սէնթ-Անթուան թաղին մէջ կուսարանի մը պարտիզպանը ընել տուաւ ծերունին։

Ծամանակէ մ'ետք Պ. Մասըլէն քաղաքապետ անուանեցաւ։ Ծավէր երբ առաջին անդամ Պ. Մասըլէնի ժպտուէն դըրուիլը տեսաւ, որով ան իր քաղաքին վրայ ամէն տեսակ իշխանութիւն կունենար, սարսուռ մը դգաց նման այն շունին որ հոտառելով իր տիրոջ հպուստին ներքև գայլ մ'ըլլալը կզգայ։ Ան օրէն սկսելով ալ կրցածին չափ զգուշացաւ անոր տեսնուելու։ Երբ իր պաշտօնին պիտոյից համար անոր դիմելը անհրաժեշտ կը թուէր և կամ պատահաբար պարոն քաղաքապետին հետ տեսնուելու, խորին յարգանօք կը խօսէր հետը։

Մ... քաղաքին այս հանրական բարեբաստութիւնը զոր Մասըլէն տուած էր, մեր արդէն նշանակած տեսանելի նշաններէն 'ի զատ ուրիշ թագուն նշան մ'ալ ունէր, որ թէև տեսանելի չէր, բայց ոչ նուազ շօշափելի էր։ Այս նշանը երբէք չվրիպեր և ոչ մէկուն ուշադրութենէն։ Երբ ժողովուրդը

կը տառապի, երբ գոլծը կը պակսի, երբ առուտուրը կը չնչանայ, հարկատուն նեղութեան պատճառաւ տուրք տալ չուզեր, վճարումին պայմանաժամը կուգայ, կանցնի, և տէրութիւնը բռնադատելու և տուրքը հաւաքելու համար շատ ծախս կընէ։ Ընդհակառակն երբ առատօրէն գործ ըլլայ, երբ քաղաքը բարեբաստ և հարուստ է, տուրքը դիւրութեամբ կը վճարուի և տէրութիւնն ալ հաւաքելու համար քիչ ծախս կընէ։ Կրնայ ըսուիլ թէ հանրական թշուառութիւնը և հարստութիւնը անվթխելի չերմաչափ մ'ունին, որ է տրոց ժողովուիին ծախքը։ Եօթը տարուան մէջ Մ...ի նահանգին տրոց հաւաքումին ծախքը չորսէն մէկի իջած էր, և այս պատճառաւ Պ. Տը Վիլէլ որ այն տեն գանձուց պաշտօնեայ էր, ստիպ այս նահանգը կը յիշէր միւս նահանգներուն նկատմամբ խօսելու տեն։

Քաղաքին վիճակը ահա այս էր երբ Փանթին եկաւ։ Բայց ալ ոչ ոք կը յիշէր զինքը։ Խարեբազդաբար Պ. Մասըլէնի գործարանին գուռը բարեկամ մ'էր։ Փանթին հոն գնաց և կանանց գործանոցը ընդունուեցաւ։ Բայց բանուած արհեստը Փանթինին համար բոլորովին նոր ըլլալով, յաջողակութեամբ չէր կրնար բանիլ, հետևաբար իր օրական աշխատութեան փոխարէն փանաքի վարձք մը միայն կրնար առնուլ. բայց ինչ և է, այն ալ կը բաւէր. գժուարութիւնը վերցուած էր, ապրուստը կը հոգար։

ԳԼՈՒԽ Զ.

ՏԻԿԻՆ ՎԻԳԹԻՐՆԻԼԻՆ ԲԱՐՈՑՈՒԱԾՆԻ ՀԱՄԱՐ ԵՐԵՍՈՒՆ ՓՐԱՆՔ ԿԸ ՎԱՏՆԻ

Երբ Փանթին տեսաւ թէ ապրուստը կը ձարէր, պահ մ'ուրախացաւ։ Իր աշխատութեամբը համեստաբար ապրիլը երկնային չնորհք մ'է։ Փանթին գործելու ձաշակը նորէն

պայ իրապես : Հայելի մը գնեց , անոր մէջ իր թաթմանթիւնը , աղտոր մազերը և ակռաները տեսաւ , շատ բաներ մտածեց , ամէն միայն Գողէթին և հնարաւոր ապագայի մը տուաւ իր միտքը , և դրեթէ երջանիկ սեպուեցաւ : Պղտիկ սենեակ մը վարձեց , և աշխատելով հետզհետէ պարտքը վճարելու պայմանով և ստատիկ սակարկութեամբ կահ կարասի առաւ և զարդարեց զայն . այս զարդասիրութիւնը իր անկարգութեան ժամանակի սովորութեանց մնացորդն էր :

Ձկրնալով ըսել թէ ամուսնացած է ինք , արդէն ինչպէս փոքր ինչ ակնարկեցինք , զգուշացած էր իր պղտի աղջիկին մասին ոչինչ խօսելէ :

Ի սկզբան , ինչպէս տեսանք , ճշդապէս կը վճարէր Թենարտիէներուն ամսականը : Միայն սատարողութիւնը դնել պիտէր , և այս պատճառաւ հասարակաց դրացի մը գրել կուտար անոնց ղրկած նամակները :

Դիտուեցաւ արդէն թէ շատ անգամ նամակ կը ղրկէր անոր կինները գործանոցին մէջ ականն իրարու փափսալ թէ Ֆանթին « նամակներ կը գրէ » , և թէ « թաղուն յարաբերութիւններ » ունի :

Մարդոց գործերը ամենէն աւելի այն անձերէ կը գիտուին որոնց չեն վերաբերիր անոնք :

— Ինչո՞ւ այս պարոնը միշտ մուրը սկսելու ժամանակները կուգայ . ինչո՞ւ այնինչ պարոնը բանալին ամենին բեւեռն չափաւ հինգշաբթի օրը . ինչո՞ւ միշտ պղտի փողոցներէն կերթայ . ինչո՞ւ ակիները միշտ տուներ հասնելէն առաջ կառքէն դուրս կ'ելնէ . ինչո՞ւ նամակի թուղթ առնել կուտայ քանի որ իր թղթատուփը լեցուն է անոր , և այլն . . . :

Կան այնպիսի անձեր որոնք ամենևին իրենց վերաբերութիւն մը չունեցող այս թաղուն շարժուձեւերուն նպատակը հասկնալու համար այնքան սառի կը վառնեն , ժամանակ կը կորսուսեն և դժուարութիւն կը կրեն որքան հարկ չափով բլլար եթէ տասը բարեդործութիւն ընել ուզէին , և այս իրարանցումը ձրի է , զուարճութեան համար է , և հետաքրքրութեան փոխարէնը ոչ այլ ինչ է եթէ ոչ նոյն իսկ հետաքրքրութիւնը : Այս տեսակ անձինք օրերով այս մարդուն կամ այն կնոջ ետևէն կ'իյնան , ժամերով փողոցի մ'անկիւնները , ծառուղիներու դռներուն առկ , և գիշերը , ցուրտին և անձրևին պահնորդութիւն կընեն , յանձնարարութիւն կատարելու կաշառք կուտան , կատապաններ կամ սպասաւորներ կը գինովցնեն (griser) , սենեկապանուհիի մը հետ կը մտերմանան տուակ տալով , դռնապան մը ծախու կառնուն . ինչո՞ւ . ոչինչ բանի մը համար : Տեսնելու , գիտնալու և հասկնալու կատարութիւն մ'է , մի միայն ըսելու մարմաջում մ'է այս : Շատ անգամ երբ այս թաղուն իրերը կը հասկցուին , երբ այս պաղանիքները կը հրատարակուին , երբ այս ծածուկ յարաբերութիւնները յայտնի յայտնապէս կը հրապարակուին , իրենց հետևութիւնն է աղէտները , մահարութիւնները , անանկութիւնները , ընտանիքներու կործանումը և կեանքերու խորտակումը՝ ի մեծ ցնծութիւն այն անձերու որոնք « ամէն բան երևան հանելուն » առանց շահ մ'ունենալու և միայն դրդուելի մը հնազանդելու համար : Տրամալի բան :

Կան տեսակ մ'անձինք որոնք մի միայն խօսելու հարկաւորութեան պատճառաւ չարաբերա են : Իրենց խօսակցութիւնը որ ընկերութեան մէջ շատախօսութիւն և նախատինքի մէջ շաղակրատութիւն է , կը նմանի վառարաններու որոնք փայտը շուտ մը կսպառեն . այրելու շատ նիւթ կուզեն , և այս այրելու նիւթն ալ իրենց ընկերն է :

Այսպէս Ֆանթինն ալ դիտուեցաւ :

Մանաւանդ քանի մը կիներ կը նախանձէին անոր խրատչադոյն մաղերէն և սպիտակափայլ ակռաներէն :

Դիտուեցաւ որ անի գործանոցին մէջ ուրիշներու քով զրուցելու ատեն շատ անգամ ետևը կը դառնար աչքն արցունքը ջրթելու համար : Ֆանթին կարտասուէր երբ միտքը կը քա-

բէր զաւակը, գուցէ նաև այն մարդը զոր սիրած էր։ Անցեալին տխուր յարաբերութիւններէն դադարիլը ցաւալի աշխատանք մ'է։

Հասկցուեցաւ նաև թէ ամիսը առնուազն երկու անգամ մի և նոյն հասցէով նամակ կը գրէր և նամակին առաքումին ծախսն ալ ինք կը վճարէր։ Հասկցուեցաւ վերջապէս թէ հասցէն սա էր. Աբ Պ. Թէնաբրիէ, պանդոկապետ. 'ի Մօնֆէրմէյլ։ Գինեատան մը մէջ խօսել տուին հասարակաց դրամը, որ ծերունի ապուշ մ'էր, և որ չէր կրնար իր սահմանքը կարճիր գինիով լեցնել առանց դուրս տալու իր պետացած գաղտնիքները։ Երկար չդնենք, իմացուեցաւ թէ Ֆանթին զաւակ մ'ունէր։ « Կերևայ թէ ազջիկ մ'է », կըսուէր։ Հետաքրքիր կնիկին մէկն ալ մինչև Մօնֆէրմէյլ ճամբորդեց, Թէնարտիէներուն հետ խօսեցաւ, և 'ի դարձին ըսաւ. Երեսուն ֆրանգ ծախս ըրի, բայց խելքս ալ հանդարտեցաւ։ Տեսայ մանուկը։

Այս ճամբորդութիւնը ընող կինը կորկոն մ'էր. տիկին Վիլֆիւրնէն կանուանէր, և կարծես թէ ամենուն առաքինութեան պահնորդուհին և գնահատուհին էր։ Տիկին Վիլֆիւրնէն յիսունը վեց տարեկան էր, և իր տեղութեան դիմակը պատուութեան դիմակով կրկնած։ Ձայնը այծի ձայնի կը նմանէր. իսկ միտքը թեթև։ Զարմանալին սա է որ այս պատուը ժամանակաւ երիտասարդուհի մ'էր։ Ծաղկահասութեան ժամանակ, Ճիշդ 1793ին կարգուած էր վանականի մը հետ որ Պերնարտէններու վանքէն փախած էր կարմիր դպակով և ծաղօսէններու[6] հետ միացած էր։ Վիլֆիւրնիէն ցամաք, կարծր, հետս, սուր, փշոտ և գրեթէ թունաւոր էր. միշտ կը յիշէր իր վանականը, որ մեռած էր, և որմէ աղէկ զսպուած և նուաճուած էր։ Կրօնաւորի մը կնդուղէն ձնշուած եղիճ մ'էր։ Ֆրանսայի Վերահասատատութիւնն ըսուած իշխանութեան առենները աւելորդապաշտ կրօնասէր մ'եղած էր, իր կրօնասիրութիւնը այնքան չերմանալ էր որ եկեղեցականները ներած էին վանականին հետ կարգուած ըլլալը։ Գլխի կալուած մ'ունէր զոր տանիքներու վրայ քարղելով կրօնական միաբանութեան մը կը կատկէր։ Արտասի եպիսկոպոսական թեմին մէջ մեծ համարում ունէր։ Այսպէս ահա տիկին Վիլֆիւրնիէն Մօնֆէրմէյլ գնաց և դառնալով ըսաւ. Տեսայ մանուկը։

Այս եղելութեան մինչև կատարուիլը բաւական ժամանակ անցաւ։ Ֆանթին մէկ տարիէ աւելի էր որ գործարանը կը բանէր, երբ առաւօտ մը գործանոցին տեսչուհին Պ. քաղաքապետին կոզմէն յիսուն ֆրանգ յանձնից անոր և ըսաւ թէ ալ գործանոցի բանւորն ըլլալէ դադրած էր, և Պ. քաղաքապետին կողմէ սահպեց որ քաղաքէն մեկնի։

Ճիշդ մի և նոյն ամիսը Թէնարտիէները վեցին տեղ տասն երկու ֆրանգ ուղղելէն հետ տասներկուքին տեղ տասն և հինգ ֆրանգ պահանջեր էին։

Ֆանթին ինչ ընելը չդիտցաւ։ Չէր կրնար քաղաքէն մեկնիլ, վասն զի սենեկին վարձքը և կահ կարասիին ստակը դեռ չէր վճարած։ Ցիսուն ֆրանքը այս պարտքը վճարելու չէր բաւեր։ Քանի մ'աղի բսալի խօսք Թոլոմիեցի, այլ տեսչուհին բացարձակապէս իմաց տուաւ թէ կը պարտաւորէր անմիջապէս հեռանալ գործանոցէն։ Մանաւանդ թէ Ֆանթինն ալ միջակ բանւոր մ'էր։ Յուսահատութենէն աւելի ամօթով համակուած գործատունէն ելաւ և իր սենեակը գնաց։ Ա'լ իր յանցանքը ամենուն յայտնի եղած էր։

Ա'լ և ոչ իսկ խօսք մ'ըսելու համարձակութիւն ունեցաւ։ Խրատ տրուեցաւ իրեն որ Պ. քաղաքապետին դիմէ. բայց Ֆանթին չհամարձակեցաւ։ Քաղաքապետը յիսուն ֆրանգ տուած էր իրեն, վասն զի բարեսիրտ էր. նաև վնտած էր, վասն զի արդարասէր էր։ Ֆանթին այս վճիռին համակերպեցաւ։

ԳԼՈՒԽ Ը.

ՏԻԿԻՆ ԱՆԴՐԻՆՊԷՆԻՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Ըսեր է թէ վանահայրին կինը դարձ մը տեսած եղաւ։ Բայց Պ. Մաարլէն եղելութեան նկատմամբ ամենևին տեղեկութիւն մը չունէր։ Ան այն դէպքերու միաւորութենանց մին էր որոնք կեանքի մէջ միշտ կը պատահին։ Պ. Մաարլէն սովորութիւն ըրած էր գրեթէ ամենևին չմտնել կինեղուն գործառուները։

Գործառնին անաչառութիւնը պատաւ աղջիկի մը յանձնած էր, զոր ժողովրդապետը տուած էր իրեն։ Մեծ վստահութիւն ունէր այս տեսչուհիին վրան. իրօք յարգելի, հասուսամիտ, արդարասէր, ուղղամիտ և պիտակ կին մ'էր ան. բայց իր պիտակրութիւնը տալն էր միայն, և չէր հաւասարեր այն պիտակրութենան տասիճանին, որու ողորմութիւնն է հասկնալ և ներել։

Պ. Մաարլէն ամէն բանի մէջ անոր խորհրդովը կը շարժէր։ Ամենէն յաւ մարդիկը շատ անգամ կը բռնադատուին իրենց իշխանութիւնը փոխանորդի մը յանձնելու։ Տեսչուհին ահա այս կատարեալ իշխանութեամբը և բարութիւն մը զորձելու համոզումով Ֆանթինին գատը քննած, գատած, վճռած և վճիռն ալ գործադրած էր։

Իսկ տուած հետուն Ֆրանքը առած էր այն գումարէն, զոր Պ. Մաարլէն բանտը կանանց օգնելու և ողորմելու համար կը յանձնէր անոր և որուն հաշիւը չէր տար տեսչուհին։

Ֆանթին ուզելով քաղաքին մէջ պատասխանութիւն ընել տունէ տուն պարտեցաւ, բայց ոչ ոք ընդունեցաւ զինքը։ Ձիրցեր էր քաղաքէն մնկնիլ։ Հնակարկատ վաճառականը որու կը պարտաւորէր առած կարասիներուն ստակը, և ինչ կարասիները, Ֆանթինին ըսած էր. եթէ ձգես երթաս, իբր գող բռնել կուտամ քեզի։ Իսկ սենեկին տէրը որու վարձքը

կը պարտաւորէր, ըսած էր. Ծաղկահաղ և զեղեցիկ աղջիկ մ'ես. եթէ ուզես, կրնաս վճարել պարտքդ։ Ֆանթին յիշած ըլլալուն ֆրանքին կէսը սենեկին տիրոջ և կէսն ալ հնագործին տուաւ. կարասիներուն երեք չորրորդը նոր պարձուց, միայն պէտք եղածը պահեց, և առանց գործի, առանց պաշտօնի մնաց, միայն անիոլին մը և տակաւին յիսուն ֆրանգ պարտք ունենալով։

Սկսաւ պահապան զօրաց համար հատ շապիկներ կարել, և օրը տասներկու սու կը վաստկէր։ Այս տասներկու սուին տասովը կը պարտաւորէր աղջիկին ամսականը վճարել։ Ահա այս պարագաներու մէջ ինչպէս կրնանաւորապէս չվճարել թնաւրիներուն առնելիքը։

Սակայն պատաւ կին մ'որ իրիկուն Ֆանթին եկած ժամանակ ճրագը կը վառէր, թշուառութեամբ ապրելու արհեստը սորվեցուց անոր։ Քիչ բանով ապրելուն ետևն է ոչինչով ապրիլը։ Այս երկու տեսակ ապրիլը երկու սենեակ է. մին մութ, միսը խաւարին։

Ֆանթին սորվեցաւ թէ հին մը ինչպէս ձմեռը կրակէ կը զրկուի, և կը թողու թռչուն մը որու երկու օրուան կորեակին ծախքը փուլ մ'է. թէ ինչպէս իր միջագեստը իրը վերմակ և վերմակը իրը միջագեստ կը գործածէ, և թէ ճրագին իւղը շատ չվառելու համար ինչպէս կարելի է ընթրել դիմացի պատուհանէն եկող լոյսին շնորհիւ։ Մարդ չգիտեր թէ սասը փարայով ինչեր կրնան տեսակ մը տիար արարածներ, որոնք թշուառութեամբ և պարկեշտութեամբ ծերացած են։ Այսպէս ապրիլը 'ի վերջոյ սաղանդ մը կըլլայ։ Ֆանթին այսբարձը տաղանդը ստացաւ և սակաւ ինչ սիրտ առաւ։

Ան տեղնները զրացի մը կըսէր. — վա՛շ, կըսեմ իւրովի թէ միայն հինգ ժամ քնանալով, և միւս բոլոր ժամանակները կարելով միշտ պիտի կրնամ գրեթէ հայտ ճարել։ Մանաւանդ թէ մարդս երբ տրտում է, քիչ կուտէ։ Լաւ ուրեմն, տառապումով, անհանգստութիւններով, մէկ կողմէ

սակաւ ինչ հաշտ և միւս կողմէ ալ վիշտերով պիտի անիմ։

Այս սոսկալի թշուառութեան մէջ տարօրինակ երանութիւն մ՚ունեցած կըլլար եթէ աղջիկը իր քովը ըլլար ։ Մտածել բերել սակայն զան ։ Բայց ինչ. իր թշուառութեան մասնակից նաև զան, մանաւանդ թէ Թէնարտիէներուն պարտք ունէր. ինչպէս վճարելու էր. հապա ճամբու ծախքը ո՞ւր թողունք ։

Այն պառաւ կինը որ Փանթինին տուած էր ինչ որ կրնան չքաւորութեամբ ապրելու դասեր անուանիլ, Մարդրիտ անունով սրբակենց, իրական ջերմեռանդութեամբ ջերմեռանդ, աղքատ, և աղքատներու, նաև հարուստներու նկատմամբ ղեթասէր աղջիկ մ՚էր. Մաքսելլա ստորագրել կարենալու չափ գրել գիտէր, և Աստուծոյ կը հաւատար. ասկէ իր գիտութիւնն էր ։

Վարը այս տեսակ առաքինութիւններ շատ կան, օր մը վեր պիտի երթնեն անոնք ։ Այս կեանքը ապագայ մ՚ունի ։

Առջի անպատիները Փանթինին այնքան ամօթ զգացած էր որ դուրս երթալու չէր համարձակեր ։

Փողոցը գտնուած ժամանակ կը գուշակէր թէ եաեւէն և կողմերը կը դառնային և մատով ցինքը կը ցուցնէին, ամէն մարդ անոր կը նայէր, և ոչ ոք բարև կուտար ։ Անցորդներուն կծու և ցուրտ արհամարհանքը ցրտաշունչ քամիի մը պէս անոր մարմինին և սրտին կպզէր ։

Պզտի քաղաքներու մէջ կարծես թէ ամենուն հեգնութեան և հեռաքշրքրութեան ենթարկուող թշուառուհի մը միայն է ։

Դէթ Բարիզի մէջ մէկ մը չձանչցուիր. և այս անծանօթութիւնը հաղուստ մ՚է ։ Ո՛հ, օրքան կը փափաքէր արդեօք Բարիզ գալ, բայց անկարելի բան ։

Ինչպէս չքաւորութեան սովորած էր, հարկ եղաւ նաև սովորիլ անուանարկութեան ։ Որոշեց անտարբեր ըլլալ այս մասին, երկու երեք ամիսէն հետ ամօթը մէկ դի ձգեց, և ըսկսաւ դուրս երթալ իբր թէ բան մը չըլլար ։ Հոգս անգամ չէ, ըսաւ ։

Գլուխը վեր վերցնելով, և դառն ժպիտով մը դնաց եկաւ, և զգաց թէ անամօթ մը կըլլար ինք ։

Տիկին Վիկթիւրնիէն երբեմն պատուհանէն կը տեսնէր անցնող անցնիլը, կը դիտէր « այն տրտամած » թշուառութիւնը, որ իր չնորհիւը « իր տեղը գրուած » էր, և կուրախանար։ Չարասիրտները սեւ երջանկութիւն մ՚ունին ։

Ծայրայեղ աշխատութիւնը յոգնութիւն կուտար Փանթինին. այս պատճառաւ աւելցաւ իր արդէն ունեցած պզտիկ չոր հազը։ Երբեմն իր գրացի Մարդրիտին կըսէր. — Շնորհս բռնէ, նայէ, ինչպէս տաք է ։

Սակայն առաւօտները երբ կարուած հին սանտրով մը կը սանտրէր իր դեղցիկ մազերը որոնք չըլսրուած մեռածի պէս կը փայլփլէին, պահ մ՚երջանկանար կը պչրեր ։

ԳԼՈՒԽ Ը.

ՎԻԿԹԻՐՆԻԷՆԻ ՇԸՏԶԱՐՈՒԹԵԱՆ ՇԸՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ձմեռը անցաւ, բայց ձմեռը նորէն եկաւ ։ Դարձ օրեր, լիճ աշխատութիւն ։ Ձմեռը ոչ տաք կայ, ոչ լոյս, ոչ կեանք. իրիկունը առաւօտուան մեռած է. մառախուղ, վերջալոյս ամենուրեք. պատուհանը մութ է. աչքը բան մը չտեսներ ։ Ներկինքը օդահան մ՚է ։ Բոլոր օրը շտեմարան մ՚է ։ Արեւը աղքատի մը կերպարան ունի ։ Սարսափելի եղանակ ։ Ձմեռուան եղանակին մէջ երկնից ջուրը և մարդուս սիրտը քար կը կարին ։ Պարտատէրերը հանդիստ չէին թողուր Փանթինը ։

Փանթին խիստ քիչ կը վաստկէր ։ Պարագաները աւելցած էին ։ Թէնարտիէները, որք նանոնաւորապէս չէին ընդուներ ամսականները, շարունակ նամակներ կը դրէին, որու պարտունակութիւնը վիշտ և թշուառութեան ծախքն ալ կործանում կը պատճառէր անոր ։ Օր մը Թէնարտիէները դրկեցին թէ իր

պլտի Գօղէթը ձմեռուան այն ցուրտ եղանակին մէջ բոլորո-վին մերկ էր. թէ ասուէ միջազգեստի մը հարկաւորութիւն ունէր, և թէ պէտք էր առ նուազն տասը ֆրանգ դրկել: Ֆանթէին այս նամակը առաւ և բոլոր օրը ձեռացը մէջ ձգմռցած պահեց: Իրիկունը փողոցին անկիւնը բնակող սափրիչի մը կրպակը մտաւ, սանտրը մազերուն վրայէն հանեց, և ահա իր շքեղ մազերը մինչև կէս մէջքը լինան:

— Ի՛նչ գեղեցիկ մազեր, պօռաց սափրիչը:

— Քանի՛ կառնուս, հարցուց Ֆանթէին:

— Տաս ֆրանգէ:

— Կարէ ուրեմն:

Ֆանթէին իր մազերուն սառակովը կերպասեայ միջազգեստ մ'առաւ և Թէնարտիէներուն ղրկեց:

Թէնարտիէները երբ միջազգեստը ընդունեցան, կատղեցան, վասն զի ուշածնին սուակ էր: Միջազգեստը Էպօնինի տուին: Խեղճ Ազտոյտը առաջուան պէս կը գոռար ցուրտէն:

Ֆանթէին իւրովի ըսաւ. — Զաւակս ալ չլիտի պաղի. մազերովս հագուեցուցի զինքը: — Կարմիր պլտի դպակները կը դրուէր որոնք իր խուզուած գլուխը կը ծածկէին և որոնց-մով տակաւին աղուոր կերեւար ան:

Ֆանթէինի սրտին մէջ խաւարային վիշտ մը կը դայանար:

Երբ տեսաւ թէ ալ չէր կրնար զարդարել գլուխը, սկսաւ տանելութեամբ նայիլ ամէն բանի և ամէնուն: Ամէնուն պէս ինքն ալ շատ ժամանակէ Մատըլէնէն, բայց այնքան կրկնեց իւրովի թէ գործատունէն գինք վռնտողը և իր թշուառութեան պատճառ ան է, որ վերջապէս սկսաւ Մատըլէնն ալ ատել, մանաւանդ թէ ուրիշներէն աւելի ատել: Երբ գործարանին առջևէն կանցներ Ճիշդ այն ժամերուն ուր բանուորները դուռը կը գտնուին, խնդալ և երգել կը ձևացնէր:

Պառաւ բանուոր մը անդամ մ'անոր այս կերպով երգել և խնդալը տեսնելով՝ ըսաւ. — Սա աղջիկին վերջը գէշ պիտի գլայ:

Ֆանթէին մարդու մը հանդիպեցաւ, զոր բնաւ չէր սիրեր և՝ իրը սպառնալիք՝ իր սիրահարը երբեմն ղայրոյթով համակուած: Այս մարդը թշուառական մ'էր, մուրացիկ երաժիշտ մը, թափառաշրջիկ անատակ մը, որ կը ծեծէր Ֆանթէինը և որ ձգեց զան այն կերպով ինչպես որ մտեցած էր անոր, այսինքն ձանձրոյթով:

Ֆանթէին իր զաւակը կը պաշտէր:

Քանի որ հետ գՀետէ կիջնէր, քանի որ հետ գՀետէ ամէն բան կը խաւարէր իրեն համար, այն պզտի հրեշտակն ալ աւելի իր սրտին մէջ կը ձառագայթէր: Իւրովի կըսէր. — Երբ հարստանալու բլլամ, Գօղէթա քովս պիտի առնում: Ընդհակառակը կըսէր, և կը խնդար: Հաղը չէր անցներ, և կըռնանկն ալ կը քրտնէր:

Օր մը Թէնարտիէներէն յետադայ նամակը առաւ. «Գօղէթ հիւանդ է: Հիւանդութիւնը կորնկային տենդ (fièvre miliaire) կոչուած է: Սուղ դեղերը պէտք է: Դեղն ատակ տալէն առնելիս կը փլի, և ալ կարող չենք վճարել: Եթե մինչև ութ օր քառասուն ֆրանք չղրկէք, պզտիկը կը մեռնի»:

Ֆանթէին նամակը կարդալուն պէս քահ քահ խնդաց, և դրացիին ըսաւ. — Ա՛հ, տե՛ս ինչ բարի մարդիկ են. քառասուն ֆրանք կուզեն. բայց քառասուն ֆրանգը երկու լո՛է կրնէ. ուսկե գտնեմ այսպիսի գումար մը. յաւանակ են, ինչ են այս գիւղացիները:

Սակայն սանդուղքին վրայի կանգնելնէն քով երթալով նորէն կարդաց նամակը:

Ցետոյ սանդուղքէն վար իջաւ, դուրս ելաւ վազելով, յաւելորեն ու միշտ խնդալով:

Մարդ մը հանդիպելով հարցուց անոր. — Ի՞նչ կայ որ այդքան գուարթ ես:

Ֆանթէին պատասխանեց. — Գիւղացի մարդերէ նամակ մ'առի, որու մէջ կատակ մը գրեր են: Քառասուն ֆրանգ կու-

չէն լար. դիւղացի են, ինչ կրնամ ըսել։

Հրապարակէն անցնելու առեն տարաձև կառքի մ'առջեւ ֆռնած բազմութիւն մը տեսաւ, կառքին ձիղունին վրայ կարմիրներ հագած մարդ մը ոտքի վրայ կը ձառէր։ Շրջաղ առաձգապրծ ձիռնածու մ'էր ան, և ամբողջ շարուած ակռաններ, փոչիներ, ակռայ մաքրելու խիւսեր և ոլիներ կը ծախէր։ Ֆանթին բազմութեան մէջ մնաւ և ուրիշներուն պէս ինքն ալ սկսաւ խնդալ ձառը մտիկ ընելով, զոր մարդը կը խօսէր վարնոց մարդերու համար գաղիերու բարբառէ և վերնոց մարդերու համար ալ ծածուկ բարբառէ խօսքեր դարձնելով։ Ակռայ քաշողը տեսաւ այս դեղջիկ աղջիկին խլնգալը, և յանկարծ պոռաց.

— Գեղջիկ ակռաներ ունիս եղբ դուն, խնդացող աղջիկ։ Եթէ կուզես երկու քալէթներ (palette) ծախել ինծի, ամէն մէկին մէկ լուիզ կուտամ։

— Ի՞նչ է քալէթը ըսածդ, հարցուց Ֆանթին։

— Քալէթը ըսածս վերի կարգին առջեւի երկու ակռաներն են։

— Հիմա կը սոսկամ, պոռաց Ֆանթին։

— Երկու լուիզ, մրմռաց ակռաները թափուած պառաւը որ հոն կը գտնուէր։ Ահա աղջիկ մ'որու երանի կուտամ։

Ֆանթին փախաւ և ականջները ծոցեց մարդուն բիրտ ձայնը չլսելու համար որ եւս էն կը պոռար.— Մտածէ, դեղանդիդ. երկու լուիզ ըսի. քիչ սոակ չէ այս։ Եթէ կը հաւանիս, այս իրիկուն Թէյլաֆ փ'աթ-ծանի պանդոկը հիմ ուր կրնաս գտնել զիս։

Ֆանթին իր սենեակը վերադարձաւ զայրութեամբ համակուած, և եղելութիւնը բարեսիրտ Մարգրիտին պատմեց որ իր դրացին էր։ — Ասանկ բան մը լսած էիր. երբէք այսպիսի գարշելի մարդ մը տեսած էիր. ինչպէս թոյլ կը տրուի որ ասանկ մարդիկ քաղաքին մէջ շրջին. ինչ, առջեւի երկու ակռաներս քաշել. բայց սարսափելի բան մը պիտի ըլլար. մազերը կը բուսնին, առջեւի ակռաները։ Ա՜հ, գարշելի

գարդ. աւելի աղէկ է որ հինգերորդ դպտիկոնէ մը դլխի վայր քարայատակին վրայ նետուիմ։ Ըսաւ թէ այս պիշեր Թէյլաֆ փ'աթ-ծանի պանդոկը պիտի դտնուի։

— Ի՞նչ տալ խոստացար, հարցուց Մարգրիտ։

— Երկու լուիզ։

— Ըսել է քառասուն ֆրանք։

— Այո՛, երկու լուիզը քառասուն ֆրանք կընէ, ըսաւ Ֆանթին։

Ցետոյ խորհեցաւ, և սկսաւ կարը կարել։ Քառորդէ մ'ետք կարը թողուց և սանդուղին քով դնաց Թենարտիէներուն նամակը կրկին կարդալու համար։ Երբ նորէն սենեակը մտաւ, Հարցուց Մարգրիտին որ իր քով կաշխատէր.

— Ի՞նչ է աս կօրեկտային տենդ ըսածը. ինչ բան է այն, տեղեկութիւն ունիս։

— Այո՛, պատասխանեց պառաւ աղջիկը, հիւանդութիւն մ'է այն։

— Իրաւ է թէ շատ դեղ պէտք է այդ հիւանդութեան։

— Ո՛հ, սոսկալի դեղեր պէտք է։

— Ի՞նչպէս կուզայ այն։

— Հիւանդութիւն մ'է որ կուգայ։

— Մանկանց վրայ կը ձարախուի։

— Մանաւանդ մանկանց վրայ։

— Հիւանդը կը մեռնի։

— Անտարակոյս, ըսաւ Մարգրիտ։

Ֆանթին դուրս ելաւ, և նամակը անդամ մ'ալ կարդալու համար դէպ 'ի սանդուղը դնաց։

Իրիկունը սանդուղէն վար իջաւ, և տեսան ամանք որ անկուղէը դէպ 'ի Բարիզի փողոցին կողմը ուր են պանդոկները։

Հետեւեալ առտու երբ Մարգրիտ արեւին ծագումէն առաջ Ֆանթինի սենեակը կը մտնէը, վասն զի միշտ միասեղ կաշխատէին և այս կերպով երկուքնին համար մէկ ճրագ կը վառէին, տեսաւ որ Ֆանթին դեղնած, անշարժ և անխօս

նին վրայ նստած էր։ Փանթին մինչև առաւօտ չէր պառկած։ Գրակը ծունկերուն վրայ ինկած էր։ Ճրագը մինչև առաւոտ վառած, և իւղը դրեթէ բոլորովին հատած էր։ Մարդրիտ այս սոսկալի անկարգութենէն զարմանալով կանգ առաւ շեմին վրայ և պօռաց.

— Տէր իմ Աստուած, Ճրագին մէջ իւղ չէ մնացեր, ամէնն ալ վառեր է. պատահմունք մ'եղած պիտի ըլլայ։

Ցետոյ Փանթինին նայեցաւ, որ իր խուղուած գլուխը դէպ 'ի անոր կը դարձնէր։

Փանթին առջի օրուանէ 'ի վեր տասը տարի ևս ապրածի պէս ծերացած էր։

— Ցիսո՛ւս Քրիստոս, կրկնեց Մարգրիտ, ինչ կայ, ինչ ունիս, Փանթին։

— Բան մը չունիմ, ըսաւ Փանթին։ Ընդ հակառակն զանակս չպիտի մնոնի այն սոսկալի հիւանդութեամբ՝ անօդնական ձգելով։ Հիմա գոհ եմ։

Այսպէս ըսելով պառաւ աղջիկին երկու լուծ կը ցուցնէր որոնք սեղանին վրայ կը փոշիոտէին։

— Ա՛հ, տէր Աստուած, պօռաց Մարգրիտ։ Մեծ հարբուխ մ'է այդ, ուժկէ գաար այդ լուծները։

— Ստացայ, պատասխանեց Փանթին, և իսկոյն ժպտեցաւ։ Ճրագին լոյսը երեսին կը զարնէր։ Ծպիտը արիւնաթոյր ժպիտ մ'էր։ Կարմրագոյն լոյս մը շուրթերուն խորշերը կը թրջէր, և բերնին մէջ սև ծակ մը կը տեսնուէր։

Երկու ակռան քաշուած էր։

Քառասուն ֆրանքը Մօնֆերմէյլ ղրկեց։

Բայց Թէնարտիէներուն դրածը խաբէութիւն մ'էր՝ ստակ քաշելու դիտաւորութեամբ։ Գօղէթ հիւանդ չէր։

Փանթին իր հայեվին պատուհանէն դուրս նետուեց։ Երկար առենէ 'ի վեր արդէն ձգած էր իր հիւղը զոր երկրորդ գլուխին վրայ վարձած էր, և տանիքին տակ վերնայարկի մը մէջ կը բնակէր որ դռնափակով մը միայն կը դոցուէր։

Վերնայարկը այն տեսակէն էր, որու ձեղունը դեռևին հետ անկիւն կը կազմէ և որ հոն պատուհանին գլուխին կը զարնէ ամէն րոպէ։ Աղքատը ինչպէս դէպ իր ճակատագրին յատակը, նոյնպէս դէպ իր սենեկին ներքին կողմը երթալու համար հետ ղեհեմ ծռուելով կը քալէ։ Ա՛լ անկողին չունէր Փանթին. բոլոր ունեցածն էր լաթի կտոր մը զոր վերնակ կանուանէր, խշտեակ մը և խսիրը եղած աթոռ մը։ Պզտի վարդենի մ'ալ ունէր, որ անկիւն մը նետուելով և մոռցուելով չորցած էր։ Միւս անկիւնն ալ ջուրի համար իւղ բարջ մը կար որ ձմեռը կը սառէր, և որու մէջ ջուրին այլ և այլ մակերեւոյթներուն նշանները սառնային շրջանակներով նշանակուած կը կենային օրերով։ Ամէնալէ դադրած ըլլալով, պչրելէ ալ դադրեցաւ։ Ցետին նշան։ Աղտոտ դնակներով դուրս կելլէր։ Կամ ժամանակ չունենալուն, և կամ անտարբերութենէնը համար ալ չէր կարկտեր իր ձեռքկեղնները։ Գուլպային պարշտպարի կողմը քանի որ կը մաշուէր, գուլպան դէպ 'ի կօշիկին մէջ կը քաշէր՝ ինչպէս վերեն 'ի վար կաղմուած քանի մը ծալքերէն ալ կը հասկցուէր։ Իր հին և մաշուած փօթին քերթուածն աւելի ստորին կտաւի կտորներով կը կարկտէր, որոնք ամենափոքր շարժումի առթիւ կը պատռտէին։ Որոնք որ իրմէ առնելիք ունէին թուքսմուր կը խայտառակէին զինքը և ամենևին հանդիստ չէին ձգեր։ Փողոցն ալ կը հանդիպէր անոնց, իր վերնայարկի սանդուղին վրան ալ։ Ամբողջ գիշերները լալով և մտածելով կանցուներ։ Աչերը խիստ փայլուն էին, և ուսին վրայ դէպ 'ի ձախ ուսոսկրին (omoplate) կողմը անշարժ ցաւ մը կզգար։ Շատ կը կոչտար։ Սոսկալի կերպով կաեր Մատըլէն ախտարը, և չէր դանդատեր։ Օրը տասնեօթ ժամ կար կը կարէր, բայց բանտերու համար բան բանեցնող մը, որ վար գինով կաշխատցնէր բանտարկուած կիները, յանկարծ իջեցուց գիները, որով ազատ բանուորներու օրողչէքը լինը ոռւի իջաւ։ Տասն եօթ ժամ աշխատիլ ևւ օրը լինը ոռւ վաստկիլ։ Պարտատէ-

բերը անողոքաբար ստակ կը պահանջէին։ Հնավաճառը որ դրեթէ բոլոր կարասիները եւ առած էր, անընդհատ կը սէր Փանթինի.— Ե՞րբ պիտի տաս ստակս, անամօթ աղջիկ։ Ի՛նչը կուզէին առնել, Աստուած իմ։ Ամէն կողմէ պատրաստուիլ հալածուիլ կզդար, և վայրենի գազանի մը պէս կատղութիւն մը կուգար վրան։ Նոյն միջոցները թէնարտիէներն նամակ մ'եւս առաւ, որու մէջ կըսէր ասի թէ այնքան ժամանակ համբերած էր մեծ աղէկութիւն ըրած ըլլալու համար, թէ հարկ էր անմիջապէս հարիւր ֆրանք ղրկել իրեն, թէ ոչ գուէն դուրս պիտի վռնտէր պզտիկ Գոզէթը որ նոր աղէկցած էր իր վտանգաւոր հիւանդութենէ. և թէ պզտիկը ձմեռ առեն Ճամբաներու վրայ մնալով թոշ երթայ ինչ կուզէ ըլլայ, եթէ կուզէ սառկի անպամ, հոգը չէր, և այլն։

— Հարիւր ֆրանք, ըսաւ մտովին Փանթին։ Բայց մուր կայ օրը հարիւր սա վաստկելու գործ մը։

— Օ՛ն, ձեզմէն ալ ծախենք, ըսաւ, և սկսաւ բողոքիլն ընել թշուառուհին։

ԳԼՈՒԽ ՃԱ։

ՔՐԻՍՏՈՍ ՓՐԿԵՑ ՄԵՋԻ

Ի՞նչ է այս Փանթինին պատմութիւնը։ — Ընկերութեան կերուհի մը դնելն է։ Ովմի՞ն.— Թշուառութենէն։

Այսինքն անօթութենէն, ցուրտէն, առանձնութենէն, լքումէն և զրկումէն։ Ցաւալի սակարկութիւն։ Հոգի մը կառնու և իրը փոխարէն պատառ մը հաց կուտայ։ Թշուառութիւնը կառաջարկէ վաճառել, ընկերութիւնն ալ կընդունի։

Մեր քաղաքակրթեալ աշխարհը Յիսուս—Քրիստոսի սրբազան օրէնքով կը կառավարուի, այլ սակայն այս օրէնքը սահման ազդեցութիւն չունի, կըսուի թէ կերութիւնը Եւրոպայի քաղաքակրթեալ աշխարհէն անբաժան եղած է, սխալ մ'է այս։ Կերութիւնը միշտ կայ, բայց ան միայն կնոջ

վրայ կը ծանրանայ, և կանուանի պոռնկութիւն։

Կը ծանրանայ կնոջ, այսինքն վայելչութեան, տկարութեան, գեղութեան և մայրութեան վրայ։ Մարդուս մեծագոյն նախատինքներուն մին ալ այս է։

Ցաւալի ողբերգութեանս այս կէտին ուր հասանք, ան Փանթին առաջուան Փանթինը չէ և ոչ իսկ ամենափոքր կէտի նախատմամբ։ Տիզմ մ'էր, և ան մերմէր եղաւ ան։ Ով որ կը դպչի անոր, ցուրտ կզդայ։ կանգնի ան, կատաւի քեզմէ և ան ըլլալէ չդիտեր. անպատիւ և տաժանելի կերպարան մ'է։ կեանքը և ընկերային կարգաւորութիւնը իրենց վերջին ըսելիքն ալ ըսին անոր։ Փանթին ան եղած է ինչ որ կրնայ ըլլալ։ Փանթին ամէն բան զգաց, ամէն բանի համբերեց, ամէն բան կրեց, ամէն վիշտ տեսաւ, ամէն բան կորուսեց, ամէն բանի վրայ լացաւ։ Ան եղաւ համակերպութեամբ որ անտարբերութեան կը նմանի, ինչպէս մահը քունին կը նմանի։ Ան զգուշանալու բան մը չունի։ Ան վախնալու բան մը չունի։ Թող բոլոր ամպերը վրան իյնան և թող բոլոր ալիքները իր վրայէն անցնին։ Մի՞թէ հո՞գն է, քանի որ ոսկուած սպունգ մ'է։

Գէթ Փանթին ինք այնպէս ըլլալ կը կարծէ։ Բայց կը սխալի ով որ կերևակայէ թէ բաղդը կրնայ յոգնիլ և թէ օր և է բանի մը յաւակը կրնայ պանուիլ։ Թաբէթ, ինչ են խառն՝ի խուռն կերպով մղուող այս ամէն ճակատագրները։ ո՛ւր կերթան. ինչո՞ւ այսպէս ստեղծուած են անոնք։

Ասի պիտցողը կը տեսնէ ամէն մէութիւնները։ Միակ է ան։ Անունն է Աստուած։

ԳԼՈՒԽ ՃԲ։

Գ. ԳԱՄԲԱՑԳՈՒՆՑԻ ԳԵՐԵԳՈՒԹԻՒՆԸ

Ամէն պզտի քաղաքներու և մանաւորապէս Մ... քաղաքին մէջ կարգ մ'երիտասարդներ կան որոնք Բարիզի մէջ

տարին երկու Հարիւր Հազար ֆրանք վատնողի մը կերպարա-
նով Հազար Հինգ Հարիւր ֆրանգ եկամուտ կը կրծեն գաւառի
մէջ։ Գաւառեալս չէզոք անձեր են. կուտած, Հայկատակ և
ոչինչ մարդերը, որոնք քիչ մ'երկիր, քիչ մը ծանծաղամտու-
թիւն և քիչ մը խելք ունին. սրահի մը մէջ կոշտ գիւղա-
ցիի կը նմանին, այլ դինեասէրին մէջ ինքզինքնին ազնուա-
կան կը համարին. մարզապետներս, անասաններս, դիւ-
ղացիներս, կըսեն. Թատրոնը դերասանուհիները կը սուլեն՝
ցուցնելու Համար թէ ճաշակի տէր մարդ են. պահապան զօ-
րաց պաշտօնատարներուն հետ կռիւ կը հանեն՝ ցուցնելու Հա-
մար թէ պատերազմիլ գիտեն. որսորդութիւն կընեն, կը
ծխեն, կը յօրանջեն, կը խմեն, մուխ կը Հոտին, գնդա-
խաղ կը խաղան, կառքին իջնող ճամբորդներուն կը նային,
արձարանը կապրին, պանդոկը կը ճաշեն, շուն մ'ունին որ
սեղանին տակ ոսկրները կուտէ, և սիրուհի մ'ունին որ սա-
ռատները սեղանին վրայ կը դնէ. մէկ տաճկին վրայ Հոգի
կուտան, Հօտան կը չոփանչեն, ողբերգութեան մը վրայ կը
Հեռանան, կիները կարհամարհեն, հին հօշիկնին կը մաշեն,
Բարիզի մէջէն՝ Լոնտրայի և Բօնթ-ա-Մուսօնի մէջէն ալ
Բարիզի երիտասարդաց նմանիլ կուզեն, ախմարութեան մէջ
կը ծերանան, չեն աշխատիր, օգուտ մը չունին և տուած
Հատանին ալ մեծ բան մը չէ։

Այս մարդերուն միտ եղած կըլլար նաև Ֆէլիքս Թօլոմիէս
երթէ իր քաղաքը ձեացած և բնաւ Բարիզը տեսած չըլլար։

Այս տեսակ մարդիկ երթէ աւելի Հարուստ ըլլային, կրնար
ըսուիլ թէ վայելչասէր են. երթէ աւելի աղքատ ըլլային,
կրնար ըսուիլ թէ ծոյլ են։ Բայց ոչ մին և ոչ միւսն էին,
այլ պարզապէս պարապորդներ։ Այս պարապորդներուն մէջ
ձանձրալիներ, ձանձրացողներ, շարունակ երազողներ կան,
և քանի մ'ալ սրիկաներ։

Այն ժամանակները վայելչասէրի մը Հպարտան էր մեծ օ-
ձիք մը, մեծ վզնոց մը, խաղալիկներով ժամացոյց մը, տար-

բեր դոյներով վրայ վրայի դրուած երեք ձկէ՝ որոնց կապ-
տագոյնը և կարմրագոյնը ներսէն կը դրուէր, ձիթագոյն
կարճաձև թիկնոց մը՝ որ ձողաձուկի պոչին նման պոչեր և
երկու կարգ արծաթեայ կոճակներ ուներ՝ քով քովի կար-
ուած և մինչև ուսը երկցած. աւելի քայ ձիթագոյն բան-
թալօն մը որուն երկու կողմի կարերուն երկայնութեամբը տե-
սակ մը զարդեր կը շինուէին. այս զարդերուն թիւը անորոշ,
այլ միշտ անզոյգ էր, մէկէն մինչև տասն և մէկ կը Հասնէր
և այս սահմանէն բնաւ չէր անցներ։ Աւելցուր ասոնց վրայ
կօշկաձև մուճակներ որոնց ներքնամը պզտի պայտեր ուներ.
երկայն գլխարկ մը որուն եղերքը նեղ էին. տրձակներու բաժ-
նուած մազեր, ահագին գաւազան մը և Բօթիէյի բառախաղ-
ներովը Համեմուած խօսակցութիւն մը։ Զմոռնանք յիշել նաև
պէսպէս երեսները և կօշկի խթանները, և ահա վայելչասէրի անթերի
նկարագրութիւնը ունեցած կըլլանք։ Այն ժամանակները
պէսը քաղաքացի և խթանն ալ հետևակ ըսել կուզէր։

Գաւառական վայելչասիրին խթանները աւելի երկայն և
պէսերը աւելի վայրենական էին։

Ասի այն ժամանակն էր ուր Հարաւային Ամերիկայի Հան-
րապետութիւնները՝ Սպանիայի թագաւորին դէմ, Պօլիվար՝
Մօրիլլոյի դէմ կը կռուէր։ Փոքրաձիր գլխարկները թա-
գաւորական էին և Մօրիլլո կանուանէին. ազատականնե-
րը լայնեզր փեղոյրներ կը դրուէին, որք Պօլիվար կանո-
ւանէին։

Արդ նախորդ երեսներուն մէջ պատմուած դէպքերէն ութ
կամ տասն ամիս ետքը, 1823ի յունվարի առջի օրերէն մի-
րիկոն մը ուր ձիւն եկած էր, այս տեսակ վայելչասէր ան-
ձերէն մին, այս պարապորդներէն մին, «լաւ մտածող» մը,
վասն զի Մօրիլլո մ'ունէր, ցուրտ եղանակին մէջ մօտայի
Հագուստը ամբողջացնող մեծ վերարկուով մը փաթթուած և
տաքցած՝ կը զուարճանար կնիկի մը Հետը խնալով, որ պա-
րահանդեսի զգեստներ Հագած, թևերը և ուսերը բաց, և

գլուխը ծաղկներ դրած կը ղրկէր պաշտօնատարներու սրճա-
րանին ապակեայ պատուհանին առջև : Վայելչասէրը կը ծը-
խէր , վասն զի ծխելը իրօք մեռա էր : Իր առջևէն քանի
որ կանցնէր կինը , գլանիկին մուխին հետ թշնամական խօսք
մը կը նետէր անոր և կը կարծէր թէ հանճարեղ և զուար-
ճալի էին իր խօսքերը : — Ո՛րքան տղեղ ես : — Գնա՛ , մի՛
երևար : — Ակռայ չունիս , և այլն : Ահա ատոնց նման բա-
ներ էին ըսածները : Այս պարոնին անունն էր Գամալա-
պուա : Կինը որ զարդարուած տրամալի ուրուական մ'էր և
ձիւնին վրայ կերևնակեր , պատասխան չէր տար , և ոչ խոկ
կը նայէր անոր , և մի և նոյն լռութեամբ ու անուր կանո-
նաւորութեամբ մը իր պտոյտը կը շարունակէր , որով ամէն
մէկ հինգ րոպէին հետզհետէ կենթարկուէր՝ գաւազանի
հարուածը ընդունելու վերադարձող պատասպարտ գինուորի
մը պէս : Պարապորդը տեսնելով որ իր ընթացքէն մեծ տո-
դիւնք մը չէրներ , հարկաւ զրգռուեցաւ , և ճիշդ կինը պատ-
նալու վայրկենին եռանէն յառաջացաւ գայլի մը պէս քայլե-
լով և խնդուկը զսպելով , ծռուեցաւ , գետնէն ափ մը ձիւն
առաւ և յանկարծ կնոջ երկու մերկ ուսերուն մէջէն կոնակը
դրաւ : Աղջիկը մռնչային աղաղակ մը հանեց , եռանը դար-
ձաւ , էգ վագրի մը պէս ցայտեց , մարդուն վրայ յարձակե-
ցաւ՝ ըղունգներովը անոր երեսը ճանկոտելով և այնպիսի
սարսափելի խօսքեր ըսելով , որոնք հավիտ թէ պահնորդ գին-
ուորներու բերնէն կրնան թափթփիլ : Այս հայհոյութիւնները
զոր օղիէն աւրուած ձայն մը կարտաբերէր , սարսափելի
կերպով կնկնէին այնպիսի բերնէ մը , զոր առջևի երկու ակ-
ռաները իրօք կը պակսէին : Ցանկինն էր այս կինը :

Պաշտօնատարները դուրսի այս աղմուկը լսելով սրճա-
նէն դուրս ելան , անցորդները հաւքուեցան , և ահա ամէն
տեղ մեծ շրջան մը կազմելով սկսան խնդալ , ծաղրել և ծափ
զարնել երկու անձէ բաղկացող այս յորձանքին բոլորտիքը ,
ուր դժուարին էր հաւատալ թէ մարդ մը և կին մը կայ ,

մարդ մ'որու գլխարկը գետինը գլորուած էր և որ կը յուզ-
ուէր կանգնելու համար , կին մը որ ոտքովը և ձեռքովը կը
զարնէր՝ ոռնալով . որու գլխին գարդը ինկած , մազերը խուզ-
ուած , ակռաները ելած էին , և որ բարկութենէն կապտա-
պոյտ ու սոսկալի կերպարան մ'առած էր :

Ցանկարծ բազմութեան մէջէն բարձրահասակ մարդ մ'ելաւ
ուժգնակի , կինը բռնեց՝ ձեռքը անոր անդուսկ գօտիին վրայ
գնելով որ ակռմով շաղախուած էր , և ըսաւ . — Եաւէս
եկո՛ւր :

Կինը գլուխը վեր վերցուց : Ցանկարծ դադրեցաւ իր կա-
տաղի ձայնը : Աչերը սպակիի կը նմանէին , երեսին կապոյտ
գոյնը գեղնի փոխուած էր , և սարսափի շարժումով մը կը
դողար : Ճանչցած էր թէ ինք բռնողն էր ծավէրը :

Խոկ վայելչասէրը երիտասարդը այս դիպուածին շնորհ-
փառած էր :

ԳԼՈՒԽ ՃԳ·

ԹՂԼԻՒՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՋՈՆԻ ՄԸ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ԼՈՒԾՈՒՄԸ

ԾԱՎԷՐ քովը գտնուող անձերը մէկ գի ըրաւ , շրջանը
կարճց և մեծ քայլերը առնելով և թշուառուհին եռանէն քա-
շելով սկսաւ գայլել դէպ 'ի ոստիկանութեան պաշտօնարանը
որ հրապարակին ծայրն է : Կինը մեքենայաբար կերթար ա-
նանց դիմադրութեան : Ոչ ծավէրը և ոչ ինք բան մը չէին
ըսեր : Հանդիսականներու խումբը յետին ոստիկանի ուրա-
խութեամբ համակուած եռանէն կերթար՝ լրբենի կատակներ
ընելով : Ծայրայեղ թշուառութիւնը լրբութեան առիթ է :

Ոստիկանութեան պաշտօնարանը ցած սրահ մ'էր , ուր վա-
ռարան մը դրուած էր տաքութիւն տալու համար , և ուր
հանգչելու համար պահնորդներ կային , փողոցին վրայ նայող

պուռ մ'ալ ուներ որ ապակիով ապուցուած ու վանդակուած էր : Երբ ծաւէրը պաշտօնատանը հասաւ , դուռը բացաւ , Ֆանթինին հետ ներս մտաւ և դուռը եանէն գոցեց ՝ի մեծ ահաձուէին հետաքրքիրներու որոնք ոսքի ծայրով կոխելով բարձրացան , և տեսնելու փափաքով վիզերնին դէպ ՝ի պահնորդատանի (corps-de-garde) պատուհանին առջև երկնցուցին , պատուհանին ապակին պզտիկ էր : Հետաքրքրութիւնը արկրամոլութիւն մ'է : Ցեսնելը լափէլ է :

Ֆանթին երբ ներս մտաւ , դէպ ՝ի անկիւն մ'երթալով ինքզինքը , և հոն անշարժ , անմռունչ և վախցող շունի մը պէս կծկուած մնաց :

Պահնորդները յինդապետը վառուած ճրագ մը բերաւ և սեղանին վրայ դրաւ : Ծաւէրը նստաւ , դրպանէն դրոշմատուր թերթ մը հանեց և սկսաւ գրել :

Մեր օրէնքները բոլորովին ոստիկանութեան ազատ կամքին յանձնած են այս կարգի կիները : Ոստիկանութիւնը ուզածը կընէ անոնց նկատմամբ , կը պատժէ զանոնք ինչ կերպով որ ուզէ , և իր հաճոյքը համեմատ կը գործադրէ սա երկու բանը զորս անոնք իրենց արհեստը և ազատութիւնը կանուանեն : Ծաւէրը անտարբեր կը կենար , ծանր նայուածքը կը յայտներ թէ ամենևին յուզում մը չէր զգար : Սակայն ծանր և խորին մտածութեան մը մէջ էր : Ոյնպիսի վայրկեանի մը մէջ կը պտնուէր ուր իր ազատակամ (discrétionnaire) և ահարկու իշխանութիւնը կը բանեցնէր առանց ուրիշի քննութեան , բայց անաչառ խղճի մը ամէն զգուշութիւններով : Ինքն ալ կզգար թէ նոյն պահուն իր ոստիկանութեան գործակատարի աթոռակը դատարան մ'էր : Ծաւէրը դատ կը տեսնէր : Կը դատէր և կը վճռէր : Մարդին մէջ օրքան զաղափար որ ունէր , ամէնն ալ իր ըրած մեծ բանին բոլորտիքը կը կոչէր : Քանի որ այս աղջկան յանցանքը կը քննէր , այնքան աւելի կը զայրանար : Ցայտնի էր թէ քիչ մ'առաջ ոճիր մը տեսած էր : Ցեսած էր թէ մարդկային ընկերութիւնը , զոր կալուածը

ծառեր–ընտրող մը կը ներկայէր , իր ծոյլն բոլորովին արտաքսուած անձի մը կողմն նախատինք և յարձակում կրած էր փողոցին մէջ : Պառնիկ մը քաղաքացիի մը վրան յարձակած էր : Ծաւէրը նոյն իսկ ինք տեսած էր այս եղելութիւնը , և լսելեայն կը գրէր :

Երբ լմնցուց գիրը , ստորագրեց , թուղթը ծալեց , և պահնորդաց յինդապետին յանձնելով ըսաւ . — Երեք մարդ առ , և բանտ տար այս աղջիկը : — Ցետոյ դէպ ՝ի Ֆանթին դառնալով ըսաւ , — Վեց ամիս բանտ պիտի մնաս :

Թշուառուհին սարսռեցաւ :

— Վեց ամիս , վեց ամիս բանտ մնալ , ազազակեց : Վեց ամիս բանտ մնալ՝ օրը երեք ՝՝՝ վաստկելով . Հապա ինչ պիտի ըլլայ Գոզետը , աղջիկս , աղջիկս : Բայց պարոն տեսուչ , պիտի որ տակաւին հարիւր ֆրանք պարտք ունիմ Թէնարտիէներուն :

Ահագին բազմութեան ազմուա հօշիներէն թրջուած քարայատակին վրայէն քաշքշուելով տարուելայատ առանց ոսքի վրայ ելնելու , ձեռքերը մէկ մէկու միացնելով , և ծունկերովը մեծ քայլեր առնելով :

— Պ , ծաւէրը , գթացէք ինձ , ըսաւ : Հաւատացէք որ յանցանք չունիմ : Եթէ սկիզբը տեսած ըլլայիք , կրնայիք տեսնել թէ ան էր յանցաւորը . Ըսուած վիպ , ես յանցանք չունիմ : Այն քաղաքացի պարոնն է յանցաւորը , որուն ոչ ըլլալը չպիտի և որ կռնակս ձիուն դրաւ : Մինչ ուսունք ունին կռնակնուս մէջ ձիուն դնելու երբ առանց մէկուն մը չարութիւն ընելու հանդարտօրէն փողոցին կանգնինք : Ինքզինքս չկրցայ զսպել : Քիչ մ'ալ հիւանդ եմ , հաւատացէք , մանաւանդ թէ արդէն քանի մ'առեներ ՝ի վեր խօսք կը նետէր ինծի : Ցզեզ ես , ակռայ չունիս , կըսէր : Ես ալ պիտի ակռայ չունենայի : Ես բան մ'ըրած չէի , կըսեմ թէ զաւարճանալ կուզէ այս պարոնը : Պարկեշտութեամբ վարուելով չէի խօսքը հետը : Նոյն պահուն էր որ կռնակս ձիուն

դրաւ : Պարոն Ժամկը , բարեսիրտ ան ատչդ իմ Ժամկը , միմէ չիմ մարդ մը որ տեսած ըլլայ եղելութիւնը և բսա- ծիս ստուգութիւնը հաստատէ ձեզ : Գուցէ իրաւունք չունէի նեղանալու , բայց , ինչպէս դիտէք , մարդ առջի անդամին չկրնար ինքզինքը զսպել . շուտ մը կը բարկանայ . մանաւանդ երբ կռնակը անանկ սալ բան մը կը դրուի այնպիսի առեն մ'ուր մաքէն չէր անցներ այն : Ցանկայուր եմ այն պարոնին գլխարկը ձնեղլուս համար : Ինչո՞ւ ձկեց գնաց . կուզէի նե- րուն խնդրել իրմէ : Ո՛չ , միմէ հո՞ղս է իրմէ ներուն խըն- դրելս : Ա՛յսօր , այս անդամուան համար ներեցէք ինձ , պ . Ժամկը : Բանաեղու մէջ օրը միայն եօթը սա՜ կրնայ վտա- նգիլ բանտարկեալ մը . ասի դուք չդիտէք . յանցանքը կա- ռավարութեան չէ , բայց ստոյգ է թէ օրդղէքը եօթը սա՜ է . երևակայեցէք անդամ մը թէ հարիւր ֆրանք պարտք ու- նիմ . եթէ չվճարեմ , զաւակս ետ պիտի զրկուի ինձմէ : Ո՛ Աս- տուած , ինչպէս կրնամ քովս պահել զան : Մեծ դէշութիւն է այս ըսածս : Ո՛ իմ Գօզլեթ , ո՛ իմ սուրբ Աստուածածնի պզտիկ հրեշտակս , ինչ պիտի ըլլաս այսուհետև , խեղճ զա- ւակ : Եթէ կուզէք , ըսեմ ձեզ թէ որմնց քոմն է ան . թէ- նարտիէ կըսուին , պանդոկապետ են , դիւզացիներ են Գօ- զլեթս նայողները , և խոսք չեն հասկնար , այլ ստակ կու- զեն : Մի՛ բանտարկէք զիս : Պզտիկ աղջիկ մ'է Գօզլեթս , զոր թևէն բռնելով , դուռէն դուրս վռնտելով փողոցը պիտի թո- ղուն ձմեռուան մէջ , պէտք է գթալ իր վրայ , իմ սիրելի պ . Ժամկըս : Եթէ աւելի մեծ ըլլար , կրնար ապրուստը հո- պալ , բայց իր հասակին մէջ կարելի չէ ինքնին վաստկիլ : Իրապէս դէշ կնիկ մը չեմ : Մի՛ կարծէք թէ արդի վիճակիս պատճառը ծուլութիւնս ու որկրամոլութիւնս է : Օղի խմ- ցի , բայց թշուառութեանս դառնութիւնը չգոլու համար խմեցի : Օղին չեմ սիրեր , բայց մարդ անոր իր վիշտը չզգ- պար : Երբ երջանիկ էի , պահարաններս նայող մը պիտի ունենար որ անկարգութեամբ ապրող կին մը չէի : Ձերմակեղ-

ղէններ ունէի , շատ Ձերմակեղէններ ունէի : Գթացէք ինձ , պ . Ժամկը :

Ֆանթին ծռուելով կարծես թէ երկու կտոր եղած , լայ- րէն ցնցուած , արցունքէն կուրցած , վիզն ալ բացուած էր , և ձեռները գալարելով , չոր չոր և կամաց կամաց հաղալով , հոգեվարի մը պես կը խօսէր և ձայնը թոթովելով կը հա- նէր : Մեծ վիշտը երկնային և սարսափելի ձառագայթ մ'է և Թշուառներու կերպարանը կը փոխէ : Նոյն պահուն Ֆան- թին նորէն դեղձութին մ'առած էր . ժամանակ առ ժամա- նակ խօսելէ կը դադրէր և ոստիկանութեան լրտեսին թիկ- նոցը կը համբուրէր եռանդով : Ֆանթին դուցէ կրանիթէ սրտի մ'արդահատանքը շարժէր , բայց փայտ սիրտ մ'արդա- հատանք չդգար :

— Ա՛լ մտիկ չեմ ըներ , ինչ որ ըսիր , կը բաւէ , ըսաւ Ժամկը : Ուրիշ ըսելիք մ'ունի՞ս : Հիմա քայլէ ալ : Վեց ա- միս պիտի ձգաս բանտը : Ցաւիտենական Հայրը անձամբ գայ , որոշումս չկրնար փոխել :

Ֆանթին երբ լսեց այս բացարձակ խօսքը , այսինքն Ժա- կերին Ցաւիտենական Հայրը անյողդ եղայ , որշտա չկրնար փոխել ըսելը , հասկցաւ թէ վճիռը արուած էր , և գլուխը ծռե- լով մրմռաց .

— Մեղայ :

Ժամկը կռնակը դարձուց :

Զինուորները Ֆանթինը թևէն բռնեցին :

Քանի մը վայրկեան ի վեր մարդ մը մտած էր ներս , բայց ոչ ոք ուշադրութիւն ըրած էր : Այս մարդը դուռը գոցած , վրան կռթնած և Ֆանթինին յուսահատական աղերսները լը- սած էր :

Երբ զինուորները բռնեցին Թշուառուհին , որ չէր ուզեր ելլել , մարդը քայլ մ'առաւ , երևեցաւ և ըսաւ .

— Պահ մը համբերեցէք , եթէ կը հաճիք :

Ժամկը աչքը վերցուց և տեսաւ որ մարդը պ . Մատըլէնն

էր : Գլխարկը հանեց , և կերպիւ լուիք նեղանալով տմարդօրէն բարև մը տուաւ և ըսաւ .

— Ներեցէք , պարոն քաղաքապետ . . . :

Այս « պարոն քաղաքապետ » խօսքը տարօրինակ տպաւորութիւն մ'ըրաւ Ֆանթինին վրայ : Ֆանթին ոտքի վրայ ելլելով ուղղակի կայնեցաւ պետնէն ելնող ուրուականի մը պէս , երկու բաղուկովը զինուորները մէկ կողմ հրեց , և առանց ժամանակ տալու քովինները բռնեն՝ ուղղակի դէպ'ի Պ . Մատլէն քալեց , և վայրենական վշտահար կերպարանով մ'ուղղակի նայելով պօռաց .

— Ա՛հ , դուն ես եղեր պարոն քաղաքապետը : Ցեղոյ քահ քահ խնդաց և Պ . Մատլէնի երեսը թքաւ :

Պ . Մատլէն թուքը երեսին վրայէն սրբեց և ըսաւ .

— Ոստիկան Ժավէր , թող տուէք այս կինը :

Ժավէր պահ մը կարծեց թէ խելքը գլխէն կը թռի : Նոյն վայրկենին հետ գետէ և գրեթէ միահամուռ կերպով այնպիսի ղժացումներ կը կրկէր , որոնց նմանը կենացը մէջ չէր ղժացած : Պոռնիկ մը համարձակի քաղաքապետի մ'երեսը թքնելու , ասի այնքան սոսկալի բան մ'էր , որ Ժավէր որքան սոսկալի բաներ ենթադրելու ալ ըլլար , սրբապղծութիւնի մը պիտի համարէր կարծելը թէ հնարին է այն : Միւս կողմէ ալ մտապէս և խառն'ի խուռն կերպով սոսկալի մեղաւորութիւն մը կը նշմարէր այս կնոջ արդի վիճակին և քաղաքապետին ալ Թագուն վիճակին մէջ , և ահա այն առեղծուածային սարսափով մը համակուելով պարզ բան մը կը համարէր այն ահագին ոճրագործութիւնը : Բայց երբ տեսաւ որ այս քաղաքապետը , այս գաւառը հանդարտօրէն երեսին թուքը կը սրբէ և կըսէ . Թող պահէ այս կինը , տպշելով շուարեցաւ : Ոչ կրցաւ խորհիլ և ոչ ալ խօսիլ . կերևակայէր թէ պարմանալը կարելի չէր այսպիսի պարագայի մը մէջ . ուսոլ լուեց :

Քաղաքապետին այս խօսքը ոչ նուազ տարօրինակ տպաւո-

րութիւն մ'ըրած էր Ֆանթինին վրայ : Ասի իր մերկ բազուկը վեր վերցուց , և երբոր անձի մը պէս վառարանին բանալիին փարեցաւ : Բայց չորս կողմը առնուն նայելով ցած ձայնով և ինքնին խօսելու պէս սկսաւ խօսիլ :

— Չիս թողուր , թողուր որ երթամ , վեց ամիս բանտ չմնամ : Ո՞վ է ասի ըսողը : Անկարելի է որ ասանկ բան մը ըսուած ըլլայ : Սխալ հասկցած ըլլալու եմ : Չեմ կարծեր թէ սա հրեշ քաղաքապետը ըսէ ասանկ բան մը : Միթէ դո՞ւք ըսիք , սիրելի իմ Պ . Ժավէր որ աղատ թողուն զիս : Ո՛չ , ա՛լ ըսեմ ուրեմն , և դուք ալ լսելով թող տուէք զիս որ երթամ : Ամէն քաշածներուս պատճառը այս հրեշ քաղաքապետն է , այս թշուառական ծերունին է : Երևակայեցէք անդամ մը , Պ . Ժավէր , զիս գործարանէն վռնտեց խեղճ մը ջղիկ կնիկներու պատճառաւ որոնք գործանոցին մէջ խօսք կը խառնեն : Միթէ սոսկալի բան մը չէ ճամբայ տալ խեղճ աղջիկի մը , որ պարկեշտութեամբ իր գործը կը կատարէ : Վռնտուելէս ետք հարկաւոր եղածին չափ չվրցայ վաստկիլ , և ասկէ հետևեցաւ իմ բոլոր դժբաղդութիւնս : Նախ բարեկարգութիւն մ'ընելու է , որ է չթողուլ բանտերու մէջ բան բանեցնել տուող պարոններուն որ աղքատ մարդերու վնաս տան : Խղճահարեմ միտքս : Մինչդեռ օրը տասնեակու սոսկը վաստկինք շապիկ կարելով , ահա օրօղչերը ինի կիջնէ , և ա՛լ ապրուելը անկարելի կըլլայ : Հետևաբար հարկ է ըլլալ ինչ որ կրնանք ըլլալ : Ես , պզտի Գոզէթս ալ ունենալով , բռնադատուեցայ դէշ կին մ'ըլլալու : Ա՛լ հիմա հասկցաք թէ ամէն չարեաց պատճառ այս անտանելի քաղաքապետն է : Անկէ ետք պաշտօնատարներու սրճարանին առջև այն քաղաքացի պարոնին գլխարկը կոխկրտեցի : Բայց ան ալ վրաս ձիուն նետելով բօսյաս մէկ ստակի ըրած էր : Մեր նմանները երեկոյեան համար մէկ մեռաքսեայ բօսյա կունենան մը այն : Ինչպէս կը տեսնէք , Պ . Ժավէր , ճշմարիտ կըսեմ թէ դիտմամբ գէշութիւն չըրի երբեք , և ամենուրեք իրմէ շատ աւելի

Ջարասիրա կիներ կը տեսնեմ որոնք շատ աւելի երջանիկ են։
Ո՛չ. Ծաւէրը, դուք ըսիք որ ազատ ձկներն գիս, այնպէս չէ՞։ Տեղեկացէք, խօսեցէք տան տիրոջս հետ, և պիտի տեսնէք որ հիմա սենեկիս վարձը ժամանակին կը վճարեմ և թէ պարկեշտութեամբ կը վարուիմ։ Ա՛հ, Աստուած իմ, ներե՛ք կաղաչեմ, անուշադրութեամբ վատաբանին բանալին դպեր եմ, և այս պատճառաւ մուխ կելնէ։

Պ. Մաարլէն խորին ուշադրութեամբ մտիկ կընէր Գանթինի խօսքերը։ Մնչդեռ կը խօսէր Ֆանթինին, Մաարլէն ձգնէն խառնելով քսակը հանած և բացած էր. բայց քսակը պատարիկ էր. հետևաբար նորէն դրպանը դրած էր։

— Ո՞րքան է պարտքդ, հարցուց Մաարլէն Ֆանթինին։

Ֆանթինն որ միայն Ծաւէրին կը նայէր, դէպ՝ ի Մաարլէն դառնալով ըսաւ.

— Գեղի հետ մրթէ խօսող կայ։

Ձեռով խօսքը գինուորներուն ուղղելով, անոնք թէ ինչպէս ձեր առջև իր երեսը թքի։ Ա՛հ, Թշուառական ծեր, հոս եկար որ գիս վախցնես, բայց քեզմէ չեմ վախնար. պ. Ծաւէրէն կը վախնամ. իմ սիրելի պ. Ծաւէրիս կը վախնամ միայն։

Այսպէս խօսելով դէպ՝ ի ոստիկանութեան տեսուչը դարձաւ

— Բայց և այնպէս պէտք է արդար ըլլալ, պարոն տեսուչ։ Գիտեմ թէ արդար էք, պ. Ծաւէր. մանաւանդ թէ ինչու զարմանամ. մարդ մը կնիկի մը հետը կիյնայ՝ կռնակը ձիւն դնելով. ասի տեսնելով գինուորականները կը խնդային. պէտք է որ մարդս բանով մը զուարճանայ, մեղի պէս կնիկները ահա Ճիդ ասանկ զուարճութեան ծառայելու համար եղած են, ինչու չէ։ Անկէ ետք դուք վրայ հասաք, և որովհետև պարտաւոր էք բարեկարգութիւնը պահել, կնիկը՝ որ յանցաւոր էր առիք տարիք. բայց յետոյ մտածելով, որովհետև բարեսիրտ էք, մտածելով հրաման կուտաք որ արձակուի ան. անշուշտ պզտի Փոշէթիս համար է այս արձա-

կումը, վասն զի վեց ամիս բանտ մնալով չպիտի կրնայի զուարկիս ապրուստը ձարել։ Միայն թէ մէյ մ՝ալ չընես հա՛ անամօթ կնիկ։ Ո՛հ, մէյ մ՝ալ չպիտի ընեմ, պ. Ծաւէրը։ Ա՛լ այսուհետև ինչ կուզեն թող ընեն ինձ, ա՛լ ձայն չպիտի հանեմ։ Մինակ այսօր պօռացի, ինչու որ զէշութիւն մ՝էր ինծի եղածը. ամենևին մտքէս չէր անցներ պարոնին կռնակս դրած այն ձիւնը. մանաւանդ թէ՝ ինչպէս ըսի արդէն՝ առողջութիւնս շատ լաւ չէ, հազ մ՝ուներ, ստամոքսիս մէջ դունդի նման բան մը կայ որ ներսս կայրէ. բժիշկը կը պատուիրէ որ հոգ տանիմ այս հազին։ Տուէք ձեռքերնիդ, բռնեցէք, մի՛ վախնաք, ահա Ճիդ սա տեղն է։

Ֆանթին ա՛լ չէր լար. դղուանօք կը հանէր ձայնը. Ծաւէրի հաստ և բիրտ ձեռքը իր սպիտակ և փափուկ վզին վրայ կը կրճնդնէր, և ժպտելով անոր կը նայէր։

Ցանկարծ վրան դլուխը շտկեց արագօրէն. վար առաւ բոպայն Ծաւէրը որ գեռինը քսուելով մինչև ծունկը վեր եւլած էր, և դէպ՝ ի դուռը քայլեց՝ դլուխով զինուորներուն քաղաքավարական նշան մ՝ընելով և մեղմավին ըսելով.

— Բարեկամներ, պարոն ոստիկանը ըսաւ որ թող տաք գիս, ահա կերթամ։

Ձեռքը դռնափակին տարաւ։ Եթէ քայլ մ՝ևս առնուր, ինքզինքը փողոցը պիտի դտնէր։

Մինչև նոյն վայրկեանը Ծաւէրը տակի վրայ կեցած էր՝ անդադար դեռինը նայելով, և այս տեսարանին մէջ կարծես թէ տեղէն վերցուած և դլխիվայր դրուած արձան մ՝էր՝ ըսպառելով որ տեղ մը դրուի։

Դռնափակին հանած Ճոինչէն ուշաբերեցաւ։ Բացարձակ իշխանութիւն ունեցողի մը կերպարանով դլուխը վեր վերցուց։ Իշխանութիւնը, որքան տարօրինակ մարդու մը ձեռքը դտնուի, այնքան աւելի զարհուրելի կըլլայ այն մարդուն կերպարանը։ Իշխանութիւնը եթէ շիկերեքի մը ձեռքն ըլլայ, գուժ չունենար։ Երբ չնչին մարդու ձեռքն է, անտանելի է։

— Ցնծանալե՛ս, պօտաց, չէք տեսներ սա լման կինը որ կը ձգէ կերթայ։ Ձեղի ոչ հրաման տուաւ թողուլ որ երթայ։

— Ե՛ս, ըսաւ Մատրլէն։

Փանթին ծավէրին ձայնէն դողալով թող տուած էր դրնափակը՝ բռնուղ դողի մը դողցած բանը ձգելուն պէս։ Մատրլէնի ձայնը լսելով եռևը դարձաւ, և նոյն րոպէէն սկսելով առանց բառ մ՚արտասանելու, առանց և ոչ իսկ ազատօրէն շունչ առնել համարձակելու՝ նայուածքը փոփոխակի Մատրլէնի վրայէն ծավէրի և ծավէրի վրայէն ալ Մատրլէնի վրայ ժուռածեց ամէն անգամ որ միւն կամ միւսը կը խօսէր։

Անշուշտ ծավէր սաստիկ զայրացած էր որ՝ քաղաքապետէն Փանթինը արձակելու հրաւէրը ընդունելէն ետք՝ համարձակեր էր այն կերպով յանդիմանելու յիսնապետը։ Զայրացած էր արդեօք այն աստիճան որ մինչև անգամ քաղաքապետին առջեւ պանուիլը մոռցած ըլլար։ Վերջապէս ինքնին ըսած էր արդեօք թէ «իշխանութիւն մը» անկարելի է որ այսպիսի հրաման մը տուած ըլլայ, և թէ անշուշտ պարոն քաղաքապետը բան մ՚ըսել ուզելով ակամայ սխալած և այն հրամանը տուած էր իրեն։ Կամ թէ երկու ժամէ՝ի վեր իր առջեւ եղած այս անհնարին բաները աչքովը տեսնելով կըսէր արդեօք իւրովի թէ պէտք էր մինչև յետին կէտը պիտակրաւելով, թէ հարկ էր որ պզտիկը՝ մեծ ըլլայ, ըտեսը դատաւորի փոխուի, ոստիկանութեան գործակատարը արդարութեան գործակալ ըլլայ, և թէ ասանկ ահագին ծայրայեղութեան մը մէջ ինքն ըլլայ բարեկարգութեան, օրէնքի, բարոյականի, կառավարութեան և ամբողջ ընկերութեան ներկայիչը։

Ինչ և իցէ, երբ Պ. Մատրլէն նա ըսաւ, ինչպես վերը նշանակեցինք, ծավէր, ոստիկանութեան տեսուչը՝ դուռնատան սառնահար, շուրթերը կապտագոյն, նայուածքը յուսահատ [illegible] համակուած, բոլոր մարմինը անդադրում շարժմամբ մը երերալով դէպ՝ի պարոն քաղաքապետը գլուխ և աչքը վար առնելով այլ հաստատուն ձայնով մը սա անվերջ խօսքը ըսաւ.

— Պ. քաղաքապետ, անկարելի է այդ բանը։

— Ինչ ըսիք, պատասխանեց Պ. Մատրլէն։

— Այս թշուառական կինը քաղաքացի մը նախատեց։

— Ոստիկան ծավէր, մոխիկ ըրէք ինձ, կրկնեց Պ. Մատրլէն հաշտարար և մեղմ ձայնով մը։ Պարկեշտ մարդ մ՚էք դուք, հետևաբար ձեղի բացատրութիւն տալու չեմ գծածրիր ամենևին։ Աչառութիւնը։ Հրապարակէն կանցնէի երբ կը տանէիք այս կինը. տակաւին հոն հոս գտնադտնող մարդեր կային. տեղեկութիւն առի անոնցմէ, ամէն բան իմացայ. յանցաւորը քաղաքացին է, և լաւ ոստիկանութեան մը պարտքը կը պահանջէր որ ան բռնուէր։

Ծավէր կրկնեց.

— Այս թշուառական կինը քիչ մ՚առաջ ձեղի ալ նախատեց, պարոն քաղաքապետ։

— Ատի ինծի կը վերաբերի, ըսաւ Պ. Մատրլէն։ Ինծի եղած նախատինքը դուք ինծի է։ Ուզած կերպովս կրնամ վարուիլ այդ մասին։

— Ներեցէք, Պ. քաղաքապետ. ձեղի եղած նախատինքը ձեզ չվերաբերիր, այլ արդարութեան։

— Ոստիկան ծավէր, պատասխանեց Պ. Մատրլէն, առաջինն արդարութիւնը խիղճն է։ Լսեցի այս կնիկին ամէն ըսածները։ Ես ըրածս գիտեմ։

— Բայց ես ալ, պարոն քաղաքապետ, չեմ գիտեր թէ ինչ է տեսածս։

— Ապա ուրեմն հնազանդեցէք միայն։

— Պարտաւորութեանս կը հնազանդիմ։ Պարտքս կը պահանջէ որ այս կինը վեց ամիս բանտարկուի։

Պ. Մատրլէն քաղցրութեամբ պատասխանեց.

— Աղէկ մոխիկ ըրէ ըսելիքս։ Եւ ոչ իսկ օր մը պիտի բանտարկուի ան։

Ժավէը այս վճռողական պատասխանին վրայ համարձակեցաւ ուղղակի քաղաքապետին երեսը նայիլու, և ըսաւ՝ միշտ խորին յարգանօք հնչելով ձայնը։

— Ցուսահատութեամբ իսոխպուխիմ դիմադրել պարոն քաղաքապետիդ. կեանքիս մէջ առաջին անգամն է որ այսպիսի անհնազանդութիւն մը կընեմ. բայց եթէ կը հաճիք, նեղութեցէք ինձ ըսել որ այսպէս վարուելովս պաշտօնիս սահմանէն դուրս չեմ ելներ։ Քանի որ պարոն քաղաքապետը այնպէս կը կամի, ես միայն քաղաքացիին դէպքը ամբաստանութեանս հիմ կընդունիմ։ Այս աղջիկը Պ. Պամաթապուային վրայ յարձակեցաւ. Պ. Պամաթապուա ընտրող (électeur) է և տէր այն պատշտամաւոր դեղերուն տունին, որ հրապարակին անկիւնը կը կազմէ, երեք դռներէն ոչնի և վերէն վար քարուկիր։ Վերջապէս, այս կարգի մարդիկ ուրիշ բաներ ալ ունին։ Ինչ և իցէ, պարոն քաղաքապետ, ասի փաղղի բարեկարգութեան վերաբերող բան մ'է որու ես կը խառնուիմ, և հետեւաբար չեմ թողուր Ֆանթէին ըսուածի կինը։

Ան ատեն Պ. Մաաըլէն թեւերը խաչի ձեւով վրայ վրայի դրաւ և ըսաւ այնպիսի խստութեամբ մը զոր քաղաքին մէջ ոչ ոք լսած էր տակաւին։

— Այդ եղելութիւնը թաղական ոստիկանութեան վերաբերող եղելութիւն մ'է։ Պատժական օրինագրքին ենթարկող, մեռտասանեցնող, հնդեռտասանեցնող և վաթսունհուինգերորդ յօդուածներու տրամադրութեանց համեմատ այդ եղելութիւնը դատելու իրաւունքը ինծի կը պատկանի։ Ես հրամայեմ որ այս կինը արձակուի։

Ժավէը վերջին ջանք մ'ալ ընել ուզեց։

— Բայց, պարոն քաղաքապետ...։

— Կը յիշեցնեմ ձեզի յանկրաւի բանտարկութեան նկատմամբ 1799 դեկտեմբերի 13ին հաստատուած օրէնքին 81ր յօդուածը։

— Պ. քաղաքապետ, ներեցէք...։

— Ա՛լ խօսք մ'անդամ չեմ ուզեր։

— Սակայն...։

— Դո՛ւրս ելիք, ըսաւ Պ. Մաաըլէն։

Ժավէը այս հարուածը ծուռ գլխուորի մը պէս առաքի վրայ, երեսին կոզմէն և ձիշդ կուրծքին վրայ ընդունեցաւ։ Մինչև դետինը խոնարհելով բարեւեց պարոն քաղաքապետը և դուրս ելաւ։

Ֆանթէին դուռին քովէն ասդին եկաւ՝ տեղ տալու համար որ Ժավէը անցնի, և արմանքով զարմանքով դրաւուած՝ Ժավէերին նայեցաւ որ իր առջևէն անցնելով դուրս ելաւ։

Սակայն Ֆանթէին ալ սարսռիչնակ դղրդում մը կզգար։ Ցնաած էր թէ երկու դիմադիր իշխանութիւն իր առջև կերպիւ իւիք մրցեր էին միւն կամ միւսը զինք գրաւելու համար։ Ցնաած էր որ իր առջև երկու մարդ իրարու հետ կռուեր էին՝ իրենց ձեռքը ուենենալով իր ազատութիւնը, կեանքը, հոգին, ղաւակը. այս մարդուն միւն դէպ 'ի մթութիւն կը մղէր զինք, մինչդեռ միւսը դէպ 'ի լոյս կը վերադարձնէր. այս կռիւին մէջ որ երեւակայական սարսափի պէս մեծ կռիւ մը երեւցած էր իրեն, կարծեր էր թէ այն երկու մարդերը երկու հսկաներ էին. միւն իբր իր սատանան կը խօսէր, միւսն ալ իբր իր պահապան հրեշտակը։ Հրեշտակը սատանային յաղթած էր։ Ֆանթէին մարմնովին կը սարսռէր մանաւանդ տեսնելով թէ այն հրեշտակը, այն ազատիչը ձիշդ այն մարդն էր զոր ինք կատէր, այն քաղաքապետն էր զոր երկար ժամանակէ 'ի վեր իր ամէն դժբաղդութեանց հեղինակը կը համարեր, վերջապէս Մաաըլէնը, որ կազատէր զինք ձիշդ այն պահուն, ուր զանի նախատած էր այնքան սոսկալի կերպով։ Սխալած էր արդեօք Ֆանթէին։ Կը պարտաւորէր արդեօք փոխել իր սիրտը...։ Չէր գիտեր, և կը դողար։ Շուարած մտիկ կընէր, ահուդողով կը նայէր, և Մաաըլէնի ամէն մէկ խօսքին հետ կզգար թէ իր սրտի աստիճանները սոսկալի խաւարը կը ցրուէր, անհետ կըլլար, և արտին մէջ չդիտեր ինչ քաջալերական և անպատուհաս զգա-

յում մը կը ծնէր, զգացում մը որ ուրախութիւն, վստահութիւն և սէր էր։

Երբ դուրս ելաւ ծավէր, Պ. Մաթրւէն դէպ՝ի Ֆանթինը դարձաւ և լալ չուզող ծանրաբարոյ մարդու մը պէս խօսելու զժուարութիւն զգալով կամաց ձայնով մ՚ըսաւ.

— Լսեցի ամէն ըսածներդ։ Ամենևին տեղեկութիւն չունիմ առանց վթարի։ Կարծեմ թէ իրաւ է ինչ որ ըսիր, և կղզամ թէ իրաւ է։ Եւ ոչ իսկ զործարանէս ելած ըլլալդ պիտէի։ Ինչու չզիմացիր ինձ։ Ինչ և է, ահա քեզի ընելիքս։ Պարտքերդ պիտի վճարեմ, զաւակդ բերել տալու եմ, կամ եթէ կուզես քովը պիտի զրկեմ քեզի։ Պիտի ապրիս կամ հոս, կամ Բարիզ, կամ ուր որ կուզես։ Թէ քու և թէ զաւկիդ բոլոր հոգը այսուհետև իմ վրայ է։ Եթէ կուզես, ալ մի՛ աշխատիր։ Որքան ատակի որ պէտք ունենաս, հս պիտի տամ։ Նորէն երջանկութիւն տեսնելով նորէն պիտի սկսիս ապրիլեղ ըլլալ։ Մանաւանդ որ եթէ իրաւ է ինչ որ ըսիր, և անտարակոյս կը հաւատամ թէ ճշմարիտ են ըսածներդ, հիմայէն կը յայտնեմ քեզ թէ Աստուծոյ առջև միշտ առաքինի և անարատ մնացած ես։ Ո՛հ, խեղճ կին։

Ֆանթինի կարողութենէն վեր էր այսպիսի անակնկալ երանութեան մը տանիլ։ Գօղէթը քովը ունենալ. զադրիլ անդադարելութեամբ ապրիլէ. Գօղէթի հետ ապրիլ ազատօրէն, հարստութեամբ, երանութեամբ և պատուաւոր կերպով. իր թշուառութեան աւերակներուն վրայ յանկարծ իրական դրախտի մը վայելումները նշմարել։ Ֆանթին ապուշի մը պէս նայեցաւ անդամ մ՚այս մարդուն որ իր հետը կը խօսէր, և երկու կամ երեք անգամ հեծծեց միայն ո՛հ, ո՛հ, ո՛հ, ձայնելով։ Ծունկերը կրկնեցան, Պ. Մաթրւէնի առջև ծնկան վրայ եկաւ, և Պ. Մաթրւէն առանց ժամանակ ունենալու որ արդիլէ, տեսաւ որ Ֆանթին իր ձեռքը կը բռնէր և կը համբուրէր։

Համբուրելն ետք Ֆանթին նուաղեցաւ։

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

ԺԱՎԷՐ

ԳԱԼՈՒԽ ԱՓՍԱՔԱԾ

ՀԱՆԴՍՏՈՒԹԻՒՆ ՍԿԻԶԲԻ

Պարոն Մաթրւէն Ֆանթինը նոյն իսկ իր բնակարանին մէջ հաստատած հիւանդատունը զրկեց։ Խնամուհիներու համար պէտքերուն յանձնեց, որոնք անկողին գրին Ֆանթինը։ Սոսկալի տենդ մ՚եկած էր վրան։ Գիշերուան մէկ մասը բանդագուշելով և բարձրաձայն խօսելով անցուց։ Բայց վերջապէս քնացաւ։

Հետևեալ օրը կէսօրին մօտ երբ արթնցաւ Ֆանթին, անկողնին քով շնչառութիւն մը լսեց, վարագոյրը մէկ դի ըրաւ և Մաթրւէնը տեսաւ որ իր դլուխն վերջը բան մը կը նայէր։ Այս նայուածքը դիտութեամբ և վիշտով համակուած էր, և կաղերեր։ Ֆանթին ուզեց տեսնել թէ ինչ կը նայի, և տեսաւ որ պատին վրայ կախուած խաչելութեան պատկերի մը կը նայէր։

Ա՛լ այսուհետև Ֆանթինի համար տարբեր մարդ մ՚էր ան։ Սը կարծէր թէ լոյսով ողողուած է Մաթրւէն։ Ասի կարծես աղօթք կընէր խորին լռութեամբ։ Երկար ժամանակ Ֆանթին անոր նայեցաւ առանց ընդհատելու համրձակելու անոր աղօթքը։ Վերջապէս վեհերտութեամբ մ՚ըսաւ.

— Ի՞նչ կընէք հոգ։

Պ. Մաթրւէն մէկ ժամ՝ի վեր հոն կայնած էր։ Կսպաս

աէր որ Ֆանթին արթնայ : Ձեռքը բռնեց , երակին զարկը քննեց , և պատասխանեց .

— Ի՛նչպէս էք :

— Լաւ եմ , քնացայ , ըսաւ Ֆանթին : Կարծեմ թէ ա֊ ւելի աղէկ եմ : Բան մը չէ , շուտ մը պիտի աղէկնամ :

Մատրէն իբր թէ նոր լսելով Ֆանթինի առջի հարցումը , պատասխանեց .

— Սա վերի նահատակին աղօթք կընէի . — Սա վարի նա֊ հատակուհիին համար , շարայարեց միաքով :

Պ . Մատրէն թէ դիշերը և թէ առտու շարունակ տեղե֊ կութիւն առած էր Ֆանթինի վրայ : Ա՛լ ամէն բանի տեղե֊ կացած էր : Ֆանթինի պատմութիւնը իր բոլոր կիճակալի պա֊ րադաներովը պիտէր : Ուստի շարունակեց .

— Շատ տառապանք կրած ես , խեղճդ մայր : Ո՛հ , մի տրտնջար , հիմա ա՛լ ընարեալներու օժիտը ունիս : Մարդիկ այս կերպով հրեշտակներ կը կազմեն : Ցանցանքը իրենցը չէ , ուրիշ կերպով կազմել չգիտեն : Գիտնաս որ երկնից առա֊ ջին ձևն էր այն դժոխքը ուսկէ ազատեցար : Պէտք էր նախ անկէ անցնիլ :

Մատրէն խորին հառաչանք մը հանեց : Իսկ Ֆանթին ա֊ նոր նայելով կը ժպտեր այն վեհ ժպիտով որու երկու ակ֊ ռայ կը պակսէր :

Մի և նոյն դիշերը ծավէրը նամակ մը գրած էր : Հետև֊ եալ օրը առաւօտ նոյն նամակը անձամբ Մ . . . ի նամակա֊ տունը յանձնեց : Նամակը Բարիզ պիտի երթար , և հասցէն այս էր . Ա՛ Պ . Շաբուէյէ , փարաոզը ոսոլնանաբնան պաշ֊ պոնէն : Եւ որովհետև ամէն մարդ լսած էր պահնորդարանի դէպքը , նամակատան տեսչուհին և ուրիշ քանի մ՚անձինք որոնք նամակը՝ երթալէն առաջ՝ տեսան և հասցէէն ծավէրի դիրը ճանչցան , կարծեցին թէ իր հրաժարականը կուտար այն նամակով :

Պ . Մատրէն շուտ մը Թէնարտիէներուն նամակ մը գրեց ;

Ֆանթին հարիւր քսան ֆրանք պարտք ունէր առանց : Մա֊ տրէն երեք հարիւր ֆրանք ղրկեց , գրելով անոնց որ իրենց առնելիքը նոյն դուռարէն առնուն , և մանուկը շուտ մը Մ . . . բերեն ուր իր մայրը հիւանդ էր և կուզէր որ բերուի ան :

Թէնարտիէ երբ առաւ դուռարը , հրապուրուեցաւ : — Քա֊ կնիկ , ըսաւ կնոջը , մանուկը թող չտանք : Կը տեսնեմ որ այս արտոյտը կաթնատու կով մը պիտի ըլլայ : Հասկցայ . կերևայ թէ մայրը միամիտ սիրող մը գտած է :

Պատասխանը գրեց՝ հինգ հարիւր այսքան ֆրանքի կանո֊ նաւորապէս շինուած հաշիւ մը ղրկելով : Այս հաշուին մէջ երկու անվիճելի յուցակ կար և գրեթէ երեք հարիւր ֆրանքէ աւելի էր երկուքին դուռարը . միւն բժշկինն էր , միւսն ալ դեղավաճառին : Առանց միւն իբր բժիշկ հոգ տարած էր և միւսն ալ դեղ տուած էր Աղեմայիին և Էպօնինին որոնց եր֊ կուքն ալ անգամ մը երկարատև հիւանդութիւն մը քաշեր էին : Ինչպէս ըսինք արդէն , Գօզլեթ հիւանդացած չէր : Ուս֊ ման յուցակներուն մէջի անուններուն միայն փոխուեցան : Թէ֊ նարտիէն հաշուին տակ գրեց . Ա՛ հաշիւ երեւ հարիւր ֆրանք ընդունեցայ :

Պ . Մատրէն անմիջապէս երեք հարիւր ֆրանք ևս ղրկեց և գրեց . Շուտ ըրէք , բերէք Գօզլեթը :

— Խա՛ղար չպիտի թողում մանուկը , ըսաւ Թէնարտիէ :

Բայց Ֆանթին պատճառին չէր աղէկնար : Տակաւին հիւանդա֊ նոցն էր ան :

Քոյրերը՝ ի սկզբան գժկամակութեամբ ընդունած և նայած էին «այս աղջիկը» : Ով որ Բէյմի պատրաստանդակները տեսած է , կը յիշէ անշուշտ թէ ո՛րքան ուռեցած է յիմար կոյսե֊ րուն նայող իմաստուն կոյսերուն սուրին շուրթը : Վեսթեան կոյսերուն՝ ամպէպղենէքոս՝ նկատմամբ՝ ունեցած այս հին ար֊ համարհանքը կնայիկ արժանապատուհեան ամենէն անդի֊ մադրելի բնազդումներէն մին է : Ահա նոյն արհամարհանքը զգացեր էին Ֆանթինը խնամող քոյրերն ալ , մանաւանդ թէ֊

իրը հաւատաւոր՝ կրկին սաստկութեամբ զգացած էին այն արհամարհանքը։ Ոտից քանի մ՚օրուան մէջ Փանթին անոնց այս զգացումը բոլորովին դադրեցուց։ Ամէն տեսակ խոնարհական և քաղցր խօսքերով կը խօսէր, և իր մայրութեամբը անոնց արդահատանքը կը շարժէր։ Օր մը քոյրերուն միս լսեց որ Փանթին տենդովը տատապած ժամանակ կըսէր. Մեղաւոր մ՚եղայ. բայց եթէ զաւակս քովս ըլլայ, պիտի հասկնամ թէ Աստուած ներած է ինձ։ Մինչդեռ զէշութեան ճամբուն մէջն էի, չէի ուզեր որ Գօզէթս քովս ըլլայ, վասն զի անտանելի պիտի ըլլար ինձ իբր զարմացող և տրտում նայուածքը։ Այլ սակայն իր օգտին համար զէշութեամբ կապրէի, և այս պատճառաւ է որ Աստուած կը ներէ ինձ։ Աստուծոյ օրհնութիւնը ընդունած ըլլալս պիտի զգամ երբ Գօզէթ հոս գալու ըլլայ։ Պիտի նայիմ Գօզէթիս, այն անմեղը տեսնելս ապէկութիւն պիտի ըլլայ ինծի համար։ Ինք բան մը չգիտեր բնաւ։ Հրեշտակ մ՚է ան, ա՛խ քոյրերս։ Այս հասակի մանկանց թևերը դեռ չեն լինար։

Պ. Մաբըէն օրը երկու անգամ Փանթինը տեսնելու կերթար, և ամէն անգամին Փանթին կը հարցնէր անոր.— Քիչ օրէն պիտի տեսնեմ Գօզէթս։

Պ. Մաբըէն կը պատասխանէր.— Դուրէ վաղը առաւօտ։ Ժամ առ ժամ կսպասեմ որ գայ։

Եւ ահա Փանթինի դունատ դէմքը կը փողփողէր։

— Ո՛հ, կըսէր, քանիօն երջանիկ պիտի ըլլամ։

Քիչ մ՚առաջ ըսինք թէ Փանթին չէր աղէկնար։ Ոչ միայն չէր աղէկնար, այլ նաև հիւանդութիւնը շաբաթէ շաբաթ աւելի կը ծանրանար։ Երկու ուսոսկրներուն մէջ մերկ մարթին վրայ դրուած այն ափ մը ձիւնին պատճառաւ մարմնոյն այն տեղի արտաշնչութիւնը յանկարծ դադրած էր. և անկէ ետք սաստկապէս երևան ելաւ այն հիւանդութիւնը որ տարիներէ՝ի վեր իր ներսը կը դոյանար։ Այն ժամանակ՝ ներսը կուրծքի հիւանդութիւնները քննելու և բուժելու համար Լաֆնեդկի դեղեցիկ դարմանները զործածուիլ սկսեր էին։ Պ. Մաբըէն հարցուց բժշկին։

— Ի՞նչպէս կերևայ։

— Զարմիք թէ զաւակ մ՚ունի զոր կուզէ տեսնել, ըսաւ բժիշկը։

— Այո՛։

— Ապա ուրեմն շուտ մը բերել տուէք։

Պ. Մաբըէն սարսուռ մը զգաց։

Փանթին հարցուց իրեն։

— Ի՞նչ ըսաւ բժիշկը։

Պ. Մաբըէն ուզեց ժպտիլ։

— Ըսաւ որ շուտ մը բերել տամ զաւակդ, և թէ զանկդ զալով պիտի առողջանաս։

— Ո՛հ, ըսաւ Փանթին, իրաւունք ունի բժիշկը. բայց ինչո՞ւ համար այս Թէնարտիէները Գօզէթս կը պահեն։ Ո՛հ, ա՛խ պիտի դայ զաւակս։ Վերջապէս ահա քովս կը տեսնեմ երանութիւնը։

Սակայն Թէնարտիէ չէր թողուր մանուկը, և հազարումէկ պատճառներ յառաջ կը բերէր։ Իբր թէ Գօզէթ սակաւ ինչ տկար էր, և ձմեռ ժամանակ չէր կրնար ճամբայ ելլել։ Թէ քաղքին մէջ քանի մը մանր մունր պարաքեր կային որք թախանձանօք կը պահանջուէին, և որոնց հաշիւները կը ժողվէր, և այլն...։

— Մարդ մը ղրկելու եմ Գօզէթը առնել և բերելու ահմար, ըսաւ Մաբըէն։ Եթէ հարկ ըլլայ նոյն իսկ ես պիտի երթամ բերելու։

Փանթին յետոյ նամակը գրել տուաւ Մաբըէնին և ստորագրեց զայն։

« Պ. Թէնարտիէ,

« Գօզէթը նամակաբերիս յանձնեցէք։

« Ոտից մանր մունր պարաքերը պիտի վճարուին։

« Պատիւ առնիմ ակնածութեամբ բարեւելու զձեզ ։

« ՓԸՆԹԻՆ » ։

Ա յս իրողութեանց միջոցին ծանր դիպուած մը պատահեցաւ ։ Որքան ալ աշխատինք կրցածնուս չափ աղէկ շինելու այն խորհրդաւոր արձանը որով մեր կեանքը կաղմուած է , դարձեալ Հակառակորդին աչք երակը կերևայ անոր վրայ ։

ԳԼՈՒԽ Ը ։

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԾԸՆ ԿՐՆԱՑ ՇԸՆ ԸԼԼԱԼ

Ա ՌԱՒՕՏ մը Պ . Մաարլէն իր սենեակը կը պտնուէր , և՝ մտածելով թէ գուցէ պիտի որոշէ դէպ ՚ի Մօնֆերմէյլ Համբորդել Փօղէթը առնելու համար , քաղաքապետութեան վերաբերող քանի մը ստիպողական գործեր կարգադրելով կղզաղէր երբ իմայ արուեցաւ իրեն թէ ոստիկանութեան տեսուչ Ծավէրը կուզէր հետը խօսիլ ։ Պ . Մաարլէն այս ա նունը երբ լսեց , անհաճոյ տպաւորութիւն մը զգաց ակամայ ։ Ոստիկանութեան պաշտօնարանին դէպքէն ՚ի վեր , Ծավէրը բոլորովին զգուշացած էր զինքը տեսնելէ , և Պ . Մաարլէնն ալ անկէ հեռ բնաւ տեսած չէր զան ։

— Թող ներս գայ , ըսաւ Պ . Մաարլէն ։

Ծավէրը ներս մտաւ ։

Պ . Մաարլէն չմինչեային քով նստած էր՝ ձեռքը դրիչ մ՚առած , աչքն ալ թուղթերու դէզի մը վրայ հաստատած , ղրը կը թղթատէր , կը նշանակէր , և որ Համբոյ պահպանութեան նկատմամբ կանոնադրութիւններու արձանագրութիւնները կը պարունակէր ։ Տեղէն անդամ չշարժեցաւ երբ Ծավէրը ներս մտաւ ։ Կը վայլէր որ ցուրտ կերպով ընդունէր զան , վասն զի չէր կրնար խեղճ Փանթինը մաքէն հանել ։

Ծավէրը յարգանօք բարև տուաւ Պ . Մաարլէնի որ կոնակը անոր դարձուցած էր ։ Պ . քաղաքապետը առանց նայելու

Ծավէրին՝ իր թուղթերը կը նշանակէր շարունակ ։

Ծավէրը քանի մը քայլ առնելով սենեկին մինչև կէսը յառաջացաւ , և կանգ առաւ առանց խօսելու ։

Դիմագիծ մը եթէ Ծավէրի բնաւորութեան ընտանեցած ըլլար , եթէ երկար առեն ՚ի վեր ընտած ըլլար քաղաքակրթութեան ծառայութիւն ընող այս վայրենին , հեռանայիւ , սպարդացիւ , վանահանի և տասնապետի յատկութիւնները քաղաքրուած այս անհեղեղ խառնուրդը , առաջ մը նկատելու անկարող այս լուռնը և կոյս ճանչող ոստիկանը , դիմագիծ մը , կրնամ , եթէ անոր Պ . Մաարլէնի դէմ ուղնդած թագուն և հին առելութիւնը , Փանթինի նկատմամբ քաղաքապետին հետ ըրած վէճը պիտնար , և նոյն պահուն եթէ Ծավէրը դիտելու ըլլար , պիտի ըսէր իւրովի . Ի՞նչ տեղի ունեցաւ ։ Ով որ Ճանչցած ըլլար այս ուղիղ , պարզ , անկեղծ , լաւ , անաչառ և անկուլթ խիղճը , յայտնապէս պիտի նշմարէր թէ անոր սրտին մէջ մեծ դէպք մը պատահած էր ։ Ծավէրի սրտին մէջ ինչ որ ըլլար , երեսին վրան ալ կերեւար ։ Խոտաբարդ մարդերու պէս յանկարծական շրջումներու ենթակայ էր ։ Իւր դէմքը բնաւ այսքան տարօրինակ և անակնկալ շրջում մը չէր կրած ։ Սենեկէն ներս մտած ժամանակ խոնարհած էր Պ . Մաարլէնի առջև այնպիսի նայուածքով ուր ոչ ոխ , ոչ բարկութիւն և ոչ անվստահութիւն կը նշմարուէր , և քաղաքապետին թիկնաթոռին ետև քանի մը քայլ հեռի կանգ առած էր . և հիմա հոն ոտքի վրայ կայնած էր դրեթէ հրամանդպային դիրքով , և բնաւ քաղքրութիւն ինչ է չդիտցող և միշտ համբերելու սովորող մարդու մը միամտական և ցուրտ ըրտութեամբը ։ Անմռունչ , անշարժ , Ճշմարիտ խոնարհութեամբ և հանդարտ համակերպութեամբ մը կսպասէր որ պարոն քաղաքապետը հաճի ետևը դառնալու . կսպասէր հանդարտութեամբ , ծանրութեամբ , ղևսարկը ձեռքը բռնած , աչերը վար առած , և այնպիսի կերպարանով որ կարծես թէ կէս մը իր պաշտօնատարին առջև

կեցող ղէնուորի մը, և կէս մ'ալ իր դատաւորին առջև ընծայող յանցաւորի մը կերպարանին կը նմանէր: Անհեաւթ էին այն ամէն զգացումները, ինչպէս նաև ամէն յիշատակները զոր ներքին էր կարծել թէ ունէր ան: Այս անթափանցելի և կրանիթի պէս պարզ դէմքին վրայ ալ ոչ այլ ինչ կար եթէ ոչ տխուր արհամարհանք մը: Բոլոր իր մարմինը խոնարհութիւն և հաստատութիւն, և չդիտեմ ինչ առեղական վհատութիւն մը կը յայտնէր:

Ղեկավարը պարոն քաղաքապետը դրկեր վար գրաւ, և կինովին դառնալով ըսաւ.

— Ի՞նչ է այն, ինչ կայ, ծավէր:

Ծավէր պահ մը լռիկ կեցաւ իբր թէ միտքը մտածումով մը կը դրաւուէր, յետոյ ախուր հանդիսաւորութեամբ բայց միանդամայն պարզութեամբ ձայնը հանելով պատասխանեց.

— Եղածն է գործուած յանցանք մը, պարոն քաղաքապետ:

— Ի՞նչ յանցանք:

— Իշխանութեան ստորին գործակալ մը խիստ ծանր կերպով քաղաքապետ մ'անարգեց: Եկայ որ եղելութիւնը ձեզի իմացնեմ, ինչպէս որ իմ պարտքս է:

— Ո՞վ է այդ գործակալը, հարցուց Պ. Մաթըլէն:

— Ես, ըսաւ ծավէր:

— Դո՞ւք:

— Ես:

— Եւ ո՛վ է այն քաղաքապետը որմէ պիտի ամբաստանուի գործակալը:

— Դուք, պարոն քաղաքապետ:

Պ. Մաթըլէն թիկնաթոռին վրայ կանգ մ'առաւ:

Ծավէր անաչառ կերպարանով և միշտ ակնկոր կենալով շարունակեց.

— Եկայ աղաչելու ձեզի, պարոն քաղաքապետ, որպէս զի կառավարութեան գրէք և զիս պաշտօնէս հանել տաք:

Պ. Մաթըլէն զարմանքով համակուելով բերանը բացաւ խօսելու համար, այլ ծավէր ընդհատեց.

— Պիտի ըսէք թէ կրնայի հրաժարականս տալ, բայց այսի չտաւեր: Հրաժարական տալը պատուաւոր կերպ մ'է: Ծանցանք գործեցի, պէտք է որ պատժուիմ: Պէտք է որ արտաքսուիմ:

Պահ մը սպասելէն ետք վրայ բերաւ.

— Պ. քաղաքապետ, անցած օր յանիրաւի խստութեամբ վարուեցաք հետս: Այսօր իրաւամբ խստօրէն վարուեցէք հետս:

— Բայց ինչո՞ւ համար, պոռաց Պ. Մաթըլէն: Ի՞նչ է այդ խառնափնթոր խօսքերը, ինչ կը նշանակեն ատոնք. ո՞ւր է ձեր կողմէ ինծի դէմ գործուած յանցանք մը, ինչ ըրէք ինծի. ինչ յանցանք գործեցիք ինծի դէմ. ինքզինքնիդ կամ բաստառնէք, կուզէք որ ձեր տեղ ուրիշ մը յայտարդէ...:

— Կուզեմ վռնտուիլ, ըսաւ ծավէր:

— Վռնտուիլ, ըսիք. շատ լաւ. բայց չեմ հասկնար թէ ինչ է ձեր նպատակը:

— Հիմա կը հասկնաք, պարոն քաղաքապետ:

Ծավէր սրտին խորերէն հառաչանք մը հանեց և կրկնեց միշտ անտարբերութեամբ և տրամութեամբ:

— Պ. քաղաքապետ, ասկէ վեց շաբաթ առաջ այն աղջկեկին դէպքին վրայ բարկանալով ամբաստանեցի ձեզ:

— Ամբաստանեցիք:

— Այո՛, Բարիզի ոստիկանութեան պաշտօնէին:

Պ. Մաթըլէն որ ծավէրին դէմ քիչ խնդացող մ'էր, ըսկսաւ խնդալ:

— Ամբաստանեցիք թէ ոստիկանութեան ձեռնհասութիւնը չմանչցող քաղաքապետ եմ:

— Թէ վաղեմի դատապարտեալ եղեռնագործ մ'էք:

Քաղաքապետին դէմքը կասկածոտ դարձաւ:

Ծավէր որ աչերը վեր վերցուցած չէր, շարունակեց.

— Կը կարծէի թէ թիատրա մ'էք: Շատ ժամանակէ ի վեր կարծիքներ ունէի: Նմանութիւն մը, ծավէրըսէն

տեղեկութիւններ առնել տալդ, ձեր քամակի ոյժը, ձեր ծօչըվանին արկածը, հրացան նետելու մասին ունեցած յաջողակութիւններդ, ձեր մկ ծունկին քիչ մը հիւանդոտութիւնը, և վերջապէս չգիտեմ դեռ ինչ անմոռութիւններ կարծես տուին ինձ թէ ծան վալժան անուն մկին էք դուք։

— Ինչպէս ըսիք, անգամ մ'ալ կըսէք այդ անունը։

— Ծան Վալժան, եղեռնագործ մը զոր ասկէ քսան տարի առաջ Թուլոնի մէջ տեսած եմ երբ թիատրոններու պահնորդին օդնականն էի։ Թիատրէն ելլելով կերեայ թէ այդ Ծան Վալժանը եպիսկոպոսի մը տունէն գողութիւն ըրեր է, յետոյ հասարակայ ճամբու մը վրայ ղինու ղօրութեամբ ուրիշ գողութիւն մ'ալ ըրեր է պետի Սավուայի մը հոդիէն տեսլով։ Զգիտեմ ինչպէս ուժ տարիէ 'ի վեր պահուած էր ան, և ոստիկանութեան հոգին կը փնտռուէր։ Ես կերեայէի թէ... — Վերջապէս երկար չընեմ. բարկութիւնը դիս համոզեց որ շարժիմ, ամբաստանեցի զձեզ ոստիկանութեան պաշտօնէին։

Պ. Մատըլէն որ քանի մը վայրկեան 'ի վեր նորէն թուղթերը խառնել սկսեր էր, կատարելապէս անտարբեր ձևանալով հարցուց։

— Եւ ինչ պատասխան առիք։

— Պատասխան առի թէ յիմար մ'եմ։

— Է՛, ետքը։

— Ոստիկանութեան պաշտօնեան իրաւունք ունի յիմար համարելու զիս։

— Ուրախ եմ որ դուք ինքնին կը խոստովանիք իրաւունք ունենալը։

— Անշուշտ, վասն զի բուն Ծան Վալժանը գտնուեցաւ։

Պ. Մատըլէնին բռնած թերթը ձեռքէն ինկաւ. ղլուխը վերցուց, ուղղակի Ծավէրին նայեցաւ և անբացատրելի ձայնով մ'ըսաւ.

— Ա՛հ։

Ծավէրը շարունակեց։

— Ահա եղելութիւնը, պարոն քաղաքապետ։ Երեկոյ թէ Էյլէ-Լը-Հօ-Գլօշէյի կողմը քաղաքի մը մէջ ապուշ մարդ մը կար որ Շանմաթիէօ անունով կանուանէր։ Խիստ թշուառ մարդ մ'էր, ոչ ոք ուշադրութիւն կընէր իրեն։ Այս տեսակ անձինք չգիտցուիր թէ ինչպես կապրին։ Ասկէ քանի մը ժամանակ առաջ տունէ մը խնձոր գողնալու ատեն բռնուեցաւ. ինչ և է, մարդը պատի մը վրայէն անցնելով գողութիւն ըրած և ծառի ոտներ կտրտած էր։ Ուստի բռնուեցաւ իմ դիտցած Շանմաթիէօս։ Խնձորին ոստը դեռ ձեռքն էր, հեռուեւբար թշուառականը բանտարկուեցաւ։ Մինչև հոս խնդիրը միայն պատժական խնդիր մ'էր։ Բայց տես նախախնամութեան դործը։ Բանտը յոռի վիճակի մէջ ըլլալով, դատաւորը յարմար դատեց Շանմաթիէօն Արաս ղրկել ուր է դատարանական բանտը։ Արասի այս բանտին մէջ Պրըվէ անուն հին դատապարտեալ մը կայ, որ չգիտեմ ինչ բանի համար բանտուած է, և որ լաւ վարուելուն համար բանտապահին սպասաւոր կարդուած էր։ Պ. քաղաքապետ, Շանմաթիէօ Արաս եղեռնալուն պէս Պրըվէ կը պօռայ. կը ճանչնամ ես այս մարդը, վաղեմի եղեռնագործ մ'է։ Ա՛խթար, ինծի նայէ անդամ մը։ Դու Ծան Վալժանն ես։ — Ծան Վալժան, ով է այդ Ծան Վալժանը, կըսէ Շանմաթիէօ, և զարմանալ կը ձևացնէ։ — Զգիտնալ մի՛ ձևացներ, բարեկամ, կըսէ Պրըվէ։ Ծան Վալժանն ես դու։ Թուլոնի թիատրոնը մտած ես ժամանակաւ։ Ասկէ քսան տարի առաջ հոն էիր։ Ես ալ հոն էի անտառեն։ — Շանմաթիէօ կուրանայ։ Բայց ով կը հաւտայ։ Կը հաստինաք եա՛։ Եղելութիւնը ուշադրութեամբ քննուեցաւ. իրկիկը ծիկը փնտռուեցաւ, և քննութեան հետևութիւնը ահա սա է։ Այս Շանմաթիէօն ասկէ երեսուն տարիի չափ յառաջ շատ քաղաքներու, և մասնաւորապէս Ֆավըրօլի մէջ յատանողութիւն ըրած է։ Բայց հոն իր հետքը կը կորսուսի։ Շատ ժամանակէ ետք նորէն Օվէրնը, յե-

տոյ Բարիզի մէջ կը տեսնուի, ուր ինք կըսէ թէ սայլապան Ժուլիւն ըրած է լաթ լուացող աղջկան մը հետ յարաբերութիւն ունեցած է. բայց ասի չհաստատուեցաւ. վերջապէս Բարիզէն եաք այն քաղաքը կուգայ: Արդ երեւելի դողութեան մը համար Թիարանը նեռուելէն առաջ ինչ էր Ժան Վալժան. — Յատանող: Ո՞ւր, — Փավըրօլի մէջ: Ուրիշ եղելութիւն մ՚ալ կայ: Այս Ժան Վալժանը ապրուելեան անունովը Ժան, և մայրն ալ իր ընտանիքին անունով Մաթիէօ կանուանէր: Խիստ բնական բան մ՚է կարծել թէ թիարանէն ելնելէն եաք ան ըլլալը չգտնելու համար մօրը անունը առած է Ժան Մաթիէօ կոչուած է: Երբ Օվէրնեը կերթայ, քաղքին արտասանութիւնը Ժանը Շան կընէ և Շան Մաթիէօ կանուանէ զան: Մեր պարոնը ձայն չհաներ, և ահա փոխուելով կըլլայ Շանմաթիէօ: Պատմութիւնս կարդաւ մարիկ կընէք, այնպէս չէ՞: Փավըրօլի մէջ տեղեկութիւն կառնուի և կիմացուի որ Ժան Վալժանի ընտանիքը ալ այն քաղքին մէջ չընակիր եղեր: Չգիտցուիր թէ ուր գացած է: Պիտէք անշուշտ թէ այս տեսակ դասերու մէջ շատ անգամ այսպէս ամբողջ ընտանիքներ կանհետանան: Կը փնտրուի, բայց բան մը չգտնուիր: Այս տեսակ մարդիկ երեք տիզմ չըլլան, փոշի կը դառնան և կը ցրուին: Մանաւանդ այս եղելութեանց սկիզբը երեսուն տարուան բան ըլլալով, Փավըրօլի մէջ ալ Ժան Վալժանը ճանչցող մարդ չկայ: Երբ Թուլընէն տեղեկութիւն կառնուի, կիմացուի որ Պրըվէնի զատ Ժան Վալժանը տեսնող միայն երկու եղեռնագործ կայ, որոնք գիւղացոց դատապարտուած են և կանուանին Գօզբայլ և Շընիտիէօ: Ասոնք Թիարանէն կը հանուին և կը բերուին, և երբ կարծեցեալ Շանմաթիէօյի առջեւ կը բերուին, չեն վարանիր, և Պրըվէնի հետ կը հաստատեն թէ Ժան Վալժանն է ան: Նոյն տարիքը, այսինքն յիսունուչորս տարեկան, նոյն հասակը, նոյն կերպարանքը, նոյն մարդը, վերջապէս նոյն իսկ Ժան Վալժանն ըլլալը կը խոստովանին:

Ձիշդ այն ժամանակները ղրկած էի ամբաստանութեան գիրս Բարիզի ոստիկանութեան պաշտօնատունը: Պատասխան առի թէ խելքս փախցուցած եմ, և թէ Ժան Վալժան արդէն դատապարտուած և Արասի մէջ բանտարկուած է: Ա՛լ կրնաք հասկնալ թէ ո՛րքան զարմացայ, հս որ կը կարծէի թէ հոս ձեռքիս մէջն է նոյն իսկ Ժան Վալժանը: Նամակ մը գրեցի գատաւորին. գիս բերել տուաւ. Շանմաթիէօն ալ առջեւս հանեց...:

— Ի՛նչ, եաքը, ընդհատեց Պ. Մաբըֆն:

Ծավէը իր անապատելի և արտում դէմքովը պատասխանեց.

— Պ. քաղաքապետ, Ձշմարտութիւնը Ձշմարտութիւն է: Կը ցաւիմ, բայց շիտակը ըսեմ, Ժան Վալժան այն մարդն է: Ես ալ Ճանչցայ գինքը:

Պ. Մաբըֆն խիստ ցած ձայնով մը կրկնեց.

— Ապահո՛վ էք:

Ծավէը սկսաւ խնդալ այն ցաւալի խնդումով որ խորունկ համոզումի մը կնշանէ:

— Ո՛հ, ապահով եմ, այո՛:

Պահ մը խորհուն կերպարանով մը լռեց՝ սեղանին վրայ մնլան չորցնելու համար գրուած աւազնոցէն մատովը մեքենայաբար քանի մ՚անգամ աւազ առնելով, և կրկնեց.

— Եւ հիմա որ բուն Ժան Վալժանը տեսայ, չեմ հասկնար թէ ինչպէս սխալեր եմ ուրիշ մը Ժան Վալժան կարծելով: Ներուած կը խնդրեմ ձեզմէ, պարոն քաղաքապետ:

Ծավէը՝ իր հպարտ բնաւորութեանը հակառակ և առանց ինքն ալ գիտնալու՝ անձերի անկեղծութեամբ և արժանապատուութեամբ մ՚ուղղեց իր այս աղերսալի և ծանր խօսքը այն մարդուն, որ վեց շաբաթ առաջ պահնորդարանին մէջ ամենուն առջեւ կշտամբած էր գինքը և ըսած էր. Դո՛ւրս ելլէ: Բայց Պ. Մաբըֆն անոր այս աղաչանքին սա անակնկալ պատասխանը տուաւ.

— Ի՛նչ, ինչ կըսէ այդ Շանմաթիէօն:

— Ա՛հ, գործը դէշ է, պարոն քաղաքապետ։ Եթէ Ժան Վալժանն է ան, յանցանքը երկրորդ անգամ գործուած յանցանք մը պիտի ըլլայ։ Պատէ մ՚անցնիլը, ոստ մը կատելը, խնձոր գողնալը սրիկայութիւն մը կանուանի եթէ գողցողը աղայ մ՚է. յանցանք կանուանի երբ գողցողը մարդ մ՚է. ոճրագործութիւն կանուանի երբ գողցողը պատապարտեալ եղեռնագործ մ՚է։ Պատէ անցնիլ և գողնալ, երիւքն ալ կայ։ Հետևաբար պատը չէ թէ ոստիկանութեան առջև, այլ եղեռնական առեղին առջև կը տեսնուի։ Պատիժն ալ չէ թէ քանի մ՚օրուան բանտարկութիւն, այլ մշտնջենական թիապարտութիւն է։ Մանաւանդ թէ պզտի Սավուայիին պատն ալ կայ, որ կը յուսամ թէ նայննէս պիտի տեսնուի։ Կը բևեկեմ թէ բաւական յուզում պիտի պատճառէ դատը. անշուշտ ուրիշին, և ոչ թէ Ժան Վալժանին։ Բայց Ժան Վալժան պաղատալիա չարագործ մ՚է։ Իր այս բնաւորութենէն ալ կը ճանչնամ թէ Ժան Վալժան ինքն է ան։ Եթէ ուրիշ մ՚ըլլար իր տեղ, պիտի ղրաբ թէ հուր ու կրակ կայ իր առջև. պիտի յուզուէր, պիտի պօռար, վասն զի ջերմանոցը (bouilloire) ձայն կուտայ կրակին առջև. չպիտի ուզէր Ժան Վալժան ըլլալ, և այլն. . . : Բայց ան չհասկնալ կը ձևացնէ և կըսէ. Ես Ջանմաթիէօ եմ, Ժան Վալժանի հետ գործ չունիմ։ Զարմանալ կը ձևացնէ, այնուհի մը դերը կը խաղայ, որ աւելի աղէկ է։ Ա՛հ, սրիկան վարպետ է. բայց ստակ չըներ. ապացոյցներ կան։ Ձորս հոգիէ ճանչցուեցաւ. ձեր սրիկան պիտի դատապարտուի։ Դատը Արասի եղեռնական առեղին առջև եղած է։ Ես ալ պիտի երթամ վկայութիւն տալու համար, վասն զի իբր վկայ կոչուած եմ։

Պ. Մատըլէն նորէն ղրասեղանը նստած, իր թուղթերը ձեռք առած էր, և հանդարտօրէն կը թղթատէր՝ գործով զբաղած մարդու մը պէս երբեմն կարգալով, երբեմն ալ դրելով։ Դէպ՚ի Ժավէր դառնալով ըսաւ.

— Այդքանը բաւական է, Ժավէր. մանաւանդ թէ այդ

մանրամասն պարագաները մեծ կարևորութիւն մը չունին ինծի համար։ Պարապ տեղը ժամանակ կանցունենք մինչդեռ ստիպողական գործեր ունինք։ Ժավէր, հիմա շուտ մը Սէն-Սօլվի փողոցը գացէք, հոն փղոցին անկիւնը խոտ ծախող Պիւզօրիէ անուն բարի կին մը կայ, տեսէք զինքը և ըսէք որ Իւէր Շէսնըլօն սայլորդին դէմ ունեցած դատը բանայ։ Այս մարդը վայրենաբարոյ մէկն է. փիշ ամօց սայլին տակ պիտի ձզէր այն կինը և իր զաւակը։ Պէտք է որ պատժուի։ Յետոյ պ. Շարսըլէյի տունը գացէք որ Մօնթրը-սը-Շաբիւնէի փողոցն է։ Կը գանգատի ան իր դրացիին դէմ, որ տանիքի խողովակէն անձրևի ջուրերը անոր տունը կը հոսին և հիմերը կը փորեն։ Եաքը կիպուր փողոցը, 80րի անուն այրի կնոջ տունը, անկէ ալ Կարօ-Պլան փողոցը տիկին Բրնէ Լ. Պօսէյի տունը գացէք. կըսուի թէ անկարգութիւններ կըլլան եղեր այդ տուներուն մէջ. հասկցէք ինչ ըլլալը և տեղեկագիր մը պատրաստեցէք։ Բայց շատ գործեր յանձնելու ձեզի։ Ըսէք թէ բայակայ պիտի ըլլաք, չըսէք թէ ուշ կամ տաս օրէն Արաս պիտի երթաք այն դատին համար. . . :

— Աւելի շուտ պիտի երթամ, պարոն քաղաքապետ։

— Ե՞րբ։

— Բայց կարծեմ ըսի, պարոն քաղաքապետ, թէ դատը վաղը պիտի տեսնուի, և թէ այս դիշեր կառքով պիտի մեկնիմ։

Պ. Մատըլէն անհամարելի շարժում մ՚ըրաւ։

— Ո՞րքան ժամանակ պիտի տևէ դատը։

— Առ առաւելն մէկ օր։ Վճիռը ըլլայ ըլլայ, վաղը գիշեր պիտի հոսի։ Բայց վճիռը տրուելուն չպիտի սպասեմ, որ հարկաւ պիտի տրուի, վկայութիւն տալուս պէս հոս պիտի վերադառնամ։

— Լաւ, ըսաւ պ. Մատըլէն։

Եւ ձեռքով նշան ըրաւ որ դուրս ելլէ Ժավէր։

Բայց Ժավէր չդնաց։

— Ներեցէք, պարոն քաղաքապետ, ըսաւ։

— Ի՞նչ կայ ուրիշ, հարցուց Պ. Մաարլէն։

— Ման մ՚ալ կուզեմ յիշեցնել ձեզ, պարոն քաղաքապետ։

— Ի՞նչ բան։

— Պէտք է որ պաշտօնէս հանուիմ։

Պ. Մաարլէն ոտքի վրայ եկաւ։

— Ծավէր, պատուաւոր մարդ մ՚էք դուք, և կը յարգեմ զձեզ։ Ցանցանքնիդ մեծ բանի մը տեղ կը դնէք։ Մանաւանդ թէ միայն ինծի վերաբերող թշնամանք մ՚է այն։ Ծավէր, մեծնալու արժանի էք դուք, և ոչ թէ պզտիկնալու։ Կուզեմ որ ձեր պաշտօնի մէջ մնաք։

Ծավէր Պ. Մաարլէնին նայեցաւ իր յատակ բիբովը, ուր կարծես թէ կը տեսնուէր անոր ոչ այնքան լուսաւորուած, այլ անապատ և անարատ խիղճը, և հանդարտ ձայնով մ՚ըսաւ.

— Պ. քաղաքապետ, չեմ կրնար հաւանիլ ատոր։

— Կը կրկնեմ թէ խնդիրը ինծի կը վերաբերի, պատասխանեց Պ. Մաարլէն։

Բայց Ծավէր իր միակ խորհուրդին ուշադրութիւն ընելով, շարունակեց.

— Ցանցանքս մեծ բանի տեղ կը դնեմ, կըսէք, բայց չէ։ Իմ պատճառներս ահա ասոնք են, ձեր վրայ կասկածեցայ, ասոնք բան մը չէ։ Մեր պաշտօնի անձանց իրաւունքն է կասկածիլ, թէև իրմէ վեր մարդերու վրայ կասկածիլը դէշ ծուխ մ՚ըլլայ։ Բայց առանց ապացոյցներ ունենալու, սասսիկ բարկութիւն մը դգացած տեսնես մի միայն վրէժ առնելու դիտաւորութեամբ ամբաստանեցի ձեզի՝ ըսելով թէ վաղեմի ենթադործ մ՚էք, ձեզի որ յարգի մարդ մը, քաղաքապետ մը, դատաւոր մ՚էք։ Ասի ծանր բան է, շատ ծանր բան է։ Ձեզի անարդելովս իշխանութիւնը անարգած եղայ ես, ես որ իշխանութեան գործակալ մ՚եմ։ Եթէ ըրածս իմ սառնարկեալներուս մին ըրած ըլլար, ծառայութեան անարժան պիտի համարէի զինք և պիտի արտաքսէի։ Ասոր ինչ

կըսէք։ Դիտողութիւն մ՚ևս ընեմ, պարոն քաղաքապետ։ Ներանքիս մէջ շատ անդամ անաչառ դտնուած եմ ուրիշներուն համար, արդարացի էր այս անաչառութիւնս։ Ազէկ կընէի այսպէս վարուելովս։ Հիմա եթէ նոյն իսկ ինծի համար անաչառ չըլլամ, ինչ որ ըրած եմ իրը արդարացի, յանիրաւի ըրած պիտի ըլլամ։ Մեթէ պէտք է որ ինքզինքս ուրիշներէ աւելի խնայեմ։ — Ոչ։ Ի՛նչ. միայն ուրիշները պատժելու ծառայած ըլլամ, և ձիս անպատիժ թողում։ Ի՛, ազէկ, բայց անատեն թշուառական մը պիտի համարուիմ, բայց անատեն իրաւունք պիտի ունենան որոնք որ սրիկայ կանուանեն զիս։ Պ. քաղաքապետ, չեմ փափաքիր որ հետս բարեսիրութեամբ վարուիք. ձեր բարեսիրութիւնը երբ ուրիշներուն համար էր, բաւական համբերութիւնս հատցուց. հիմա չեմ ուզեր որ ինծի համար ալ նոյն բարեսիրութիւնը ունենաք. Ցաւի կանուանեմ այն բարեսիրութիւնը որ պատնէշի մը իրաւունք կուտայ՝ քաղաքացիի մը հակառակ, ոստիկանութեան դործակալի մը իրաւունք կուտայ՝ քաղաքապետին հակառակ, վարի մարդուն իրաւունք կուտայ՝ վերը դտնուղ մարդուն հակառակ։ Ընկերութեան բարեկարդութիւնը ձիշդ այդ բարեսիրութեամբ կը խանդարի։ Աստուած իմ, բարեսէր ըլլալը դիւրին է. դժուարը արդարասէր ըլլալն է։ Բայց ’ի բայ ահա ըսեմ. եթէ ըլլայիք ինչ որ կը կարծէի թէ էք, պիտի տեսնէիք որ ես ձեզի հետ բարեսիրաբար չպիտի վարուէի։ Պ. քաղաքապետ, ուրիշ որ և է մարդու մը հետ ինչ կերպով որ պիտի վարուէի, ու և նոյն կերպով կը պարտաւորիմ վարուիլ նաև իմ անձի հետ։ Երբ չարադործներու յանդիմանութիւն կուտայի, երբ սրիկաները չարաչար կը պատժէի, շատ անդամ ինքնիրենս կըսէի. Դուն ալ հանդարտ կեցիր, նայէ որ չդայթիս, եթէ երբէք յանցանք մ՚ընէիդ տեսնեմ, կը տեսնես ինչ կընեմ։ Արդ ես ալ դայթեցայ, ինքզինքս յանցաւոր դտայ. պէտք է պատժուիմ։ Ուրեմն պէտք է որ պաշտօնէս ելնեմ, ծեծուիմ, վը-

ընտանիքիմ. շատ լաւ : Ձեռնէրս ողջ ըլլան. հոդաւործութիւն կընեմ, ինծի համար ալ և նոյն բանն է : Պ. քաղաքապետ, պաշտօնիս շահը օրինակ մը կը պահանջէ : Ուստի պարզապէս կուզեմ որ ոստիկան ծաւէրը պաշտօնէն հանուի :

Ծաւէրը այս ամէն խօսքերը խոնարհ, սեպ, յուսահատ և համազուած մարդու մը ձայնով արտայայտած էր, և հեռաւոր այս տարօրինակ պատուաւոր մարդը չգիտեմ ինչ անհեդեդ վսեմութիւն մը կտտանար :

— Եաքէն կը նայինք, ըսաւ Պ. Մատըէն :

Եւ ձեռքը երկնցուց ծաւէրին :

Ծաւէրը եաս քաշուեցաւ և տմարդի կերպով մը պատասխանեց.

— Ներեցէք, պարոն քաղաքապետ, ատի չկրնար ըլլալ : Քաղաքապետ մը լտեաս ոստիկանի մը չտար ձեռքը :

Եւ կամաց մ'ըսաւ ինքնին.

— Այո, լտեաս եմ, քանի որ չարաչար դործածեցի ոստիկանութեան պաշտօնս, ա'լ մի միայն ոստիկանութեան լըտեաս մ'եմ :

Ցետոյ յարդանօք մեաս բարև ըսաւ, և դէպ 'ի դուռը ուղղեցաւ :

Հոն ետևը դարձաւ, և միշտ ակնկոր կենալով,

— Պարոն քաղաքապետ, ըսաւ, պաշտօնս պիտի վարեմ մինչև որ ուրիշն մը յանձնուի այն :

Դուրս ելաւ : Պ. Մատըէն սկսաւ մտախոհել ուշ դնելով Ծաւէրի հաստատ և համարձակ քայլերուն որոնք փողի քարայատակին վրայէն կը հեռանային :



ԳԻՐՔ ԵՕԹԵՐՈՐԴ

ՇԱՆՄԱՔԻԼՕՑԻ ԴԱՏԸ

ԳԼՈՒԽ ԱՔԱՔԱԾԻՆ

ՔՈՑՐ ՍԻՆԲԼԻՍ

Մ...ի բնակիչները կատարեալ տեղեկութիւն ստացած չեն յետագայ դիպուածներու վրայօք զոր պիտի կարդայ ընթերցողը : Այս դիպուածներէն թէև քիչ մը բան խմայուած է, բայց քաղաքին մէջ այնքան կը յիշուին որ այս դրքին կարևոր մէկ մասը զանոնք ըսած պիտի ըլլայինք եթէ այն դիպուածները իրենց ամէն պարադանեըովը չպատմէինք :

Ընթերցողը այս պարադանեըուն մէջ երկու կամ երեք դիպուածներ պիտի նշմարէ որը անհաւատալի պիտի երևան իրեն, և զոր կը պատմենք, վասն զի ճշմարտութիւնը կը յարդենք :

Ծաւէրի այցելութեան օրը Պ. Մատըէն կէսօր անցնելէն ետք սովորութեանը համեմատ Փանթինը տեսնելու դնաց :

Փանթինի քով երթալէն առաջ քոյր Սէնբլիսը կանչել տուաւ :

Հիւանդարանին ծառայութիւնը ընող երկու հաւատուհիները, որոնք ամէն դժուարութեան քոյրերու պէս լազարեան կիներ էին, քոյր Թերբէթիւ և քոյր Սէնբլիս կանուանէին :

Քոյր Թերբէթիւ անճանօթ դիւղացի մ'էր. հրապարակը մտնելու պէս Ասուծոյ տունը մտած և դժուարեան քոյր մ'եղած էր հարևանցի կերպով մը : Հաւատուհի մ'էր՝ խոհարարուհի մ'ըլլալու պէս : Հաւատաւորութեան այս տիպարը հազուագիւտ չէ բնաւ : Վանական ուխտերը յօժարա-

համ կընդունին պիւղակեան այս ծանր անօթները, որոնք դիւրութեամբ փաբուչինի համ Իւբիւլինի կերպարան կառնուն։ Այս գոհերիկ արարածները չերմեռանդութեան պաշտօնի դժուարին գործերը կատարելու կը ծառայեն։ Անգերդութենէ պարմութեան[8] անցնիլը խոչընդոտ մը չունի. մին միւսը կըլլայ առանց մեծ աշխատութեան. դիւղի և վանքի մարդերու հաւասարապէս և հիմունքին տակէտ ըլլալը արդէն եղած կատարուած պատրաստութիւն մ'է կրօնական ըլլալու համար, և այս պատրաստութեան չնորհիւ պիւղացին անմիջապէս վանականին կը հաւասարի։ Թիկնացը Թոզ քիչ մը լայն ըլլայ, և ահա կնդուղի մը կը փոխուի։

Բերբէթիւ քոյրը Բօնիֆատզի քովի Մարին պիւղէն եկած ուժեղ և պիւղացիի պէս խօսելու, սաղմոս երգելու, ակռաները մրմռալու, դեղաջուրին մէջ դնելու շաքարը հիւանդին սուտ բարեպաշտութեան կամ կեղծաւորութեան քանակութեանը համեմատ դնելու, հիւանդներուն հետ խոսիւ վարուելու, մեռնողներուն հետ բարկութեամբ խօսելու, դրեթէ Աստուծոյ անունը անոնց երեսին պարնելու, բարկալի ազօթքով անոնց հոգեվարքը քարկոծելու սովրած, համարձակ, պարկեշտ և կարմրայտ հաւատուհի մ'էր։

Քոյր Սէնթլիս մոմի պէս ձերմակ էր։ Ինչ որ է մոմը աշտանակին քով, նոյնն էր Սէնթլիս Բերբէթիւին քով։ Վէնսան Տը Բօլի սա հիանալի խօսքերը, որոնք հաւատուհիներու ղերութեան հետ շատ ազատութիւններ կը խառնեն, մենաստանական կերպով կը սահմանեն գթութեան քոյրի մը պաշտօնը և պարտաւորութիւնները։ «Անոնց (գթութեան քոյրերուն) վանքն է հիւանդներուն տունը, խցիկն է վարձով բռնուած սենեակ մը, մատուռն է ժողովրդեան եկեղեցին, ձեմարանն է քաղաքին փողոցները կամ հիւանդոցներու սրահները, արգելարանն է իրենց հնազանդութիւնը, վանդակապատն է Աստուծոյ վախը և գողն է իրենց համաստութիւնը»։

Քոյր Սէնթլիս այս տեսլական հաւատաւորութեան կեանքի պատկերն էր։ Ոչ ոք կրնար ըսել թէ քանի տարեկան էր ան. ամենևին երիտասարդութիւն ունեցած չէր, և կարծես թէ ծերութիւն ալ չպիտի ունենար։ Քաղցրաբարոյ, պնաչատ, ընկերութիւնը լաւ և յուրտ անձ մ'էր, — չէր համարձակիր կին մ'էր ըսելու, — և որ բնաւ ստած չէր։ Այդքան մեղմ էր որ դիւրաբեկ կերեւար, թէև կրանիթէն աւելի հաստատուն էր։ Նուրբ և մաքուր մատերով կը դպչնար գժբազդներուն։ կարծես թէ խօսելու ժամանակ կը լսէր. միայն հարկ եղածին չափ կը խօսէր, և ձայնը այնպիսի կերպով մը կը հանէր, որ կրնար խոստովանարանի (confessional) մը դաս, և ակումբի մը բերկրութիւն տալ։ Այս փափկութիւնը կը յարմարէր իր հազած հաստատուն բոպային հետ, վասն զի այս անշնորհ հագուստով կրկին թէ երկինք և Աստուած շարունակ դինքը կը կանչէին։ Կուզենք պարագայի մը վրայ յատկապէս խօսիլ։ Քոյր Սէնթլիս բնաւ սուտ խօսած չէր որ և է շահի մը համար, նաև անտարբերութեամբ երբէք ըսած չէր բան մը որ ճշմարտութեան, սուրբ ճշմարտութեան հակառակ ըլլայ. այս էր անոր բնաւորութեան յայտնի դրոշմը. առաքինութեան ձայնն էր ան։ Իր այս անխոտոր ճշմարտախօսութեան համար երեւելի հանդիսացած էր միաբանութեան մէջ։ Սիգար աբբան խուլհամր Մասսիէօլի պրած նամակին մէջ քոյր Սէնթլիսի վրայ կը խօսի։ Որքան ալ անկեղծ, որքան ալ անարատ ըլլանք, դէթ պզտի և անվնաս ստախօսութիւնը փեռեկած է մեր ամենուս անարատութիւնն ալ, այլ Սէնթլիսի անարատութիւնը ամենևին չունէր այսպիսի փեռեկում մը։ Պզտի ստախօսութիւն, անվնաս ստախօսութիւն կրնա՞ ըլլալ։ Սատկը չարութեան բացարձակ ասպետն է։ Քիչ ստելը անհնարին է. ով որ սուտ կը խօսի, ամէն տեսակ սուտերը կը խօսի։ Սատկը նոյն իսկ դևին դէմքն է։ Սատանան երկու անուն ունի, մին սատանայ, միւսն ալ ստախօսութիւն։

Այսպէս կը մտածէր քոյր Սէնթլիս։ Եւ ինչպէս կը մտածէր, նոյնպէս ալ կը գործէր։ Ասկէ կը հետեւէր այն սպիտակութիւնը որու վրայօք խօսեցանք. սպիտակութիւն մը որ նոյն իսկ իր ճառագայթումովը կողքէր անոր շուրթերը և աչերը։ Ծպիտը սպիտակ, նայուածքը նոյնպէս սպիտակ էր։ Այս խղճին ապակիին վրայ սարսռի ոստայն մը, փոշիի հատ մը անգամ չկար։ Սուրբ Վէնսան Տը Բօլի ուխտին մէջ մը-տած ժամանակը մանաւոր ընտրութեամբ Սէնթլիսի անունը առած էր։ Ինչպէս կիտենք, Սիկիլիայի Սէնթլիսը այն սըբ-րուհին է որ նախապատիւ համարեց թողուլ որ իր երիկու տասխանել թէ Սէժէսթի մէջ ծնած է, քանի որ Սիրագիւզի մէջ ծնած էր։ Այս տիրուհին չարմար էր քոյր Սէնթլիսի հոգիին։

Քոյր Սէնթլիս միաբանութեան մէջ մնած տեղն երկու պակ-սութիւն ունէր, զոր սակաւ առ սակաւ ուղղած էր. մին էր համադամ խորհրդիները սիրել, միւսն էր նամակներ ընդու-նելը։ Ա՛լ միայն աղօթագիրք մը կը կարդար, որ լատիներէն էր և որու տառերը խշոր էին։ Լատիներէն չէր հասկնար, բայց գրքին երջ պարունակելը գիտէր։

Բարեպաշտ աղջիկը հաւանականաբար զգալով Փանթինի թագուն առաքինութիւնը, սէր ձգած էր անոր վրայ, և անձ-նուիրութեամբ յատկապէս կը խնամէր զան։

Պ. Մաուրիէն քոյր Սէնթլիսը առանձին տեղ մը տարաւ և անոր յանձնեց Փանթինը այնպիսի տարօրինակ կերպով մը խօսելով զոր Սէնթլիս եառը չիշեց։

Քոյրերն բաժնուելէն եառ Փանթինին մօտեցաւ։

Փանթին ամէն օր պ. Մաուրիէնի գալուն կըսպասէր ջեր-մութեան և ուրախութեան ճառագայթի մը սպասելու պէս։ Քոյրերուն կըսէր, — պ. քաղաքապետին եկած ատենը միայն կապրիմ։

Այն օրը տենդը շատ սաստիկ էր։ Երբ տեսաւ պ. Մաուր-իէնը, հարցուց.

— Հապա Գոզլէթը։

Մաուրիէն ժպտելով պատասխանեց.

— Շատ չանդգնիր, կուզայ։

Սովորութեանը պէս վարուեցաւ Փանթինին հետ։ Միայն թէ փոխանակ կէս ժամ մնալու, մէկ ժամ քովը կեցաւ՝ ի մեծ գոհունակութիւն Փանթինի։ Ամենուն ալ հաճարուեմ կ պատուէրներ տուաւ որպէս զի հիւանդուհին ամենեին զրկում մը չկրէ։ Գիտուեցաւ որ իր դէմքը պահ մը տխուր երեւոյթ մ՝առաւ։ Բայց այս տխրութեան մեկնութիւնն ալ տրուեցաւ երբ իմացուեցաւ թէ բժիշկը անոր ականջին ծռուած և ըսած էր. — Հիւանդին վիճակը շատ կը դէշնայ։

Յետոյ Մաուրիէն քաղաքապետական պաշտօնատունը մտաւ և՝ ինչպէս գրատունին ծառան ալ տեսած է՝ սկսաւ ուշա-դրութեամբ քննել իր սեղանին մէջ կախուած քարտէս մը որու վրայ Փրանսայի ճամբաները նշանակուած էին։ Թուղթի մը վրայ քանի մը թիւ գրեց մատիտով։

ԳԼՈՒԽ Ը.

ՍԳՕՓԻՐ ՎԸՐԳՑԻՆ ԱՌՈՒՎԱՄՏՈՒԹԻՒՆԸ

ՓԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ պաշտօնատունէն ելլելով քաղքին ծայրը Սգօֆէր վարպետին տունը գնաց։ Ասի Փիլէմենկի և եառէն գաղղիացած մարդ մ՝էր, իսկ արհեստը ձի և երկա-նիւ կառք վարձել էր։

Այս Սգօֆէրին տունը երթալու ամենէն կարճ ճամբան էր փողոց մը ուսկէ քիչ մարդ կանցնէր։ Պ. Մաուրիէնի բնա-կած թաղին երիցասունն ալ այս փողոցին մէջն էր։ Կրսուէր թէ ժողովրդապետը արժանապատիւ, յարգի և բարեխրատ մարդ մ՝էր։ Պ. Մաուրիէն երբ երիցասունին առջև հասաւ, փողոցին մէջ մէկ անցորդը կար միայն. այս անցորդը նշմարեց որ պարոն քաղաքապետը ժողովրդապետին տունէն անցնելէն եառ, կանգ առաւ, անշարժ կեցաւ, ապա ետ դառնալով ե-

դաւ մինչև երկյաւտնկն գուռը, որ միջին գաւտ մ'էր և երբ կամեայ դռնահար մ'ուներ: Արագօրէն դռնահարը բռնեց և վերցուց, բայց նորէն կանգ առաւ, յանկարծ կեցաւ և կարծես թէ խորհիլ սկսաւ. և՝ պահ մ'ետք՝ փոխանակ յանկարծ ձգելու դռնահարը որ կունայ, կամայ մ'իջեցուց, և նորէն իր ձամբան շարունակեց աճապարանքով մը, զոր յաջողայդն չունէր: Պ. Մաարլէն տունը գոտւ Սկօֆիը վարպետը որ աստղագէն մը կը կարէր երկու դողմէն:

— Վարպետ, աղէկ ձի մ'ունիս:

— Պ. քաղաքապետ, ըսաւ ֆիլէմոնկցին, բոլոր ձիերս աղէկ են: Ի՞նչ ըսել կուզէք աղէկ ձի ըսելով:

— Կուզեմ այնպիսի ձի մը որ օրուան մը մէջ քսան մղոն քալէ:

— Քսան մղոն, կրկնեց ֆիլէմոնկցին:

— Այո՛:

— կառքի մը լծուելով:

— Այո՛:

— Տեղը հասնելէն ետք սրբան ժամանակ պիտի հանգչի:

— Պէտք է որ ի պահանջել հարկի հետևեալ օրը ձամբայ ելնէ նորէն:

— Մի և նոյն ձամբորդութիւնը ընելու համար:

— Այո՛:

— Ի՛նչ դիւրութեամբ կը խօսիք, քսան մղոն ըսիք, այնպէս չէ:

Պ. Մաարլէն դրպանէն հանեց այն թուղթը որու վրայ մատիտով թիւեր գրած էր: Այս թիւերն էին 5, 6, 8 1/2, զոր ֆիլէմոնկցիին յուցուց:

— Ինչպէս կը տեսնես, ըսաւ Մաարլէն, ամէնը մէկ տասն և ինը կէս, ըսել է քսան կընէ:

— Պ. քաղաքապետ, ըսաւ ֆիլէմոնկցին, ձեր ուզած ձին ունիմ: Պզտի և սպիտակ ձիս է. անշուշտ քանի մ'անգամ տեսած էք ինչպէս քալելը. պա—պա լօնեէյէ եկած պզտիկ ձենդանի մ'է, խիստ կրակոտ բան մ'է: Առջի անգամ ուզեցին հեծնելու գործածել: Բայց ամէն հեծնողներն ալ վար կը նետէր, պեռինը կը գլորէր ուժգնաձի: Կը կարծէին թէ ախտաւոր է և չէին ուզեր գործածել: Ես ծախու առի: Կառքի լծեցի: Ուզածն ալ այս է եղեր, պարոն: Աղջիկի մը պէս մեղմ է, և հովի պէս կը թռի: Բայց, դիտցանալու է կռնակը հեծնելէ: Թամբուելու դիտաւորութիւն չունի: Իւրաքանչիւր ոք մանաւոր փառասիրութիւն մ'ունի: Այս ձին ալ քաշել կուզէ, տանիլ չուզեր, պէտք է կարծել թէ այս որոշումը ըրած է ինքնին:

— Պիտի կրնայ հասնիլ ուր որ պիտի երթայ:

— Այո՛, քսան մղոն արշաւելով պիտի քալէ, և ութ ժամ չանցած պիտի հասնի: Բայց ինչ դաշինքով պիտէք:

— Ըսէ, նայիմ:

— Նախ կէս ձամբան առնելէն ետք պէտք է որ մէկ ժամ հանգչի, նաև ուտէ. ուտելու ժամանակ քովը մէկը ըլլալու է որպէս զի պանդոկի ծառան վարսակը չիրնայ դողնալ, վասն զի պիտեցի որ պանդոկներու մէջ շատ անգամ ախուռ ծառաները կը կլլեն վարսակը քանձէ ձիերը կուտեն:

— Մէկը պիտի սպասէ քովը:

— Երկրորդ . . . կառքը ձեզի համար է, պ. քաղաքապետ:

— Այո՛:

— Կրնաք կառավարել:

— Այո՛:

— Լաւ. ուրեմն պէտք է որ մինակ և առանց սպասի ձամբորդէք, որպէս զի ձին չբեռնաւորուի:

— Կը հաւանիմ:

— Բայց պարոն քաղաքապետը հետը մարդ մը չունենալուն համար պիտի ստիպուի ինք հոգել որ վարսակը չդողցուի:

— Լաւ:

— Ամէն մէկ օրուան համար երեսուն ֆրանք կուզեմ. անդորձ ձեալու օրերուն համար ալ մի և նոյն վարձքը կուզեմ:

Մէկ սաակ վար չըլլար, և երկվարին ուսելիքին ծախքն ալ ձեր վրայ պիտի ըլլայ։

Պ. Մատրլէն քսակէն երեք նաբոլէոն հանեց և սեղանին վրայ դրաւ։

— Ահա երկու օրուանը կանխիկ կը վճարեմ։

— Շորրորդ. այսպիսի ճամբորդութեան մը համար երկաթի կառք մը շատ ծանր կուգայ և ձին կը յոգնեցնէ։ Պէտք է հաւանիք պզտիկ կառքով մը ճամբորդելու, զոր ունիմ։

— Կը հաւանիմ։

— Թեթեւ է այն, բայց վրան բայ է։

— Հոգ չէ։

— Պ. քաղաքապետ, դիտէք թէ ճամբուան մէջն ենք։

Պ. Մատրլէն պատասխան չտուաւ. Ֆիլէմենկին կրկնեց։

— Թէ տասսիկ յուրա կայ։

Պ. Մատրլէն լուռ կեցաւ։

Սպօֆէր վարպետը շարունակելով ըսաւ.

— Թէ կրնայ անձրեւել։

Պ. Մատրլէն գլուխը վեր ըրաւ և ըսաւ.

— Կառքը և ձին պէտք է որ վաղը առտու ժամը չորսն ու կէսին տունիս առջև դտնուին։

— Լաւ, պարոն քաղաքապետ, պատասխանեց Սպօֆէր։ Յետոյ բթամատին ըղունդովը սեղանի տախտակին վրայի բիծը քերելով՝ կրկնեց այն անտարբեր ձեւով զոր Ֆիլէմենկիները գործածել դիտեն իրենց սովորական վարպետութեանը հետ։

— Աղէկ միտքս ինկաւ։ Պ. քաղաքապետ, դուն չըսիք ինձ թէ ո՛ւր պիտի երթաք։ Ո՛ր պիտի երթաք, Պ. քաղաքապետ։

Ընդ հակառակն խօսակցութեան սկիզբէն 'ի վեր Սպօֆէրին միտքէն եւած չէր այս կէտը, բայց չէր գիտեր թէ ինչու՞ համարձակեր էր հարցնելու։

— Ձին առջի ոտքերը հաստատուն են, ըսաւ Պ. Մատրլէն։

— Այո՛, պարոն քաղաքապետ։ Բայց զառիթափ տեղերը

ձիէն մը քաշել պէտք է։ Մինչեւ շատ զառիթափ տեղերը կան ասկէ մինչեւ այն տեղ ուր պիտի երթաք։

— Ճմռնաս հա. ժամը հինգ չորսուկէսին դուռս առջև պիտի գտնուիս, պատասխանեց Պ. Մատրլէն, և դուրս ելաւ։

Ֆիլէմենկին շուարած մնաց, ինչպէս որ ինքն ալ կըսէր ժամանակ մ'ետքը։

Պ. քաղաքապետը դուրս ելնելէն երկու կամ երեք վայրկեան ետքը դուռը նորէն բացուեցաւ. եկողը դարձեալ Պ. քաղաքապետն էր։

Կերպարանքը առաջուան պէս անխռով և մտատանջութեամբ համակուած էր եւեւ։

— Պ. Սպօֆէր, ըսաւ, ինձ վարձու տրուելիք երիվարը և կառքը մէկ մէկու վրայ քանի դահեկան արժէք ունի։

— Մէկ մէկու ետեւէ, ըսէք, պարոն քաղաքապետ. քաշէ Ֆիլէմենկին բարձրաձայն խնդալով։

— Շատ աղէկ։ Արժէքը։

— Մինչեւ ծախու առնել կուզէք։

— Չէ, բայց կրնայ դէպք մը պատահիլ, ուստի կուզեմ որ երաշխաւորութիւն մը տամ քեզ։ Ի դարձիս առակը եւ կուտաս։ Քանի ֆրանք է կառքին և ձիին արժէքը։

— Հինգ հարիւր ֆրանք, պարոն քաղաքապետ։

— Առ քեզի հինգ հարիւր ֆրանք։

Պ. Մատրլէն սեղանին վրայ դրամատոմս մը գրաւ. յետոյ դուրս ելաւ, և ալ ետ չդարձաւ։

Սպօֆէր վարպետը սոսկալի կերպով ղջայց հազար ֆրանք ըսած չըլլալուն համար. բայց ձին և կառքը ամենը մէկ հարիւր թալեռ կարժէր։

Ֆիլէմենկին կինը կուշտ և եղերութիւնը պատմեց. Ո՛ր արդեօք պիտի երթայ պարոն քաղաքապետը։ Խորհուրդի նըստան։ — Բարիզ պիտի երթայ, ըսաւ կինը։ — Ձեմ կարծեր, ըսաւ երիկը։ Պ. Մատրլէն չմինեալին վրայ մոռցած էր այն թուղթը որու վրայ թիւերը գրած էր։ Ֆիլէմենկին

թուղթը առաւ և քննեց. — Հինգ, վեցը, ութը և հէս: Այն թիւերը կերեւայ թէ սուրհանդակի կայաններ կը նշանակեն: Դէպ 'ի կինը դառնալով ըսաւ.— Գացէ: — Ի՞նչպէս: — Ասկէ մինչև Հէստէն հինգ մղոն է, Հէստէնէն մինչև Սէն-Թօլ վեց մղոն, և Սէն-Թօլէն մինչև Արաս ութուկէս մղոն է: Ութսուն Արաս սիրտ երթայ:

Բայց Պ. Մատըլէնն իւր տունը վերադարձած էր: Սպօֆֆը վարպետին տունէն եւս դառնալու համար խոստ երկայն ճամբայէ մը գացած էր, իբր թէ երիցատունին դուռը դըրդում մ'ըլլար իրեն համար և թէ ուզէր զդուշանալ անոր առջևէն անցնելէ: Իր սենեակը եղած և դուռը գոցած էր: Ասի տարօրինակ բան մը չէր, վասն զի կամովին կանուխ կը պառկէր: Սակայն զործարանի դռնապանուհին որ միանգամայն Պ. Մատըլէնի միակ սպասուհին էր, դիտեց որ Ճրագը ժամը ութուկէսին մարեցաւ և նոյն պահուն արկղապետը ներս մտած ըլլալով, սպասուհին յայտնեց անոր ինչ որ դիտած էր, և շարայարեց.

— Արդեօք հիւանդ է պարոն քաղաքապետը: կերպարանը տարօրինակ երեցաւ ինձ:

Այս արկղապետը Ճիշդ Պ. Մատըլէնի սենեկին տակ շինուած սենեկի մը մէջ կը բնակէր: Ամենևին բանի տեղ չի դրաւ դռնապանուհին խօսքը, պառկեցաւ և քնացաւ: Կէս գիշերի մօտ յանկարծ արթնցաւ. քունին մէջ կլուսն վերևը ձայն լսած էր: Ականջ դրաւ. լսեց որ մէկը կերթար ու կուգար, և կարծես թէ վերի սենեկին մէջ քայլող մը կար: Աւելի ուշադրութեամբ մտիկ ըրաւ, և հասկցաւ որ քայլը Պ. Մատըլէնի քայլն էր: Ասի տարօրինակ երեցաւ իրեն, վասն զի անկողնէն ելնելէն առաջ սովորաբար ամենևին ձայն մը չէր ըլլար Պ. Մատըլէնի սենեկին մէջ: Պահ մ'եռքը արկղապետը բան մը լսեց որ պահարանի մը բացուելուն և գոցուելուն կը նմանէր: Ցետոյ կարասի մը վերցուեցաւ տեղէն, լուռթիւն մը տիրեց, և քայլը նորէն երթևեկել սկսաւ:

Արկղապետը ելաւ նստաւ անկողնին մէջ, բոլորովին արթնցաւ, նայեցաւ, և իր պատուհանին ապակիներէն դիմացի պատին վրայ լուսաւոր պատուհանի մը կարմրագոյն ցոլումները նշմարեց: Ճառապայթներուն ուղղութենէն կը հասկցուէր թէ լոյսը Պ. Մատըլէնի պատուհանէն կը ցոլանար: Լոյսին ցոլումները կերերային, կարծես թէ վառուած կրակէ քանթէ Ճրագէ մը կուգային: Ապակիներուն շրջանակներուն տուները լոյսերուն մէջ չէր ծրագրեր, ուսկէ կը հասկցուէր թէ պատուհանը բոլորովին բաց էր: Նշանակը ցուրտ էր, ուստի պատուհանին այսպէս բաց ըլլալը զարմանալի էր: Արկղապետը նորէն քնացաւ: Ժամէ մը կամ երկու ժամէ ետք նորէն արթնցաւ: Մի և նոյն քայլը յամրաքայլ և կանոնաւորապէս իր ղլուխն վերևը կերթևեկէր:

Լոյսին ցոլումները միշտ պատին վրայ կը ծրագրուէին, բայց հիմա Ճրագի կամ մոմի մը լոյսի ցոլումին պէս ժպտուն և հանդարտ էին: Պատուհանը տակաւին բաց էր:

Պատմենք ուրեմն ինչ որ տեղի ունեցած էր Պ. Մատըլէնի սենեկին մէջ:

ԳԼՈՒԽ Գ.

ԴԱՆԱԿ ՄԸ ՄԻՋ ՓՈՇՈՐԻԿ ՄԸ

ԸՆԹԵՐՑՈՂԸ գուշակից անշուշտ թէ Պ. Մատըլէն նոյն ինքն Ժան Վալժանն է:

Այս խղճին խորերը արդէն նայեցանք անպամ մը. նորէն նայելու ժամանակը եկաւ: Հարցուն թէ առանց յուզուելու և առանց դողալու կը նայինք: Հոյ բան մը որ այնքան սարսափելի ըլլայ, որքան է այս տեսակ հայեցողութիւն մը: Հոյ տեղ մը ուր մարդին աչքը կարենայ դանել այնքան կենդանի լոյս, նաև խաւար, որքան կրնայ դանել մարդուս սրտին մէջ: Իր տեսութեանը ենթարկուող առարկաներուն մէջ հոյ բան մը որ մարդկային սրտէ մ'աւելի ա-

հարկու , աւելի չափէ , աւելի խորհրդաւոր և աւելի անհուն ըլլայ : Ծովէն աւելի մեծ տեսարան մը կայ , որ է երկինք : Երկինքէն աւելի մեծ տեսարան մը կայ , որ է սրտին ներսը :

Մարդկային խղճի բանաստեղծական նկարագրութիւնը ընելը , նաև մէկ մարդու խիղճը ըլլայ , նաև մարդերու ամենէն յատկին խիղճը ըլլայ , հոգ չէ , ամէն վիպասանութիւնները վերագրելի և վերջնական վիպասանութեան մը մէջ ամփոփել է : Խիղճը չնորհներու , յանկութիւններու և փորձերու քաոսն է , երազներու փուռն է , նաև անձաւ այն ահաւոր պաղպաղներու որոնցմէ մարդ կամ՝նայ : Իմաստակութիւններու հանրագիտական տեսարանն (pandœmonium) է , կրից պատերազմի դաշտն է այն : Կան այնպիսի ժամեր , ուր՝ մտածող մարդկային անձի մը կապոտագոյն երեսէն թաւ անցիր , եաևր նայէ , նայէ անոր սիրտը , նայէ անոր մտութիւնը : Այն արտաքին լռութեան ներքև Հոմերոսի նկարագրածին նման հսկաներու պատերազմներ , Միլթոնի նկարագրածներուն նման վիշապներու և հիդրաներու կռիւներ և ուրուականներու երամներ , և Տանթէյի նկարագրածին նման ոլորաձև տեսիլներ կան : Տխուր բան մ'է այս անհերքութիւնը զոր ամէն մարդ իր սրտին մէջ ունի , և որու հետ յուսահատաբար կը համեմատէ իր ուղեղին կամքը և կեանքին գործողութիւնները :

Ալիկիերի բանաստեղծը օր մը աղէտաւոր դուռի մ'առջև գտնուեցաւ և վարանեցաւ ներս մտնելու : Ահա անանկ դուռ մ'ալ մեր առջև կայ , որու շեմին վրայ կը վարանինք : Այլ առանց մտնենք ներս :

Ընթերցողը գիտէ արդէն այն ամէն իրերը որոնք Բրեթի-Ֆերվէյի դէպքէն 'ի վեր Ֆան Վալժանի պատահեցան . հետևաբար շատ ըսելիք չունինք : Ինչպէս տեսանք , այն վայրենաբար շատ ըսելիք չունինք : Ինչպէս տեսանք , այն վայրենի կնիկն ալ բոլորովին ուրիշ մարդ մ'եղաւ ան : Ֆան Վալժան եղած էր ինչ որ եպիսկոպոսը ուզած էր ընել զանիկ թէ սլաքևուելիւն այլ կերպարանափոխութիւն մ'առած էր Ֆան Վալժան :

Արցաւ անհրևութանալ . եպիսկոպոսին արծաթեղէնները ծախեց՝ միայն աշտանակները իբր յիշատակ պահելով , քաղաքէ քաղաք սպրդեցաւ , Ֆրանսայէն անցաւ , Մ... եկաւ , ունեցաւ այն դաղափարը զոր արդէն ըսինք , գործադրեց ինչ որ պատմեցինք , յաջողեցաւ անբռնելի և անմատչելի ըլլալու , և այնուհետև Մ...ի մէջ հաստատուելով , խղճին իր անգիաչէն արտմիլը և կեանքին վերջին կիսովը առաջին կէսը սրբելը զգալու երանութեամբ համակուած՝ հանդարտ , վըստահ և յուսաւէտ օրեր անցուց , ալ մի միայն երկու մտածում ունենալով , որոնց մին էր անունը պահել և իր կեանքը նուիրագործել . միւսն էր մարդերէն աղատիլ և առ Աստուած վերադառնալ :

Այս երկու մտածումները իր մտքին մէջ այնքան սերտ կերպով խառնուած էին իրարու , որ միութիւն մը կը կազմէին . երկուքն ալ հաւասարապէս կը պաշարէին և կը տագնապէին զան , և անոր ամենափոքր գործերուն վրայ կը տիրապետէին : Անոր կեանքի ընթացքը կարգադրելու համար սովորաբար կը համաձայնէին . դէպ 'ի առանձնութիւն կը դարձնէին , բարեսիրութեան և պարզութեան զգացումով կը համակէին զան . երկուքն ալ մի և նոյն խրատը կուտային : Բայց երբեմն վէճ կը ծագէր երկուքին մէջ : Անատեն՝ ինչպես կը յիշենք , այն մարդը՝ զոր Գ . Մատըլէն կանուանէին Մ...ի բոլոր բնակիչները , առանց դեղևելու՝ առջի մտածումը երկրորդին , այսինքն իր ապահովութիւնը առաքինութեան կը զոհէր : Այս պատճառաւ փոխանակ զգուշութեամբ և խոհեմութեամբ վարուելու՝ եպիսկոպոսին աշտանակները պահած , անոր համար սուգ մտած , ամէն անցնող պղտի Սավուացիները կանչելով հարցուփորձ ըրած , Փավըրոլի ընտանիքներու վրայ տեղեկութիւն առած , և ծավէրին տագնապելի ակնարկութիւններէն չվախնալով ծերունի Ֆոշլըվանի կեանքը ազատած էր : Ինչպես ըսինք արդէն , կարծես թէ ամէն իմաստուններու , սուրբերու և արդարնե-

րու օրինակին հետևելով կերևակայէր թէ իր առաջին պարտքը իր անձին չէր պատկաներ։

Բայց պէտք է ըսել թէ բնաւ այսպիսի պարագայի մը մէջ դեռ գտնուած չէր։

Բնաւ այսպիսի առասիկ կռիւի մը բռնուած չէին այն երկու դաշափարները որոնք կը կառավարէին այն դժբաղդ մարդը որու առտապուհները կը պատմենք։ Երբ իր սենեակը մտաւ, ծավէրի առջի խօսքերը յիշելով խառն ի խուռն այլ խառնիչ ներքով մը դէպ երկու դաշափարներուն այնպէս կըռուելը։ Երբ այնպիսի առօրինակ կռիւով արտաբերուեցաւ այն անունը զոր անդունդներու մէջ թաղած էր, ապշութեամբ մը դարուեցաւ և իր ձախատարին աղէտալի այլանդակութենէն կարծես թէ շուարեցաւ, և այս ապշութեանը մէջ զգաց այն սարսուռը որ մեծ շարժերէ առաջ տեղի կունենայ։ Փոխարինին մօտիլը զգացող վինուորին պէս ծռուեցաւ։ Զգաց թէ իր գլուխն վերևը շանթերով և փայլակներով լի մթութիւններ կը դիզուէին։ Ծավէրի խօսքերը մտիկ ըրած ժամանակ առջի անգամ միտքը դրաւ շուտ մ'երթալ, իր ոճը ըլլալը յայտնել, Շանմաթիէօն բանտէն ազատել և անոր տեղ բանտարկուիլ, բայց կինդանի մարմինի մը հերձուելուն պէս ցաւալի և կսկծալի երևցաւ այն որոշումը. յետոյ միկ դի ընկալ այս դիտաւորութիւնը, ըսաւ իւրովի. Մտածենք նախ։ Զսպից այս առաջին և վհչ զգացումը, և ընկրկեցաւ գիւցազնութեան առջև։

Եպիսկոպոսին այն սրբանուէր խօսքերէն ետք, այնքան տարբեր զգլխումով և անձնուրացութեամբ ապրելէն ետք, սքանչելի կերպով մը սիտուած ապաշխարութեան միջոցին անշուշտ մեծ ընթացք մը բռնած կըլլար այս մարդը եթէ՝ նաև այս պահ սարսափելի պարագայի մը մէջ՝ վայրկեան մը չդադրէր և մի և նոյն քայլով անընդհատ քայլերը դէպ 'ի այն ազետաւոր վհիկը որու յատակն էր երկինք. եթէ այս ընթացքը

բռնելու ըլլար Ժան Վալժան, վհիկ կերպով վարուած պիտի ըլլար, բայց չբռնեց այս ընթացքը։ Պէտք է որ անոր սրբարին մէջ եղած բաները պատմենք, այլ սակայն եղածէն աւելի բան մը չինք կրնար ըսել։ Նախ և առաջ անձնական պահպանութեան բնազդումը յաղթանակեց. շուտ մը ժողովեց դաղափարները, զսպեց այն ամէն զգացումները որոնք կը յուզէին սրտին մէջ, միտքը քերաւ ծավէրին նեղկայութիւնը որ մեծ վտանգ մ'էր, ահաբեկ մարդու մը հասատամութեամբ ուրիշ ժամանակի ձգեց իր որոշումը, բռնեղիք ընթացքին նկատմամբ խորհելէ դադրեցաւ և նորէն հանդարտեցաւ՝ իր վահանը կատնէն առնելով դարձեալ զինուող ըմբիշի մը պէս։ Ծավէրի հետ տեսնուելէն ետք փինչէ իրիկուն այս վիճակին մէջ գտնուեցաւ այսինքն նեղսրբիկ մը, դուբոն ալ խորին հանդարտութիւն մ'ունենալով. մի միայն «պահպանողական միջոցներ» ձեռք առաւ։ Իր ուղեղին մէջ եղած դաղափարներուն ամէնն ալ դեռ շփոթ էր և իրարու կրնդհարէին, այնքան խռով էր միտքը որ յայտնապէս չէր տեսներ որ և է դաղափարի մը ձևը, և ինքը իսկ չէր կրնար քան մ'ըսել իր նկատմամբ. կզգար միայն թէ մեծ հարուած մ'ընդունած էր։ Սովորութեանը համեմատ Փանթիենին քովը դնաց որ անկողնի մէջ կը տառապէր, և քարեսիրութեան բնազդումով մը սովորականէն աւելի կեցաւ անոր քովը, և իր բացակայութեան հաւանականութիւնը մտաբերելով ըսաւ իւրովի թէ այսպէս վարուիլ և Փանթիենը գոյութեան խնամարկութեանդը յանձնել պէտք էր։ Անորոշապէս զգաց թէ գուցէ պիտի պարտաւորէր Արաս երթալ, և՝ առանց ամենևին այսպիսի Ճամբորդութիւն մ'ընել որոշելու՝ ըսաւ իւրովի թէ ինքը ամենևին կասկածի ենթարկուելու վտանգը չունենալուն համար կրնար առանց անպատեհութեան հանդիսատես ըլլալ Շանմաթիէօյի դատին, ուստի 'ի պահանջել հարկին ձեռքը կապուած չմնալու համար Սկօֆֆլերին երկանիւ կառքը վարձու բռնեց։

Բաւական ախորժակով ճաշեց։

Երբ սեղանակը մտաւ, խելքը գլուխը հաւքից և մտածեց։

Փընթց իրերու վիճակը, և տեսաւ որ անլուր էր այն. այնքան անլուր երևցաւ որ մտախոհութեան մէջ ընկաւ մինչև անձկ ըմեան զգացումէ մը չկրնար ինքզինքը ազատել։ Ամբողջ աշխատանքի վրայէն եկաւ, և դուռը դոցելով եւեւէն պարզունակը դրաւ։ Կը վախնար որ բան մը չմտնէ ներս։ Սենեկին մէջ կը փակուէր որպէս զի որ և իցէ դէպքի դէմ պատրաստ գտնուի։

Պահ մ'ետք Ճրագն ալ անցուց, վասն զի նեղութիւն կուտար իրեն։

Այնպէս կը կարծէր թէ մէկը կրնար տեսնել զինքը։

Մէկը. ո՛վ արդեօք։

Բաբէ. ինչ որ կուզէր դուրս ձգել, արդէն ներս մտած էր. որո՛ւ նայուածքը որ կուզէր արգիլել, արդէն իրեն կը նայէր, այսինքն իր խիղճը։

Իր խիղճը, այսինքն Աստուած։

Բայց՝ի սկզբան խաբուեցաւ. կարծեց թէ ապահովութեան և առանձնութեան մէջ է. երբ պարզունակը դրաւ, ինքզինքը անառիկ տեսնց. երբ Ճրագը մարեց, զգաց թէ անտեսանելի է։ Անատեն ինքն իր տէրը եղաւ. արմունկները սեղանին և գլուխը ձեռքին վրայ կռթնցուց, և սկսաւ մտածել՝ի խաչարի։

— Ո՛ւր կը գտնուիմ։ — Ձեմ երազեր արդեօք։ — Ի՞նչ ըսուեցաւ ինձ։ — Մինչև իրաւ է ծավէրին հետ տեսնուիլս և խօսիլս։ — Ի՞նչ կրնայ ըլլալ այս Ջանմաթիէօն։ — Ատմոյդ է ինձ նմանիլը։ — Կարելի է այս։ — Երբ կը մտածեմ թէ դեռ երեկ այնքան հանդարտ էի և ամենևին բան մը չէր անցներ մտքէս։ — Երեկ այս միջոցիս ինչ կրնէի։ — Ի՞նչ կայ այդ դիպուածին մէջ։ — Ի՞նչ պիտի ըլլայ վերջը։ — Ի՞նչ ընեմ արդեօք։ Ահա այս կերպով կը տանջուէր ան։ Իր միտքը ալ ոյժ չունէր պահելու գաղափարները որոնք ա-

չինեորու պէս կանցնէին, և զորոնք կէցնելու համար ժամ, ժամ ալ երկու ձեռքով ճակատը կը բռնէր։

Իր կամքը և միտքը տանկնուվրայ ընող այս աղմուկէն ուժ կը ջանար յայտնութիւն և որոշում մ'առնուլ, սի միայն վիշտ կրնդունէր։

Գլուխը տապակին կայրեր։ Պատուհանը գնաց և բոլորովին բացաւ։ Երկինքը աստղ չկար։ Նորէն եկաւ և աթոռին քով նստաւ։

Առաջին ժամը այսպէս անցաւ։

Սակայն մտախոհութեանը մէջ կամաց կամաց սկսան անորոշ ծրագիրներ կազմուիլ և հաստատուիլ, և իրութեան ճշդութեամբ կրցաւ ընդհնմարել չէ թէ իրերու ամբողջ վիճակը այլ անոր քանի մը պարագաները։

Նախ դիտեց թէ այս վիճակը կարի տարօրինակ և կարի տագնապելի վիճակ մ'էր, բայց և այնպէս ինք բոլորովին ազատ էր ուզած կերպովը վարուելու։

Ասով ալ աւելի շուարեցաւ։

Մինչև այն օրը իր ամէն ըրածները որոնք իր գործողութեանց անաչառ և բարեպաշտական նպատակին չէին վերաբերեր, ծակ մ'էին միայն զոր կը փորէր իր անունը պահելու համար։ Ամիսի միաքով խորհած ժամանակները, աքնութեամբ անցուցած դիշերները միշտ ամենէն աւելի վախցած բանն էր լսել այն անունին արտաբերութիւնը. կրսէր իւրովի թէ իրեն համար ամէն բան վերջացած պիտի ըլլայ, եթէ անունը տրուելու ըլլայ. թէ օր մը եթէ յայտնուէր ան, պիտի ջնջէր իր նոր կեանքը և, ով գիտէ, գուցէ նաև իր նոր սիրտը պիտի անհետէր։ Կը սարսռէր՝ մտածելով միայն թէ հնարին էր այս բանը։ Անշուշտ այն միջոցին՝ ուր այսպէս կը խորհէր և կը տքնէր, եթէ մէկը ըսած ըլլար իրեն թէ պիտի գայ ժամ մը ուր այն անունը իր ականջին պիտի հնչէ, ուր այն սոսկալի բառը, ծան Վալժան անունը յանկարծ մթութեան խորերէն պիտի ելնէ և իր առջև պիտի

կանգնի, ուր այն ահագին լոյսը որ իր անունը պաշարող պաղտնիքը փարատելու համար ծագած է, յանկարծ իր գլուխն վերեւը պիտի փղփղի. և թէ այն անունը չպիտի սպառնայ իրեն, թէ այն լոյսը աւելի քաջալերիչ մը պիտի կազմէ, թէ այն պատառուն վարագոյրը պաղտնիքը պիտի ամբողջէ, թէ այն երկրաշարժը աւելի պիտի ամրապնդէ իր հիմունքը, թէ՝ եթէ ինք ուզելու ըլլայ՝ այն ահագին դիպուածէն կրնայ ոչ այլ ինչ հետեւիլ եթէ ոչ իր էութեան աւելի յայտնի և միանդամայն աւելի անթափանցիկ կերպարան մ'առնուլը, և թէ բարեսէր ու արժանապատիւ Մատըլէն քաղաքային Ժան Վալժանի ուրուականին հետ դիմադիմուելով (confronter) ալ աւելի պատիւ, ալ աւելի հանդարտութիւն և ալ աւելի յարգանք պիտի գտնէ, եթէ կըսեմ, մէկը անոր ըսած ըլլար այս բաները, գլուխը պիտի օրհներ և յիմարութիւն պիտի սեպէր զանոնք: Այլ եկու տեսար որ Ֆիլիզ ասոնց ամէնն ալ ակա կը պատահէր. բոլորը այն անհնարին կարծուած բաները իրական եղելութիւն մ'եղած էին, և Ապառած Թոյլ առած էր ու այն յիմարական բաները իրապէս տեղի ունեցան:

Իր մոռախոհութիւնը հետ զհետէ կը պարզուէր: Հետ զհետէ ինչ կատարեալ գիտակցութեան մէջ գտնուիլը կը հասկնար:

Այնպէս կիրեւակայէր թէ չգիտեմ ինչպիսի քունէ մ'արթնցած էր, թէ դիշերը անդունդի մը յատակն եղերը հասնելով ոտքի վրայ կը սարսռէր, և պարապ տեղը նահանջելով՝ գահավիժի մը վտանգն վար կը սպրդեր: Մտածին մէջ անծանօթ մարդ մը, օտարական մը կրնդդմարեր յայտնապէս. կը դիտէր որ այն մարդը Ժան Վալժան կը սեպուէր Ճակատագրին առջեւ որ բուն Ժան Վալժանին տեղը դեպ'ի անդունդը կը մղէր զան: Այս անդունդը նորէն պտտուելու համար պէտք էր որ մէկը մէջը իյնար, այսինքն ինքը կամ միւսը:

Եթէ ուղէր կրնար թողուլ որ միւսը իյնայ:

Երբ մտածը կատարեալ փարատեցաւ, խոհաւէժնեցաւ ինքնին թէ թիթառանին մէջ իր տեղը պարապ մնացած էր. թէ ինչ որ ընէր, այն տեղը իրեն կսպասէր. թէ Ծրթիժոլվէի գրամը գողցած ըլլալուն հետ պիտի երթար. թէ այն տեղը իրեն պիտի սպասէր և գինքը պիտի հրաւիրէր մինչեւ որ երթայ. թէ անհրաժեշտաբար և հարկաւորապէս պիտի երթար հոն: — Ցետոյ ըսաւ նաեւ իրեն թէ այս միջոցիս յաջորդ մ'ունէր. թէ կերեւայ որ այս փորձանքին Շանմաթիէօ անուն մէկը ենթարկուած է. իսկ թէ ինքը այնուհետեւ այն Շանմաթիէօյի անձովը թիթառանը և պ. Մաբուէնի անունովն ալ ընկերութեան մէջ պահուելով ալ վախնալու բան մը չունէր. բաւական էր որ չարդիլեր մարդերը Շանմաթիէօյին գլուխն վրայ կնքելու այն վատահամբաւութեան քարը որ գերեզմանի կափարիչին պէս անդամ մը գրուելէն ետք ալ երբեք չվերցուիր:

Գաղափարներու այս կերպը այնքան անհնարին և այնքան տարօրինակ էր որ յանկարծ անի անմիկնելի շարժում մը զգաց, շարժում մը որու նմանը ոչ ոք երկու կամ երեք անգամն աւելի կրնայ զգալ իր կեանքին մէջ, այս շարժումը խղճի տեսակ մը գղրդումին կը նմանի, որ սրտին ամէն տարակուսելի զգայութիւնները կը յուզէ. որ հեղնութեամբ, ուրախութեամբ և յուսահատութեամբ կը բազկանայ և որ կըրնայ հնչքին քրքիջ մ'անուանիլ:

Ցանկարծ գարձեալ վառեց ճրագը:

— Ծայր ինչ կայ, ինչու և որմէ կը վախնամ, ըսաւ իրեն. ինչ հարկ կայ այսպէս մտածելու. ահա ալ աղատած եմ. ամէն բան լմնցաւ: Գիտցայ գուռ մ'ունէի մէյ ուսկէ անցնելս կրնար հերկային երեւալ. այս գուռը ահա գոցուեցաւ, մշտնջենապէս գոցուեցաւ: Սա ծովէրը որ երկար տասնէ'ի վեր գլխս կը վրդովէ, սա ահարկու քնազդումը որ կարծես գլխս ճանչցած էր, և արդարեւ ճանչցած էր, և որ ամենուրեք հետեւէս կուգար, սա սոսկալի որսորդ

չուներ որ միշտ պէտք բռնել կարիացաւ , ահա ալ չհղկեցաւ , ու շարունակեցին ուրիշ որսի մը առաջ , բոլորովին ուրիշ որսի մ'եռանկեան ինկաւ : Ա'լ դոհ է այսուհետև , ալ հանդարտ պիտի թողուն զինք վասն զի բռնեց իր փոն վալժանը : Ո'վ գիտէ , կարելի է որ այս քաղաքէն ձգէ երթայ : Եւ այս ամէն բաները առանց իմ գիտութեան եղան , և առանց ամէնն ալ առանց իմ մասնակցութեան կատարուեցաւ : Ինչո՞ւ ուրեմն այսպէս կը խռովիմ : Ինչ դժբաղդութիւն կայ այս բանին մէջ : Եթէ զինք տեսնող մ'ըլլայ , անշուշտ պիտի կարծէ թէ մեծ դժբաղդութիւն մը պատահած է ինձ : Մանաւանդ որ եթէ մեկու մը դէշութիւն պիտի ըլլայ , յանցանքը իմս չէ ամենևին : Նախախնամութիւնն է ամէն բան ընողը : Ցայտնի է թէ իր կամքն է այս : Միթէ իրաւունք ունիմ խանգարելու ինչ որ Նախախնամութիւնը կը տնօրինէ : Ուրեմն ինչ է հիմա ուզածս : Ինչո՞ւ պիտի խառնուիմ ինծի չվերաբերող գործի մը . Ե՛ւ տակաւին գոհ չեմ ըլլար : Բայց ասկէ աւելի ինչ կրնամ ուզել ուրեմն : Վերջապէս կը հասնիմ այն նպատակիս որու այնքան տարիներէ ի վեր կը փափաքիմ . որ գիշերնըրուս երազը և Աստուծոյ բրած աղօթնեըուս առարկան էր , այսինքն ապահովութիւն : Աստուծոյ կամքն է այս : Բան մը չեմ կրնար ընել Աստուծոյ կամքին դէմ : Եւ ինչո՞ւ այսպէս կը կամի Աստուած : Որպէս զի շարունակեմ ինչ որ սկսայ , որպէս զի բարեգործութիւն ընեմ , որպէս զի օր մը մեծ և խրախուսիչ օրինակ մ'ըլլամ և որպէս զի ըսուի թէ վերջապէս փոքր ինչ երանութեան պատճառ եղաւ այն ապաշխարութիւնը զոր կրեցի և այն աղաչանութիւնը որու գոյզ վերադարձայ : Ցիրաւի կը զարմանամ թէ ինչո՞ւ քիչ մ'առաջ վախցայ սա բարեսիրտ ժողովրդապետին տունը մտնելու , ամէն բան խոստովանած հայրի մը ըսելու պէս պատմելու և իրեն խորհուրդ հարցնելու . հարկաւ ան ալ ճի և նոյն բանը պիտի խրատեր ինձ : Ա'լ որոշեցի , Թող կուտամ որ ըլլայ ինչ որ պիտի ըլլայ ,

ինչ կուտամ որ Աստուած ինչ կուզէ ընէ :

Գրեթէ ներքին անդունդի մը վրան ծռտելով այսպէս կը խօսեր ինքնին իր խղճին խորերուն մէջէն : Աթոռէն ելնելով սկսաւ սենեկին մէջ քալել : — Օ'ն , ալ պէտք չէ մտածել այս բանիս վրայ : Որոշուած որոշում է : — Բայց ամենևին ուրախութիւն չզգաց :

Ընդ հակառակն տրտմեցաւ :

Ինչպէս որ կարելի չէ ծովի ջուրերուն նորէն դէպ ի ծովկեղերը մօտիլը արգիլել , նոյնպէս կարելի չէ արգիլել միտքը որ գաղափարով մը զբաղուի : Նաւաստիին համար մակընթացութիւն կանոնաւոր այս . յանցաւորին համար ալ խղճի տարտնջոց : Աստուած ինչպէս ովկիանոսը , նոյնպէս մարդուս սիրտն ալ կը յուզէ :

Քանի մը րոպէէն նոր բռնադատուեցաւ նորէն թևսելու այն տխուր տրամախոսութիւնը որու մէջ խօսողն ալ ինք էր , լսողն ալ ինքն էր , և ուր կըսէր ինչ որ չէր ուզեր լսել , կը լսէր ինչ որ չէր ուզեր իմանալ , հնազանդելով այն գաղտնի զօրութեան , որ ժպտելով կըսէր անոր , ինչպէս երկու հազար տարի առաջ ուրիշ դատապարտեալի մ'ալ կըսէր , Հոլէ՛ :

Աւելի հեռին երթալէ առաջ և մեր միտքը կատարեալ հանգստացնելու համար , մանաւանդ պիտոյութիւն մ'ընել հարկ կը համարինք :

Սեպտ է թէ մարդս ինքնիրեն կը խօսի . չկայ մտածող էակ մը որ զգացած չըլլայ այս ներքնախօսութիւնը : Պրնայ բաւիլ նաև թէ բանը միայն անատեն Աքանչելի խորհուրդ մ'է երբ մարդուս ներսը կերթևեկէ միաբէն դէպ ի խիղճը երթալով և խիղճէն դէպ ի միտքը վերադառնալով : Ահա այս նշանակութեամբ միայն առնելու է այս զրուխին մէջ սահեպ գործածուած սա խօսքերը . Խօսվէ ըսաւ . ինքնիրեն պատասխանեց . մարդս ինքնիրեն կըսէ , իւրովի կը խօսի , ինքնին կը պատասխանէ՝ առանց ընդհատելու արտաքին լռութիւնը : Մարդ լռած

ժամանակ իր ներքին մեծ աղմուկ մը կայ. «ամէն գործարանը ներքը կը խօսին քան՝ի թերանէն»: Հոգիին իրաւիճակները սառյդ է թէ ոչ կը տեսնուին և ոչ ալ կը շօշափուին, բայց այս սպառնական իրաւիճակը ըլլալէ չեն գադրիր:

Արդ հարցուց ինքնին թէ ինչ վիճակի մէջ կը գտնուէր այն դէպքին նկատմամբ: Ան «ըրած որոշումին» վրայօք ինքնիրեն հարցումներ ըրաւ: Խոստովանեցաւ ինքնիրեն թէ ինչ որ կարդադրած էր իր մտքին մէջ, հրեշային կարգադրութիւն մ՚էր. թէ թողուլ որ ըլլայ ինչ որ պիտի ըլլայ, թողուլ որ Աստուած ընէ ինչ որ պիտի ընէ, բոլորովին սոսկալի բան մ՚էր: Թողուլ որ Ճակատագրին և մարդերուն այս սխալանքը գործագրուի, զայն չարգիլել, լուռ ենամբը նպաստել գործագրութեանը, վիրջապէս բան մը չընել ըսել էր. երկիւղի անարժանութեան մէն բան ընել էր. երկիւղի անարժանութեան մէն բան ընել էր. սառին, վատ, ծածուկ, գձուձ և սոսկալի ձգրագործութեին մ՚ընել էր:

Ուղը տարիէ՝ի վեր այս առաջին անգամն էր որ գժբաղդ մարդը չարամտութեան և չարագործութեան դառնալի համը կզգար: Ցհաճութեամբ մը գուրս թքաւ այս դառնութիւնը:

Նորէն սկսաւ ինքզինքը հարցափորձել: Անաչառապէս հարցուց իւրովի թէ ինչ հասկցած էր «Նպաստակիա հասաւ» ըսելով: Խոստովանեցաւ թէ իրօք իր կեանքը նպատակ մ՚ունէր: Բայց ինչ նպատակ. միթէ անունը պահել. միթէ ոստիկանութիւնը խաբել. միթէ մյոքան պզտիկ բանի մը համար ըրած էր ինչ որ ըրած էր. միթէ չունէր ուրիշ նպատակ մը, մեծ, ճշմարիտ նպատակ մը: Այսինքն ազատել ոչ թէ իր անձը այլ հոգին. նորէն մարդասէր և բարի մարդ մ՚ըլլալ: Արդար մ՚ըլլալ. և միթէ ինքն ալ մի միայն և միշտ արդար մ՚ըլլալ ուզած չէր, ինչպես եպիսկոպոսն ալ նոյն բանը չէր պատուիրած իրեն: Իր անդեալին գուրը գոցել. բայց, Աստուած իմ, այն գուրը չէ թէ կը գոցէր, այլ նորէն կը բանար վատ ընթացք մը բռնելով, այլ նորէն գող մը, գո-

ղերուն ամենէն ոսկալին կըլլար: Ուրիշ մ՚էութիւնը, կեանքը, հանդստութիւնը, յարեւու ունեցած տեղը կը զգնար, մարդասպան մը կըլլար, կը մոռցնէր, բարոյապէս ճշտուած մարդ մը կը մնացնէր, մահուան պատիժի կը դատապարտէր զան, այն ոսկալի և կենդանի մահուան, այն բացօթեայ մահուան որ կանուանի թիարանի քանտ. ընդհակառակն անձնատուր ըլլալը, ոսկալի սխալանքի մը հետևութեանց ենթարկուիլ այն մարդը ազատելը, նորէն իր աջի անունը առնուլը, յանուն պարտաւորութեան նորէն ծան Վալժան ըլլալը իրօք իր վերակենդանութիւնը կատարելապործել և մշտնջենապէս փակել էր այն գժոխքը ուսկէ կելլէր, աներևութապէս գարձեալ գժոխքը մտնելը իրապէս անկէ ազատիլ էր: Պէտք էր այսպէս վարուիլ, թէ ոչ բան մ՚ըրած չպիտի ըլլար, իր բոլոր կեանքը անօգուտ, իր բոլոր ապաշխարութիւնը անարդիւն եղած պիտի ըլլար: Պէտք էր որ ալ ըսէր. Ի՞նչ օգուտ. և իրօք կզգար անկ թէ եպիսկոպոսը դեռ կապրէր. թէ եպիսկոպոսը թէև մեռած այլ ալ աւելի ներկայ էր. թէ եպիսկոպոսը ուղղակի իրեն կը նայէր. թէ այնուհետև քազաքապետ Մատըէնը իր բոլոր առաքինութիւններովը հանդերձ զղուելի պիտի երևար անոր և թէ թիարատ ծան Վալժանը հիանալի և անարատ մարդ մը պիտի սեպուէր անոր աչքն: Թէ մարդկի իր դիմակը, իսկ եպիսկոպոսը իր երեսը կը տեսնէր, Թէ մարդկի իր կեանքը, իսկ եպիսկոպոսը իր խիղճը կը տեսնէր: Պէտք էր ուրեմն Արտս երթալ, կեղծ ծան Վալժանը ազատել, ճշմարիտ ծան Վալժանը ամբաստանել և յուցնել: Բաւական, ըսուած է թէ զոհողութիւններու ամենէն մեծը, յաղթութիւններու ամենէն կսկծալին, յետին քայլն էր այս, բայց պէտք էր առնուլ այս քայլը: Ցաւալի Ճակատագիր: Աստուծոյ աչքն աւելի Համարուելու Համար կը պարտաւորէր մարդերու աչքն անուանարկի երևալ:

— Քաջ է, ըսաւ, ընեմ ուրեմն այս որոշումը, կատա-

կեմ պարտքս . ազատեմ սա մարդը :

Բարձր ձայնով արտաբերեց այս խօսքերը՝ առանց դիտե՛լու թէ բարձրաձայն կը խօսէր :

Տոմարները առաւ , ստուգեց և կարդադրեց հաշիւները : Արդէն նեռնոց խել մը առնելիքներու մուրհակները զոր նե՛րքին կրոշ պղտի վաճառականներէ առած էր : Նամակ մը գրեց և կնքեց . եթէ նոյն պահուն մարդ մը դռնեցը էր , նամակին պահարանին վրայ յետագայ հասցէն պիտի կարդար .

Ա՛ռ Պաբռն Լաֆիէր . ՚ի Ֆոնթէնպլօ .

՚ի Բարիզ . Աբլոնայէ փողոցը :

Գրասեղանի մը մէջէն թղթակալ մը հանեց , որու մէջ քանի մը դրամատոմս կար , նաև այն անցագիրը , զոր նոյն տարին առած էր ընտրութեանց կեդրոնատեղին երթալու համար :

Ով որ տեսնելու ըլլար զինքը այս զանազան գործերը կատարելու ատեն որոնց հետ կարի ծանր մտախոհութիւն մը կը խառնուէր , անտարակոյս պիտի հասկնար ինչ որ անոր սրտէն կանցնէր : Միայն թէ մերթ ընդ մերթ իր շուրթերը կը շարժէին . երբեմն ալ դլուխը կը վերցնէր և նայուածքը պատին վրայ ծակի մը կուղղէր իբր թէ ձիշդ այն ծակին տեղը բան մ՚ըլլար զոր կուղէր պարզել կամ հարցուփորձել :

Պ . Լաֆիթին գրած նամակն աւարտելէն ետք գրպանը դրաւ ինչպէս նաև թղթակալը , և սկսաւ նորէն քալել :

Իր մտախոհութիւնը նպատակէն չէր շեղած : Տակաւին շա՛րունակ և յայտնապէս կը տեսնէր որ իր պարտաւորութիւնը լուսաւոր տառերով գրուած էր , որոնք իր աչերուն առջև կը փողփողէին և կերևային ուր որ կուղղէր իր նայուածքը : — Գնա՛ , յայտնէ՛ անոնց , ամբաստանէ՛ զինքը :

Կը տեսնէր նոյնպէս այն երկու դաղափարները որոնք կարծես թէ իր առջև զոյգ ձևերով կը շարժէին և որոնք մինչ հիմա իր կեանքի կրկնակի կանոնը եղած էին , այսինքն

պահել իր անունը և սրբագործել իր հոգին : Առաջին անդամն էր որ այս դաղափարները բացարձակապէս տարբեր կերևային իրեն , և կը տեսնէր թէ ինչ տարբերութեամբ իրարմէ կը գատուէին : Կը խոստովանէր թէ այս դաղափարներուն մին հարկաւորապէս լաւ էր , մինչդեռ միւսը կրնար յոռի ըլլալ . թէ առջինը անձնուիրութիւն իսկ երկրորդը անձնասիրութիւն էր . թէ մին ընկերդ կըսէր , միւսն ալ ե՛ս կըսէր . թէ մին լոյսն և միւսն ալ խաւարն դարտադրէր :

Այս երկու դաղափարները կը կռուէին . անի կը տեսնէր այս կռիւը , և քանի որ մտածած էր , այնքան աւելի մեծցեր էին մարքին առջև . հիմա տիտանեան կերևար երկուքին ալ հասակը , և այնպէս կը կարծէր թէ իր ներսը այն անեզր տպարէզին մէջ որոյ վրայօք քիչ մ՚առաջ խօսեցանք , մեծութիւններու և նշոյլներու մէջ ատուածուհի մը տիտանուհի մը հետ կռուէր :

Բոլորովին դրաւուած էր երկիւղով , բայց կը կարծէր թէ լաւ դաղափարն էր յաղթողը :

Կդդար թէ իր խղճին և ճակատագրին երկրորդ որոշիչ վայրկեանը հասած էր . թէ եպիսկոպոսը իր նոր կեանքին առաջին կերդարարը նշանակած էր , և թէ աս Շանմաթիէօն ալ երկրորդ կեանքին կերդարանը կը դծագրէր : Մեծ ձգնաժամն ետք մեծ փորձութիւնը կուգար :

Բայց սակաւ առ սակաւ նորէն եկաւ տենդը որ պահ մը մեղմած էր : Հազարումէկ մտածումներ կանցնէին միտքէն , բայց շարունակ իր որոշմանը մէջ կը հաստատէին զինքը :

Պահ մ՚ըսած էր իրեմէն թէ չափազանց կարևորութիւն մը կուտար դործին . թէ վերջապէս սա Շանմաթիէօն ուշադրութեան արժանի բան մը չէր և թէ անոր ըրածը դողութիւն մ՚էր :

Ցետոյ ինքնիրեն պատասխանեց . — Եթէ այս մարդը իրօք քանի մը խնձոր դողցած է , ամիս մը կը բանտարկուի : Մէկ ամիս բանտարկուելու և թիւրանը նետուելու մէջ մեծ տարբերութիւն կայ : Մանաւանդ թէ նայինք իրաւ է դողնալը :

Մթնէ ապացուցուած է դողութիւնը : Ծան Վալժանի անունն է գինքը Ճնշողը , և կերևայ թէ ապացոյցի հարկ չէողուր : Մթնէ սովորաբար այսպէս չէն վարուիր ահրութեան փաստաբանները : Կը կարծուի թէ զոհ է ան , վասն զի պիտի թէ թիւապարտ մ'է :

Պահ մ'ալ երևակայեցէք որ եթէ ինքզինքը յայտնէր , զուցէ իր այս պնդացնական ընթացքը , եօթը տարիէ ի վեր անյուցած պատուաւոր կեանքը և քաղաքին համար բրած աղէկութիւնները նկատողութեան առնուելով ներում պիտի շնորհուէր իրեն :

Բայց այս ենթադրութիւնն ալ շուտ մ'անհետցաւ : Գտնպէս ժպտեցաւ ան՝ մտածելով թէ Բրթի-Ծերվէյէն երկու ֆրանք զողցած ըլլալով երիցդ անգամ զողութեան ոճիրը գործած պիտի նկատուէր . թէ անշուշտ այս Բրթի-Ծերվէյին պատն ալ երևան պիտի գնէր , և թէ օրինաց տրամադրութեանց համեմատ մշանջենական բանի աշխատութեան պիտի դատապարտուէր :

Ամէն պատիր յոյսերը մէկ գի ըրաւ , հետզհետէ բաժնուեցաւ երկրէս և ուրիշ տեղ փնտռելց մխիթարութիւնը : Ըսաւ ինքնին թէ պէտք էր կատարել իր պարտքը . թէ զուցէ պարտաւորութիւնը կատարելէն ետք ոչ այնքան դժբազդ պիտի ըլլար որքան անոր համատակ վարուելէն ետք , թէ՝ եթէ թողուր որ ըլլայ ինչ որ պիտի ըլլայ , եթէ Մ . . . ամար , իր համարումը , բարի անունը , բարի դրացները , տեսած չարչանքը , պատկառանքը , իր դիմասիրութիւնը , հարստութիւնը , առաքինութիւնը և ժողովուրդին իր վրայ ունեցած սէրը ոճիրով մը համեմուած պիտի ըլլային , և անանկ սոսկալի բանի մը հետ կցուած այս ամէն սրբազան բաները ինչ համ պիտի ունենային . մինչդեռ եթէ թիարանը բանտարկուելով , ցցին կապուելով , առուր կրելով , կանաչ գդակ դրուելով , անընդհատ աշխատեցուելով , անողորմաբար նախատուելով եթէ նահատակուէր , երկնային պաղափարով մը պսակուած պիտի նահատակուէր :

Վերջապէս ըսաւ թէ հարկն էր այսպէս պահանջողը , թէ իր ճակատագիրը այս էր , թէ իշխանութիւն չունէր ի վերուստ եղած կարգադրութիւնը խանգարելու , թէ որ և իցէ պիտի պէտք էր ընտրութիւն մ'ընել , պէտք էր հաւանիլ արտաքուստ առաքինի և ի ներքուստ գղջալու , կամ ի ներքուստ սուրբ և յարատևութեամբ անառաքինի մ'ըլլալու :

Այսքան նոսկալի դաղափարներ յուղելով իր արիութիւնը չէր նուաղեր , բայց ուղղը կը յոգնէր : Ակամայ կախեր ուրիշ բաներու , անտարբեր բաներու վրայ մտածել :

Շնչելը կամ ամէն կը դարնէին քունքին մէջ : Միշտ կը բաբախ ու կուզար : Կը դիշեր զարկաւ նախ ժողովրդապետական եկեղեցին , յետոյ քաղքին խորհրդարանին ժամացոյցը : Երկու ժամացոյցներուն տասներկու անգամ զարնելը համրեց , և երկուքին զանգակներուն ձայնը համեմատեց : Այս տեղիս յիշեց թէ քանի մ'օր առաջ հին երկաթեղէններ վաճառողն մը քալ հին զանգակ մը առած էր որ ծախուելու դրուած էր և որուն վրայ Անդուան Ալեն ԹուՖնվիլ անունը գրուած էր :

Ցուրտ կղզար : Քիչ մը կրակ վառեց , բայց միտքը չկաւ պատուհանը գոցել :

Սակայն նորէն սկսած էր շնաբարել : Կը դիշեր զարնելէն առաջ ինչ բանի վրայ մտածած ըլլալը յիշելու համար բաւական մեծ ջանադրութիւն մ'ընելու տեղեցաւ : Վերջապէս կրցաւ յիշել :

— Ա՛հ , ըսաւ իրմէն , հիմա միտքս եկաւ . որոշեր էի ալ ըլլալը յայտնել ոստիկանութեան :

Եւ յետոյ յանկարծ Ֆանթինը միտքը բնկաւ :

— Աղէկ որ յիշեցի , ըսաւ , հապա ինչ պիտի ըլլայ այս խեղճ կինը :

Հոս նորէն սկսաւ տագնապիլ :

Ֆանթին անահնակ լոյսի մը ճառագայթին պէս կերևար իր մտախոհութեան մէջ : Կարծեց թէ ամէն բանի երևոյթէ

կը փոխուէը իր բոլորքերը, ուստի ազազակեց Լուսովի.

— Ես զարմանամ Լեւլիս. մինչև հիմա միայն ինքզինքս նկատեցի, միայն ինձի պատշաճ եղածը դիտեցի. իմ հաշիւս կրնայ պահանջել որ լսեմ կամ ինքզինքս յայտնեմ, անձս պահեմ կամ հոգիս ազատեմ, անարդ ու չարդուազ մարդիտարոս, կամ անուանարկ ու պատկառելի թիատրոն մ'ըլլամ. լաւ, բայց ես եմ, միշտ ես եմ, մի միայն ես եմ հաշիւս պահանջածը: Բայց, Տէր իմ, ատոնց ամէնն ալ լոկ եսութիւն մ'է: Ամէնն ալ եսութեան զանազան ձևեր են, բայց միշտ եսութիւն կայ գործին մէջ: Պէտք չէ որ քիչ մ'ալ ուրիշներուն մտածեմ: Առաջին սրբութիւնը ուրիշներուն մտածելն է: Տեսնենք, ուրիմ քննենք անգամ մը:

Եթէ ես վերցուիմ, եթէ ես չնչուիմ, եթէ ես մոռցուիմ, ինչ պիտի ըլլայ հետեւութիւնը: — Եթէ յայտնեմ ոչ ըլլալս, պիտի բռնուիմ, սա Շանամաթիէօն պիտի արձակուի, և իր տեղը ես պիտի դնեմ թիարանը. լաւ, բայց եա՞քը: Ի՞նչ պիտի պատահի հոս: Ա՛հ, հոս երկիր մը, քաղաք մը, գործարաններ, արհեստ մը, բանուորներ, մարդեր, կիներ, ծեր մարդեր, մանուկներ, խեղճ մարդեր կան: Ատոնց ամէնն ալ ես կազմեցի, ամէնուն ալ կեանքը ես կուտամ: Ամենուրեք ծխող վառարաններու մէջ վառող փայտը և սանկն մէջ եփող միսը ես տուած եմ. բարեկեցութիւնը, շրջաբերութիւնը, վարիչը հաստատեցի. իմէ առաջ բան մը չկար. բոլոր երկիրը կանգնեցի, կենդանութիւն տալով հաստատեցի, քաջալերեցի, արդիւնաւորեցի, զրկուեցի, ճոխացուցի. եթէ ես պակսիմ, երկիրն հոգին կը պակսի: Եթէ ես վերնամ, ամէն բան պիտի մնայ: Հապա ուր թողում այն կինը, որ այնքան տառապանք կրեց, որ իր անկումին մէջ այնքան վարձատրութիւններու արժանաւոր հանդիսացաւ և որու բոլոր գործադրութեան պատճառ ես եղայ առանց գիտնալու: Ո՞ւր թողում նաև այն մանուկը զոր պիտի երթայի առնելու համար, և զոր մորը խոստացայ բերել և յանձնել:

Մինչ այս կնիկին ըրած գեշութեանս փոխարէն հատուցում մ'ընելու պարտաւոր չեմ: Եթէ անբևեռութեան, ինչ պիտի ըլլայ: Մայրը պիտի մռնի, մանուկն ալ պիտի ըլլայ ինչ որ պիտի ըլլայ: Ահա ատոնք են ըլլալիք բաները, եթէ ամբաստանեմ ինքզինքս: Իսկ եթէ չամբաստանեմ. նայինք ինչ հետեւութիւն կունենայ եթէ չամբաստանուիմ:

Այս հարցումը ինքնիրեն ուղղելէն ետք կանգ առաւ. ժամանակ մը կարծես թէ դեղեցաւ և դողաց. բայց քիչ տևեց այս ժամանակը, և հանդարտօրէն պատասխանեց ինքն իրեն.

— Եթէ լսելու ըլլամ, ան մարդը ստոյգ է թէ թիարան կը դնեմ, և ինչպէս չպիտի դնեմ քանի որ գողութիւն ըրաւ: Եթէ բան չունիմ, Թողս ըսեմ թէ գողութիւն չըրաւ, բայց ըրաւ: Իսկ ես հոս կը մնամ, կը շարունակեմ: Ցասը տարուան մէջ տասը միլիոն կը շահիմ, և երկրին չորս կողմը կը ցրուեմ. ես բան մը չեմ ուզեր. ինչ պիտի ընեմ: Ինչ որ կընեմ, ինձի համար չէ: Ամենուն բարեբաստութիւնը հետ գտնեմ կածի, արուեստները ոսկի կառնուն և կը զարգուին, տարազի գործարանները և ուրիշ ամէն տեսակ գործածանոյշները կը բազմապատկին, ընտանիքները, հարիւրաւոր, հազարաւոր ընտանիքներ երջանիկ կըլլան, գաւառը կը բազմամարդի. ուր որ միայն ագարակներ կան, գիւղեր կը հաստատուին. ուր որ բան մը չկայ, ագարակներ կը գոյանան. Թշուառութիւնը կանհետի, և թշուառութեան հետ կանհետին նաև անառակութիւնը, բռզութիւնը, գողութիւնը, մարդասպանութիւնը, ամէն մոլութիւնները, ամէն ոճիրները: Ան խեղճ կինն ալ իր գաւակը կը տնէ: Եւ ահա այսպէս ամբողջ գաւառի մը բնակիչները հարուստ և պարկեշտ կըլլան: Ցիրաւի խենդ մ'էի, այլանդակ մարդ մ'էի երբ ինքզինքս կատարեալ եսութեան մատնելու խօսքեր կընէի քիչ մ'առաջ: Իրաւ կըսեմ որ պէտք է ուշադրութիւն ընել և ամենևին բան մը չընել առանց խորհրդածելու: Ինչ, ես և անձն

ձեւանալու համար, որ վերջապէս կատակերգութիւն կը համարուի. ինչ, ինծի, ու միայն ինծի մահաձեւ, և չդիտեմ գո՛վ, դող մը, անշուշտ անառակ մը սակաւ ինչ չափազանց բայց վերջապէս արդարացի պատիժ մ՚ազատած ըլլալու համար թաղո՛ւիլ որ ամբողջ երիկը մը կորուստի մտանուի. թողո՛ւլ որ խեղճ կին մը հիւանդանոցը և խեղճ պզտիկ աղջիկ մ՚ալ փղոցը քարին վրայ շունի պէս սատկի, մայրը առանց անդամ մ՚ալ տեսնելու զաւակը, զաւակն ալ զրկեթէ առանց ճանչցած ըլլալու իր մայրը: Ա՛հ, ասանկ գարշելի բան մը կրնա՞յ ըլլալ: Եւ ինչ պատճառաւ. սա խնճորի դող թշուառական ծերին համար որ անշուշտ թիսարանը նետուելու արժանի եղած է եթէ ոչ այս գողութեան, անշուշտ ուրիշ բանի մը համար: Ինչ զեղչիկի խղճահարութիւն որ անմեղներ կը զոհէ յանցաւոր մ՚ազատելու համար. որ ամբողջ ժողովուրդ մը, մայրեր, կիներ, մանուկներ կը զոհէ՝ ազատելու համար այնպիսի ծեր դատարկապորտ մը որ ըլլայ ըլլայ քանի մը տարի ևս կրնայ ապրիլ և որ իր խրճիթին մէջ կրնայ թշուառութենէ դրեթէ աւելի թշուառութիւն մը չտիսի կրնէ: Զոհել նահ սա խեղճ պզտի Գօգեթը, որուն միայն աերը ես եմ աշխարհիս մէջ և որ հիմա ցուրտէն կատղած գարձած է սա Թէնարտիէին խցիկը: — Ա՛ռ քեզի ուրիշ սինլքոր մ՚ալ: — Եւ այս ամէն խեղճ անձերուն նկատմամբ ունեցած պարտաւորութիւնս չկատարեմ. ես երթամ ինքզինքս մատնեմ. ես այսպիսի անհեդեդ անմտութիւն մ՚ընեմ: Ամենէն դէշը մտածենք: Ենթադրենք թէ այս պարագայի մէջ յատի գործ մ՚ըրած պիտի ըլլամ և թէ օր մը խղճէս պիտի յանդիմանուիմ ասոր համար, ուրիշին աղէտութեանը համար այս յանդիմանութիւնները ընդունիլը, ո՞րոնք մի միայն ինձ պիտի պատկանին, այն յատի գործը որ միայն իմ հոգիս կը վտանգէ, ձշմարիտ անձնասիրութիւն է, ձշմարիտ առաքինութիւն է:

Ոտքի վրայ ելաւ և նորէն սկսաւ քայլել: Այս անգամ կը կարծէր թէ ցո՞ւրտ է:

Ոգեմանդնները երիկին խաւարին տեղը կը պատուին միայն. ձշմարտութիւնները մութին անպատնդին մէջ կը դըտնուին: Ան՞պէս կը կարծէր թէ այս անպատնդին մինչև յատակը իջնելէն ետք, ամենէն խաւարին տեղերը տո՞ւ խաբխափս հետազօտելէն ետք այն ոգեմանդներուն մին, այն ձշմարտութիւններուն մին վերջապէս գտած էր. թէ իր ձեռքը բռնած էր գայն և թէ անոր նայելով կը ըլլանար:

— Ա՛յ, ըսաւ մտապէս, աս էր փնտռածս: Ձշմարիտն ալ աս է: Ա՛լ գժուարութիւնը լուծուեցաւ: Վերջապէս պէտք է եղրակացութիւն մը տալ: Ա՛լ որոշեցի: Կը թողում որ ինչ կուզէ ըլլայ: Ա՛լ ոչ կերթամ, ոչ ալ կընկրկիմ: Չէ թէ իմ այլ ամենուն շահը այսպէս վարուիլ կը պահանջէ: Մատրէնն եմ, Մատրէնն կը մնամ: Վա՛յ անոր որ ծան վալժան է: Ես ծան վալժան չեմ ալ: Չեմ ճանչնար այդ մարդը. չեմ գիտեր թէ ինչ է այն. եթէ այս վայրկեանիս կայ այնպիսի մէկը որ ծան վալժանն է, թող իր գլխին ճարը նայի: Ատ ինծի չվերաբերիր: Ադեմասլն ա՞նուն մ՚է այն որ՚ի խաւարի կը ծիպայ. եթէ գլուխ մը վրայ կանգ առնու և խնայ, ան ալ հոգս չէ:

Զմինէային վրայ դրուած պզտի հայելիին նայեցաւ անդամ մը և ըսաւ.

— Ի՞նչ գարմանք, որոշում մ՚առնելովս միխթարուեցայ: Հիմա բոլորովին տարբեր մարդ մ՚եմ:

Քանի մը քայլ ևս առաւ, յետոյ յանկարծ կանգ առաւ:

— Օ՛ն, ըսաւ, պէտք չէ վարանիլ այս որոշումին հետևութեանց և ոչ միւսուն առջև: Տակաւին կան կապեր, որոնցմով այս ծան վալժանին հետ կապուած եմ: Պէտք է այս կապերն ալ կտրել: Դայն խակ այս սենեկիս մէջ կան բաներ որք կրնան գիս ամբաստանել. անմտութենչ բաներ որք կրնան վկաներ ըլլալ. որոշեցի. պէտք որ անոնք ալ անհետին:

Գրպանը խառնեց, քսակը հանեց, բացաւ և մէջէն պզտիկ քանալի մ՚առաւ:

Այս բանալին կղպակի մը ծակէն ներս խօթեց, այս ծակը հազիւ հազ կերեւար, վասն զի պատին փակած թուղթին վրայի նկարին ամենէն մութ դոյներուն հետ կորուսուած էր։ Թաղտաղ մը բացուեցաւ. այս թաղտաղը պատին անկիւնին և չինէ-պային ցցուած մասին մէջ տեղը շինուած տեսակ մը շինծու պահարան մ'էր։ Այս թաղտաղին մէջ քանի մը հնոտիներ կար. կապտագոյն կտաւէ թիկնոց մը, հին բանթալըն մը, հին պայուսակ մը և երկու ծայրը երկաթազամ հատ և փշոտ գաւազան մը։ Որոնք որ տեսած էին ծան Վալժանը 8...էն անցած ժամանակ, այս ողբմելի հագուստին ամէն մէկ կտորը դիւրաւ պիտի ճանչնային։

Պահած էր այս հնոտիները, ինչպէս պահած էր նաև արծաթեայ աշտանակները՝ իր նախնական վիճակը յիշելու համար։ Միայն թէ հնոտիները կը պահէր, վասն զի թիւրատնէն եկած էին, և աշտանակները կը ցուցնէր, վասն զի եպիսկոպոսէն եկած էին։

Գաղտնապէս դեպ 'ի դուռը նայեցաւ անդամ մը, կարծես վախնալով որ չքացուի, թէև պարզունակով գոյուած էր. յետոյ ուժգնակի և յանկարծական շարժումով մը, երկու թևովը մէկէն հնոտիները, գաւազանը, պայուսակը առաւ, և ամէնն ալ կրակը նետեց առանց և ոչ անգամ մ'ալ նայելու այն իրերուն զոր այնքան տարիներէ 'ի վեր մեծ եռանդագութեամբ և մեծ վառնդով պահած էր։

Թաղուն պահարանը նորէն դոցեց, և ամենամեծ զգուշութիւններով մեծ կարասի մ'առոր առջև հրեց՝ դուռը պահելու համար, թէև այս զգուշութիւնները աւելորդ ըլլային քանի որ ալ բան մը չկար պահարանին մէջ։

Քանի մը մանրերկրորդէ ետք սենեակը և դիմացի պատը կարմիր և դողդոջուն լոյսերով լուսաւորուեցան։ Ամէնն ալ կայրէր, փշոտ գաւազանը կը շառաչէր և սենեկին միջնէ մէջ տեղը կայծեր կարձակէր։

Պայուսակը երբ վառելով մոխիր եղաւ իր պարունակած

առակաց հնոտիներուն հետ, մոխիրին մէջ բան մը տեսնուեցաւ որ կը փայլէր։ Ծուռելով նայող մը դիւրաւ պիտի տեսնէր թէ արծաթեայ դրամ մ'էր այն։ Անշուշտ այն երկու ֆրանքնոց դրամը որ պզտիկ Ծաւրսիէն ղողցուած էր։

Բայց չէր նայեր կրակին և կը քայլէր՝ միշտ մի և նոյն քայլով երթևեկելով։

Ճանկարծ աչերը երկու արծաթեայ աշտանակները տեսան, զոր կրակին լոյսը չմնէային վրայ վեր 'ի վեր կը ցոլացնէր։

— Աղէկ որ տեսայ, ըսաւ մտապէս. անոնք ալ տակաւին կատարեալապէս ծան Վալժան կը նշանակեն։ Պէտք է ջնջել նաև զանոնք։

Աշտանակներն ալ առաւ։

Շուտ մ'առնոց ձևը փոխելու և անճանաչելի զանգուած մ'ընելու չափ կրակ կար տակաւին։

Դէպ 'ի վառարանը ծռուեցաւ և պահ մը տաքցաւ։ Ճշմարիտ երանութիւն մը զգաց, պառաւական չերմութիւն, ըսաւ։

Աշտանակներուն մէկովը խարոյկը խառնեց։ Եթէ վայրկեան մ'ևս անցած ըլլար, աշտանակները արդէն կրակը նետուած պիտի ըլլային։ Նոյն վայրկենին կարծեց ձայն մը լսել իր ներսէն որ կը պոռար. — ծան Վալժան, ծան Վալժան։

Մազերը անկուեցան. նմանեցաւ այնպիսի մարդու մը որ ահարկու բան մը կը լսէ։

— Այ, այդպէս վարուէ, լմնցուր, կըսէր ձայնը։ Անթերի կերպով կատարէ ինչ որ կընես. ջնջէ այդ աշտանակները, անհետէ այդ յիշատակը. մոռցիր եպիսկոպոսը. մոռցիր ամէն բան. մոռցուր սա Ճանմաթիէօն. շարունակէ, շատ լաւ։ Կեցցես։ Ա՛լ կարգադրուեցաւ գործը, ալ որոշուեցաւ, ալ ըսելիք չկայ. ահաւասիկ մարդ մը, ահաւասիկ ծեր մը որ չդիտեր թէ ինչ կուզուի իրմէ, որ գուցէ բան մը չըրաւ. անմեղ մը որ անունիդ ներքև կը ձնշուի իբր ոճրապարծութեան մը պատասխանատուութեան տակ. որ պիտի կարծուի թէ դու ես, որ պիտի պատապարտուի և որ իբր օ-

բերը անուանարիութեամբ և սոսկումով պիտի անցնէ, քանի է: Իսկ դու պատուաւոր մարդ եղիր: Պարոն քաղաքապետ եղիր, յարգելի և յարգուած մնայիր, քաղաքը ձոխացուր, գործարանը կերակրէ, օրբեր մնծցուր, երանութեամբ, ա- ռաքինութեամբ և ամէնուն զարմանքը գրաւելով ապրէ, և մինչդեռ դու հոս ուրախութեան և լոյսի մէջ օրեր պիտի անցունես, պիտի ըլլայ մարդ մը որ քու կարմիր տատասկիդ պիտի գրուի, որ քու անունդ պիտի կրէ նշաւակութեամբ և Թիարանի բանտը քու շրթայարդ պիտի կապուի: Այո՛, ասի լաւ կարդադրութիւն մ'է քու համար: Ա՛հ, Թշուառա- կանդ դու:

Ձակատն քրտինք կը վաղէր: Ապշութեամբ աշխանակնե- րուն կը նայէր ուղղակի: Բայց իր ներսէն խօսող ձայնը դեռ լռեցուցած չէր խօսքը: Ձայնը դեռ կը շարունակէր:

— Ծան Վալժան, քու բոլորակդ շատ ձայներ պիտի ըղ- ծուին որոնք մեծ աղմուկ մը պիտի հանեն, քարեր պիտի խօ- սին, և պիտի օրհնեն զրեղ, բայց ուրիշ ձայն մ'ալ պիտի ըլլայ, զոր ոչ ոք պիտի լսէ և որ 'ի խաւարի պիտի անիծէ քեզ: Մարդ երբ ուրնայ, վատ դու. այն ամէն օրհնութիւն- ները երկինք չհասած վար պիտի իյնան, և միայն անէծքը մինչև աս Աստուած պիտի բարձրանայ:

Այս ձայնը որ 'ի սկզբան խիստ մեղմ էր և որ իր խղճին ամենէն մութ խորերէն եկած էր, աստիճանաբար մեծ և ա- հարկու ձայն մ'եղած էր, և հիմա անոր ականջին կը հընչէր: Այնպէս կը կարծէր թէ իրմէ եկած էր այն, և թէ հիմա դուրսէն կը խօսէր իրեն: Վերջին խօսքերը այնքան որոշապէս լսել կարծեց որ տեսակ մը սարսափով համակուած՝ սեղակին չորս կողմը նայեցաւ:

— Ո՞վ կայ հոս, հարցուց բարձր ձայնով և բոլորովին շուարած:

Յետոյ կրկնեց այնպիսի խնդումով մը որ ապուշի մը խըն- գումին կը նմանէր:

— Ապուշ եմ, ինչ եմ. ոչ ոք կրնայ պատուիլ հոս:

Այո՛, սեղակին մէջ մկը կար. բայց չէր այն էակները կարղէն զոր կրնայ մարդկային աչքը տեսնել:

Աշտանակները չվնէային վրայ դրաւ:

Եւ նորէն սկսաւ քայլել այն միաձև և սխուր քայլով որ վարի սեղեակը պահակող մարդը երակին մէջ կը խռովէր և յանկարծ կարճնդնէր:

Այսպէս քայլելովը կը փիլիսոփայէր ու միտքը կը շուարէր: Կարծես թէ երբեմն մարդս վճռադական պարա- պաներու մէջ կը շարժի որպէս զի տեղափոխութեամբ ինչ բանի որ հանդիպի խորհուրդ հարցունէ: Քանի մը վայրկեան եաք ալ չէր գիտեր թէ ինչ կացութեան մէջ է:

Հիմա հաւասար սոսկումով մը կրնկրկէր երկու որոշում- ուն առջև զոր փափխակի ըրած էր: Ձինքը խրատող պա- ղատիարներուն երկուքն ալ հաւասարապէս ազէտալի կերևա- յին: — Ե՛նչ ազէտալի բաղդ, ինչ դիպուած յորում սա Շանմաթիէօն կը կարծուէը նոյն ինքն ծան Վալժանն բլ- լալ: Գահավիժիլ ձիշդ այն միջոցով զոր կարծես թէ 'ի սկզբան նախախնամութիւնը 'ի զորձ կը դնէր զան հաստա- տելու համար:

Պահ մ'ապագան նկատէց: Ինքզինքը մատնելու, յանձ- նելու գաղափարէն ահաբեկեցաւ, Աստուած իմ, ազաղակե- լով ներքին: Անբաւ յուսահատութեամբ մ'երևակայեց թէ ինչերէ պիտի պարտաւորէր զրկուիլ և թէ ինչեր պիտի կրէր նորէն: Ա՛լ պէտք էր ուրեմն մնաս բարեաւ ըսել իր այն պատուական, անարատ և փառաւոր կեանքին, ամենէն վա- յելած յարգանքին, պատիւին, ազատութեանը: Ա՛լ չպիտի երթար գաշտերը պարտեզու, ա՛լ մայիսի մէջ թռչուններու երգը չպիտի լսէր. ա՛լ պզտի մանկանց ողորմութիւն չպիտի տար: Ա՛լ չպիտի զգար իր վրայ հաստատուած երախտագէտ և սիրաւէտ հայուածներու անուշութիւնը: Պիտի բաժնուէր այն տունէն զոր ինք շինած էր, պիտի բաժնուէր իր այն

պղտի սենեկէն : Ամէն բան նոյն ժամուն սիրուն կերեւար իրեն : Ա՛լ չլիտի կարդար իր գիրքերը , ա՛լ պիր չլիտի գրէր իր փայտէ պզտի և սպիտակ սեղանին վրայ : Իր պատաւ պըռնատուհին , իր այն միակ սպասուհին ա՛լ առաւօտները իր սուրճը չլիտի բերէր : Ո՛վ Աստուած , այս ամէն վայելքմ ներու պիտի յաջորդէին բոլոր թիապարաններու ընկերութիւնը , անուրը , կամիքը տատասկը , չղմայն , յոգնութիւնը , խաւարին բանտը , փայտէ անկողինը , վերջապէս այն ամէն սոսկալի բաները որք արդէն ծանօթ են : Մանաւանդ արդի հասակին մէջ և ներկայ վիճակը սասցած ըլլալէն ետք այսպիսի սոսկալի կեանքի մը դատապարտուիլ , դէթ երիտասարդ ըլլար . բայց ա՛լ ծերութեան հասակը մտած ըլլալ , որ և է անձի արհամարհական խօսուածքին ենթարկիլ , վրան գլուխը թիապարաներ պահնորդին նայուիլ , և անոնց ոտիկանին դատաւանի հարուածներ ընդունիլ : Առանց զուլայի երկաթապատ մուճակներ հագնիլ : Առտու և իրիկուն ոտնօղակը (manille) նայող պահնորդին կռանին երկնցնել ոտքը : Օտարականներու հետաքրքրութեան ենթարկիլ որոնց պիտի ըսուի . — Ասիկ այն հմայքաւոր ժան Վալժանն է որ Մ . . . ի +աղ+ոպետն եղած է : Իրիկուան դէմ քրտինքով ողողուած , յոգնութեամբ ձնշուած , կանաչ գործը աչերուն վրայ լծկեցած , յիսնապետին մտրակը ուսերով ուրիշ թիապարտի մը հետ նաւական բանին սանդուղքն վեր երթալ : Ո՛հ , ինչ թշուառութիւն : Ճակատագիրը կրնայ ուրեմն իմայական էակի մը պէս չար , և մարդկային սրտին պէս անպատրոյն ըլլալ :

Եւ ինչ ընելու ա՛լ ըլլար , միշտ սա կսկծալի երկայրաբանութենէն չէր ազատեր , որու վրայ կը մտախոհէր բոլորովին : — Դրախտին մէջ ձայլ և հոն գէմ մ'ըլլալ , դժոխքը ձայլ և հոն հրեշտակ մ'ըլլալ :

Ինչ ընեմ , Աստուած իմ , ինչ ընեմ :

Նորէն սկսաւ սրտին մէջ յուզուիլ այն փոթորիկը որմէ այնքան դժուարութեամբ ազատած էր : Գաղափարները նո-

ւիէն խառնուիլ սկսան : Յուսահատութեան յատուկ չափ ու մեմ ինչ թմրեցուցիչ և մեքենայական անըմբռնելի հանգամանք մը սասցան : Անընդհատ Թօմ Նվիլի անունը միտքը կուգար երիւ տուն երգով մը զոր ուրիշ ժամանակ լսած էր : Նը մտածէր թէ Թօմ Նվիլ Բարիզի քով պզտի անտառ մ'է ուր սիրահար երիտասարդները ապրելի մէջ շեփորուկ ժողվելու կերթան :

Ինչպէս յարատեւ , նոյնպէս և ՚ի ներքուստ կերերար : Նը քայլէր պզտի մանուկի մը պէս որու թոյլ կը տրուի որպէս զի քայլէ :

Մերթ ընդ մերթ իր յոգնութեանը հետ կուռելով կը ջանար նորէն ուշ ըլլալու իր մտքին : Վերջին անգամ մ'ալ և որոշապէս լուծելու համար կաշխատէր իրեն ներկայել այն խնդիրը զոր այնքան յուզելով յոգնած և յուսահատած էր : — Պէտք է յայտնել իր մէվ ըլլալը : — Պէտք է լսել : Զէր յաջողեր որոշապէս բան մը տեսնելու : Իր մտախոհութեան ծրագրած բոլոր պատճառաբանութեանց անորոշ տեսիլները կը շարժէին և մի առ մի մուխի պէս կը ցնդէին : Կզգար մի միայն թէ ինչ որոշում որ ընէր , հարկաւորապէս և առանց ազատիլ կարենալու իրմէ բան մը պիտի պահէր , պիտի մոռնէր , թէ պերեզման մը կը մնար աչ կողմն ալ ձախ կողմն ալ . թէ հոգեվարք մը կը կրէր . իր երանութեան կամ առաքինութեան հոգեվարքը կը կրէր :

Բարե , նորէն սկսեր էին իր բոլոր վարանումները : Ուր որ էր ՚ի սկզբան , հոն կը դառնուէր նաև հիմա :

Ահա այսպէս տատապելով կը յուզուէր թշուառը : Այն խորհրդաւոր էակը որու վրայ կամիքաւին մարդկութեան ամէն սրբութիւններն և ամէն վիշտերը , հազար ուղի հարիւր տարի առաջ՝ մինչդեռ ձիթենիները անեղութեան աչեհաղուստ հովէն կը սասանէին , այս թշուառին պէս շատ ժամանակ ձեռքովը շուրթերէն կը հեռացնէր այն ահարկու բաժակը որմէ մարմնութիւն և խաւար կարասհասեր ուղածքէն և որ աստեղափայլ անդունդներու մէջէն կելլար :

ԳԼՈՒԽ Գ.

ՋՈՒՆԻ ՄԻՋ ՎՕՏՏԻՆ ԸՆԹՈՒՆԱԾ ՉԱՓԸՐՋ

Ա ԹՈՒՕՏՆԱՆ ժամը երեքը կը զարնէր. հինգ ժամէ՛ն վեր պրեթէ ածընդհատ քալելէն ետք վերջապէս մեքենայարար իր ամօտին վրայ նստաւ։

Քնացաւ հոն և երազ մը տեսաւ։

Շատ երազներու պէս այս երազն ալ չդիտեմ ինչ ահաւոր և կսկծալի հանդամանքով մը միայն վերաբերութիւն ունէր իր ներկայ կացութեան հետ. բայց ապահովութիւն ըրաւ վրան։ Այս սոսկալի երազը այնքան զարմանք տուաւ աղոր որ նաքէն պրի տուաւ։ Իր ձգած ձեռագիրներուն մէջն ալ այս է։ Կը կարծենք թէ այն բանն ալ կէտ առ կէտ հոս նշանակելու պարտաւոր ենք։

Ինչ և ըլլայ այս երազը, եթէ զանոյ ընելու ըլլանք, այն պիչերուան պատմութիւնը անկատար մնացած պիտի ըլլայ։ Հիւանդ սրտի մը ախորալի արիացն է այն։

Աչառահիլ այս երազը։ Պահարանին վրայ սա տողը կըրուած է. Այն գիշերուան պահուն եղած։

« Գաշտի մը մէջ էի։ Ընդարձակ և տրտմահիլ գաշտ մը ուր խոտ չկար։ Ձէի կրնար լաւ մը դիտել թէ ցորկի էր թէ գիշեր։

« Կը պարտէի եղբօրս հետ, որ մանկութենէն հասակի եղբայրս էր, այն եղբայրս զոր կը պարտաւորիմ խոստովանիլ թէ բնաւ միտքս չեմ բերեր և զոր պրեթէ ալ չեմ յիշեր։

« Կը խօսակցէինք, և անցորդներու կը հանդիպէինք։ Կը խօսէինք գրոյի ինչ մը վրայ զոր ժամանակաւ ունեցած էինք և որ փաղցին վրայ քնակիլ սկսելէ ի վեր միշտ պատուհանը բաց թողլով կաշխատէր։ Կը խօսակցէինք ու միանգամայն ցաւերս կզղայինք այն պատուհանը բաց ձգուած ըլլալուն համար։

« Գաշտին մէջ ծառ չկար։

« Մարդ մը տեսանք որ մեր քովէն անցաւ։ Այս մարդը բոլորովին մերկ էր, գոյնը մխրճապոյն էր և չորպոյն ձիի մը վրայ հեծած էր։

« Մարդը մազ չունէր. գանկը կը տեսնուէր, և գանկին վրան ալ երակներ կը տեսնուէին։ Ձեռքը նաւրք գաւազան մը բռնած էր որ օրթատունկի բարունակի մը պէս գիւրակոր և երկաթի պէս ծանր էր։ Այս ձիաւորը անցաւ և մեզի բան մը չըսաւ։

« Եղբայրս ըսաւ ինձ. Սա խորունկ Ջամբայէն երթանք։

« Խորունկ Ջամբայ մը կար ուր ոչ թուփ մը և ոչ ալ մամուռի չիւղ մը կը տեսնուէր։ Ամէն բան, նաև երկինք հողի գոյն ունէր։ Քանի մը րոպէէն ետք երբ կը խօսէի, պատասխան տուողչեղաւ ինծի։ Գիտէի որ եղբայրս ալ հետս չէր։ Գիւղ մը տեսայ և հոն գացի։ Մտածեցի թէ Թօմէնվիլ գիւղը այն ըլլալու է (ինչու Թօմէնվիլ*)։

« Առաջին փողոցը ուր մտայ, ամայի էր։ Երկրորդ փողոց մը մտայ. այս երկու փողոցին կազմած անկիւնին եռանը պատին քով կայնած մարդ մը կար. Հարցուցի այս մարդին. — Ինչպէս կանուանի այս գիւղը. ուր կը գտնուիմ։ Մարդը պատասխան չտուաւ։ Տեսայ որ տունի մը դուռը բաց էր, ուստի ներս մտայ։

« Առաջին սենեակը մարդ չկար։ Երկրորդ սենեակը մտայ. այս սենեկին դռան եռանկ և պատին քով ատրի վրայ կայնած մարդ մը կար։ Այս մարդին հարցուցի. — Որո՞ւ է այս տունը, ուր կը գտնուիմ։ Մարդը պատասխան չտուաւ։ Տունը պարապ մ'ունէր։

« Տունէն դուրս ելայ և պարապը մտայ։ Պարապին մէջ մարդ չկար։ Առաջին ծառին եռանկ մարդ մը տեսայ որ ատրի վրայ կայնած էր։ Ըսի այս մարդին. — Որո՞ւ է այս պարապը, ուր եմ։ Մարդը պատասխան չտուաւ։

* Այս փակագիծը ձեռքով վալժանի ձեռքով դրուած է։

« Գիւղին մէջ թափառեցայ , և դիտեցի որ քաղաք մ՚էր այն : Բոլոր փողոցները ամայի էին . ամէն դուռ բայ էր : Փողոցներէն ամենևին կենդանի էակ մը չէր անցներ , սենեակներուն մէջ չէր քայլեր կամ պարտէզներու մէջ չէր պարտեր : Բայց ամէն պատի անկիւնին նաևը , ամէն դուռի եաևը , ամէն ծառի եաևը մարդ մը կար որ կը լսէր : Ամենուրեք մէկն աւելի մարդ էր տեսնուելը :

« Քաղաքէն դուրս ելայ և դաշտերը երթալով սկսայ քայլել :

« Քանի մը վայրկեան ետք նաև դարձայ և ահագին բազմութիւն մը տեսայ որ եաևէս կուգար : Ճանչցայ ամէնքն ալ որոնք քաղաքին մէջ տեսած մարդերս էին : Տարօրինակ դէմքեր ունէին : Չէր երեար թէ կամապարէին , այլ սահկային իրմէ աւելի շուտ կը քայլէին : Կը քայլէին առանց ձայն մը հանելու : Այս բազմութիւնը մէկ վայրկեան մէջ քովս եկաւ և դիս պաշարեց : Այս մարդերուն երեսը հողի գոյն ունէր :

« Անատեն այն առաջին մարդը զոր քաղաքը մտնելով տեսած և իրեն հարցուցի մ՚բրած էի , ըսաւ ինձ . — Ո՞ւր կերթաս : Միթէ չգիտե՞ս որ երկար ժամանակէ ՚ի վեր մեռած ես դուն :

« Ներանաս բայց պատասխան տալու համար , բայց դիտեցի որ բոլորիքս մարդ մը չէիր »:

Երբ արթնցայ , յուրտէն սառած էր : Բայց մեացած պատուհանին փեղկերը ծխնիներուն վրայ կը դառնային հովէն շարժելով որ առաւօտուան հովին պէս ցրտաշունչ էր : Կրակը մարած էր : Մոմն ալ հանելու վրայ էր : Տակաւին դիշերային խաւարը փարատուած չէր :

Ոտքի վրայ ելայ և պատուհանին քովը դնայ : Երկնից վրայ տակաւին աստղ չէրար :

Այս պատուհանէն տունին դաւիթը և փողոցը կերեւար :

Ցանկարծ վրէն անախորժ և բիրտ ձայն մը լսելով վար նայեցայ :

Վար նայելով երկու կարմիր աստղ տեսայ , որոնց ճառագայթները մութին մէջ տարօրինակ կերպով մը կերկնային և կը կարճէին :

Եւ որովհետև տակաւին երանգն մառախուղին մէջ կիսովին ընկղմած էր , ինչ զարմանք , ըսաւ մտովին , երկնից վրայ աստղ չկայ : Հիմա երիրիս վրայ են :

Բայց այս շփոթը փարատեցաւ . առաջինին նման երկրորդ ձայն մ՚ևս առնելով բոլորովին արթնցայ , նայեցայ , և տեսայ որ այն երկու աստղերը կատի մ՚երկու կանթեղներն էին : Այս կանթեղներուն լոյսէն կատին ձևն ալ կրցայ նշմարել : Երկաթիւ էր այն , որու սպիտակ ձի մը յծուած էր : Լսած ձայնն ալ երիվարին ոտքը քարայատակին զարնելով հանած ձայնն էր :

— Ի՞նչ է այս կառքը , ըսաւ ինքզինքիս : Ո՞վ է այսքան կանուխ հոս եկողը :

Նոյն պահուն մեղմովին իր սենեկին դուռը զարնուեցաւ : Մարմնովին սարսուռ մը զգայց և սոսկալի ձայնով մը պօռացի :

— Ո՞վ է ան :

Մէկը պատասխանեց .

— Ե՛ս , պարոն քաղաքապետ :

Հասկցայ որ պատասխան տուողը դռնապանուհի պառաւն էր :

— Ի՛նչ կայ , ինչ կուզես :

— Ծամը ճիշդ հինգն է , պարոն քաղաքապետ :

— Ինծի ի՞նչ :

— Կառքը եկաւ , պարոն քաղաքապետ »

— Ի՞նչ կառք :

— Երկանիւ կառքը :

— Ի՞նչ երկանիւ կառք :

— Միթէ երկանիւ կառք մը բերել չտուիք :

— Ոչ , ըսաւ :

— Դառապանը կըսէ թէ ձեզ տեսնել կուզէ :

— Ո՞վ է կառապան ըսածդ :

— Պ. Սգօֆէրին կառապանը :

— Պ. Սգօֆէրին :

Այս անունը երբ լսեց , դողայ իրը թէ երեսին առջևէն կայծակ մ՚անցած ըլլար :

— Ա՛հ , այո՛ , Պ. Սգօֆէրը , ըսաւ :

Եթէ պառաւ կինը նոյն պահուն կարենար տեսնել դէմ , պիտի ահաբեկէր :

Բաւական երկար լռութիւն մը տիրեց : Շուարած կերպարանով մը մտին բոցը կը քննէր և պատրոյդին բոլորտիքէն պրելու չափ տաք մոմ կառնուր և մատերուն մէջ կոլորէր : Պառաւը կսպասէր : Բայց համարձակեցաւ ձայնը հանելու և հարցնելու :

— Պ. քաղաքապետ , ինչ պատասխան տամ :

— Ըսէ որ սպասէ քիչ մը . հիմա կիջնեմ :

ԳԼՈՒԽ Ե.

ԸՐԳԵԼՆԵՐ

Այն ժամանակ Արասէն Մ. . . երթևեկող սուրհանդակները կայսրութեան ժամանակ հաստատուած պղպի դեսպակներով կերթևեկէին : Այս սուրհանդակի դեսպակները երկանիւ կառքեր էին , որոնց ներսի կողմը չեկապոյն կաշիով ծածկուած էր . Այս կառքերը պատուականաձև զսպանակներու վրայ կը դրուէին , և միայն երկու նստելու տեղ ունէին , մին սուրհանդակին և միւսը Ճամբորդին համար : Անիւները երկայն միջնանիւներ ունէին որոնց պաշտօնն էր փեսսել և հեռաւոր տիպել մի և նոյն Ճամբէն անցնող կառքերը քիչ մը հեռուէն երթալու . Ամանիայի Ճամբաներուն վրայ ասանկ միջնանիւներ ունեցող կառքեր դեռ կը տեսնուին :

Նամակի արկղը որ ահագին երկայն տուփ մ՚է , կառքին

ձախը կը դրուէր և ետևը մարմինին մէկ մասը կը կազմէր : Արկղը սև և կառքն ալ դեղին գոյնով ներկուած էր :

Զիտնամ ինչ ձեռ և սպասաւոր երևոյթ մ՚ունէին այս կառքերը որոնց նմանը այսօր ամենևին չկայնուիր : Հեռուէն այս կառքերուն անցնիլը և հորիզոնէն Ճամբու մը մէջ անոնց սղալը տեսնող մը կրնար կարծել թէ անոնք կը նմանին այն գեղեւոնեներուն , որոնք կարծեմ թէ սպիտակ մրջնին կանուանին և որոնց պղպի իրանը եռևէն բազմաթիւ ուղեկիցներու շարք մը կը տանի քաշելով : Այս կառքերը շատապ կերթային : Արասի սուրհանդակին կառքը ամէն դիշեր՝ Բարիզի սուրհանդակը անցնելէն հաք ժամը մէկին կը մեկնէր , և առտու ժամը հինգէն քիչ մ՚առաջ Մ. . . կը հասնէր :

Այն դիշերը հէսաէնի Ճամբէն Մ. . . եկող սուրհանդակին կառքը փողոցի մ՚անկիւնէն քաղաքը մտնելու վայրկենին պղպի երկանիւ կառքի մը հետ զարնուեցաւ , որու սպիտակ երիվար մը լծուած էր : Այս երկանիւ կառքը սուրհանդակին կառքին հակառակ ուղղութեամբը կուգար , և մէջը մէկ անձ կար միայն , որ էր վերարկուով պլլուած մարդ մը : Երկանիւ կառքին անիւը բաւական ուժգին հարուած մը կերաւ : Սուրհանդակը ձայն տուաւ մարդուն որ կանգ առնու , բայց Ճամբորդը մանիկ չըրաւ և արշաւելով իր Ճամբան շարունակեց :

— Ահա խիստ տհպոդական գործ մ՚ունեցող մարդ մը , ըսաւ սուրհանդակը :

Ճամբորդը որ այսպէս կշտամբեր , այն մարդն էր որուն անշուշտ գթութեան արժանի յուղումներով տառապելը քիչ մ՚առաջ տեսանք :

Ուր՞ կերթար : Ինքն ալ չգիտի կրնար ըսել թէ ուր կերթար : Ինչու՞ կաճապարէր : Ինքն ալ չէր գիտեր : Գիտցածը ինչ Ճամբայ որ կը ցուցնէր , նոյն Ճամբէն անցնելով կերթար : Ո՞ւր : Անշուշտ Արաս կերթար . բայց դուցէ նաև ուրիշ տեղ կերթար : Մերթ ընդ մերթ ինքն ալ կզգար թէ ուսկէ և ուր երթալը չէր գիտեր , և կը տարտսէր : Գիշեր-

ուան մթութեան մէջ կը յառաջանար դէպ՝ի վիհ մը յա-
ռաջանալու պէս։ Ցան մը կը մղէր, բան մը կը ձգտէր
դինքը։ Ոչ ոք կրնայ ըսել թէ ինչ կանցնէր իր սրտէն,
այլ ամէն մարդ պիտի հասկնայ թէ ինչ էր անցածը։ Ո՞վ
է այն մարդը որ իր կեանքին մէջ գէթ անգամ մը մտած
չըլլայ անծանօթ աշխարհին այն սքեսպատ խառնչը։

Ա՛յլ տակաւ ամէնն ալ բան մը որոշած, վճռած, հատա-
տած կամ ըրած չէր։ Իր խիղճը վերջնական բան մը չէր
ըրած թնաւ։ Ինչ որ էր՝ի սկզբան, կատարելապէս նոյնն
էր նաև հիմա։

Ինչո՞ւ Ասրա կերթար։

Որ կրկներ ինքնիրեն ինչ որ արդէն ըսած էր իւրմէ հերք
Պոսֆէրի կառքը բռնած էր. թէ իրերու վիճակը ինչ հե-
տեւանք կրնէ թողլ ունենալ, ամենուն անպատճառելիութիւն մը
չէր ունենար աչերով տեսնել և ինքնին դատել եղելութիւնը.
մանաւանդ թէ խոհեմութիւնն ալ կը պահանջէր պահել
ինչ որ տեղի պիտի ունենար. թէ կարելի չէր վճիռ մը տալ
առանց դիտելու և լաւ մը քննելու խնդիրը. թէ ամէն բան
հեռուէն մեծ երեւոյթով կերեւար. թէ սակայն երբ տեսնե-
լու իրար Շանտալիէօն, որ թշուառական մ՝է անդուլ, հա-
ւանականաբար իր խիղճը մեծապէս պիտի սփոփուէր՝ թողլով
որ իր տեղը ան երթայ թիարանը. թէ սուտերէ հոն պիտի
գտնուին ծովերը, նաև երիք վաղնի թիապարանները, այս-
քանն Պրըվէ, Շընիսիէօ և Գօշըյլ որոնք ժամանակաւ ձանձ-
ցած էին գինք և որոնք սակայն անդուլա հիմա չպիտի կրնա-
յին ճանչնալ, — ո՛չ, ինչ պաղատար, — թէ ծովերը բա-
ւորովին չպիտի կրնար ճանչնալ գինքը. թէ ամէն մարդ կը
կարծէր, ամէն մարդ կենթադրէր թէ այն Շանտալիէօն է
ծան գլա ժանը, թէ ամենէն շատ որ յամառին որոնք որ կը
կարծեն և կենթադրեն. թէ հետեւաբար բնաւ վտանգ մը
չկար։

Թէ անշուշտ սև վայրկեան մ՝է այն, թէ սակայն անվը-

ռանդ պիտի անցունէր այն վայրկեանը, մտնաւանդ թէ իր
ձախատագիրը սրբան ալ յստի ըլլալ ուզէր, անոր տանձը
իր ձեռքն էր, և թէ անոր տէրն էր։ Այս մտածումին կա-
պաւիներ ապահովութեամբ։

Երբ վերջապէս աւելի ազէկ պիտի համարէր տանելին
չերթալ։ Որա։

Սակայն կերթար։

Որ մտածէր ու միտդ ամայն կը մտրակէր երիվարը որ կա-
նոնաւոր և ապահով կերպով մ՝արշաւելով ժամը երկուք ու
կէս մղոն ճամբայ կառներ։

Քանի կը յառաջանար կառքը, մարդը կերպիւ իւրք ընկերա-
նիլ կպար։

Ընթը երթալու ժամանակ բաց դաշտի մէջ կը պատուէր.
Մ... քաղաքէն բաւական հեռացած էր ալ։ Հորիզոնին նա-
յեցաւ և տեսաւ որ կը ձերմկնար այն։ առանց տեսնելու
նպատակ որ ձմեռնային արշալոյսի մը բոլոր ցուրտ պատկեր-
ները իր առջեւէն կանցնէին։ Երիկունին պէս առաւօտն ալ
ձիւաղներ ունի։ Ձեր տեսներ ծառերու և քլուրներու սե-
ւամոյր ծրագիրները որոնք սակայն առանց անոր գիտու-
թեանը և՝ կարծես թէ ֆիզիկապէս անոր ներքը թափանցե-
լով հոգիին բազմատրոյզ կացութեան չդիպեր ինչ սխալը և
աղէտաւոր հանգամանքը մ՝ալ կուտային։

Ամէն անգամ որ կանցնէր այն առանձին տուներուն մէկուն
առջեւէն, որոնք երբեմն ձամբաներու երկայնութեամբը չին-
ուած են, ինքնին կըսէր. Այլ սակայն ներքը մարդ մի կան
ոչք կը քնանան։

Երիվարին արշաւը, աստղազեղին փոքրիկ զանգակները և
քարայատակին վրայէն հոլովող անիւները մեզմ և միաձև
ձայն մը կը հանէին։ Այս բաները սիրուն կելլան երբ
զուարթ է մարդս. սխուր կերեւան երբ տրտում է ան։

Երբ Հէստէն հասաւ, բոլորովին լուսցած էր ալ։ Պան-
գոկի մ՝առջեւ կանգ առաւ, որպէս զի ձին հանգստանայ ու

միանգամայն ուսեալ համար վարսակ արուի տնօր։

Ինչպէս Սպօֆիէր ըսած էր, այս ձին Պուլօնէի փոքրաձի ձիերու տեսակէն էր. այս տեսակ ձիերուն դլուխը, փորը շատ մեծ է, բայց պարանոցը բաւականին չափ չէ. լանջը բայց դաւակը լայնաձև, ծունկը վարիա և բարակ և ոտքը հաստատուն է. այս ձիերուն տեսակը տղեղ այլ հաստատուն և քաջողջ է։ Սպօֆիէրի լաւ կենդանին երկու ժամուան մէջ հինդ մղոն քայլեր էր և դաւակին վրայ և ոչ իսկ կաթիլ մը քրտինք ունէր։

Կառքէն իջած չէր մարդը։ Ախոռին ծառան՝ որ վարսակը կը բերէր՝ յանկարծ ծռուելցաւ և ձախ կողմին անիւը զրնդնդալով՝

— Շատ հեռի պիտի երթանք այս կառքով, ըսաւ։

Ճամբորդը առանց մտածելէ դադրելու, պատասխանեց.

— Ինչո՞ւ կը հարցնես։

— Հեռի տեղէ կուգաք, կրկնեց ծառան։

— Հինդ մղոն հեռաւոր տեղէ կուգամ։

— Ա՛հ։

— Ինչո՞ւ ահ ըսիք։

Ծառան նորէն ծռուելցաւ. պահ մը լռիկ կեցաւ՝ ուշադրութեամբ անիւին նայելով, յետոյ կանդնելով ըսաւ.

— Վասն զի այս անիւը թէև կարելի է որ հինդ մղոն ճամբայի դիմացած ըլլայ, բայց հիմա անատակոյս և ոչ իսկ մէկ քառորդ մղոնի պիտի դիմանայ։

Ճամբորդը կառքէն վար իջնելով ըսաւ.

— Ինչ կըսես, բարեկամ։

— Կըսեմ թէ հրաշք մ՚է հինդ մղոն ճամբայ առնելդ և մեծ ճամբուն վրայի փոսերուն մէկուն մէջ ձիին հետ չզլորուիլդ։ Դուք ալ նայեցէք, եթէ չէք հաւատար։

Անիւը իրօք մեծապէս ջնասուած էր։ Սուրհանդակին կառքին զարնուելովը անիւին երկու շառաւիղները ձեղքուած էին, մէջնանիւն ալ քերուած էր, և իր պռուտակին ծակն ալ աւրուած։

— Բարեկամ, ըսաւ ծառային, այս տեղ սայլագործ մը կայ։

— Անշուշտ, պարոն։

— Խնդրեմ, դնա և հոս կանչէ զան։

— Սա տեղն է։ Է՛, Պուրկայլեար վարպետ, հոս եկուր։

Պուրկայլեար վարպետը որ սայլագործն էր, իր դուռին շեմին վրայ էր։ Եկաւ, անիւը քննեց և կարուած ոտք մը դիտող վիրաբոյժի մը պէս դէմքը ծռեց։

— Կրնաք անմիջապէս շինել այս անիւը։

— Այո՛, պարոն։

— Ե՞րբ պիտի կրնամ ճամբայ ելնել։

— Վաղը։

— Վաղը։

— Ամբողջ օրուան մը դործ կայ անոր վրան։ Մինչեւ առաւօտ պղպեղաձն է ճամբորդութիւնդ։

— Շատ ախորժելական։ Ան առաւելն մինչեւ մէկ ժամ պէտք է որ մեկնիմ։

— Անկարելի է, պարոն։

— Ինչ որ ուզուի, կը վճարեմ։

— Անկարելի է։

— Լաւ. մինչեւ երկու ժամ։

— Այսօր անկարելի է։ Պէտք է նորէն երկաւ շառաւիղ և միջնանիւ մը շինել։ Վաղէն առաջ չէք կրնար մեկնիլ, պարոն։

— Ուզածդ դործս չկրնար վաղուան առաւօտ։ Մինչեւ կառքին չէ փոխանակ այս անիւը նորոգելու տեղը ուրիշ մը դնել։

— Ի՞նչպէս կրնայ ըլլալ։

— Սայլագործ չէս։

— Անշուշտ, պարոն։

— Մինչեւ անիւ մը չունիս որ ծախես ինձ, այս կերպով անմիջապէս կրնամ մեկնիլ։

— Պահեստի անիւ մը :

— Այո՛ :

— Ձեր կառքին բոլորովին յարմար անիւ մը չունիմ : Անիւները զոյգ կըլլան : Երկու պատահական անիւ միասեղ չեն կրնար գործածուիլ :

— Ուրեմն զոյգ մ'անիւ ծախէ ինձ :

— Պարոն , ամէն անիւ ամէն առանցքի չյարմարիր :

— Փորձէ անդամ մը :

— Պարապ բան է , պարոն : Ծախելու համար ունեցած անիւներս միայն սայլի անիւներ են : Հոս պզտիկ դիւզ մ'է , գոնուածը այս է :

— Գոնէ ինձ վարձելու կառք մ'ունի՞ս :

Սայլապործ վարպետը անդամ մը նայելով հասկցած էր որ Ճամբորդին կառքը վարձով բռնուած կառք մ'էր : Ուսերը շարժեց և ըսաւ ,

— Շիտակը ազէկ կը նայիք եղեր ձեզի վարձուած կառքերը , եթէ ունենայի անդամ չըլիտի տայի :

— Ծախու ալ չունի՞ս :

— կառք չունիմ :

— Ի՛նչ , պզտիկ կառք մ'ալ չունիս , արդէն ըսի թէ յօժարակամ պիտի վճարեմ պէտք եղածը :

— Պզտիկ դիւղ մ'է այս : կայանը հինգ կառք մ'ունի մըրը պահելու համար աեղւոյս քաղաքացիներէն մին առաւ ինձ և ըսր ամէն ամսոյ երեսունըվեցին կը գործածէ : կրնամ ձեզի վարձել այն կառքը , հոգս անդամ չէ , բայց պէտք չէ որ քաղաքացին կառքին անցնիլը տեսնէ , պիտնալու է նաև որ երկու ձի լծել հարկ է կառքին , վասն զի ֆլաշկ մ'է :

— Սուրհանդակի ձիերը կառնեմ :

— Ո՞ր պիտի երթաք , պարոն :

— Արաս :

— Այսօր կուզէք հասնիլ :

— Անշուշտ :

— Սուրհանդակի ձիերը առնելով :

— Ինչո՞ւ չէ :

— Մինչև ճաշ ունի՞ , եթէ կէս պիշերէն յետոյ ժամ եօք հասնելու ըլլաք :

— Անշուշտ ունի :

— Վասն զի կուզէի քան մ'ըսել . եթէ սուրհանդակի ձիերը առնելու ըլլաք . . . : Պարոն , անսպասիր ունիք :

— Այո՛ :

— Ապա ուրեմն սուրհանդակի ձիերը առնելով վաղէն ածաջ չպիտի կրնաք Արաս հասնիլ : Այս կողմի Ճամբաները ծուռումուռ են : կառքի կայանները ուշած ձիդ չպտնուիր , վասն զի ձիերը դաշտերն են : Մեծ աւօրներու գործածութեան եղանակը նոր կսկսի , ուժեղ ձիերու պէտք կայ , հետևաբար թէ սուրհանդակներու և թէ ուրիշ տեղ գտնուած ձիերը կառնուին : Ամէն մէկ կայարան հասնելնուդ առնուազն երիք կամ չորս ժամ պիտի սպասէք : Ցիղ տեղ ալ հետի պիտի քայլէք : Շատ բլուրներու վրայէ անցնելու պիտի պատրաստուիք :

— Ապա ուրեմն ձիով կերթամ : Քակէ ձին կառքէն : Հարկաւ կրնամ համեա մը գնել այս կողմերէն :

— Անշուշտ . բայց այս ձին համեա կրնայ դիմանալ :

— Ազէկ ըսիր . հիմա միաքս եկաւ որ չդիմանար :

— Ուրեմն . . . :

— Բայց դիւղին մէջ չեմ կրնար վարձու ձի մը գտնել :

— Անդուլ քայլելով ուղղակի Արաս երթալու համար :

— Այո՛ :

— Մեր կողմերը չգտնուիր այնպիսի ձի մը որու հարկաւորութիւնն ունիք : Գտնուելու ալ ըլլայ , հարկ է որ ծախու առնուք , վասն զի ձեզի չեն Ճանչնար այս կողմերու մարդիկը : Բայց ոչ ծախու և ոչ ալ վարձու պիտի գտնէք անանկ ձի մը , նաև հինգ հարիւր ֆրանք , նաև հազար ֆրանք տալու ըլլաք :

— Ի՞նչ ընելու է ուրեմն :

— Շիտակը անկեղծութեամբ կըսեմ թէ ամէնէն աղէկ միջոցն է վաղուան Թողուլ Ճամբորդութիւնը որպէս զի անիւը նորոգեմ :

— Վաղը շատ ուշ է :

— Է՛հ , ինչ ընենք :

— Արաս գացող սուրհանդակին կառքը կը մտնեմ : Երբ կանցնի :

— Վաղը դիշեր : Սուրհանդակի երկու կառքերը դիշերը կերթեւեկեն , մին կերթայ և միւսը կուգայ :

— Բայց իրաւ կըսեք թէ օրուան մը գործ կայ այս անիւը նորոգելու Համար :

— Այո՛ , օրուան մը , մանաւանդ թէ ամբողջ օրուան մը :

— Երկու բանուոր բանեցնելով :

— Տասը բանուոր բանեցնելով :

— Շատ իղձերը չեն կրնար չուանները կապուիլ :

— Շատ իղձերը կը կապուին , բայց միջնանիւը ոչ : Մտաւանդ թէ անիւին շրջանակն ալ ուրուած է :

— Այս քաղաքը կառք վարձող մը չկա՞յ :

— Ոչ :

— Ուրիշ սայլագործ մը կա՞յ :

Ձիադարմանը ու սայլագործ վարպետը երկուքնին մէկ դլխին վերցնելով պատասխանեցին .

— Ոչ :

Անբաւ ուրախութիւն մը ղգայ Ճամբորդը : Ցայտնի էր թէ նախախնամութեան մատը կար այս դործին մէջ : Ան էր կառքին անիւը կտրողը և գինքը կէս Ճամբուն վրայ ձդողը : Բայց հնազանդած չէր նախախնամութեան այս առաջին տնօրինութեան որ տեսակ մը հրաման էր . ամէն ձիգ թափած էր իր Ճամբորդութիւնը շարունակելու Համար . ուղղամտութեամբ և խղճահարութեամբ ամէն միջոցներու դիմած էր պարապ տեղը . եղանակն ալ , յոդնութիւնն ալ , ծախքն ալ , առ ոչինչ սեպեր էր նպատակին հասնելու Համար , որ և է

կերպով յանդիսաւոր չէր կրնար Համարուիլ ինք : Աւելի հեռի երթալու արդիլութիւնը իրեն վերաբերեալ խնդիր մը չէր : Յանդգնաբը իրը չէր . այս արդիլը ոչ թէ իր խղճին այլ նախախնամութեան թելադրութեամբը պատահած էր :

Շունչ առաւ : Ժամվերին այցելութենէն ի վեր առաջին անդամն էր որ ազատօրէն և բոլոր կուրծքովը շունչ մը կառնուր : Այնպէս կը կարծէր թէ քանի ժամ ի վեր իր սիրտը ձնշող երկաթեայ ձեռքը ալ թողուց զայն :

Կերևակայէր թէ Աստուած իր կողմն էր , և կը յայտնուէր : Ըսաւ իւրովի թէ ըրած էր ինչ որ կրնար ընել , և թէ հիմա իրեն կը մնար ետ երթալ հանդարտօրէն :

Եթէ սայլագործին հետ ըրած խօսակցութիւնը պանդոկին պանեակներուն մէկուն մէջ տեղի ունեցած ըլլար , ոչ ոք ապահաստես եղած պիտի ըլլար , ոչ ոք լսած պիտի ըլլար ըսուած խօսքերը , իրերու վիճակը անփոփոխ պիտի մնար , և հաւանական է որ Հարկ չպիտի ունենայինք պատմելու յետագայ դէպքերուն և ոչ միւն . բայց այն խօսակցութիւնը փողոցը տեղի ունեցեր էր : Փողոցին մէջ ամէն անդամ որ խօսակցութիւն մը կըլլայ , անհրաժեշտաբար ակումբ մը կը կազմէ : Միշտ կան այնպիսի անձեր որոնք մի միայն կուզեն հանդիսական ըլլալ : Երբ Ճամբորդը սայլագործին հարցումներ կընէր , քանի մ'եկուզներ և պատղներ անոնց բոլորտիքը կանգ առած էին : Նորաձի տղայ մը որու ոչ ոք ուշադրութիւն ըրած էր , քանի մը րոպէ մտիկ ընելէն ետք խառնուեր բաժնուած և պատած էր վաղելով :

Ճամբորդը՝ իր ներքին խորհրդակցութիւնէն ետք զոր քիչ մ'առաջ նշանակեցինք , երբ կորոշէր ետ դառնալ , ան տղան ալ ետ կը դառնար պատառ կնիկի մը հետ :

— Պարոն , ըսաւ կինը , ծառաս կըսէ թէ կառք մը վարձու բռնել կուզէք :

Ճամբորդը երբ լսեց այս պարզ խօսքը , զոր տղայի մը յառաջնորդութիւնը եկող պատառ կնիկ մ'ըսած էր , կռնա-

ջէն սկսաւ քրմինք հոսիլ ուղիօրէն։ կարծես թէ գինք ար-
դէն Թոյլ առած ձեռքը եռանը մուխին մէջ նորէն կերևար,
և թէ բոլորովին պատրաստ էր նորէն բռնելու գինքը։

— Ա՛յ, կին գու, վարձու առնելու կառք մը կուզեմ,
պատասխանից։

Եւ շուտ մը շարժարից.

— Բայց այս քաղաքին մէջ չկայ,

— կայ, բաւ պառաւը։

— Ո՛ր կայ, հարցուց սայլապործը։

— Իմ տունս, պատասխանից պառաւը։

Սարսռեցաւ Ճամբորդը։ Ազէտաւոր ձեռքը նորէն բռնած
էր գինքը։

Պառաւը իրեք սայլերու կայանը ուղիղ պզտի կառք մ'ու-
նէր։ Սայլապործը և պանդոկի ծառան յաւելով որ Ճամ-
բորդը պիտի փախցնեն իրենց ձեռքէն, միջամտելով ըսին.

— Երկայն և սոսկալի սայլ մ'է ըսածը, առանցքին վրայ
մերկ գրուած բան մ'է ը. — Սոյդ է նաև որ նստարանները
կալնէ երկայն փոկերով կախուած են ներսը. — Անձրևը ներս
կուգայ. — Խոնաւութիւնը ժանդոտած և մաշած է անիւնե-
րը. — Երկանիւ կառքեն աւելի չկրնար դիմանալ Ճամբան. —
Պա զապէս Ճամբու սայլ մ'է. Պարոնը մեծապէս պիտի սխալի
եթէ այն սայլով Ճամբորդելու հաւանի, և այլն...։

Սուտ չէին այս պիտողութիւնները, բայց այս բոլոր
սայլը, այս Ճամբու սայլը, այս բանը, ինչ կուզէր թող
ըլլար, երկու անիւով կը շարժէր և կրնար Արաս երթալ։

ՎՃարից ինչ որ ուզուեցաւ իրմէ. իր երկանիւ կառքը սայ-
լապործին յանձնից նորոգելու համար որպէս զի՝ ի դարձին
նորէն առնու, Ճիրմակ ձին պզտի կառքին լծել տուաւ, մէջը
մնաւ և առաւօտեն՝ ի վեր բռնած Ճամբայէն սկսաւ երթալ։

Երբ կառքը երթալ սկսաւ, խոստովանեցաւ ինքնին թէ
պահ մ'առաջ կերպիւ իւիք ուրախացած էր մտածելով թէ
չկիտի երթար ուր որ կերթար։ Գրեթէ բարկութեամբ քննից

այս ուրախութիւնը և տեսաւ որ անհիմն ուրախութիւն
մ'էր այն։ Ի՞նչ կար ուրախանալու եռ գառնալով։ Վերջա-
պէս աղաւօրէն կը Ճամբորդէր։ Ոչ ոք կը բռնադատէր զին-
քը այս Ճամբորդութիւնը ընելու։

Մտածեցաւ թէ ինչ որ պիտի պատահէր, առանց իր կա-
մեցողութեան չպիտի պատահէր։

Հէստէնէն կկրնէր արգէն երբ ձայն մը լսից որ կը պո-
ռար. կեցիք, կեցիք։ կայնեցուց կառքը չգիտեմ ինչ տեղ-
դային և ջաձգային շարժումով մը որ յոյսի կը նմանէր։

Պօռացողը պառաւին պզտի ծառան էր։

— Պարոն, ըսաւ, կառքը ես պտայ ձեզի համար։

— Է՛, ինչ կուզես։

— Բան մը չտուիք ինձ։

Ան որ ամէնուն ալ և յօժարութեամբ պարգև կուտար,
տղային այս պահանջումը անհնարին և գրեթէ սոսկալի հա-
մարից։

— Ա՛հ, դուն ես պառողը, սրբիկայ. բան մը չգիտի տամ։

Մարահեղ ձին և արշաւելով մեկնեցաւ։ Շատ ժամանակ
կորուսած էր Հէստէնի մէջ, և կուզեր այն կորուսին տեղը
լեցնել։ Պզտի ձին քաջ էր և երկու ձիի պէս կը տանէր
կառքը. բայց ժամանակը փետրուար ամսոյ ժամանակին բլա-
լով անձրև եկեր էր, և Ճամբանները յորի էին։ Մտածեցաւ
թէ կառքը չէ թէ երկանիւ, այլ բիրա և ծանր կառք մ'էր։
Ասիկ՝ ի գլուխ Ճամբուն վրայ բազմաթիւ գառիվայրեր կային։

Շորս ժամ մէջ կ'ըլլայ Հէստէնէն մեն-Լօլ երթալ։ Շորս
ժամ տևեց հինգ մղոնը։

Մեն-Լօլ հասնելով պանդոկ մը իջաւ, ձին հանել տուաւ
կառքէն և ախոռը ղրկից։ Սրօֆէրին տուած խոստումին հա-
մեմատ մտուրին քով սպասից մինչև որ ձին կերակրի։ Սպա-
սեց տրտում և խառնաշփոթ բաներ մտածելով։

Պանդոկապետին կինը ախոռը մտաւ։

— Պարոնը միթե չուզեր նախաճաշել։

— Ազէկ որ ըսիք, մանաւանդ թէ ախորժակ ալ ունիմ, ըսաւ։

Այս կնիկին եաւէն դնաց որու դէմքը առոյգ և ջուարթ էր։ Ճամբորդը կնոջ առաջնորդութեամբը սառրին սրահ մը մտաւ ուր սեղաններ կային, ասոնց փուռնները մոմուած կտաւներ էին։

— Շուտ ըրէ, կրկնեց Ճամբորդը, պէտք է որ Ճամբայ ելնեմ։ Սախալական է Ճամբորդութիւնս։

Փիլէմենկի անձնեայ սպասուհի մը շտապաւ սեղանի սպասները բերաւ։ Ճամբորդը այս աղջիկին կը նայէր բարօրալի զգացումով մը։

— Կզգայի թէ բան մ'ունիմ, ըսաւ ինքնիրեն։ Նախաճաշիկ չըրեր էի։

Կերակուրը բերուեցաւ։ Հայրը առաւ չարձակումով մը և պատառ մը խածաւ, յետոյ յամրաքար սեղանին վրայ դրաւ զայն, և մէյ մ'ալ չտաւ։

— Ինչո՞ւ ան է ասոնց հայրը, հարցուց սպասըրդի մը որ ուրիշ սեղանի մը քով կը Ճաշէր։

Սպասըրդը Գերմանացի էր և չհասկցաւ հարցումը։

Դարձեալ ախորը ձիին քով դնաց։

Ծամէ մ'եաք Սէն-Բօլէն ելած էր և կը յառաջանար դէպ'ի Թէնդ որ Արասէն հինգ մղոն հեռի է։

Ի՞նչ կընէր Ճամբան շարունակելով։ Ի՞նչ կը մտածէր։ Ինչպէս առտու, նոյնպէս և հիմա կը նայէր որ ծառերը, խոզանով ծածկուած յարկերը, մշակուած դաշտերը կանցնէին, ինչպէս նաև կանեփեւութիանային բնական վայրերը որոնք կը խախտին ամէն անգամ որ Ճամբորդը անկիւնէ մը դառնալով ուրիշ ուղի մը կը մտնէ։ Ասի այնպիսի հայեցողութիւն մ'է որ երբեմն սրտին կը բաւէ, և հարկ չզգացուր մտածելու։ Առաջին և վերջին անգամ հազարումէկ առարկաներ տեսնել, ասկէ առնչի ինչ մեքանդձային և ազդու բան կրնայ ըլլալ։ Ճամբորդելը ամէն թոպէ ծնիլ և մեռնիլ է։ Գուցէ իր մտքին ամենէն անյայտ սահմանները դիտելով այս փոխխական հորիզոններու և մարդկային կեանքի մէջ համեմատութիւնները կրնէր։ Կեանքի ամէն բաները մեքանդձային մեր տեսութենէն հեռանալով կը փախչին։ Մթութիւնները և Ճառագայթները մէկմէկու կը խառնուին։ Փառաւոր լոյսե մ'եաք խաւարում մը կը տիրէ, կը նայինք, կաճապարենք, ձեռք կերկնցնենք բռնելու համար ինչ որ կանցնի, կեանքի ամէն մէկ դէպքը Ճամբէ մ'ուրիշ Ճամբայ մտնելու անկիւն մ'է, և ահա յանկարծ կը ծերանանք։ Կարճ ձեռ տատանում մը կզգանք, ամէն բան խաւարին է, մեծ պատ դուռ մը կը նշմարենք, և այն տխուր երիվարը որ մեզի կը տանէր, կանգ կառնու։ Եւ ահա աքօղուած և անճոռնի մէկը կը տեսնուի որ երիվարին կապերը կը քաշէ խաւարին մէջ։

Երիկոյեան մութը տիրելու ժամանակ, քանի մը մանուկներ որոնք դպրոցէն կելլէին, այս Ճամբորդին նայեցան որ Թէնդ կը մտնէր։ Սպասէ է թէ օրերը տակաւին տարուան կարճ օրերն էին։ Ճամբորդը Թէնդ չկրցաւ առնել։ Գիւղէն դուրս ելնելու պահուն Ճամբուն քարայատակը շինող գործաւոր մը գլուխը վերցուց և ըսաւ.

— Շատ յոգնած է սա ձին։

Իրօք խեղճ անասունը ալ քալելով կերթար։

— Մի՞թէ Արաս կերթաք, հարցուց գործաւորը։

— Այ՛։

— Եթէ այդ կերպով երթալու ըլլաք, կանուխ չպիտի հասնիք։

Ճամբորդը կեցուց ձին և հարցուց քանւորին.

— Ասկից մինչև Արաս քանի՞ մղոն Ճամբայ կայ տակաւին։

— Գրեթէ Ճիշդ եօթը մղոն։

— Ո՛վ ըսաւ, ուղեկցոյց գրքին մէջ հինգ մղոն և մէկ քառորդ նշանակուած է։

— Ա՛հ, ըսաւ բանւորը, չպիտիք ուրեմն թէ Ճամբան կը նորոգուի հիմա։ Ասկէ քառորդ մ'անդին Ճամբան կտրուած

պիտի գտնէք : Աւելի հեռի երթալը անկարելի է :

— Իրաւ կըսէք :

— Ձախ կողմի Ճամբայէն գացէք որ Գարանսի կը տանի ; առուակէն անցիք . երբ Գապլէն հասնիք , ձ կողմի Ճամբան բռնեցէք . Մօն-Սէնթ-Էլոյի Ճամբան է այն և Արաս կը տանի :

— Բայց պիշեր է արդէն . Ճամբաս պիտի կորսնեմ :

— Տեղացի չէք :

— Ոչ :

— Մտնաւանդ որ Ճամբան բոլորովին զարտուղի է : — Պարոն , կրկնեց բանւորը , կուզէք որ ձեղի խրատ մը տամ : Ձեր ձին յոգնած է . Թէնդ վերադարձէք : Լաւ պանդոկ մը կայ . այս գիշեր հոն պառկիցէք : Վաղը գացէք Արաս :

— Պէտք է որ այս գիշեր հոն գանուիմ :

— Առուրիշ բան է : Ուրեմն այն պանդոկը գացէք և օգնական ձի մը առէք : Ձին տէրը ձեզ կառաջնորդէ զարտուղի Ճամբաներէն :

Բանւորին խրատը բռնեց . հոն գարձաւ , և կէս ժամէն եաք մի և նոյն տիզէն կանցնէր արշաւելով և օգնական լաւ ձիով մը : կառքին քեղրիքին վրայ ձիագարման մը նստած էր որ սուրհանդակ կանուանէր :

Բայց Ճամբորդը կզգար թէ ժամանակ կը կորսնցնէր :

Գիշեր եղած էր բոլորովին :

Զարտուղի տեղերը մտան : Ճամբան սոսկալի էր : կառքը անիւի հետքերուն մէկէն դէպ ’ի միւսը կխլնար : Ճամբորդը սուրհանդակին ըսաւ .

— Շարունակ արշաւենք . կրկին ընծայ պիտի տամ քեզ :

Ցատանոմի մ’առթիւ կառքին լծակը կորսնցաւ :

— Պարոն , ըսաւ սուրհանդակը , ահա լծակը կորսնցաւ : չգիտեմ թէ ինչպէս պիտի լծեմ ձիս : Գիշերը շատ յոռի է այս Ճամբան . եթէ հաձէիք դառնալ և Թէնդ պառկիլ : վաղը առտու կանուխ կրնայինք Արաս հասնիլ :

— Ձուանի կտոր մը և դանակ մ’ունիս , պատասխանեց Ճամբորդը :

— Այո՛ , պարոն :

Ծառի ոստ մը կտրեց և լծակ ըրաւ զայն :

Այս պատճառաւ ալ քսան րոպէ կորսնցաւ . բայց արագաւումով մեկնեցան :

Գաշտը խաւարամած էր : Լուրնեբուն վրայ ցած , կարճ և սև մառախուղներ կը սողային , և մութի պէս կը հեռանային անոնց վրայէն : Ամպերու մէջ գրեթէ սպիտակ ներկայներ կային : Ծովի կողմէն եկող հով մը հորիզոնին ամէն կողմերէն կարասիներ շարժող մարդու պէս գղրդիւն կը հանէր , ինչ որ կընդհմարուէր , տարտափլի երևոյթներ ունէր : Ա՛րքան բաներ կը տարտնին գիշերուան այս ահագին շուրջերէն :

Ճամբորդը ցուրտէն կը գողար : Առջի օրէն ’ի վեր կերակուր չէր կերած : Անորոշապէս կը յիշէր թէ ութ տարի առաջ ալ Տ . . . ի շրջակաները գիշերով կը քայլէր . բայց կը կարծէր թէ երեկուան յիշատակ մ’է այն :

Հեռուէն զանդակատուն մը ժամը մէկ զարկաւ : Հարցուց տղային .

— Քանի՛ է ժամը :

— Եօթը , պարոն . ութին Արաս պիտի գտնուինք : Ա՛լ երեք մղոն Ճամբայ ունինք :

Նոյն պահուն առաջին անդամն էր որ խորհեցաւ , — և աւելի առաջ չխորհելուն զարմացաւ , — թէ դուցէ անօգուտ էր իր կրած բոլոր աշխատանքը . թէ և ոչ խոկ գիտէր թէ դատը ժամը քանիին պիտի տեսնուի . թէ դեռ կը պարտաւորէր տեղեկութիւն առած ըլլալ այս մասին . թէ այլանդակ ընթացք մ’էր այսպէս ըստ գիպուածի Ճամբորդութիւն մ’ընել առանց գիտնալու թէ բանի մը պիտի ծառայէ այն թէ ոչ : — Ցետոյ միտքովը քանի մը հաշիւներ ըրաւ . հաշիւ ըրաւ թէ եղեռնական առեանններուն նիստերը սովորաբար առաւօտ ժամը ինին կսկսին , թէ այն դատը երկար տեւող դատ մը չէր .

[illegible] [illegible] [illegible] [

Երթք և մէկ քառորդ զարկաւ : Ֆանթէին մեքենապէս բարձրձ վրայ դրաւ ղլուխը :

Բան մը չըսաւ , և սկսաւ սաւանին վրայ ծալքեր կազմել :

Դէս–ժամը անցաւ , անցաւ նաև մէկ ժամը , բայց ոչ ոք եկաւ . ան՛ն անդամ որ ժամացոյցը կը զարնէր , Ֆանթէին կը կանգնէր և դուռին կողմը կը նայէր , յետոյ նորէն կը պառկէր :

Մտքէն ինչ անցնիլը յայտնապէս կերևար , բայց որ և է անուն մը չէր տար , չէր գանգատեր , ոչ ալ կամբաստանէր : Միայն թէ աղէտաւոր կերպով մը կը հազար : Արևայ ըսուիլ թէ մթութիւն մը կիջնէր իր վրայ : Ֆանթէին կապարի պէս ան՛ծ էր , և շուրթերն ալ կապտագոյն էին : Մերթ ընդ մերթ կը ժպտէր :

Երբ ժամը հինգ զարկաւ , քոյրը լսեց որ Ֆանթէին խիստ կամաց և մեղմով կրսէր . — Բայց քանի որ վաղը պիտի մոռնիմ , այսօր չգալը անիրաւութիւն մ՛է :

Սէնբլիս քոյրը նոյնպէս կը զարմանար Պ . Մաբլէնի ուշանալուն :

Բայց Ֆանթէին իր անկողնին ձեղունը կը նայէր : Կերևար թէ բան մը յիշել կուզէր : Ծանկարծ շունչ մը հանելու պէս տկար ձայն մը հանելով սկսաւ երգել : Կրօնուհին մոմիկ բերաւ : Ահա սա էր Ֆանթէինին երգած երգը .

Առնենք պիտի մի շատ բաներ գեղեցիկ,
Դեպ յառաջներ ատիս անդին գալով մանչ.
Վարդն է կարմիր, կապտագոյն է կապուտիկ (bluet).
Այլ ես սիրեմ մանկիկըն իմ սիրական:

Կոյս Մարիամ, ոճ, նկարուն մի ջոխիկ
Իր շուրջն առած՝ վառ արևին նկատ մօտ.
— Ա՛ռ քեզ սիրտս քոյին ներքեւ այն մանկիկ
Որուս, քաւ, խնդրակ եիր ու կարօտ.
Վազէ, գընա, դեպ 'ի քաղաք, ան կտաւ
Դերծան գընէ, մատնոց գընէ շուտպար:

Առնենք պիտի մի շատ բաներ գեղեցիկ
Դեպ յառաջներ ատիս անդին գալով մանչ.

Կոյս Մարիամ, վառ արևին մօտ դըրի
Որդան մի ծապառենով զարդարուն.
Սիրելագոյն է այս մանկիկ զոր ինձի
Տուիք դուք, քան աստղ երկնից փողփողուն:
— Տիկին, դուէ, ինչ ընեմ այս կտաւով.
— Նորաճընիդ հագուստ եւ զարդ պատրաստէ:

Վարդն է կարմիր, կապտագոյն է կապուտիկ.
Այլ ես սիրեմ մանկիկըն իմ սիրական:

Աղուաւիին մէջ նախ այդ կտաւ շուտ յուամ.
Մէկ ատրեր գայն, մի մրոտեր, եւ ապա
Կարէ աղուոր մի շրջազգեստ եւ կապա,
Զոր ձկարեմ պիտի ծաղիկք եւ գարդով:
— Ա՛յ մանկուհին ճոռ չէ, կրտսեն ինձ ընեմ.
— Պատանք շինէ եւ շուտ թաղէ գիս աճով:

Առնենք պիտի մի շատ բաներ գեղեցիկ,
Դեպ յառաջներ ատիս անդին գալով մանչ.
Վարդն է կարմիր, կապտագոյն է կապուտիկ.
Այլ ես սիրեմ մանկիկըն իմ սիրական.

Այս երգը որորիչ կնիկի մը հին տաղերգութիւնն էր . Ֆանթէին ժամանակաւ այս երգը երգելով կը քնացնէր իր պզտի Փոզէթը , և հիմա տարիէ 'ի վեր , այսինքն զաւակին տեսութենէն ղրկուելէն 'ի վեր միտքը չեկեր էր այն : Այնքան տրտում ձայնով և այնքան անույշ կերպով կերգէր որ լսողը , նաև կրօնուհի մ՛երլեր , կրնար արտասուել : Քոյրը որ դաստիարակութենեն սովորած էր՝ աչերը արցունքով լեցուիլ զգաց :

Ժամացոյցը ժամը վեց զարկաւ : Ֆանթէին կարծես թէ չի

չանց : Ան ինչպէս կ՚երևար թէ ալ չորս կողմը նզած իրենուն ուշադրութիւն չէր ըներ քնաւին :

Քոյր Սէնթլիա ծառայող աղջիկներուն մին գործարանը դարձնելուն դռնապանուհիէն հասկնալու համար թէ արդեօք պարոն քաղաքապետը եկած էր և թէ հիւանդարանը պիտի չգար անոնք մը : Քանի մը րոպէէն երեք աղջիկը ետ դարձաւ :

Ֆանթին միշտ անշարժ էր և իր ուշնցած դաղափարներուն ուշադիր կ՚ունկնար :

Սպասուհին խիստ ցած ձայնով մը պատմեց քոյր Սէնթլիային թէ պարոն քաղաքապետը առաւոտ ժամը վեցէն առաջ և ցուրտին մէկնած էր Չերմակ ձիով լծուած կառքով մը. թէ հետը ոչ զրաւ առած էր, և ոչ իսկ կառավար մը, թէ ոմանք Արասի Ճամբէն անոր դառնալը տեսեր էին, թէ ոմանք ալ կը հաստատէին թէ Բարիզի Ճամբուն վրայ հանդիպած էին անոր : Թէ մնկնելուս առին իր սովորութեան համեմատ խիստ հնդ փրնցած էր, և թէ դռնապանուհիին ըսած էր մի մտայն որ այն պիշեր իրեն չսպասեն :

Մինչդեռ երկու կիները կոնակնին դէպ ի Ֆանթինին անկողինը դարձուցած կը փսփսային, քոյրը հարցուփորձ և սպառուհին ալ ենթադրութիւններ ընելով, Ֆանթին անկողնին մէջ ծունկի վրայ եկած էր գործարանական հիւանդութեանդ այն տենդային ուժգնութեամբ որով առողջութեան ազատ շարժումները մոհուան ակարկուռ նիհարութեան հետ կը խառնուին, և արիւնած ձեռներովը սնարին վրայ կոթնած, և ղլուխն ալ երկու վարագոյրներուն մէջ տեղէն դուրս հանած մութ կրնէր : Մէյ մ՚ալ յանկարծ պօռաց .

— Պ. Մատրէնի վրայ կը խօսիք : Ինչո՞ւ այդքան կամաց կը խօսիք . ինչ կրնէ . ինչո՞ւ չգար :

Ձայնը այնքան բիրտ և հաստ էր որ կիները մարդու մը ձայն լսել կարծեցին . ակաթևկելով եռևեին դարձան :

— Պատասխան առէք , պօռաց Ֆանթին :

Ծպտասուհին խռմռմելով պատասխանեց .

— Դռնապանուհին ըսաւ թէ այսօր չպիտի կրնայ գալ :

— Հանգարտ կեցէք , պատիէ , աղջիկս , բաւ ջ ը ր :

Ֆանթին առանց փոխելու դիրքը բայձր ձայնով և հպատակական ու միանդամայն կսկծալի եղանակաւ մը կ՚ըսէր .

— Չպիտի կրնայ գալ : Ինչո՞ւ համար : Պատճառը գիտէք : Հիմա կը փափաքիք իմանալ : Ես ալ կուզեմ պիտանալ :

Սպասուհին շուտ մը կ՚օնուհիին ակնարկին բաւ .

— Պատասխան առէք թէ քաղաքապետական ժողովին մէջ զբաղած է :

Քոյր Սէնթլիա ինքնիշխան կարմ եկաւ . ջանաց զի սպասուհին սահմանութիւն մը կատարած կէ , իրեն : Այլ միւս կողմէն ալ կը կարծէր որ հիմնէ հիւանդասիրին Ճմռան առելիքները ընդունելու ընաթ , սակայն ի հարկած մը առած ախտի թլլար անոր , և թէ Ֆանթինի նկարագրութեան նայելով ծանր քան մ՚էր ոչնչին լուր մը առնել : Այլ կարմ ուզը բիշ տևեց : Քոյրը իր հանդարտ և ուշադիր ձայնովը Ֆանթինին ուշադրութիւն ըսաւ .

— Պ. քաղաքապետը մնկնեցաւ :

Ֆանթին կանգնեցաւ և իր կուռնկրուն վրայ նստաւ : Անոր երեսը փոդփոդեցաւ : Անուր ուրախութիւն մը տարածուեցաւ իր ցաւագին դէմքին վրայ :

— Մնկնեցաւ , պօռաց : Փոքրիկը բերելու գնաց ուրեմն :

Ծնող երկու ձեռքը դէպ ի երկինք վերցուց , և իր բոլոր դէմքը անպատում երևոյթ մ՚առաւ : Ծունկերը կը ցաւէր , և ցած ձայնով աղօթք կրնէր :

Երբ աղօթքը լմնցաւ . — Քոյր իմ , ըսաւ , հիմա ալ կը պատկիմ , ինչ որ հրամայեսի , պիտի բնեմ . քանի՞ տարի տամարդութիւն մ՚ըլի . ներեսուն կը խնդ եմ քա ձր ձայնով խօսելուս համար . քոյր իմ , գիտեմ որ բարձ խօսիլ շատ գէշ բան է , բայց ահա շատ գոհ եմ : Բա ե ա ս Աստուած բարի է . Պ. Մատրէնն ալ բարի է , եթէ չգիտէք , ըսեմ

ուրիշ . Պ . Մատրլէն Մօնֆերմէյլ դնաց պլպլի Գօզէթս առ-
նել և բերելու համար :

Ֆանթին պառկեցաւ նորէն . կրօնուհին օղնից բարձը շտկե-
լու համար և վիզէն կախուած արծաթեայ պզտի խաչը պա-
պաւ , զոր քոյր Սէնթլիս տուած էր իրեն :

— Աղջիկս , ըսաւ քոյրը , աշխատէ հանդստանալու հի-
մա , և ալ մի խօսիր :

Ֆանթին խոնաւ ձեռքովը քոյրին ձեռքը բռնեց . քոյրը կը
վշտանար անոր այնպէս քրտինք թափիլը տեսնելով :

— Այսօր առաւօտ մկինեցաւ Խարիզ երթալու համար :
Բայց Խարիզէն անցնելու ալ պէտք չունի : Մօնֆերմէյլ Խա-
րիզէն եկողին ձախակողմը կիյնայ : Երբ Գօզէթին խօսքը
կընէի , կը յիշէք թէ ինչպէս կրսէր ինձ . Քիչ ապրնէն կա-
ճայ , փիչ ապրնէն կաճայ : Կուզէ անակնկալ խաղ մ'ընել և
զիս զարմացնել : Գիտէք եա . նամակ մը ստորագրել տուաւ
ինձ Գօզէթս Թէնարտիէներէն առնելու համար : Ա՛լ ասոնք
բան մը չպիտի կրնան ըսել , այնպէս չէ՞ . հարկաւ Գօզէթը
պիտի յանձնեն , վասն զի ինչ որ կը պահանջեն , պիտի վճա-
ռարուի : Գառավարութիւնը անշուշտ չպիտի ներէ որ մա-
նուկը պահեն՝ իրենց պահանջը առնելէն ետք : Քոյր իմ ,
նշան մի ընէք զիս արգիլելու համար որ խօսիմ : Խիստ եր-
ջանիկ եմ , շատ լաւ եմ . ալ ամենևին հիւանդ չեմ , քանի
որ Գօզէթը պիտի տեսնեմ . մանաւանդ թէ շատ անօթի եմ :
Հինգ տարի կայ որ տեսած չեմ զան : Դուք չէք երևակայեր
թէ ինչ զրաւիչ բան է զաւակ ըսուածը : Մանաւանդ թէ
պիտի տեսնէք որ շատ սիրուն ըլլալու է ան : Գիտնայիք ան-
դամ մը ինչ պզտի , դեղեցիկ և վարդապոյն մատեր ունի ,
նախ շատ դեղեցիկ ձեռներ պիտի ունենայ : Երբ մէկ տարե-
կան էր , ծիծաղելի ձեռներ ունէր : Բայց պիտի տեսնէնք :
Հիմա Գօզէթ մեծցած է : Եօթ տարեկան է : Օրիորդ մ'է :
Ես Գօզէթ կըսեմ , բայց անունը Էօֆրազի է : Չեզի բան
մ'ըսեմ , այս առաւօտ չմինէային վրայի փուշին կը նայէի ,

և այնպէս նայելով կը կարծէի թէ քիչ առէնէն Գօզէթը
պիտի տեսնեմ : Ո՛ Աստուած իմ , քանի՛ անիրաւութիւն է տա-
րինրով մը զաւակներու տեսութենէ զրկուիլը . պէտք է
մտածել թէ կեանքը յաւիտենական չէ : Ո՛չ , շատ մեծ բա-
խտիրութիւն մ'է պարոն քաղաքապետին մնկնած ըլլալը . ի-
րաւ է որ շատ ցուրտ կայ . գէթ վերարկուն առած արդեօք .
վաղը հոս պիտի ըլլայ , այնպէս չէ՞ . վաղը տօնախմբութեան
օր մը պիտի ըլլայ : Քոյր իմ , վաղը առտու միտքս ձգեցէք
որ տոնեցայով կարուած պզտի զգեստս դրուիմ : Մօնֆերմէյլ
դիւղ մ'է : Ծամանակաւ հետի ձամբորդելով պացած եմ
հոն : Ինծի համար շատ հետի երթալ այն : Բայց կառքերը
խիստ շուտ կերթան . վաղը Գօզէթին հետ հոս պիտի գըտ-
նուի պարոն քաղաքապետը : Ասկէ Մօնֆերմէյլ մրքան ժա-
մանակուան ձամբայ է :

Քոյրը որ ամենևին տեղեկութիւն մը չունէր հետաւորու-
թեանց նկատմամբ , պատասխանեց .

— Ո՛չ , կարծեմ թէ վաղը պիտի կրնայ հոս գտնուիլ :

— Վաղը , վաղը , ըսաւ Ֆանթին , վաղը պիտի տեսնեմ
Գօզէթս . կը տեսնէք որ ալ հիւանդ չեմ , բարեսիրտ քոյրդ ,
ուրախութենէս կը խենդնամ : Եթէ ուզող ըլլար , կը պարէի :
Ով որ քառորդ մ'առաջ տեսած ըլլար Ֆանթին , բան մը
չպիտի կրնար հասկնալ : Բայց հիմա վարդի գոյն առած էր .
ազդու և բնական ձայնով կը խօսէր . բոլոր դէմքը կը ժըպ-
տէր : Կամաց կամաց խօսելով մրթի ընդ մրթի կը խնդար
իւրովի : Մայրական ուրախութիւնը գրեթէ մանկային ուրա-
խութիւն է :

— Է՛ , ալ հիմա զոհ ես , հնազանդէ ինձ , մի՛ խօսիր ալ ,
ըսաւ կրօնուհին :

Ֆանթին գլուխը բարձին վրայ դրաւ և կէս ձայնով ըսաւ
ինքնիրեն . — Այո՛ , պառկէ . խելօք կեցիր , աշխ զաւակդ
պիտի տեսնես : Իրաւունք ունի քոյր Սէնթլիսը , իրաւունք
ունի : Ամէն հոս պտնուողները իրաւունք ունին :

Ծնողաց առանց ներողութ, առանց դէմքը շարժելու աչքերը քաղցրութեան բայց և զուարթ կիրպարանով մը անոնց ամէն հոգմ նայիլ, և ա՛լ բան մը չըսաւ։

Գայրը վարպետներէն դուրս, յուսալով որ Ֆանթին պիտի քնանայ։

Ծամը ծծելէն ուժի առնուները բժիշկը եկաւ։ Զայն մը շչելուն համար կարծեց թէ Ֆանթին կը քնանար. կամաց կամաց ներս մտաւ, և ուրին ծայրովը քայլելով անկողնին մօտեցաւ։ Ակն մը բացաւ վարպետներէն, և վատ պատրոյգին նշաւակը Ֆանթինի մէջ և հանդարտ աչերը տեսաւ ըռնք իրեն կը նայէին։

Ֆանթին բժշկին ըսաւ. — Ա՛յնպէս չէ՞, պարոն, թոյլ պիտի տրուի որ ան իմ քովս պզտիկ անկողնի մը մէջ պառկի։

Բժիշկը կարծեց թէ կը բանդագուշէր Ֆանթին։ Ասի շապկարեց.

— Նայինքէք, ձիշդ քաւելու չափ տեղ կայ։

Բժիշկը մէկ կողմ կոչեց քոյր Սէնթլիսը որ հղիութիւնը պատմեց անոր. ըսաւ թէ գ. Մատլէն մէկ կամ երկու օրուան համար դուրս գացած էր, և թէ քանի որ յայտնի չէր ճար գացած ըլլալը, յարմար չդատուեր էր հիւանդին իմացնել թէ գուցէ կը սխալի կարծելովը թէ պարոն քաղաքապետը Մօնֆերմէյլ գացած է. թէ վերջապէս կարելի էր որ Ֆանթին ձիշդ դուրսկած ըլլար։ Բժիշկը հաւանեցաւ քոյր Սէնթլիսի այս կերպով վարուիլը։

Ծեռը Ֆանթինի մտեցաւ, որ կրկնեց.

— Երբ առտու արթնայ, բարի լոյս, պիտի ըսես՝ պիտի քանի՞ ժամէն մանկիկիս, և որովհետև գիշերը ես չեմ քնանար, անոր քնանալը պիտի լսեմ։ Իր պզտի չունչը առնելով օր այնքան քաղցր է, լաւութիւն պիտի զգամ։

— Ձեռքդ ինծի տուր, ըսաւ բժիշկը։

Թևը երկնցուց, և խնդալով պօռաց.

— Ա՛լ աղէկ եմ, չգիտեք ուրեմն ադէնսալուս պատճառը։

բայց իրաւունք ունիք չդիանալու։ Գօղէթ վաղը պիտի գայ։

Բժիշկը զարմացաւ։ Ֆանթին աւելի ազէկ էր։ Ընդունելութիւնը աւելի քիչ էր։ Երակը աւելի սաժով կը զարնէր։ Ընդհանուր կենդանութիւն մը յանկարծ օդի կաւտաբ այս հոգու մաշ խեղճ էակին։

— Տօգթէօր, կրկնեց Ֆանթին. քոյր Սէնթլիս ըսաւ ձեզ թէ պարոն քաղաքապետը մանկիկը բերելու գացած է։

Բժիշկը լռեց և յաւատիճ յուզութիւնէ զգուշանալ պատուիրեց։ Զուտ ֆիզիկական դեղջուր մը առաւ, նաև ամիքիչ ջուր մը խմցնել պատուիրեց եթէ դիշերը տենդը բռնելու ըլլայ։ Մեկնելու առնն քոյրին ըսաւ.— Ան լի աղէկ կերթայ։ Բարերադրութեամբ եթէ իրօք վաղը պարոն քաղաքապետը մանկան հետ վերադառնայ, ո՛վ գիտէ, չատ զարմանալի չդնամութիւններ կան. մեծ ուրախութիւններու յանկարծ հիւանդութեանց առաջքը առնելը անսնուած բան է. քանի դիտեմ օր ասի զործարանական և շատ յատաչայած հիւանդութիւն մ՚է. բայց անանկ զազրնկերներ են ասոնք որ...։ Գուցէ պիտի ազատինք հիւանդը։

ԳԼՈՒԽ Ե։

ՃԱՄԲՈՐԳԸ ՀԱՄՆԱԼՈՎ ՆՈՐԻՆ ՄԵՆՆԱԼՈՒՆ ՀԱՄԱՐ ՉՆԱՀՈՒԹԻՒՆ ՄԲԺՈՂՆԵՐ ԿԸԹՆԱՒ

Երեկոցեան ժամը ութին նամակատան մեծ դուռէն Ուրան մտաւ այն կառքը զոր Համբան թողուցինք։ Կառքէն ինչպէս այն մարդը զոր գիտեցինք մինչև այս րոպէ, անմատչելիր կերպարանով մը պատասխանաններ տուաւ պանդոկին ծառաներուն որոնք հարցումներ ընելով փոյթ կը ցուցնէին իր կառքը կատարելու. օգնական ձին ետ զրկեց և պզտի Ջնարման ձին ալ ինքը տարաւ ախոռը կապեց, յետոյ վարի յարկը գնաց ախաղաղ սրահը մտաւ, դուռը զոցեց, նստաւ և սեղանի

մը վրայ կրթնեցաւ : Տասն ու չորս ժամ տևած էր այս ճամբորդութիւնը զոր վեց ժամուան մէջ ընել կը կարծէր : Ինք ընդհակառակը կարդարացնէր դիտելով որ յանդանքը իրը չէր . բայց ի՛նչ ներքուստ չէր նեղանար այնքան ուշացած ըլլալուն համար :

Պանդոկապետուհին եկաւ :

— Պարոնը պիտի պառկի՞ . պարոնը պիտի ընթրէ՞ :

Մարդը բացատական նշան մ՚րրաւ գլխովը :

— Ձիապանը կըսէ թէ պարոնին ձին շատ յոգնած է :

Հոս լռելէ դադրելով պատասխանեց .

— Ձին միթէ վաղը չպիտի կրնայ դարձեալ ճամբայ ելլել :

— Ո՛չ , պարոն , առ նուազն երկու օր հանդչելու պէտք ունի :

Մարդը հարցուց .

— Նամակատունը միթէ սա՞ չէ :

— Այո՛ , պարոն :

Պանդոկապետուհին նամակատունը տարաւ մարդը . ասի իր անցագիրը ցուցուց և հարցուց թէ կարելի էր արդեօք նոյն գիշերը սուրհանդակի կառքին հետ Մ . . . վերադառնալ . երբ իմացաւ որ սուրհանդակին քովի տեղը պարապ էր , իրեն համար պահեց զայն և վարձքը վճարեց : Պարոն , ըսաւ բացատրելով , առաւօտ ժամը չիշդ մէկին մեկնելու համար պէտք է որ հոս գտնուիք : Ցետոյ դուրս ելաւ մարդը և սկսաւ շրջիլ քաղքին մէջ :

Ուրաս առջի անգամ եկած էր . փողոցները մութ էին . կը քայլէր առանց գիտնալու թէ ո՛ւր կերթայ : Բայց կերևար թէ գիտամբ չէր հարցներ անցորդներուն իր ուսկէ երթալու պարտաւորիլը : Գրէթէ անուն առուակէն անցաւ և ինք ընդհակառակ նեղ և պղտի փողոցներու լաբիւրինթոսի մը մէջ դարձեալ մոլորեցաւ : Ցեղացի մը ձեռքը մեծ լապտեր մ՚ունենալով կերթար : Պահ մը վարանելէն ետք որոշեց այս տեղացիին դիմել . բայց նախ առջին և եաին նայեցաւ՝ կարծես ակնարկելով որ ուրիշ մը չլսէ իր ընդհակառակ հարցումը :

— Պարոն , ըսաւ , կը հաճի՞ք ըսելու ինձ թէ ո՛ւր է արդարութեան պաշտօնատունը :

— Տեղացի չէք եղեր , պարոն , պատասխանեց ուղեցին որ բաւական ծեր մարդ մ՚էր . ապա ուրեմն հետս եկէք : Ճիշդ դէպ արդարութեան պաշտօնատունին , այսինքն կուսակալին ապարանքին կողմը կերթամ . վասն զի հիմա պաշտօնատունը կը գտնուի , և դատաստանական նիստերը առժամանակ կը բռնամ կուսակալին ապարանքը կըլլան :

— Միթէ հո՞ն կը դումարուի եղեռնական առեւանը :

— Անշուշտ , պարոն . ինչ որ այսօր կուսակալի ապարանք է , յեղափոխութենէ առաջ տաճկորդարան էր : Պ . Տը Գօնզիէ որ 1782ին եպիսկոպոս էր , մեծ սրահ մը շինել տուաւ : Հիմա այն մեծ սրահին մէջ կը դումարուին դատաւորք :

Ճամբան՝ տեղացին հարցուց մարդուն .

— Եթէ դիտաւորութիւն ունիք դատի մը հանդիսական ըլլալ , քիչ մ՚ուշ է : Սովորաբար ժողովը ժամը վեցին կը գրուի :

Բայց երբ մեծ հրապարակին մօտեցան , տեղացին ընդարձակ և բաւարին շէնքի մ՚երեսին կողմը չորս լուսաւոր երկայնաձև պատուհանները ցուցուց անոր , և ըսաւ .

— Իրաւ որ բաղդաւոր էք , պարոն , վասն զի Ճիշդ ատենին հասաք : Սա չորս պատուհանը կը տեսնէք , այն է հիմա եղեռնական առեւանը : Լսոյս կայ : Ըսել է թէ նիստը տակաւին վերջացած չէ : Կերևայ թէ դատը երկար տևած և գիշերն ալ նիստ մ՚ընել հարկ եղած է : Դատը կարևորութիւն մ՚ունի՛ ձեզի համար . միթէ եղեռնական դատ մ՚է . միթէ վկա՞յ էք :

— Դատի համար չեմկայ հոս . փաստաբանի մը հետ պիտի տեսնուիմ , պատասխանեց մարդը :

— Ատ ուրիշ բան է , ըսաւ տեղացին : Պարոն , հիմա դուռը : Հո՛ն է նաև պահնորդը : Մեծ սանդուղքէն վեր երթք :

Տեղացիին հրահանգներուն համեմատ վարուեցաւ , և

քանի մը բոպէն նաք կը պառուէր սրահի մը մէջ, ուր շատ մարդիկ կային և ուր խումբ խումբ մարդեր պատմուձանաւոր փաստաբաններու հետ խառնուած հոն հոս կը փսփսային։ Միշտ արտասկի բան մ'է տեսնել ևւեր հագուստ մարդերու այս խումբերը, որոնք դատարանի սենեակներուն շրմին վրայ ցած ձայնով իրարու հետ կը փսփսան։ Այս վրաս փսուքնելն խիստ փիչ անգամ ազդրմ և գիտելիւն կ'ընէ։ Շատ անգամ եղածն է նախապէս վճռուած դատապարտութիւնները։ Անյոյզ և մտախոհոտ դիտիչ մը կը կարծէ թէ այս խումբերը սխուր փնթիակներ են ուր բզկտոզ միտքեր ամէն առտակ խառարային չէնքեր կը շինեն 'ի միասին։

Այս սրահը որ ընդարձակ և ձրագով մը միայն լուսաւորուած էր, նկիսկոպատարանին հին սրահներուն մին էր, և իրր դատարանի նախասրահ (salle des pas perdus) կը գործածուէր։ Երկմեռ գուռով մը որ նոյն պահուն դոց էր, կը գաուէր մեծ սենեկին ուր նիստ կըներ եղիւնական առեանը։

Այնքան մութ էր որ մարդը չվախցաւ հարցնելու փաստաբանի մը՝ առանց անոր ձայ ըլլալը գիտնալու։

— Պարոն, ըսաւ, դատը ինչպէս եղաւ։

— Ա'լ լմնցաւ, պատասխանեց փաստաբանը։

— Լմնցա՞ւ։

Այս խօսքը այնպիսի ձայնով մ'արտասանուեցաւ որ փաստաբանը եաևը դառնալով, ըսաւ.

— Ներեցէք, պարոն, միթէ ապգականն մ'էք։

— Ես։ Հոս մարդ մը չեմ ճանչնար։ Միթէ դատապարտութիւն մ'եղաւ։

— Անշուշտ. գրեթէ անկարելի էր չդատապարտել։

— Ռոնի աշխատութեանց դատապարտութիւն։

— Մշանջենական բռնի աշխատութեանց։

— Ուրեմն հաստատուեցաւ նոյնութիւնը, կրկնեց այնպիսի տկար ձայնով մը որ հազիւ թէ կը լսուէր։

— Ինչ նոյնութիւն, պատասխանեց փաստաբանը։ Նոյ-

նութիւն հաստատելու բան չկար։ Դատը պարզ բան մ'էր։ Կինը իր զաւակը սպանած էր, որդեսպանութիւնը հաստատուեցաւ, դատաւորները նախապէս մտածուած չհամարին ոճիրը, և կինը մշանջենական բռնի աշխատութեանց դատապարտեցին։

— Ըսել է թէ կինն է դատապարտուողը։

— Անշուշտ, ըսաւ փաստաբանը։ Լիմոզէն անուն ազջիկն է։ Հապա ինչ է ձեր հարցումը։

— Ոչինչ, բայց քանի որ լմնցաւ դատը, ինչու տակաւին լուսաւոր է սրահը։

— Միւս դատին համար, որ պրեթէ երկու ժամ 'ի վեր սկսած է։

— Ինչ է այն դատը։

— Ո'չ, այն դատն ալ յայտնի բան մ'է։ Ամբաստանեալը սքիչայ մը, վերստարա (récidiviste) մը, թիապարա մը, գող մ'է։ Ա'լ չգիտեմ թէ ինչ է անունը։ Աւազակի մը կերպարան ունի։ Ծանցանքը հաստատուելու ալ չըլլայ, միայն այնպիսի կերպարան մ'ունենալուն համար թիապարան կը զրկէի զան։

— Պարոն, հարցուց մարդը, կարելի է արդեօք սրահը մտնել։

— Ցիրաւի չեմ կարծեր։ Սրահը ամպոխին բազմութեամբ մը լի է։ Դռները բնդհատուած է։ Գուցես եղած մարդկին կան. նիստը նոյնն սկսելու առեն կրնաք մտնելու փորձ ը'ընել։

— Ո'ակէ պէտք է մտնել։

— Սա մեծ դուռէն։

Փաստաբանը հեռացաւ մարդուն քովէն։ Գանի մը րոպէի մէջ ամէն տեսակ զգայուեցերով դրեթէ մի և նոյն պահուն, դրեթէ միահաղոյն կերպով յուզուած էր մարդը։ Անտարբեր մարդուն խօսքերը հետ զնեակ անոր սիրտը մխուած էին իրր սառնային ասիղներ և իրր հրաշէկ մխուրներ։ Երբ տե-

նաև որ գիւղ բան մը լմցած չէր, շունչ առած։ Բայց չէր կրնար ըսել թէ պղտցածը դոհունակութիւն էր թէ ցաւ մը։

Ճանի մը խումբերու մօտեցաւ և ուշ դրաւ անոնց խօսակցութեան։ Առեանը տեսնելու շատ դատեր ունենալով, ժողովին նախագահը նոյն օրուան նիստին համար երկու պալէ և կարճ դատ նշանակած էր։ Նախ որգեսպանութեան դատը սկսած էր, և հիմա կարդը եկած էր եղեռնագործին, վերաքաղաքին, իր սովորական դերը խաղացողին։

Այս մարդը խնճոր դողցած էր, բայց դողութիւնը կերեւար թէ լաւ մը ապացուցուած չէր. հաստատուած էր սակայն թէ անի Թուլօնի թիւրանը նետուած էր ժամանակաւ։ Այս պատճառաւ էր որ իր դատը յոսի կերպարան կառնուր։ Մանաւանդ թէ հարցափորձ ըլլալէն առք վկայութիւններն ալ տրուած էին արդէն, բայց տակաւին ամբաստանեալը պաշտպանելու համար փաստաբանը պիտի խօսէր, և կառավարութեան փաստաբանն ալ հակառակը հաստատելով անոր դատապարտութիւնը պիտի պահանջէր. հետևաբար կէս գիշերէն առաջ չէր կրնար վերջանալ դատը. հաւանական էր թէ պիտի դատապարտուէր մարդը. վասն զի կառավարութեան փաստաբանը շատ յաջողակ էր, — և իր ամբաստանեալները ձեռքէն չէր փախցներ. — խելացի տղայ մ'էր ան, որ ատանաւոր կը չինէր։ Եղեռնական իրաւարանի սրահին դուռին քով ոտքի վրայ կայնած նուիրակ մը կսպասէր։

— Պարոն, դուռը շուտ պիտի բացուի, հարցուց նուիրակին։

— Պիտի բացուի, ըսաւ նուիրակը։

— Ինչո՞ւ. առեանը նորէն բացուելու ժամանակ դուռը պիտի չբացուի. միթէ նիստը ընդհատուած չէ։

— Առեանը արդէն բացուեցաւ դարձեալ, պատասխանեց նուիրակը, բայց դուռը չպիտի բացուի։

— Ինչո՞ւ։

— Վասն զի սրահը բազմութեամբ լի է։

— Ինչ. ալ ուրիշ տեղ չկայ։

— Եւ ոչ իսկ մարդու մը համար։ Դուռը դոցուեցաւ։ Ալ ոչ ոք կրնայ ներս մտնել։

Նուիրակը պահ մը լռելէն ետք շարայարեց.

— Պ. նախագահին հետը տակաւին երկու կամ երեք տեղ կայ. բայց պարոն նախագահը հասարակաց պաշտօնատուներուն սեփականած է զանոնք։

Նուիրակը ասի ըսելէն ետք կռնակը դարձուց։

Մարդը դլուխը ծռելով նախասենեկէն անցաւ, և մեծ սանդուղքէն կամաց կամաց և կարծես ամէն մէկ աստիճանը կոխելու դեղեցիկով վար իջաւ։ Հաւանական է որ ինքն իրեն հետ կը խորհրդակցէր։ Առջի օրէն 'ի վեր իր սրտին մէջ տեղի ունեցող սաստիկ կռիւը վերջացած չէր. և ամէն մէկ րոպէ նոյն կռիւին յանկարծական նոր փոփոխում մ'առնուլը կը տեսնէր։ Երբ սանդուղքին տատրատը հասաւ, կռնակը սանդուղքին վանդակին տուաւ և թևերը կուրծքին վրայ առաւ։ Ցանկարծ թիկնոցը բացաւ, թղթակալը հանեց, մատիտը առաւ, թերթի մը պատուեց, և կանթեղին նշոյլին մօտեցուց այն թերթին վրայ սա տողը գրեց. Պ. Մաթըլէն, Մ...ի փախչելը. յետոյ մեծ քայլերով սանդուղքէն վեր եկաւ նորէն, բազմութիւնը ճղքեց, ուղղակի նուիրակին քով գնաց, թուղթը յանձնեց և իշխանաբար ըսաւ.— Պարոն նախագահին տար ասի։

Նուիրակը թուղթը առաւ, նայեցաւ անդամ մը և հնազանդեցաւ։

ԳԼՈՒԽ Ը.

ՁՐԻ ՄՈՒՏՔ

Մ...ի քաղաքապետը առանց ինքն ալ դիտնալու, գրեթէ երեսնի անուն մ'առած էր։ Եօթը տարիէ 'ի վեր Պա–Պուլօնէյի մէջ ըրած առաքինի գործերուն համբաւը

վերջապես պղտի երկրի մը սահմաններէն անդին և մօտիկ երկու կամ երեք գաւառներուն մէջ տարածուեր էր : Ոչ միայն ան ապահովինաց արհեստը վերահաստատելով մեծ ծառայութիւն մ'ըրած էր նահանգին պետուրը քաղաքին ; այլ նաև հարիւր քառասունմէկ դիւղին մէջ չկար դիւղ մը որու աղեկութիւն մ'ըրած չըլլար : Մտնաւանդ թէ ի պահանջել հարկի կրցած էր նաև ուրիշ նահանգներու արհեստներըլ յառաջացնել և արդիւնաւորել : Օրինակի աղագաւ առիթ ունեցեր էր իր վարկովը և գրամագլուխը Պուլսնի մէջ շրջառեի գործատանին , Փերլանի մէջ ասուիի մանարանին և Պուպե-Սիու-Գանշի մէջ ալ կաւի Ջրաքաշեանի գործարանին պաշտպանութիւն ընելու : Ահ նուիրեք պատճառներ կը տրուէր պ. Մաթրլէնի անունը : Արդ և Տուէ պղտի այլ քաղդաւոր քաղքէն կը նախանձէին այնպիսի քաղաքապետ մ'ունենալուն համար :

Տուէի արքունի տանէին խորհրդականը որ Ամրան մէջ ելեւէնական տանէին նախագահութիւնը կը վարէր , ամէն մարդու պէս կը ճանչնար այս անունը որ ամէնուրեք և մեծապէս կը յարգուէր : Երբ նուիրակը ժողովին սենեկէն ունկնդրութեան առնուը առնող պուրը մեղմիկ բանալով նախագահին թիկնաթոռին եանը ծռուեցաւ և այս պարոնը կոպիտ պատէն ներկայ ըլլալ երբ յանձնոյ անոր այն թուղթը որու վրայ գրուած էր ընթերցողին քիչ մ'առաջ կարդացած տողը , նախագահը ակնածական բուռն շարժումով մը դրեչը առաւ , թուղթին վարի կողմը քանի մը խօսք գրեց և նուիրակին յանձնեց նայելն՝ ըսելով . Թող հրամմ պայ :

Թշուառ մարդը որու պատմութիւնը կը պատմենք , սրահին դուռին քով կեցած էր ձիշդ այն տեղ և ձիշդ այն դիրքով ուր կը գտնուէր երբ նուիրակը իրմէ պատուած էր : Մտախոհութեանը մէջ ձայն մը լսեց որ կրնէր իրեն . Պարոնը հետս գալու պատիւը կը հաձի շնորհել ինձ : Ա՛ս այն նուիրակն էր որ պահ մ'առաջ կռնակը պարձուցած էր անոր և որ հիմա

դինչ գեսիլը խոնարհելով կը բարեւէր զան : Նուիրակը այն խօսքը ըսելով Թուղթն ալ յանձնեց անոր : Բայց Թուղթը և որովհետև պատահաբար ձրագին քով կը գտնուէր , կրցաւ չնայապայ տողը կարդալ .

« Եղեռնական տանէին նախագահը իր յարգանքը կը մատուցանէ պ. Մաթրլէնին » : Թուղթը ձեռքին մէջ ձգելեց իբր թէ այս քանի մը խօսքերը իրեն համար ներքին տարօրինակ և աղի համ մ'ունենալին :

Նուիրակին եանէն գնաց :

Քանի մը րոպէէն նոր տախտակամած սենեկի մը մէջ կը գտնուէր . սենեկին տեսքը տաղտուկ էր . կանաչ օլիոցով ծածկուած սեղան մը կար որուն վրայ երկու մոմ կը վառէր : Տահաւին անհանգիստ կը ձայնէին նուիրակին յետին խօսքերը ձայն տալ ըսելով ձգելց գնաց . « Պարոն , ժողովին սենեակն է այս . սա դուռին պղձեայ բռնատուղը դարձուցէք , և ահա տանտեր և նախագահին Թիկնաթոռին եանը կը գտնուիք » : Նուիրակին այս խօսքերը նեղ փողերու և խաւարին տանող պատնեշու հետեւուր յիշատակ մը կարմնցնել իր մտքին մէջ :

Նուիրակը մինակ ձգած էր զինքը : Ցետին վայրկեանը հասած էր : Դաշնաւորը ամիսի միաքով մտածել , այլ չէր յաջողեր : Ամէնաթաթար մտածութեան բոլոր թելերը ուղեղին մէջ կը կտրուին ձիշդ այն միջոցին ուր մարդ ալ աւելի անոնց կը կարօտի՝ կեանքի կարճալի իրութիւններէն կապակցելու համար :

Մարդը ձիշդ այն տեղն էր ուր գաւառներն կը խորհրդակցին և կը գաւառապատեն : Շուարուն հանգարտութեամբ մը կը նայէր այս հանգարտ և զարհուրելի սենեակը որու մէջ այնքան կեանքեր փշրուած էին , ուր պահ մ'առաք իր աչունը պիտի որոտար , և ուսկէ իր Ճակատագիրը կանցնէր նոյն վայրկենին : Պատին կը նայէր , յետոյ ինքնիրեն կը նայէր , զարմանալով թէ ինչու այն սենեկին մէջն էր և թէ ինչու ինքն էր սենեկին մէջ գտնուողը :

Քսանուչորս ժամէ աւելի կար որ բան մը կերած չէր, հաճ քին տատանումէն սոսկալի յոգնած էր, այլ յոգնութիւնը չէր դադր. կը կարծէր թէ բան մը չէր դադր:

Պատին վրայ կախուած սև շրջանակի մը մօտեցաւ, որուն տպակիին տակ Բարիզի քաղաքապետ և պաշտօնեայ ծան նիդօլա Բաշի հին ինքնագիր մէկ նամակը կար: Թուականն էր՝ տնշուշտ սխալմամբ՝ յունվար 9 տարի Ռ. Բաշ այս նամակին հետ հատարակաց խորհրդատունը կը զրկէր իրենց տունը բանտարկուող պաշտօնեաներուն և երեսփոխաններուն ցուցակը: Ով որ նոյն պահուն սենեկին մէջ կարենար տեսնել և դիտել մարդը, անշուշտ պիտի երեակայէր թէ նամակը անոր շատ հետաքրքրական կերեւար. վասն զի աչքը վրայէն չէր հեռացներ և երկու կամ երեք անգամ կարդացի զայն: Կը կարդար առանց ուշադրութեան և յանկէտս: Գանթինին և Գօդէֆին վրայ կը մտածէր:

Մտախոհելէ առանց դադրելու եաեր գարձաւ, և վինքը եղեռնական տեղին սրահէն բաժնող դուռին պղնձեայ բռնատեղը տեսաւ: Գրեթէ մոռցած էր այս դուռը: Նայուածքը որ նախ հանդարտ էր, դուռին վրայէն չկրցաւ հեռանալ, այն պղնձեայ բռնատեղին հետ կապուելցաւ մնաց, յետոյ ահաբեկ և անշարժ նայուածք մ'եղաւ, և սակաւ առ սակաւ սարսափով համակուելցաւ: Մազերուն մէջէն շերմ առ շերմ քրտինք կելնէր և ուղիորէն կը հոսէր քուներուն վրայէն:

Եղաւ վայրկեան մը ուր ապստամբութեամբ խառն իշխանութեամբ մը շարժում մ'ըրաւ, անհնարապրելի շարժում որ նշանակէ և որ շատ ազէկ կը նշանակէ. Խօնդ եմ, ինչ եմ, ո՞վ կը բռնադատէ զիս նէրս մղնելու: Յետոյ յանկարծ եաեր գարձաւ, դիմացը տեսաւ այն դուռը ուսկից նէրս մտած էր. զէպ 'ի այն դուռը դնաց և դուրս եկաւ: Ա'լ այն սենեկին մէջ չէր. դուրսն էր. փողոցի մը մէջ կը գտնուէր, այն փողոցին մէջ ուսկից եկած էր և որ երկայն, նեղ, ասոլէճանաձեւրով և դռնակներով բաժնուած, ամէն տեսակ անկիւններ

կազմող, հոն հոս հիւանդներու ձրապնեղու նման կանթեղներէ լոյս առնող փողոց մ'էր: Շունչ մ'առաւ, մարիկ ըրաւ. ոչ առջեի և ոչ ալ եաեի կողմէն ձայն մը չէր առնուր. ըսկսաւ փախչիլ իբր թէ հալածող մ'ըլլար եաեէն:

Երբ այս նեղ անցքին անկիւններուն մեծագոյն մասը անցաւ և հեռացաւ, նորէն մարիկ ըրաւ: Մի և նոյն լռութիւնը, մի և նոյն մթութիւնը կը տիրէր իր բոլորտիքը: Շունչը հատած էր, կերեւար, ուսոի սպառի մը կսթնէցաւ: Պատին քարը ցուրտ էր. քրտինքը ճակտին վրայ կը սառէր. նորէն կայնեցաւ սարսուռ մը զգալով:

Եւ ահա հոն միտքը, մութին մէջ ոտքի վրայ կայնած, ցուրտէն և դողէ ուրիշ բանէ դողալով՝ մտածէց:

Բոլոր գիշերը մտածեր էր. բոլոր օրը մտածեր էր. իր ներսէն ա'լ միայն մէկ ձայն կը լսէր որ կըսէր իրեն. Բա'ռէ:

Այսպէս քառորդ մ'անցաւ: Վերջապէս գլուխը ծռեց, ցաւագին հառաչանք մը հանեց, թևերը թողուց որ վար կախուին և եաեն գնաց: Յամրաբար կը քայլէր վհատ մարդու մը պէս: կարծես թէ խոյս տալու միջոցին եաեէն հասեր էր մէկը և գինքը բռնելով եաեն կը տանէր:

Նորէն մտաւ խորհրդակցութեան սենեակը: Առջի տեսած բանը դուռին կղպակին լեզուամոյթն էր (gachette): Այս լեզուամոյթը որ բոլորտակ էր և յղիուն պղնձէ, զարհուրելի աստղ մը պէս կը փայփայէր իրեն համար: Լեզուամոյթին կը նայէր՝ վազրի մ'աչքը նայող գառնուկի մը պէս:

Աչերը չէր կրնար անոր վրայէն հեռացնել: Ժամանակ առ ժամանակ քայլ մը կառնուր և դուռին կը մօտէր:

Եթէ մարիկ ընելու ըլլար, մօտակայ սրահին ձայները խառնաշփոթ շշուկի մը պէս լսած պիտի ըլլար. բայց մարիկ չէր ըներ, և չէր լսեր:

Ցանկած դուռին քով գտաւ ինքզինքը՝ առանց ինքն ալ գիտնալու թէ ինչպէս մօտած էր. ջղաձգային սարսուռով մը բռնատեղը բռնեց. դուռը բացուեցաւ:

Ա'լ ունկնդրութեան սրահին մէջն էր:

ԳԼՈՒԽ Ը.

ՏԵՂ ՄԸ ՈՒՐ ՀՆԱՑ ՉՀԵՏՔ ՀԱՄԱՁԱՒՄՆԵՐ ԵՒ ԱԶԳՄԱՒԱՆ

ԿԱՑԱՒ մ՚առաւ, դուռը եաւէն դռնէն մէկնայարաբար, և ոտքի վրայ կեցաւ դիտելով ինչ որ կը տեսնէր։

Բաւական ընդարձակ և հագիւ թէ լուսաւոր սրահ մ՚էր այն ուր երթալն ազմուկ կը տիրէր, երբեմն ալ լռութիւն, և ուր բազմութեան առջև հզօրական գաւի մը ամէն տարբերը կը պարպուէին իրենց դձուձ և սասկալի շարժով։

Սրահին մէկ անկիւնը, ուր ինք կը գտնուէր, գաւառօրներ կային որոնց կերպարանքը անուշադիր և պատառոտած էր և որոնք եղունգներին կը կրծէին կամ բիբերնին կը դոցէին, միւս ծայրը հնոտիներ հագած բազմութիւն մը կար, դիտած բաներն էին ամէն տեսակ դիրքով փաստաբանները, պարիկա և անուշատ կերպարանքով գինուորները, արտաւորդ և հին տախտակամածներ, աղտոտ ձեղուն մը, ատեան դեղնագոյն քանթէ կանաչագոյն փոշիով մը ծածկուած սեղաններ, ձեռներէ անցած գուռեր, տախտակին մէջ մխուած բևեռներ, ձխաբանի կանթեղներ որոնցմէ աւելի ուժով քան թէ լոյս կելնէր, սեղաններուն վրայ պղնձեայ աշտանակներ և աշտանակներուն վրայ մոմեր. մթութիւն, աձևութիւն, տրտմութիւն. այս ամէն իրերու տպաւորէն տաղտուկ և վհատութիւն մը կարասդրուէր, վասն զի հոն կզգար մարդս այն մարդկային մեծ բանը որ օրէնք, և այն երկնային մեծ բանը որ արդարութիւն կանուանի։

Բազմութեան մէջէն ոչ ոք ուշադրութիւն բրաւ իրեն։ Ամէնքը տեղ մը կը նայէին, և այս տեղն էր նախադահին ձախ կողմի պատին քով և պղտի գուռի մը մօտ դրուած փայտէ նստարան մը։ Այս նստարանին վրայ որու լոյս կուտային բազմութիւն մոմեր, երկու գինուորի մէջ տեղ նստած մարդ մը կար։

Այս մարդն էր ամբաստանեալ մարդը։ Չփնտռեց բայց տեսաւ զան։ Իր աչերը բնականաբար դէպ՚ի նստարանը ուղղեցան կարծես նախապէս գիտնալով թէ ուր էր այն դէմքը։

Ինքզինքը տեսնել կարծեց, անշուշտ զէմքով բայարձակապէս իրեն չէր նմաներ, բայց իրեն պէս ծեր էր, դիրքովը, տեսքովը, տնկուած մազերովը, խարտեաշ և անհանդարտ բիբովը, պլուզայովը այն մարդը ճշդապէս էր ինչ որ էր ինք ՏԽ. մտած օրը՝ տեսլութեամբ համակուած և սրտին մէջ պահելով այն ամէն ահաւելի և սոսկալի խորհուրդները, դոր տասն և ինը տարուան մէջ թիւրանի քարայատակին վրայն ժողովելով գիտած էր։

Սարսուռով մ՚բռաւ իրմովի.— Ասուածի իմ, միթէ այս պէս պիտի ըլլամ նորէն։ Այն անձը ան նուաղն վաթսուն տարեկան կերևար։ Չգիտեմ ինչ բիբա, ապուշ և ահաբեկ երևոյթ մ՚ունէր։

Երբ դուրին ճոխութը լսուեցաւ, տեղ տրուեցաւ որ անցնի։ Նախադահը գլուխը դարձուց և հաւկնալով որ եկող անձը Մ. . . ի պ., քաղաքապետն է, բարև տուաւ։ Ընդհանուր-փաստաբանը որ իր պաշտօնատունին գործերուն պատճառաւ շատ անգամ Մ. . . գացած և պ. Մատրլէնը տեսած էր, ճանչցաւ զան և նոյնպէս բարևեց։ Բայց լինք հագիւ թէ նշմարեց իրեն տրուած բարևները։ Տեսակ մը բանդագուշանքով զբաղուած էր, և կը նայէր։

Սրահին մէջ դատաւորներ, ատենադպիր մը, ոստիկանութեան գինուորներ և անպատրոյն հետաքրքիրներու բազմութիւն կը տեսնէր, զոր արդէն ժամանակաւ անգամ մը, այսինքն քսան և եօթ տարի առաջ տեսած էր։ Նորէն կը տեսնէր այս սարսափալի բաները, որոնք իր առջևն էին, կը շարժէին, կը կենդային, չէ թէ չանդրադարձութեամբ յիշատակ մը կարթնցնելով մտքին մէջ, չէ թէ սինեմատոգրաֆ մը կը տեսնէր երևակայութեան մէջ, այլ իրական գինուորներ և իրական դատաւորներ, միսով և ոսկրով կազմուած իրական մարդերու իրական բազմութիւն մ՚էր տեսածը։ Ա՛լ բանը բուսած էր, կը տես-

նէր որ իր անցեալին սարսափելի տեսարանը իրաւեան առիթ սարսափներով նորէն կերևար և կենդանութիւն կառնուր իր բոլորտիքը :

Այն տեսարանը և իրաւեան սարսափները բայէ ՚ի բայ իր առջև կը տեսնէր :

Զարհուրեցաւ , աչերը գոցեց , և սրտին ամենէն խորին անդունդներէն պոռաց . Ամենևին :

Ճակատագիրը , որ անոր ամէն գաղափարները կը դղրդէր և գրեթէ խելքը կ՚ելլէին կառնուր , ողբերգային խաղ մը խաղացեր էր՝ հոն ուրիշ ծան Վալժան մը բերելով . և իրօք ամէն մարդ ծան Վալժան կանուանէր այն մարդը որ կը դատուէր :

Կենացը ամենէն սարսափելի միջոցին ներկայացումը կը տրուէր իր առջև , և տուողն ալ ուրուականն էր . ո՛ անլուր տեսարան :

Ամէն ինչ անթերի էր . մի և նոյն հանդերձանքը կար , դիշերուան մի և նոյն ժամն էր . գրեթէ մի և նոյն դէպք ուներող դատաւորները , զինուորները և հանդիսականներն էին : Միայն թէ նախապահին գլուխն վերօքը խաչելութիւն մը կար , մինչդեռ իր դատապարտութեան ժամանակի դատարաններուն մէջ չկար այս բանը :

Երբ դատուած էր ինք , Ասուած բացակայ էր :

Եաևէ աթոռ մը կար . մտածելով թէ կրնար տեսնուիլ , սասիկ վախցած և աթոռին վրայ իյնալու պէս նստած էր : Երբ նստաւ , դատաւորներուն պրտեղանին վրայ դրուած խաչաքարտներու կոյտին եաև գնտղուեցաւ դէմքը սրահին բազմութեան չցուցնելու համար : Հիմա կրնար տեսնել՝ առանց տեսնուելու : Անթերի կերպով հասկցաւ իրերու խոհան վիճակը , և կամաց կամաց հանդչեցաւ : Մինչև այն ատեն հանդարտեցաւ որ ալ կրնար մտիկ ընել :

Երդմնատու դատաւորներուն (jury) մին ալ պ . Պամաթաբուան էր :

Ձեռքը չորս կողմը ժուռ ածել ծալքերը տեսնելու համար ,

այլ չտեսաւ : Վիճաերուն նստարանը՝ առեղապլին սեղանին եաևի կողմը ըլլալով՝ չէր երևար իրեն : Մանաւանդ թէ ինչպես ըսինք քիչ մ՚առաջ , սրահին լոյսը քիչ էր :

Երբ ներս մտած էր , ամբաստանեալին փաստաբանը իր պաշտպանողական խօսքը կը վերջացնէր : Ամենուն հետաքրքրութիւնը յետին աստիճան դրգռուած էր . դատը երեք ժամ ՚ի վեր կը տևէր : Երեք ժամ ՚ի վեր այս բազմութիւնը կը նայէր որ մարդ մը , անծանօթ մը , թշուառական մը խիստ ապուշ կամ խիստ յաջողակ անձ մը տակաւ առ տակաւ տոկալի նմանութեան մը բերին ներքև կը ձնշուէր : Այս մարդը , ինչպես դիտենք արդէն , թափառական մ՚էր , Ռիէբօնի արար ըսուած մօտակայ արար մտնելով , խնձորներէ մը հասուն խնձորներով լի ոստ մը կարած և փախչելու առեն գաշտի մը մէջ բռնուած էր : Ո՞վ էր այս մարդը : Քննութիւն եղած էր , վիճաերու վկայութիւնները լսուած էին . ամէնքն ալ միաբերան վկայած էին . դատական բոլոր վիճաբանութիւններէն լոյսեր ժայթքեր էին : Ամբաստանութիւնը կը-սեր . — Իշխանութեան ձեռքը կրնող մարդը չէ թէ պատուդ պահպող մ՚է , թափառաստան մ՚է , այլ ապազակ մը , աքսորման տեղէն փախչող վերապարտ մը , վատթի եղեռնագործ մը , խիստ վտանգաւոր չարագործ մը , ծան Վալժան անուն ապիրատ մը զոր իշխանութիւնը երկար ժամանակէ ՚ի վեր կը փնտռէ , և որ՝ ասկէ ութը տարի առաջ Թուլօնի թիւրանէն կ՚ելնելով Ճամբու վրայ գինու գողութեամբ Բրեի–ծերվէ անուն Սավուացի պատանիի մը ստակը գողցաւ , ոճիր մը զոր պատժական օրինագրքին 383 յօդուածը կը նախատեսէ , և որու համար եաքէն պիտի դատէնք գինքը երբ նոյնութիւնը ըստ դատաստանական օրինի հաստատուի : Արդի յանցանքը նոր գողութիւն մ՚է . վերապարտութիւն մ՚է . Դատապարտեցէք գան նոր յանցանքին համար , եաքէն պիտի դատուի հին յանցանքը — :

Ամբաստանեալը այս ամբաստանութիւնը , և վիճաերու վա-

բերան վկայութիւնը լսելով կը գարմանար : Ընդհանուր-փաստաբանը ձեռանեռ կրնար , ուրիշ « ոչ » բան չէր կրնար , քան թէ ձեռքը կը նայէր : Գժուարութեամբ կը խօսէր , շիտիտումով կը պատասխաներ , բայց բոլոր անձը , աչքերն մինչեւ ցոլերնին , կը բանար ամէն բան : Իր բոլորակը կարգաւ շարուած այս ամէն իմացականութիւններու առջեւ ապուշի մը կը նմանէր ան , և կարծես թէ վինդը պրուտ բազմութիւնն ալ ըստրակեան մ'էր : Այլ սակայն կարի սպառնալի ապագայի մը վիճակը վանդին մէջն էր , նմանութիւնը ամէն բոլորի կուերնար , և բոլոր բազմութիւնը իրմէ աւելի անձիւթիւն պղտալ կը նայէր այն ոգեւորի վիճակին , որ հիմա գիտեր իր վրայ կը հանէր : Եթէ նոյնութիւնը հաստատուելու բլլար և եթէ Բրիթ-Ծերվիի դատին վերջն ալ դատապարտութիւն մ'բլլար , թիապարտութենէ 'ի զատ մահուան դատապարտելու հատնակութիւն մը կընդունէր : Ինչ էր այս մարդը : Ինչ տեսակ էր իր անդգայութիւնը . միթէ տկարամտութիւն մ'էր թէ վարպետութիւն մը , իրերու վիճակը լաւ մը կը հասկնար արդեօք թէ ամենեին չէր հասկնար : Այս հարցումները երբեմն դատի կը բաժնէին բազմութիւնը , և կարծես նաև երդիւռատու գատաւորները : Այս դատին մէջ թէ երկիւղալի և թէ խառնաշփոթ բաներ կային . թատրերգութիւնը ոչ թէ միայն տխուր , այլ նաև մութ էր :

Փաստաբանը բաւական յամրզակութեամբ պաշտպանած էր իր դատը այն գատուական լեզուաւ որ ատրինեալ առնուկան ձարտասանութիւնը կազմէ . զոր յատկութ ամէն փաստաբանները իր դործածէին ինչպես Բարիզի նոյնպէս և Բօմբրանեզնի կամ Մօնպելիէօնի մէջ , և զոր՝ ալ դատական երդած բլլալուն համար դրեթէ առեւանին պաշտօնական առեւնաբանները կը խօսին , վասն զի իր ծանր հնչիւնովը և վսեմ ձեւովը կը յորմարի անոնց . լեզու մը որու մէջ էրիկ մը էնոյ կանուանի , կին մը՝ հարս , Բարիզը՝ Լեզբոն ագռաւաթեղ և ֆոլժաքիթոռնեան , Լեզուաւորը՝ Հոյեղ , դերբատարու նպիսկո-

պոս մը՝ արքունի տեղապահութեան , ընդհանուր-փաստաբանը (avocat-général) ընդդիմութեան հարուածառ խոչընդոտը , դատական վիճաբանութիւնները (plaidoirie) ոչ քաղքենի ըլլալու , Լուի Վէրի դարը՝ ճշդ դար , Թատրոնը՝ մեծ բոլինեի տեղաբը , արքունի գերդաստանը՝ մեր ներքաղաքական վիճ ցեղը , նուագախանդեսը մը (concert) եկեղեցական ոճ նախերգութիւն , դատարին հրամանատար պարոն գօրապետը՝ ծանոթ մարդիկ և այլն , , , հմերգանոցի աշակերտները՝ օրերուն ընթացիկ , օրագիրներու վրայ ձգուած մեղրութիւնները՝ ատոր իմաստը որ իր ներքին ոչխարները ուրիշ մը կերցնէ , և այլն , , , կանուանեին : Ընդ փաստաբանը նախ ինձոյի դողդոջեան ինչ բլլալը բացատրել սկսած էր , բայց ատրութիւն զոր դիզեցիկ ոճով ատլը դժուար բան է , բայց պէնիյոնը պիտի չէր անդամ գամբանական մը ձառերու ատեն սովորական հաւի մ'ակնարկէր , և կրկին սկսած մը բացատրել ակնարկութիւնը : Փաստաբանը հաստատ էր թէ ամբաստանելոյն ինձոյ դողցած բլլալը իրապէս ապացուցած չէր : Իր պաշտպանութիւն՝ զոր փաստաբանը իրը անոր պաշտպան՝ Շանմաթիէօ կանուանէր կարճկրին վրայ հաստատ մնալով , սպանի վրայէն անցնիլը կամ ոսա մը կրնկը ոչ որ տեսած էր : Ամբաստանեալը բռնուած էր՝ ձեռը ունենալով այն ոսոր (զոր փաստաբանը կամովին ոտքէ կանուանէր) , բայց կըսէր թէ գետնէն գտած և առած էր զայն : Հակառակը հաստատող ապացոյցը ծեր էր : — Անշուշտ պատուի դող մը պատի մը վրայէն երկնցուած արծր մը ատած , այն ոսոր կտրած , դողցած և վախէն չթռնցուած հեռուտած էր զայն . անշուշտ դող մը կար : Բայց ոչ ոք էր ապացուցանողը թէ այն դողը Շանմաթիէօն էր : — Բան մը մնայն : Իր վարկի երկոնագործ մ'բլլալը : Փաստաբանը կը խոստովանէր թէ դժբաղդաբար անոր այս յատկութիւնը լաւ մը հաստատուած էր . ամբաստանեալը Փամբօլ բնակած էր . հոն յատկութիւն ըրած էր . Շանմաթիէօ անուն-

ինքնար ժան Մաթիէոյէն յառաջ եկած ըլլալ, ատոնց ամէնն ալ իրաւ էր. վերջապէս չորս վկաներ առանց դեզեւումի և իրական ձանձրոյթով կը հաստատէին թէ Ընդհանուր-փաստաբանը պարտ ժան Վալժանն էր, այս տեղեկութիւններուն և վկայութիւններուն իրը պատասխան փաստաբանը իր պաշտպանեալին ուրացական պատասխանը յառաջ կը բերէր, պատասխան մը որ իր հաշիւին կուգար, բայց ենթադրելով թէ ժան Վալժան եղեռնագործն է ան, միթէ ասկէ պճնաք էր հետեւցնել թէ խնձորի դողն ալ ան էր. ըլլայ ըլլայ, կարծիք մ'էր այն, և ոչ թէ ապացոյց մը: Ստոյգ է որ, ինչպէս փաստաբանն ալ իր անկեղծութեամբը կը պարտաւորէր խոստովանիլ, պաշտպանութեան յոյժ դժուարին մ'ընարած էր: Ամբաստանեալը ամէն բան կուրանար, թէ դողութիւնը և թէ վաղեմի եղեռնագործ մ'ըլլալը: Այս վերջին կէտին նը կատմամբ խոստովանութիւն մ'ընելը անտարակոյս աւելի պէկ պիտի ըլլար իրեն համար և իր դատաւորները ներողամտութեան պիտի արժանացնէր, փաստաբանը խրատ տուած էր որ խոստովանի վաղեմի դատապարտեալ մ'ըլլալը. բայց ամբաստանեալը յամառութեամբ չուզեր էր հաւանիլ, կարծելով անշուշտ թէ ամէն բան պիտի ազատէ՝ բան մը չխոստովանելով: Իր այս յամառութեամբը կը սխալէր, բայց պէտք չէր նկատել անոր կարճամտութիւնը: Այս մարդը յայտնապէս ապուշ մ'էր: Թիարանի մէջ երկարատև դժբաղդութիւն մը, թիարանէն դուրս ալ երկարատև թշուառութիւն մը կերլով բոլորովին ապուշ դարձած էր, և այլն, և այլն... աղէկ չէր պաշտպաներ ինքզինքը. բայց միթէ դատապարտուելու պատճառ մ'էր այս: Փաստաբանը Ք րթիթերվիլի խնդիրը չէր յուզեր, վասն զի ամբաստանութեան մէջ չկար այն: Փաստաբանը խօսքը կը վերջացնէր՝ աղերսելով դատաւորները որ՝ եթէ ժան Վալժանի նոյնութիւնը յայտնի կերեւար իրենց՝ աքսորէ փախչող և դատապարտուղ յանցաւորներուն համար նշանակուած թեթեւ պա-

ւիմներ սահմանէ անոր և չէ թէ այն պարհաւրելի պատուհասը որուն կենթարկի վերապարտ վաղեմի եղեռնագործ մը:

Ընդհանուր-փաստաբանը պաշտպան փաստաբանին ատելութիւնները հերքելու համար պատասխան տուաւ: Սակայն քար ինչպէս ամէն ընդհանուր-փաստաբաններ, նոյնպէս և անի ապդու ձեւով և կորովապէս պատասխանեց:

Ընդհատուելեց պաշտպան փաստաբանը իր ոգեպատրանքը համար, և վարպետութեամբ անոր այս ուղղութիւնէն օդուտ քաղեց: Փաստաբանին ըրած բոլոր դիջումները իրը դէնք ամբաստանելոյն դէմ գործածեց: Փաստաբանը կը խոստովանէր կարծես թէ ամբաստանեալը ժան Վալժանն է: Ուստի ընդհանուր-փաստաբանը այս կէտը բռնեց: Ըսել է թէ այն մարդը ժան Վալժանն էր: Ամբաստանութեան այս կէտը հաստատուած էր և ա՛լ վէճի տակ չէր կրնար կոչուիլ: Հոս ընդհանուր-փաստաբանը վարպետութեամբ խօսքը շրջելով ողբագործութեան սկզբնական աղբիւրները, պատճառները քննեց և որոտաց վէպոյին հեղինակութեանց դէմ, որոնք այն ժամանակ նոր կերեւային ապոստանական հեղինակութիւն անուանով, անուն մը զոր Գոթիէին և Օրթիզլամ թերթերու բանադատները տուած էին անոնց: Ընդհանուր-փաստաբանը կամ լաւ ևս ըսել ժան Վալժանի յանցանքին սկզբնապատճառը համարեց այն ամբարիշտ դրութիւնները՝ ճշմարտութեան դէմ մը տալով իր տարտղնութեանց: Այս դիտողութիւններէն առաջ սկսաւ նոյն իսկ ժան Վալժանի վրայ խօսիլ: Ո՞նչ էր այս ժան Վալժանը: Նկարագրեց անոր ինչ ըլլալը, ըսելով թէ հրեշ մ'էր ան և... և այլն: Այս տեսակ նկարագրութեանց օրինակը Թերթմէնի պատմութեան մէջ կայ. թէև ողբերգութեան օգուտ մը չունի, բայց ամէն օր մեծ ծառայութիւններ կը մատուցանէ առեղծական ճարտասանութեան: Ունկնդիր հանդիսականները և երդմնատուր դատաւորները «սարսեցան»: Այս նկարագրութիւնը վերջացնելէն ետք, անշուշտ հետեւեալ օր առաւօտ հրատարակութեան պաշտօնական

փոքրին բուռն ուրախ մը ներշնչելու պիտանիքն ունէին ջրաժուժ մ՚ընելով կրկնակ։

— Ահա այսպիսի թափառասուն, մուրացկի, ապրելու միջոց չունեցող և այլն..., մարդ մ՚է, իր անցեալովը յանցական գործողութիւններու սովորած և՝ ինչպէս կը հաստատէ Բրլթի-ծերվէի նիստամէջ գործած ոճիրը՝ թխաբան հնալովը հանդերձ տակաւին չուղղուած անձ մը, գողութեան յանցանքը ըրած միջոցին հասարակաց ճամբուն վրայ, արձան պատէն քանի մը քայլ անդին և գողցած բանն ալ տակաւին ձեռքը բռնած տեսնուող այսպիսի մարդ մը կուբանայ իր յայտնի յանցանքը, կուբանայ գողութիւնը, կուբանայ պատի մը վրայ ելնելը, կուբանայ ամէն բան, կուբանայ նաև իր անունը, կուբանայ մինչև անգամ իր նոյնութիւնը։ Բայց ի՛նչ հարկաւոր ապացոյցներէ, վրը չենք ուզեր նորէն յիշել, չորս վկայ ունինք որոնք պինքը կը ճանչնան, մինն է ծառէը, ոստիկանութեան տեսուչ, արդարանքը ծանրը, երկուքն ալ իր անուանարկութեան վաղեմի ընկերները, որք են Պրըվէ, Շրնխաէօ և Գօշալ անուն վաղեմի եղեռնագործները։ Այս միաբերան վկայութիւնները հերքելու համար ինչ կրսէ։ Կուբանայ. Ի՛նչ յամառութիւն։ Պ. դատաւորներ, արդարութիւնը պիտի գործադրէք, և... և այլն։ Միևնոյն ընդհանուր-փաստաբանը կը խօսէր, ամբաստանեալը բերանաբաց մնիկ կրնէր զարմանալով, միտքը պահայն քիչ մ՚ալ հիանալով։ Ցայտնի էր թէ կը զարմանար տեսնելով թէ մարդ մը այնպէս խօսիլ դիտէր։ Մեր ընդ մերթ ամբաստանեալն տեսնուածութեան առնէն «ազդու» պարագաներուն մէջ, երբ մեղադրական Ճարտասանութիւնը՝ չկրնալով զսպուիլ նշանակիչ մակդիրներու դիզուելով մը կը յորդի, և մերթին մը պէս ամբաստանեալը կը պատէ, կը պաշարէ, տեսի կամաց կամաց դէմքը աջ կողմէն ձախ և ձախ կողմէն աջ կողմը կորսնէր. տրամալի և անքարբառ բազբք որով դատական բանակութիւնները սկսեր էին վերջ

կը թուէին տալ։ Իր քովը գտնուող հանդիսականները քանի մ՚անգամ կամայ մը անոր սա խօսքը ըսելը լսեցին։

— Ահա տանկ կը լսեմ պ. պաշտպանը չհարցնելը։ — Ընդհանուր-փաստաբանը պատասխանելու դիտեր տուաւ, բաստանեալն ապուշի պիլք մը բռնելը, զոր անշուշտ դիտմամբ բռնած էր, և որ այն մարդուն չէ թէ կարճամտութիւնը, այլ վարպետութիւնը, խաբէութիւնը, արդարութիւնը խաբելու սովորութիւնը կը յայտնէր, և անոր «ոստկալի ապիրատութիւնը» բոլորովին երևան կը հանէր։ Վերջացուց խօսքը՝ Բրլթի-ծերվէի գործն ալ նաբէն տեսնելու թէութիւն ցուցնելով և սատակի պատիժ մը արուիլը պահանջելով։

Այս պատիժը, ինչպէս կը յիշենք, առ այժմ մշանջենական քանի աչխատութեանց գատապարտութիւն էր։

Պաշտպան փաստաբանը ոտքի վրայ ելաւ, նախ «պարոն ընդհանուր փաստաբանը» շնորհաւորեց իր «սքանչելի ատենաբանութեան» համար, յետոյ կարդալութեանը ներած քանի հերքիչական պատասխան մը տուաւ, բայց կը տեսնուէր, յայտնի էր թէ բանելու կէտ չէր մնար ձեռքը։

ԳԼՈՒԽ Ճ.

ՓԽՏՈՂՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՒ

Գատաստան վճռաբանութեանց վերջ տալու ժամանակը եկած էր։ Նախագահը ոտքի վրայ կայնեցուց ամբաստանեալը և ըստ սովորութեան հարցուց անոր։

— Ունիշ ըսելիք մ՚ունիս ինքզինքդ պաշտպանելու համար։

Մարդը որ ոտքի վրայ կայնած էր և սոսկալի դիմարկ մը կը դարձնէր ձեռքին մէջ, կարծես թէ չլսեց։

Նախագահը կրկնեց նոյն հարցումը.

Այս անգամ մարդը լսեց։ Կերևայ թէ հասկցաւ։ Ար-

ինդող մարդու մը պէս չարժուիմ մ՚ըրաւ, աչերը բոլորովի՛ր ժուռ ածել, բազմութեան, դիմուորներուն, իր փաստաբանին, դատաւորներուն, ժողովին նայիլեցաւ, իր նստարանին առջեւ դրուած տախտակամածին եզրին վրայ դրաւ աջ ձեռքը, անդամ մ՚ալ նայեցաւ, և ուղղակի ընդհանուր–փաստաբանին նայելով յանկարծ սկսաւ խօսիլ: Խօսքը կարծես ժայթքում մ՚էր: Խօսքերը անյարմար, բարկալի, յախուռն և իառնիխուռն կերպով կելնէին բերանէն, և լսողը կը կարծեր թէ անոնք ամենը մէկէն դուրս եկնելու համար կաճապարէին,

— Ահա ըսելիքս: Բարիզի մէջ, ըսեմ նաեւ, պարոն Պալուի քով սայլապործութիւն ըրած եմ: Տաժանելի արուեստ մ՚է այս. սայլապործ մը բարեւիրտ վարպետներու քով միշտ բացօդեայ տեղ, գաւիթներու մէջ, հիւղերու տակ կաշխատի. բնաւ փակ դարձանոյի մէջ չաշխատիր, վասն զի ընդարձակ տեղ պէտք է: Ձմեռը այնքան ցուրտ կըլլայ, որ դարձաւորները տաքնալու համար թեւերնին մէկ մէկու կը զարնեն. բայց վարպետները չեն թողուր. կըսեն թէ ժամանակի կորուստ է այն: Փողոցները սառով ծածկուած ժամանակ ձեռքով երկաթ բռնելը տաժանելի բան մ՚է: Ասանկ աշխատող մարդ մը շուտ կը ծերանայ: Ամենէն երիտասարդը այս արհեստին մէջ ծեր կ՚ըլլայ: Երբ քառսուն տարեկան կըլլայ, բանը կը բուսնի: Ես յիսուներեք տարեկան էի, շատ նեղութիւններ կը կրէի՝ մանաւանդ բանւորներէն որք շատ չար մարդեր են: Երբ մարդս երիտասարդութիւնը կը կորսնցնէ, այն՝ անպիտան մարդ, այս՝ ապուշ ծերուկ կանուանէ զան: Ալ օրը երեսուն սու կը վաստկի. կարելի է ծածին չափ քիչ վարձ կը տրուէր ինձի: Վարպետները ծերութենէս շահ կը հանէին: Ես այս վիճակի մէջ էի, աղջիկս ալ գեաը լաթ կը լուար: Ան ալ քիչ բան կը վաստկէր: Աղէկ պէշ կապրուէինք: Ան ալ տառապանք կը կրէր. անձրեւին, ձիւնին, բռնաշունչ հովին չհայելով բոլոր օրը

մինչեւ կէս մէջքը կՃկուած տաշտին մէջ լաթ կը լուար. ձիւն ալ գալու ըլլար, սպիտաւած էր լուալու: Կան մարդիկ որք շատ ձերմակեղէն չունին և որք մինչեւ ուշ առեն կսպասեն. եթէ չլուալու ըլլար, ա՛լ յաճախորդները կը կորուսէր: Տախտակները աղէկ կցուած չեն. ամէն տեղէն ջուր կը կաթի վրան: Միջագետանները բոլորովին կը թրջուին, տակէն ալ, վրայէն ալ: Ջուրը մինչեւ ոսկրին ծուծը կանցնի: Աղջիկս Անֆան Ռուժի (կարմիր Մանկանց» լուացարանն աշխատեցաւ, ուր չուրը ծորակներէ կուգայ: Տաշտի մէջ լուալու չնմանիր այս: Պէտք է ծորակին առջեւ կենալով լուալ, և եաեւի կողմը դառնալով աւազանին մէջ նորէն ողողել լաթերը: Տեղը գոց տեղ մ՚ըլլալով, ցուրտը նուազ զգալի է. բայց եաացող ջուրի շղի մը կայ որ սարսափելի է և մարդուս աչքը կը կուրցնէ: Իրիկուն ժամը եօթին տուն կը գառնար աղջիկս և այնքան յոգնած կըլլար որ շուտ մը կը պառկէր: Երիկէն ձեռ կուտէր: Վերջապէս մեռաւ: Շատ երջանիկ կեանք մը չանցուցինք: Պարիզեցի աղջիկ մ՚էր ան. պարահանդէս չէր երթար. հանդարտ կը կենար: Կը յիշեմ որ բարեկենդանի վերջին օր մը ժամը ութին պառկեցաւ: Ահաւասիկ վիճակս: Ըսածներս իրաւ են: Եթէ չէք հաւատար, հարցուցէք: Ա՛հ, ես ալ ինչ յաւանակ եմ որ հարցուցէք կըսեմ. Բարիզը անդունդ մ՚է. ով կը ճանչնայ Շանմաթիէօ ախպարը: Բայց ըսի թէ Պ. Պալուի քով աշխատած եմ. հարցուցէք անոր: Հիմա չդիտեմ թէ ինչ կուզէք իմմէ:

Մարդը լռեց, և ոտքի վրայ հծայ: Շուտ շուտ, բարձր, հատ, բիրտ և կերկերուն (enroué) ձայնով մը, և բարկալի և վայրենական միամտութեամբ մ՚ըսած էր այս բառերը: Անդամ մը խօսքը ընդհատեր էր բազմութեան մէջ մէկը բանեւելու համար: Այս հատուածական խօսքերը զոր կարծես թէ պատահաբար և առանց ինքն ալ գիտնալու կըսէր, հեծկլտանքի պէս կելնէին բերնէն, և ամէն մէկ խօսքը արտաբերելու ժամանակ փայտ ձղդող փայտահարի պէս շարժում

մը կընէը։ Երբ դադրեցաւ խօսելէ, ունկնդիրները քահ քահ խնդացին։ Մարդը ունկնդիրներուն նայեցաւ, և տեսնելով որ կը խնդան և չհասկնալով թէ ինչո՛ւ կը խնդան, ինքն ալ սկսաւ խնդալ։

Աղէտալի բան մ՚էր այս։

Նախագահը որ ուշադիր և բարեսէր մարդ մ՚էր, խօսիլ սկսելով յիշեցուց «պարոն դատաւորներուն» թէ պ. Պալուէ, վաղեմի սայլապարծ վարպետը որու քովէ ամբաստանեալը բանած ըլլալը յայտնած էր, պարապ տեղը յիշուած էր։ Մոռնկացեր էր ան, և կարելի եղած չէր գտնել զինքը, յետոյ դէպ ամբաստանեալը գառնալով ապիկար զան որ մոխիկ ընէ իր ըսելիքին, և շարայարեց.

— Այնպիսի կայսրենական մը մէջ կը գտնուիս ուր պէտք է խորհիլ։ Ամենածանր կասկածներ կան վրադ, և կրնան ամենածանր հետեւութիւններ ունենալ։ Ամբաստանեա՛լ, քու շահուդ համար վերջին անգամ մ՚ալ կը հարցնեմ. սա երկու եղելութեանց նկատմամբ յայտնի յայտնապէս պատասխան տուր։ Առաջին. Բիւերոնի արտին պատէն անցնելով ոսոը կարեցիր և խնձորները գողցար, այսինքն պատէ մ՚անցնելով գողնալու ոճիրը գործեցիր, այո՛, կամ ոչ, պատասխան տուր. Երկրորդ, Ժան Վալժան անուն ազատագիր վաղեմի թիապարտը գո՞ն ես թէ ոչ, պատասխան տուր։

Ամբաստանեալը լուռ մը հասկցող և տալու պատասխանը դիացող յաջողակ մարդու կերպարանով գլուխը շարժեց։ Բերանը բացաւ, դէպ ՚ի նախագահը դարձաւ և ըսաւ.

— Նախ և առաջ . . . :

Ցետոյ գլխարկին նայեցաւ, ձեղունը նայեցաւ, և լռեց։

— Ամբաստանեա՛լ, կրկնեց ընդհանուր–փաստաբանը խիստ ձայնով մը, ուշադրութիւն ըրէ։ Քեզի հարցուած բանը ո՞ւն է և ոչ մէկուն պատասխան տուիր։ Շփոթիլդ քու դատապարտութիւնդ է։ Ցայտնի է թէ անունդ Շանմաթիէօ չէ, թէ Ժան Վալժան վաղեմի եղեռնապարծն ես դուն ՚ի սկզբան

Ժան Մաթիէօ անունը կրելով, որ մայրիդ անունն է. թէ Օվէրնը գացած ես և թէ Ֆաւերօլ ծնած և հոն յատուկ ողորմութիւն բրած ես։ Ցայտնի է թէ պատին վրայէն անցնելով Բիւերօնի արտէն հատուն խնձորներ գողցար։ Թող պատասխանեն պատասուորները գատեն։

Ամբաստանեալը ՚ի վերջոյ նստած էր. ուստի նորէն ելաւ յանկարծ երբ ընդհանուր–փաստաբանը լռեցուց խօսքը, և պոռաց.

— Ձարասիրա մարդ մ՚ես դուն։ Ահա ասի ըսել կուզէի. բայց ՚ի սկզբան չկրցայ յիշել որ ըսէի։ Ես բան մը չգողցայ. ամէն օր ուտեստ ունեցող մարդ մը չեմ։ Այլեւիչն կուգայ. Ճամբայ եկնելէս առաջ տեղատարափ անձրեւ մը գալով գաշտերը բոլորովին գեղին գոյն առած էին. լճակներու ջուրերը կը յորդէին, և ուաղներուն մէջէն Ճամբուս եզերին վրայ միայն խոտի չիւղեր կելնէին. երբ քայլելով կուգայի, կարուած և գեհինը նետուած ոսոի մը գտայ որու վրայ խնձոր կար, ան ոսոը առանց դիտնալու թէ փորձանք պիտի բերէ գլուխս։ Այս պատճառաւ երկու ամիսէ ՚ի վեր բանտարկուած եմ, և հոն հոս կը քաշքշտուիմ։ Ցետոյ խոստովանելու կը հրաւիրուիմ, բայց չեմ կրնար խօսիլ. ինծի դէմ կը խօսուի. պատասխան տուր, կըսուի ինձ։ Զինուորը որ բարեսիրտ աղայ մ՚է, արմուկս կը դրդէ և կամաց մը կըսէ. Պատասխանէ։ Թաղտարութիւն տալ չդիտեմ ես. ուսումնական չեմ. խեղճ մարդ մ՚եմ։ Անիրաւութիւն մ՚է իմ այս վիճակս չտեսնելը։ Գողութիւն չըրի, գեհինը բան կար, ասո՞ւ։ Ժան Վալժան, կըսեք, Ժան Մաթիէօ, կըսեք։ Այդ անձերը չեմ ճանչնար։ Գիւղացի են ատոնք։ Պ. Պալուէն քով աշխատած եմ, որ Օրիթալի Պուլվարը կը բնակէր։ Անունս Շանմաթիէօ է։ Ուր ծնած ըլլալս ըսելով մեծ զեղծութիւն կընէք, վասն զի ես չդիտեմ թէ ուր ծնած եմ։ Ամէն մարդ տուն չունի որ տունի մէջ ծնի։ Երանի թէ ուրնեսայի։ Կարծեմ թէ հայրս, մայրս Ճամբաները թափա-

ուղ անձեր էին. բայց լաւ մը չդիտեմ: Երբ պզտիկ էի, ա-նուն պզտիկ էր. հիմա անունս Ծերուկ է: Ահա ասոնք են միրտուխեան անուններս: Ինչպէս կուզէք այնպէս հաւատացէք: Իրաւ է որ Օվէրնեը և Ֆավըրօլ գացած եմ. ինչ գործանալի բան, միթէ կարելի բան չէ Օվէրնեը գացած ըլլալ, Ֆավըրօլ գացած ըլլալ՝ առանց Թիթարանը նեռուած ըլլալու: Նորէն կըսեմ թէ գողութիւն ըրած չեմ և թէ ես Շանմաթիէօ ախոպարն եմ: Պարոն Պալուին տունը աշխատած եմ, բնակած եմ: Ձեր գթասրտութիւններով՝ ա՛լ դլուխս կը ցաւցնէք: Ինչո՞ւ ամէն մարդ եռակս ինկեր է կատաղի մարդերու պէս:

Ընդհանուր-փաստաբանը ոտքի վրայ կայնած էր. խօսքը նախագահին ուղղելով ըսաւ.

— Պարոն նախագահ, ամբաստանեալը քանի որ խոտն՝ի խուռն կերպով ալ մեծ վարպետութեամբ մը կուրանայ ա-մէն բան, քանի որ այս կերպով վարուելով ապուշ մը ձե-ւանալ կուզէ, — թէև խղճայ կուտանք իրեն որ չգիտէ յա-ջողի այս նպատակին հասնելու, — կուզենք որ հաճի, հա-ճի նաև ժողովը նորէն առեանը կոչելու Պրըվէ, Գօշբայլ և Շընիսիէօ պատապարտեալները, նաև ոսոխիանութեան տե-սուչ Ծավէրը և վերջին անգամ մ՚ալ հարցուփորձ ընելու ամբաստանեալին նոյն իսկ Ծան Վալժանը ըլլալը հաստատ-ուելու համար:

— Պարոն ընդհանուր-փաստաբանին դիտել կուտամ, ը-սաւ նախագահը, թէ ոսոխիանութեան տեսուչ Ծավէրը իր պաշտօնին վերաբերող գործի մը համար մօտիկէն նահանգի մը գլխաւոր քաղաքը երթալու հարկադրուելով, վկայութիւնը տալէն եռք տեսանէն, նաև քաղաքէն մեկնեցաւ: Պարոն ընդհանուր-փաստաբանին և ամբաստանեալը պաշտպանողին հաւանութեամբը հրաման տուինք որ մեկնի:

— Իրաւունք ունիք, պարոն նախագահ, պատասխանեց ընդհանուր-փաստաբանը: Քանի որ պ. Ծավէրը բայսկայ է,

կարծեմ թէ կը պարտաւորիմ պարոն երդմնատու դատաւո-րը նորէն յիշեցնել ինչ որ քանի մը ժամ յառաջ հոս մեր առ-ջեւ ըսաւ ան: Ծավէրը չարդի մարդ մ՚է որ անաչառ և ան-թերի ուղղախրատեմամբը պատիւ կը բերէ ստորին պետ կա-րեւոր պաշտօններու: Ահաւասիկ իր տուած վկայութիւնը.

«Եւ ոչ թէ հարկաւորութիւն ունիմ այն բարոյական կա-տածներուն և շօշափելի ապացոյցներուն, որոնցմով կը հաս-տատուի թէ սուտ են ամբաստանելոյն ուրացողական պատաս-խանները: Պատարեւլապէս կը ճանչնամ զան: Այս մարդուն անունը Շանմաթիէօ չէ. Ծան Վալժան անուն խիստ չարա-սիրտ և խիստ ահարկու հին եղեռնագործ մ՚է ան: Երբ իր պատիժին պայմանաժամը լրացաւ, իշխանութիւնը ակամայ արձակեց զան: Տասնեւինը տարի շղթայակապ աշխատութիւն կրած է որոշ դողութեան մը համար: Հինգ կամ վեց ան-գամ փախչելու փորձեր ըրած է: Ըրքի-ժերվէ և Ըրէբօն դողութիւններէն՝ի զատ, կասկած ունիմ թէ Տ...ի ա-ւազնորդ լուսահոգի դերապայծառ եպիսկոպոսին տունէն ալ դողութիւն մ՚ըրած է: Շատ անգամ տեսած եմ զան երբ Թուլոնի Թիթարանը Թիթապարանները պահնորդին քով օգնա-կանի պաշտօն կը վարէի: Կը կրկնեմ թէ կատարեալապէս կը ճանչնամ զան»:

Այս ճիշդ վկայութիւնը բազմութեան և դատաւորներուն վրայ ազդու ապատորութիւն մ՚ըրաւ: Ընդհանուր-փաստա-բանը խօսքը վերջացնելով պնդեց թէ քանի որ Ծավէրը բա-ցակայ է, միւս երեք վկաները, այսինքն Պրըվէ, Ընիսիէօ և Գօշբայլ կրկնեն իրենց վկայութիւնը, և մի առ մի հար-ցուին հրապարակաւ:

Նախագահը նուիրակի մը հրաման տուաւ, և վայրկեան մ՚ետք վկաները սենեկին դուռը բացուեցաւ: Նուիրակը պինու ղօրութեամբ իրեն օգնելու պատրաստ զինուորի մը հետ ներս բերաւ Պրըվէ դատապարտեալը: Հանդիսականները վարանումի մէջ էին և ամէն կուրծքերը կարծես կը բաղխէին»

ըլլը թէ ամէնքն ալ մէկ հոգի ունեցած ըլլային :

Վաղեմի եղեռնագործ Պրըվէ բանտարկեալներու յաւուրկ ան և դորշագոյն բաճկոնակ մը հագած էր : Պրըվէ գրեթէ վաթսուն տարեկան անձ մ'էր , գործի մարդու մը պէմքը և սրիկայի մը կերպարանքը ունէր : Աչուառը և սրիկայութիւնը երբեմն կը միանան : Նորանոր յանցանքներով գործակալ բանտ մտած և բանտապահի սէս բան մ'եղած էր : Պրըվէ այնպիսի մարդ մ'էր որու համար իր մեծերը կըսէին թէ կաշխատի օդտակար ըլլալու : Բանտի քահանաները կրօնական պարտաւորութիւնը կատարելու մասին լաւ վկայութիւն կուտային անոր : Ըմբռնանք ըսել թէ այս դէպքը վերահաստատութեան ժամանակ տեղի կունենար ,

— Պրըվէ , ըսաւ նախապահը , ոճրագործութեան համար դատապարտուած և խայտառակուած մարդ մ'ես , հետևաբար չես կրնար երդում առնուլ :

Պրըվէ առջին նայեցաւ :

— Բայց , կրկնեց նախապահը , նաև ըստ օրինի խայտառակուած մարդու մը սրտին մէջ աստուածային գթութեան շնորհիւ կրնայ պատուոյ և արդարասիրութեան զգացում մը ծնիլ : Ահա այդ զգացումին կը դիմեմ այս վճռողական պարագային մէջ : Եթէ այդ զգացումը դեռ պահած ես , ինչպէս որ կը յուսամ , խորհէ՝ ինծի պատասխան տալէ առաջ , մէկ կողմէ սա մարդը դիտէ որ մէկ խօսքովդ կրնայ կարսուիլ , միւս կողմէն ալ արդարութիւնը որ մէկ խօսքովդ կրնայ շքեղ մարտութիւնը իմանալ : Հանդիսաւոր է այս վայրկեանս , և եթէ սխալած ըլլալ կը կարծես , ժամանակ ունիս ըրած վկայութիւնդ ետ առնելու : — Ամբաստանեա՛լ , ոտք ելլէ : — Պրըվէ , աղէկ նայէ ամբաստանեալին . յիշողութիւնդ տամփոփէ , և խղճովդ ու հոգւովդ ըսէ մեզ թէ այս մարդն է ծան Վալժանը որ Թիարանի մէջ քու հին ընկերդ էր , կը պնդես թէ ան է այս մարդը :

Պրըվէ ամբաստանեալին նայեցաւ . յետոյ դէպ առեանը գառնալով ,

— Այո՛ , պարոն նախապահ , ըսաւ : Ամէնէն առաջ ես ճանչցայ զինքը և կը պնդեմ թէ այս մարդը ծան Վալժանն է . 1796ին Թուլօն մտաւ և 1815ին ելաւ : Մէկ տարի եաքն ալ ես ելայ : Հիմա տպուշի մը կերպարանքը ունի , ըսել է թէ տարիքը առնելով իրօք սխմար մ'եղած է . Թիարանին մէջ ծածկամիտ մարդ մ'էր : Շատ աղէկ կը ճանչնամ զինքը :

— Գնա , տեղդ նստէ , ըսաւ նախապահը : Ամբաստանեա՛լ , ոտքի վրայ կեցիր :

Ներս բերուեցաւ նաև Շընխաիէօ որ մշանջենական դատապարտեալ մ'էր , ինչպէս կերևար իր կարմիր առատաւոկն և կանաչ դպակէն : Թուլօնի Թիարանին մէջ կը կրէր իր պատիժը , և այս գաւառին համար մասնաւորապէս բերուած էր : Գրեթէ յիսուն տարեկան , աշխոյժ , խորշոմատոր , վախտ , պունատ , անամօթ և տենդոտ մարդ մ'էր ան . իր բոլոր անդամները և բոլոր անձը հիւանդային տկարութեան պէս բան մ'ունէին , նայուածքին մէջն ալ անբաւ զօրութիւնմը կար :

Թիարանի մէջ իր ընկերները ծը–նի–ֆիէօ (կուրանամ զԱստուած) մականունը տուած էին անոր :

Նախապահը անոր ալ ուղղեց Պրըվէին ուղղած դրեթէ միևնոյն խօսքերը : Երբ յիշեցուց անոր թէ իր խայտառակութեանը պատճառաւ երդում առնելու իրաւունք չունէր , Շընխաիէօ ղլուխը վերցուց և համարձակութեամբ բազմութեան նայեցաւ : Նախապահը հրաւիրեց զինքը որ ուշադրի , և՝ Պրըվէի հարցնելուն պէս՝ անոր ալ հարցուց թէ տակաւին պնդելով կը հաստատէր ամբաստանեալը ճանչնալը :

Շընխաիէօ քահ քահ խնդաց :

— Է՛ , ես չճանչնալու եմ ան , հապա ո՛վ պիտի ճանչնայ : Հինգ տարի մի և նոյն չղմայով կապուեցանք միատեղ : Դէմքդ ինչո՞ւ կը ծածկես , ծերուկ :

— Գնա , նստէ , ըսաւ նախապահը :

Նաւիրակը Գօշլեվէն ալ ներս բերաւ : Ան ալ որ միւսին

պէս մշտնջենական գատապարտեալ մ՚էր, թիարանէն եկած և Շընիաիէօլին պէս կարմիր հագած էր։ Լաւրաի կողմերու դիւղացի և Պիրենեան լեռներու կիս–արջ մ՚էր։ Լեռին վրայ հօտերու պահնորդութիւն ըրած էր, և հովուութենէ աւազակութեան գուբը սպրդեր էր։ Գօշքայլ ևս ոչ նուազ վայրենի էր, և ամբաստանեալէն աւելի ապուշ կերեւար։ Ասիայն մարդերուն մին է, որոնք բնութենէ ընծաներու կերպարանով ծրագրուած, և ընկերութեան հրամանները թիապարտ ըլլալով կատարելագործուած են։

Նախագահը քանի մը սրտառուչ և ծանր խօսքերով ուղեց յուզել զան, և՝ ինչպէս միւս երկուքին՝ նոյնպէս և անոր հարցուց թէ առջևը ոտքի վրայ կայնող մարդը ճանչնալը ա– ռանց վարանումի և շփոթումի գարձեալ կը հաստատէր։

— Ծան Վալժանն է ան, ըսաւ Գօշքայլ։ Մանաւանդ շատ ուժեղ ըլլալուն համար Ծան–լը–Գրիվ (Ծան–Բառնալի) կանուանէր։

Հանգիսականները այս երեք մարդերուն անշուշտ անկեղ ծութեամբ և ուղղամտութեամբ տուած ամէն մէկ հաստա տական պատասխանը լսելով փսփսալ սկսան. փսփսուք մը որ ամբաստանեալին նկատմամբ չարագուշակ կը համարուէր, փսփսուք մը որ հետզհետէ կաւելնար և աւելի կերկարէր ամէն անգամ որ նախապէս տրուած վկայութեան վրայ նոր վկայութիւն մ՚ալ կաւելնար։ Իսկ ամբաստանեալը տրուած վկայութիւնները մտիկ ըրած էր զարմայողի մը դէմքով որ՝ ըստ ամբաստանութեան՝ իր պաշտպանողական միակ միջոցն էր։ Առաջին վկայութիւնը տրուած միջոցին, մօտակայ գինուորները լսեցին որ անի կը մրմռար. Լաւ, ահա վկաներուն մին։ Երկրորդ վկայութենէն ետք քիչ մ՚աւելի բարձր և դրե– թէ պոհունակ կերպարանով մ՚ըսաւ. Լաւ։ Երրորդը երբ տրուեցաւ, պօռաց. Սքանչելի։

Նախագահը հարցուց.

— Ամբաստանեա՛լ, ահա լսեցիր վկայութիւնները։ Ըսե– լիք մ՚ունի՞ս։

Ամբաստանեալը պատասխանեց.

— Սքանչելի է, կըսեմ։

Բազմութեան մէջ շշուք մ՚եղաւ և մինչև պատուհաններուն մէջ ծաւալեցաւ։ Ցայտնի էր թէ մարդը կորուստի մատ նուած էր։

— Նուիրակներ, ըսաւ նախագահը լռեցուցէք բազմու թիւնը։ Վիճաբանութեանդ վերջ պիտի տամ։

Նոյն պահուն նախագահին քով շարժում մ՚եղաւ։ Ձայն մը լսուեցաւ որ կը պօռար.

— Պրըվէ՛, Շընիաիէօ՛, Գօշքայլ, այս կողմը նայեցէք։

Այս ձայնը այնքան ողբերմագին և այնքան սարսափելի էր որ լսողներուն ամէնքն ալ ահաբեկիլ դղրդին։ Ամէն մարդ նայեցաւ դէպ՚ի այն կողմը ուսկէ ձայնը կուգար։ Առեանին եռանը կենալու առանձնաշնորհութիւնը ունեցողներուն մէջ էն մարդ մ՚եղած, առեանը գատարանէն գաղտ և գրեթէ մէկ ու կէս կանգուն բարձրութիւն ունեցող դուռը մղած և սրահին մէջ տեղը ոտքի վրայ կայնած էր։

Նախագահը, ընդհանուր–փաստաբանը, Պ. Պամաիա– պուա, նաև քանի չափ անձինք ճանչցան զան, և ամէնքը միէն պօռացին.

— Պ. Մաորլէնն է։

ԳԼՈՒԽ ՃԱԳ.

ԾԸՆՄԸԹԻՒՕ ՀԱՏ ՉՀԱՏԻ ԿԸ ՉԸՐՄԱՆԱՑ

Իրօք Մաորլէնն էր ոտքի վրայ կեցողը։ Առենապըլ– րին ճրագը անոր դէմքը կը լուսաւորէր։ Գլխարկը ձեռքն էր. հպատաս ամենևին անհարգութիւն մը չունէր. թիկ– նոցը մանաւանդ ուշադրութեամբ կոճկուած էր։ Գունատ էր և թեթևակի կը դողար։ Հիմա բոլորովին ճերմակած էին մա– զերը, մինչդեռ Արաս հատած ժամանակը տակաւին ալեխառն

ձին։ Մէկ ժամէ՝ի վեր հոն էր ան, և այս մէկ ժամուան մէջ Ճերմակեր էին մազերը։

Ամէն մարդ գլուխը վերցուց։ Անսիարադրելի էր ապաւորութիւնը։ Ուսնինդիրները պահ մը վարանեցան։ Ձայնը այնքան կսկծալի էր, և ոսքի վրայ կայնող մարդը այնքան անխռով կերեւար որ՝ի սկզբան չհասկցուեցաւ թէ ո՛վ էր պատասխանողը։ Հարցուեցաւ երրորդ թէ ո՛վ ձգած էր ազազակը։ Կարելի չէր հաւատալ թէ այն ահարկու ազազակը հանողը այն հանդարտ մարդն ըլլայ։

Այս վարանումը քանի մը մանրերկրորդ տեւեց միայն։ Մարդը դուռ տակաւին ամէնքն ալ նոյն պահուն Պ. Մատրլէնն հասուանէին, առանց ժամանակ տալու նախապահին և ընդհանուր-փաստաբանին որ կարենան խօսք մ՚ընել, առանց ժամանակ տալու զինուորներուն և նուիրակներուն որ շարժում մ՚ընեն, յառաջացած էր դէպ՝ի Գօշբայլ, Պրովէ և Ըընիաթէս անուն վկաները։

— Ձեր Ճանչնար պիս, Հարցուց։

Երեքն ալ ափ՝ի բերան մնացին, և գլուխի շարժումով մը յայտնեցին թէ չէին Ճանչնար զան։ Գօշբայլ վախ մը զգալով հլութեամբ և յարգանք պինուորի մը պէս բարեւ տուաւ։ Պ. Մատրլէն դէպ՝ի դատաւորները և դէպ տաեանը դարձաւ և մեղմի ըսաւ.

— Պարոն դատաւորներ, ամբաստանեալը արձակեցէք։ Պարոն նախագահ, բռնել տուէք պիս, Ձեր փնտռած մարդը ան չէ, այլ ես եմ։ Ժան Վալժան ես եմ։

Եւ ոչ մէկուն բերանը շունչ կառնուր։ Ի սկզբան ամէն մարդ զարմանալով կը սարսռէր, այլ հիմա դերեզմանական լռութիւն մը կը տիրէր ջրոս կողմը։ Սրահին մէջ ամէն մարդ այն կրօնական սարսափը կզգար, որով բազմութիւնը կը դրաւուի երբ մեծ բան մը կը կատարուի։

Սակայն նախագահին դէմքը համակրութեամբ և արհամարհանքով ապաւորուած էր, ընդհանուր-փաստաբանին հետ ա-

րագօրէն ակնարկ մը փոխանակած և դատաւորաց աթոռակիցք խորհրդականներուն հետ քանի մը խօսք բրած էր յանկարծ։ Գէպ՝ի բազմութիւնը դարձաւ, և հարցուց այնպիսի եղանակաւ մը, որու նշանակութիւնը ամէն մարդ հասկցաւ։

— Բժիշկ մը կայ հոս։

Ընդհանուր-փաստաբանը խօսիլ սկսելով ըսաւ.

— Պարոն դատաւորներ, այս տարօրինակ և անակնկալ դիպուածը՝ որ տեւանը կը խոտվէ՝ մեզի, ինչպէս նաև ձեզի, այնպիսի դատաւոր մը կը ներշնչէ զոր թացատրելու պէտք չունինք։ Ամենքդ գիտէք յանուանէ կը Ճանչնաք Մ...ի քաղաքապետ յարգի Պ. Մատրլէնը։ Եթէ տեւանը բժիշկ մը կայ, պարոն նախագահին հետ մենք ալ կաղաչենք զինքը որ բարեհաճի խնամել Պ. Մատրլէնը և իր բնակարանը տանիլ զան։

Պ. Մատրլէն չմտաղուց որ ընդհանուր-փաստաբանը խօսքը լմնցնէ։ Խիստ հին և իշխանական ձայնով մը ընդմիջեց զան։ Ամատակի իր արտաբերած խօսքերը. զոր հոս կը նշանակենք Ճիշդ այնպէս ինչպէս որ այս տեսարանի ականատեսները մին տեւանը դոցուելէն ետք անմիջապէս գրած է և ինչպէս որ տակաւին կը հնչէն ասկէ քառասուն տարի առաջ լսողներուն ականջին։

— Ներողութիւն եմ, պարոն ընդհանուր-փաստաբան, բայց խենդ չեմ։ Հիմա կը տեսնէք։ Ամենատխուր վճիռ մը պիտի տայիք. արձակեցէք այս մարդը, պարտ մը կը կատարեմ. ես եմ այն դժբաղդ դատապարտեալը։ Հոս միայն ես եմ յայտնապէս Ճշմարտութիւնը տեսնողը. Ճշմարիտ է ինչ որ կըսեմ ձեզ։ Ատուած որ վերն է, կը տեսնէ այս վայրկեանիս մէջ ըրածս, և այս բաւական է։ Արդեօք բռնել տալ զիս, վասն զի ահա հոս եմ։ Սակայն ինչ որ կրնայի ընել ըրած էի։ Ուրիշ անուն մ՚ատի որ չյայտնուիմ. Հարստահայ, քաղաքապետ եղայ, ուղեցի պարկեշտ մարդ եղու կարդը անցնիլ նորէն։ Բայց կերևայ թէ անկարելի բան է այս։

Վերջապէս ուրիշ շատ բաներ կան զոր չեմ կրնար ըսել։ Չեմ ուզեր կեանքս պատմել ձեզ. օր մը ամէն բան պիտի յայտնուի։ Գերապատիւ եպիսկոպոսին տունէն դողութիւն ըրի, իրաւ է. Բրիթ-Ծերվէին սաակը յափշտակեցի, ասալ իրաւ է։ Ով որ ըսաւ ձեզ թէ Ժան Վալժան խիստ չարասիրտ թշուառ մ'է, իրաւունք ունէր։ Ցանցանքը դուցէ բոլորովին իմս չէ։ Մարիկ ըրէք, պարոն դատաւորներ, ինծի պէս դատապարտ մարդ մը ոչ նախախնամութիւնը ամբաստանելու և ոչ ալ մարդկային ընկերութիւնը խրատելու իրաւունք ունի, բայց պիտի պէտք է որ վերստակար բան մ'է այն անուանարկութիւնը ուսկէ չանգ ըրի ազատիլ։ Թիարանն է թիապարտ կազմողը։ Եթէ կուզէք, մի մոռնաք այս խօսքս։ Թիարանը նետուելէ առաջ խեղճ իւղագի մ'էի, խիստ քիչ էր խելքս, Ցեսակ մ'ապուշ մ'էի. Թիարանը փոխեց զիս։ Ապուշ էի, չարասիրտ եղայ. կոճղ էի, խանձող դարձայ։ Ցետոյ ներողամտութեան և բարութեան չնորհիւ ազատեցայ, ինչպէս որ խստութեան պատճառաւ կորսուած էի։ Բայց, ներեցէք, դուք չէք կրնար հասկնալ թէ ինչ ըսել կուզեմ։ Ան երկու ֆրանքնոցը զոր եօթը տարի առաջ Բրիթ-Ծերվէնն գողցած էի տունս չմինէպի մոխիրին մէջ պիտի գըտնէք։ Ա'լ ուրիշ բան մը չունիմ ըսելու։ Ռունել տուէք զիս։ Պատուած իմ, պարոն ընդհանուր-փաստաբանը գլուխը կը շարժէ. կըսէք թէ Պ. Մատըլէնը խնցած է. չէք հաւատար ըսածներս։ Ցաւալի բան է այդ։ Գէթ մի դատապարտէք սա մարդը։ Բայց ինչո՞ւ չեն ձանչնար զիս ասոնք։ Կուզէի որ ծավէր հոս ըլլար։ Գէթ ան պիտի ձանչնար զիս։

Անհաւատալի բան է ըսել թէ ինչպիսի բարեսիրական և տրտում մեղմաղձութեամբ մը կարտաբերէր այս խօսքերը։

Դէպ երէք դատապարտեալները դարձաւ.

— Բայց ես կը ձանչնամ քեզի, Պրըվէ, կը յիշե՞ս...։

Խօսքը կարեց, պահ մը դիտեցաւ և ըսաւ.

— Կը յիշե՞ս այն կիպրասէ տամաձև (damier) փոկերը զոր առնէիր երբ Թիարանն էիր։

Պրըվէ զարմանալով ստանիլ պատ և ահաբեկ կերպարանքով անոր նայիցաւ դլխէն մինչև ոտքը։ Մատըլէն շարունակեց.

— Դուն, Շընթիաիէօ որ ինքզինքիդ Ծը-նի-Տիէօ մականունը կուտայիր, աչ ուսդ բոլորովին այրած է, վասն զի օր մը խարոյիով լի կրակարանի մը վրայ պառկեցար՝ քնչելու համար այն երեք T. F. P տառերը որք սակայն տակաւին կերևան ուսիդ վրայ։ Պատասխան տուր, ճիշդ չէ՞։

— ճիշդ է, ըսաւ Շընթիաիէօ։

Գօշըայլին դառնալով,

— Գօշըայլ, ըսաւ, ձախ թեդ արմուկիդ կրկնուած տեղը այրած վառօդով դրոշմուած Թուլոնի մ'ունիս որու տառերը կապտագոյն են։ Կայսեր Գան երեսունն Թուլոնեան է այն, այսինքն 1 մարտ, 1815։ Բաց թեդ։

Գօշըայլ թեղանիքը վերցնելով թեը բացաւ. ամէնքն ալ բոլորտիքը հաւքուելով իր մերկ թեը նայեցան։ Ձինուոր մը ճրագ մը բերաւ, իրօք կար այն Թուլոնը։

Թշուառ մարդը դէպ տանտէրը և դէպ՝ի գատաւորները դարձաւ այնպիսի ժպիտով մը զոր տեսնողները երբ կը յիշեն, տակաւին սոսկում կը տրամին։ Ցաղթականի մը, նաև յուսահատի մը ժպիտն էր այն։

— Դիտեցիք արդ թէ ես եմ Ժան Վալժան։

Առտնին մէջ այլ ոչ գատաւոր, ոչ ամբաստանող, ոչ այլ զինուոր կար, մի միայն անշարժ աչեր և յուզուած սիրտեր կային։ Ոչ ոք կը յիշէր այլ թէ ամէն մէկը ինչ պաշտօն կը վարէր հոն. ընդհանուր-փաստաբանը ամբաստանելին պատժուելը պահանջելու, նախագահը նախագահելու և փաստաբանն ալ ամբաստանեալը պաշտպանելու պաշտօն ունենալնին մոռցեր էին։ Աւելի զարմանալին սա էր որ ամենուն հարցում մը չեղաւ, ամենուն իշխանութիւն մը ջամառութիւն չըրաւ։ Վսեմ տեսարաններու յատկութիւնն է ամէն սիրտերը դողալ և բոլոր ակառատեսները հանդիսա-

ֆան ընել։ Գուցէ ոչ ոք կը հասկնար ինչ որ կզրար, անշուշտ ոչ ոք կը խոստովանէր թէ հոն մեծ և փոզփոզուն լոյս մը կը տեսնէր։ Ամենքն ալ նեղքին շարժումով մը համակուէյան։

Հոն ամենուն առջև կայնողն էր Ծան Վալժան որ յայտ յանդիման կերեւար։ Այս մարդը միայն երեւան եկնելովը լուսաւորած էր այն գաւառը որ դեռ սակ մ'առաջ մթին էր և անորոշ։ Բազմութիւնը՝ ալ առանց ուրիշ բացատրութեան մը պէտք ունենալու կարծես ելեքտրական յայտնութեամբ մը անմիջապէս և մէկ նայուածքով հասկցաւ մարդու մը այս պարզ և զարմանալի պատմութիւնը, մարդմէ մը որ իր տեղը ուրիշ մը չդատապարտուելու համար ինքզինքը կը մատնէր։ Ատրամասն պարագաները, վարանումները, և մանր մունր դիմագրութիւնները մոռցուեցան այս մեծ և լուսաւոր եղելութեան առջև։

Այս ապաւորութիւնը շուտ մ'անցաւ, բայց ներշնչուած միջոցին անդիմագրելի եղաւ։

— Աւելի անհանգստութիւն չեմ ուզեր պատճառել ատենին, կրկնեց Ծան Վալժան։ Ահա կերթամ քանի որ չեմ բռնուիր բանտարկուելու համար։ Ծատ գործեր ունիմ, զոր կը պարտաւորիմ կատարել։ Պարոն ընդհանուր–փաստաբանը ոմն ըլլալս պիտի, ուր երթալս պիտի, երբ որ ուզէ, կրնայ բռնել տալ ինծի։

Դեռ չի դուռը ուղղեցաւ դուրս ելնելու համար։ Ոչ ոք ձայն հանեց, ոչ ոք թեւը երկնցուց արգիլելու համար որ երթայ։ Ամենքն ալ տեղ բացին որ անցնի։ Նոյն պահուն չդիտեմ ինչ երկնային բան մ'ունեցեր որով բազմութիւնները կրնկրկին և մարդու մ'առջև կարգի կը մտնեն որ անցնի ան։ Կամաց կամաց քայլելով բազմութեան մէջէն անցաւ։ Ինաւ չհասկցուեցաւ թէ ո՛վ բացաւ դուռը, բայց սոսկ է թէ երբ դուռին քով եկաւ, արդէն բաց էր այն։ Հոն եաեը դարձաւ և ըսաւ.

— Պարոն ընդհանուր–փաստաբան, ձեր կամքին հնազանդելու պատրաստ կսպասեմ։ Ցեռոյ դէպ ատեանը պատնալով ըսաւ.

— Դուք ամենքդ ալ, որ հոս էք, անշուշտ դժուարեան արժանի կը համարիք զիս, այնպէս չէ։ Առաւած իմ, երբ միտքս կը բերեմ ինչ որ ըսի հիմա, ինքզինքս նախանձելի կը համարիմ։ Սակայն աւելի ազէկ կըլլար եթէ չպատահէին այս դէպքերը։

Ցեռոյ դուրս ելաւ, և դուռը ինչպէս որ բացուած էր նոյն կերպով զոցուած էր, վասն զի որոնք որ տեսակ մը մեծ գործեր կընեն, միշտ ապահով են թէ բազմութեան մէջ իրենց ծառայող մը կը գտնուի։

Գրեթէ ժամ մ'եաք դատաւորները ամէն ամբաստանութենէ անպատրա կը հրատարակէին Ճանմաթիէօ անուն մարդը, որ անմիջապէս արձակուեցաւ։ Ճանմաթիէօ զարմանալով կերթար՝ կարծելով թէ բոլոր մարդիկ խենդ են, և չհասկնալով թէ ինչ էր այն տեսիլը։

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

ԴԻՄԱՀԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ ԱՐԱՋԻՆ

ԹԻ Պ. ՄԱՏԹԼԻԷՆ ԻՆՉ ՀԱՑԵԼԻՔ ՄԻՋ ԿԸ ՆՇՑԻ ԻՐ ՄԱՋՆԵՐԸ

Արեւը կակուղ ծագիլ։ Փանթին դիշերը տենդով, արբշնուլեամբ, այլ երանաւէտ տեսիլներուվ անցուցած էր. առաւօտ կը քնանար։ Քոյր Սէնթլիս որ հսկած էր հիւանդուհին, անոր քնացած վիճակին քովէն հեռացեր էր ֆինֆլնէյ նայէ նոր դեղաջուր (potion) մը պատրաստելու համար։ Ցարդ քոյրը քանի մը վայրկեանէ՝ ի վեր հիւանդարանի դործատնոյն էր, իր դեղերուն եւ սրսուակներուն վրայ ծռուած էր եւ խիստ մեծէն կը նայէր, վասն զի վերջալոյսը ամէն առաւանեներու վրայ մշուշ մը կը ծաւալէ։ Ցանկարծ դլուխը դարձուց եւ թեթեւ աղաղակ մ՚արձակեց։ Իր առջեւ կը տեսնէր Մաթըլէնը որ ներս մտած էր լռիկ։

— Դո՞ւք էք, պարոն քաղաքապետ, պօտաց կրօնուհին։

Մաթըլէնը ցած ձայնով մը պատասխանեց.

— Ի՞նչպէս է սա խեղճ կինը։

— Դէշ չէ առայժմ։ Բայց բաւական սրտի խաղ քաշեցինք, պիտի։ Բացատրեց անոր ինչ որ տեղի ունեցեր էր. ըսաւ թէ առջի օրը խիստ վտանգաւոր էր Փանթինի վիճակը եւ թէ հիմա լաւագոյն էր ան, վասն զի կը կարծէր թէ Պ. քաղաքապետը Մօնֆերմէյլ գացած է իր զաւակը բերելու համար։ Քոյրը չհամարձակեցաւ պարոն քաղաքապետին հարցումներ ընել այս մասին, բայց անոր կերպարանէն հասկցաւ թէ Մօնֆերմէյլէ չէր դար։

— Շատ աղէկ, ըսաւ, լաւ ըրեր էք սխալիլը իրեն չիմացնելով։

— Այո՛, կրկնեց քոյրը. բայց, պարոն քաղաքապետ, հիմա որ ձեզ պիտի տեսնէ առանց տեսնելու նաև զաւակը, ինչ պիտի ըսենք։

Պահ մը մտախոհեցաւ եւ ետք։

— Աստուած ողորմած է, ըսաւ։

— Այլ սակայն չպիտի կրնանք ատել, կմկմաց քոյրը կես ձայնով։

Արեւը բոլորովին լուսաւորած էր սենեակը։ Պ. Մաթըլէնի երեսը դիմացէն կը լուսաւորեր։ Քոյրը պատահաբար վեր վերցուց աչքերը։

— Ա՛հ, պարոն, աղաղակեց, ինչ եղաք, ինչ ունիք. մազերնիդ բոլորովին ձերմակեր են։

— Ճերմակ՞ են։

Քոյր Սէնթլիս հայելի չունէր. ծրար մը խառնելով պզտիկ հայելի մը հանեց զոր հիւանդարանի բժիշկը կը գործածէր հիւանդի մը մեռած ըլլալը եւ շնչելէ դադրիլը ստուգելու համար։ Պ. Մաթըլէն հայելին առաւ եւ անով մազերը նայեցաւ եւ ըսաւ. Զարմանալի բան. իրաւ ճերմակեր են։

Անտարբերութեամբ եւ կարծես ուրիշ բանի մը վրայ մտածելու պէս արտաբերեց այս խօսքը։

Քոյրը այս իրողութեան մէջ չգիտեմ ինչ թագուն դաղտնիք մ՚ընդնշմարելով ահաբեկիլ դժայ։

Պ. Մաթըլէն հարցուց.

— Կրնամ տեսնել հիւանդուհին։

— Արդեօք պարոն քաղաքապետը բերել պիտի չտայ անոր զաւակը, ըսաւ քոյրը, հարցում մ՚ընելու հազիւ հազ համարձակելով։

— Անշուշտ, բայց առ նուազն երկու կամ երեք օր պէտք է։

— Եթէ հիւանդուհին մինչեւ այն ժամանակ ձեզ չտեսնէ, ու ըլլայ, կրկնեց քոյրը վհեհրատութեամբ, չպիտի դիտնայ թէ ես դարձած էք, դիւրին պիտի ըլլայ համոզել զինք որ համբերէ, և երբ զաւակը պայ, բնականաբար պիտի կարծէ թէ պարոն քաղաքացիտը եկած և զաւակն ալ հետը բերած է։ Հետևաբար տեսնու հարկ չըլլար։

Պ. Մատրլէն քանի մը րոպէ մտածելէն ետք իր հանդարտ ծանրութեամբը ըսաւ.

— Չէ, քոյր իմ, պէտք է որ տեսնեմ զինքը։ Գուցէ ստիպողական է կացութիւնս։

Կրօնուհին կերևայ թէ չդիտցաց այս «գուցէ» բառը որ մութ և տարօրինակ նշանակութիւն մը կուտար պարոն քաղաքացիտին խօսքերուն։ Աչերը վար առնելով և յարդական ձայնը մեղմելով,

— Լաւ. հիմա քնացած է. բայց պարոն քաղաքացիտը կրնայ մտնել։

Պ. Մատրլէն քանի մը դիտողութիւն րրաւ դուռի մը վրայ որ ազէկ չէր գոցուեր և որուն ձռինչը կրնար հիւանդը արթնցնել. յետոյ Փանթինին սենեակը մտաւ, անկողնին մօտեցաւ և վարագոյրները բացաւ։ Փանթին կը քնանար։ Շունչը կուրծքին կեղևը այն աղետալի շշունչով, որ այս տեսակ հիւանդութեանց յատկութիւններուն մին է, և որ դառնապէս կը տրամէ խեղճ մայրերը երբ դիշերը իրենց դատապարտուած և քնացած զաւկին քով կը հսկեն։ Բայց այս յուսալի շնչառութիւնը հազիւ թէ կը խռովէր այն անպատում հանդարտութիւնը որ իր դէմքին վրայ տարածուած էր և որով կերպարանափոխութիւն մը կառնուր ան իր քունին մէջ։ Դեղնութիւնը սպիտակութեան փոխուած էր. այտերը շատ ապրն էին։ Երկայն և խարտեշ ապուռնունքը որոնք անոր կտաւութեան և երիտասարդութեան ճոպարդ և միակ դեղութիւնն էին, կը բաղխէին, թէև դոյ ու կոր էին։ Մարմինը վզին և բոլորովին կը դողար չդիտեմ ինչ ներքին տարածելով,

որոնք բայուելու և զան տանելու պատրաստ էին և որոնք թէև անընդոյթ էին, այլ կղզայիր թէ կը տարտնէին։ Ով որ այս վիճակի մէջ տեսնելու ըլլար, բնաւ չպիտի կրնար կարծել որ դրեթէ յուսաթէկ հիւանդ մ'է ան։ Թողլու պատրաստուղի մը կը նմանէր քանթէ մեռնելու պատրաստուղի մը։

Երբ ձեռքը ոսոխ մը կը մտի վրայի ծաղիկը քաղելու համար, ոսոխը կը տարտնի և կարծես թէ կը պահուի ու միանդամայն կը ներկայի։ Մարդկային սիրտը այս տարտուռին նման բան մը կզգայ երբ կը հասնի այն րոպէն ուր մահուան խորհրդաւոր մատները հոգին կը քաղեն։

Պ. Մատրլէն ժամանակ մ'անկողնին քով անշարժ կեցաւ, փոփոխակի հիւանդուհիին ու խաչելութեան նայելով, ինչպես կը նայէր երկու ամիս առաջ և այն օրը յորում առջի անգամ այս ապաստանարանը եկած էր զան տեսնելու համար։ Երկուքն ալ տակաւին հոն էին և մի և նոյն դիրքը կը պահէին. հիւանդը կը քնանար, ինչ աղօթք կընէր. հիմնական տարբերութիւնը սա էր որ այն երկու ամիսէն ի վեր Փանթինին մազերը ալեւորեր և իր մազերն ալ ձերմկեր էին։

Գոյրը Պ. Մատրլէնի հետ նեբս մտած չէր։ Ասի ոտքի վրայ և անկողնին քով կեցած էր՝ մատը բերնին վրայ դնելով, իբր թէ սենեկին մէջ մէկու մը լռութիւն կը պատուիրէր։

Փանթին աչերը բացաւ, տեսաւ զան և հանդարտութեամբ ու ժպիտով մ'ըսաւ.

— Ո՞ւր է Գոզլեթը։

ԳԼՈՒԽ Ը.

ՓԱՆԹԻՆ ԵՐՋԱՆԻԿ Է

Ամենեւին շարժուում մը չըրաւ ի նշան զարմացման համ ուրախութեան, բուն իսկ ուրախութիւն էր ինք։ Սա

պարզ հարցումը « ուր է Գօղէթը » այնքան մեծ վատահութեամբ , այնքան ապահովութեամբ և այնքան անխռով և անկասկած կերպով ըրած էր որ Պ. Մաթըլէն խօսք մը չկրնաւ պատասխանելու : Ֆանթէին շարունակեց .

— Գիտէի որ հոդ էիք . թէև կը քնանայի , բայց կը տեսնէի ձեզ : Շատ տանէ ’ի վեր է որ կը տեսնեմ ձեզ . բոլոր պիշերը ձեզ կը տեսնէի անընդհատ : Փառքի մը մէջ էիք և ձեր բոլորտիքը ամէն տեսակ երկնային կերպարաններ կային :

Մաթըլէն նայուածքը դէպ ’ի խաչելութիւն վերցուց :

— Բայց , կրկնեց Ֆանթէին , ըսէք ինձ , ուր է Գօղէթ : Ինչու անկողնէս չդրուեցաւ ան որպէս զի տեսնէի արթնցու վայրկենիս :

Պ. Մաթըլէն մեքենայաբար քանի մը պատասխան տուաւ զոր եաքէն ինքն ալ բնաւ չհիշեց յիշել :

Խարեբաղդաբար բժիշկը՝ եղելութիւնը իմանալով վրայ հասած էր : Ուստի Պ. Մաթըլէնի օգնեց :

— Աղջիկս , ըսաւ բժիշկը , հանդարտէ : Զաւակդ հոս է : Ֆանթէինի աչերը լուսաւորեցան և անոր բոլոր երեսը ճառագայթով ողողեցին : Ձեռները միացուց ազօթողի մը բոլոր ջերմանդութիւնը ու միամտամայն հեզութիւնը արտայայտող կերպարանով մը :

— Ո՛հ , բերէք ուրեմն մանկիկս , պօտայ :

Սրտառուչ երևակայութիւն մայրի : Ֆանթէինի համար Գօղէթ դրկուելով բերուող մանկիկ մ’էր :

— Քիչ մ’ևս համբերե , հիմա չըլլար , կրկնեց բժիշկը : Տակաւին տենդը բոլորովին դադած չէ վրայէդ : Զաւակդ տեսնելով կրնաս յուզուիլ և ձգտուիլ : Պէտք է որ նախ առողջանաս :

Ֆանթէին աշխուժիւ մը ընդմիջեց անոր խօսքը :

— Բայց ալ աղէկցած եմ . կը կրկնեմ թէ ողջ առողջ եմ : Ցաւանակ է , ինչ է այս բժիշկը : Ես անանկ բան չդիտեմ , կուզեմ զաւակս տեսնել , հա՛ , կուզեմ :

— Տէս ահա ինչպէս կը բարկանաս : Քանի որ այդ վիճակի մէջ ես , պիտի չթողուի որ զաւակդ քովդ բերուի : Զան տեսնելը չբաւեր , պէտք է նաև ապրիլ անոր համար : Երբ աւելի հանդարտ ըլլաս , ես անձամբ պիտի բերեմ զաւակդ :

Խեղճ մայրը դիջաւ համբերելու :

— Պարոն բժիշկ , ներքուն կը խնդրեմ ձեզմէ , կրկին և կրկին ներքուն կը խնդրեմ : Առաջները այս կերպով ամենևին չէի խօսեր . այնքան դժբաղդութիւններ կրեցի որ ըսածս չեմ գիտեր : Կը հաւնամ ինչ ըսել կուզէք . կը վախնաք որ չդուզիմ . ուրեան ուզէք պիտի համբերեմ . բայց , Աստուած վկայ , ձնաս մը չպիտի տար ինձ աղջիկս տեսնելս : Երկու րիկուանէ ’ի վեր կը տեսնեմ զան և աչքս վրայէն չեմ հեռացներ : Ձեզի բան մ’ըսեմ . եթէ հիմա բերուելու ալ ըլլար զաւակս , հանդարտօրէն պիտի խօսէի հետը : Ահա ասկէր միայն ընդլիքս : Միթէ բնական չէ զաւակս տեսնելու փափաքիլս , զաւակս զոր հոս բերելու համար մտնաւորապէս Մօնֆերմէյլ մարդ դնայ : Բարկացած չեմ : Գիտեմ որ երջանիկ պիտի ըլլամ : Ա՛յս պիշեր մինչև առաւօտ Ճերմակ բաներ և անձեր տեսայ որոնք կը ժպտէին ինծի : Պարոն բժիշկը երբ որ հաձի , թող անուտեն բերէ Գօղէթս : Ա՛լ տենդ չունիմ , վասն զի աղէկցած եմ . քալ կրնամ որ ա՛լ բան մը չունիմ . բայց հիւանդի մը պէս պիտի վարուիմ և չպիտի շարժիմ սա ախիւնտերուն հաձելի ըլլալու համար : Երբ տեսնեն թէ շատ հանդարտ եմ , պիտի ըսեն թէ պէտք է տալ ինձ զաւակս :

Պ. Մաթըլէն անկողնին քովէ աթոռի մը վրայ նստած էր : Ֆանթէին դէպ անոր կողմը դարձաւ : Իր հանդարտութիւնը տեսնուելու և առանց գժուարութեան զաւակը իր քովը բերուելու համար յայտնապէս կը ձանձր հանդարտ , նաև « շատ խելօք » երևալու , ինչպէս կըսեր հիւանդութեան այն յոռի վիճակին մէջ որ մանկութեան կը նմանի : Բայց ինքզինքը

դպրեվովը հանդերձ չէր կրնար համբերել և հազարաւոր հարցումներ կընէր Պ. Մաասլէնի։

— Լաւ ճամբորդութիւն մ՚ըլլի, պարոն քաղաքապետ։ Ո՛հ, ո՛րքան բարի էք որ հաճեցաք երթալու և զաւակս բնակելու։ Ըսէք ինձ միայն թէ ինչպէս է ան։ Ճամբու դժուարութիւններ դիմացաւ։ Ախտ՛ս որ պիտի չճանչնայ զիս։ Այն պատճառէ ՚ի վեր մոռցած է զիս, խեղճ մանկիկս։ Մանուկները յիշողութիւն չեն ունենար։ Թուղթներուս կը նմանին։ Այսօր բան մը կը պատճէն, վաղն ալ ուրիշ մը, բայց բան մը չմնար իրենց միտքը։ Գէթ ձերմակիզէն ունէր արդեօք։ Այդ թէնարտիէները վրան գլուխը մաքուր կը նային եղեր արդեօք։ Ի՞նչպէս կը կերակրուէր։ Ո՛հ, եթէ դիտնայիր թէ ո՛րքան տառապանք կրեցի թշուառութեանս ժամանակ ինքնիրենս այս հարցումները ընելով։ Բայց հիմա ալ անցաւ այն ժամանակը։ Ուրախ եմ հիմա։ Ո՛հ, ո՛րքան կը փափաքէի տեսնել զան։ Ի՞նչպէս էր, դեղցիկ էր, պարոն քաղաքապետ։ Ի՞նչ կը սէք, միթէ դեղցիկ չէ աղջիկս։ Ընդունչտ ճամբան շատ պատճած պիտի ըլլաք կառքին մէջ։ Միթէ կարելի չէ քիչ մը, րոպէ մը միայն քովս բերել Գօզէթս։ Թող դարձեալ անմեղ աւանդն ուսանին։ Դուք մեր մեծն էք, եթէ ուզէք, կրնաք հրամայել որ բերեն։

Պ. Մաասլէն Ֆանթինին ձեռքը բռնեց։ — Գօզէթը դեղցիկ է, ըսաւ։ Գօզէթը լաւ է. շատ չանցնիր կը տեսնես, բայց հանգարտ կեցիր։ Յուզուելով կը խօսէր, մանաւանդ թէ թեզ անկողնէն դուրս կը հանէր և այս պատճառաւ կը հազար։

Եւ իրօք Ֆանթինին ամէն խօսք ըսելուն պատճիկ կը հազար։

Ֆանթինին չմրմռաց, վախցաւ՝ կարծելով թէ քանի մը կրօնաւորուհիներուն պատճառաւ չպիտի դրաւէր իր վրայ այն վստահութիւնը զոր կուզէր ներշնչել, և սկսաւ անտարբեր խօսքեր ընել։

— Մօնֆերմէյլ բաւական դեղցիկ տեղ մ՚է, այնպէս չէ։

Ամառը դիւղական զբօսանքի համար հոն կերթան։ Այդ թէնարտիէները միթէ ազնիւ գործ կը տեսնեն։ Հարուստ և մեծ մարդեր չեն անոնք որ անոնց դիւղէն։ Պանդոկինին ալ խոհարարի պէս բան մ՚է։

Պ. Մաասլէն միշտ անոր ձեռքը կը բռնէր, և անձկութեամբ կը նայէր. յայտնի էր թէ եկած էր անոր այնպիսի բաներ ըսելու զոր հիմա իր միտքը կը դեղեր յայտնելու։ Բժիշկը՝ այցելութիւնը կատարելէն ետք՝ մեկնած էր։ Միայն քոյր Սէնթլիս մնացած էր անոնց քով։

Սակայն այս լռութեան միջոցին Ֆանթին պոռաց.

— Ձայնը կը լսեմ, Ասաուած իմ, Գօզէթին ձայնը կը լսեմ։ Թող երկնցուց որպէս զի լռութիւն պահեն Պ. Մաասլէն և քոյր Սէնթլիս, շունչը բռնեց և սկսաւ հիացումով մտիկ ընել։

Գաւիթին մէջ մանուկ մը կար որ կը խաղար. և որ դրանապանուհիին կամ ուրիշ բանւոր կնիկի մը զաւակն էր։ Ասի այն դիպուածներուն միւն է, որոնք միշտ կը պատահին և որոնք կարծես թէ ազնաւոյն գեպքերու խորհրդաւոր ներհակայման մէկ մասը կը կազմեն։ Այն մանուկը պզտիկ աղջիկ մ՚էր, որ կերթար, կուգար, տաքնալու համար կը վազվզէր, կը խնդար, և բարձր ձայներով կերգէր։ Բաբէ, կամ արգեօք բան մը որու չհասնուին մանկանց խաղերը։ Ֆանթին ահա այս պզտիկ աղջիկան երգելը կը լսէր։

— Ո՛հ, Գօզէթս է ան, կը ճանչնամ ձայնը, կրկնեց։

Մանուկը եկածին պէս հեռացաւ, ձայնը լսուելէ դադրեցաւ. Ֆանթին ժամանակ մ՚ետ ականջ տուաւ, յետոյ դէմքը սիրուելեամբ համակուեցաւ, և ցած ձայնով ըսաւ, ինչ Պ. Մաասլէնն ալ լսեց.— Սա բժիշկը ո՛րքան չարասիրտ է որ թող չտար ինձ աղջիկս տեսնել։ Զարապէմ մարդ մ՚է ան։

Բայց իր պաղատարանքներուն զուարթ տեսարանը նորէն երեւցաւ։ Գլուխը բարձրին վրայ դրած շարունակեց իւրոյին խօսիլ։ — Ի՛նչպէս երջանիկ պիտի ըլլանք այսուհետև։ Նախ

պղտի պարտէզ մը պիտի ունենանք , ինչպէս որ Պ. Մաոըլէն խոստացաւ ինձ : Աղջիկս պարտէզին մէջ պիտի խաղայ : Հիմա անշուշտ սորված է քերականը : Վանկերը հեղել պիտի սաւ իրեն : Գալարինեըրու վրայ թիթեռներուն եաւէն պիտի վազէ : Եաւէն իրեն պիտի նայիմ : Մանաւանդ թէ ա՛լ հաղորդ ալ պիտի առնու : Աղէկ ըսի , ըրը պիտի կրնայ ճաշակ առնուլ :

Մաոըրովը սկսաւ հաշուել :

— . . . Մէկ , երկու , երիք , չորս . . . եօթ տարեկան է հիմա : Հինգ տարիէն եաք սպիտակ քօղ պիտի առնու , ծաղկեպսակէն դուրսցաներ պիտի հագնի , պզտի կնիկ մը պիտի դառնայ : Ո՛ բարեսիրտ քոյր իմ , ես ալ որքան ապուշ եմ որ հիմայէն կը մոռնամ թէ երբ ճաշակ պիտի առնու աղջիկս :

Եւ սկսաւ խնդալ :

Պ. Մաոըլէն Ֆանթինին ձեռքը թողուց : Գեւտինը նայեցաւ և միտքը մտածումներու անդունդը ընկղմեցաւ անոր այս խօսքերը մտիկ ընելու պէս : Ցանկարծ Ֆանթին խօսելէ դադրեցաւ . Պ. Մաոըլէն մեքենայաբար դուրսը վեր վերցուց անոր այս յանկարծական լռութեան վրայ , և տեսաւ որ Ֆանթին ահարկու կերպարան մ՛առած էր :

Ֆանթին կիսոզին ելած նստած էր , և ա՛լ ոչ կը խօսէր և ոչ ա՛լ շունչ կառնուր . շապիկը բացուելով անոր նիհար ուսը երևան հանած էր . երեսը որ պահ մ՛առաջ ուրախ զուարթ էր , հիմա դունատ էր , և կերևար որ դիմացի կողմը , սենեկին միւս ծայրը զարհուրելի բանի մը վրայ կը յառեր իր աչքը զոր սարսափը մեծցուցած էր :

— Ասուածդ իմ , ազաղակեց Մաոըլէն . ինչ ունիս , Ֆանթին :

Պատասխան չտուաւ Ֆանթին . աչերը չվերցուց այն առարկային վրայէն զոր կը տեսնէր , մէկ ձեռքովը Մաոըլէնի թևը բռնեց և միւսովն ալ նշան ըրաւ որ եաին նայի :

Մաոըլէն եաևը դարձաւ և տեսաւ որ Ժավէրը կայնած էր հոն :

ԳԼՈՒԽ Գ.

ԺԱՎԻՐ ԳՈՀԻ

Ա.ՀԱՒԱՍԻԿ եղելութիւնը :

Պ. Մաոըլէն Արասի եղեռնական տեսանէն երբ մնինեցաւ , կէս գիշեր անցած էր և ժամը կէս կը զարնէր : Ձիշդ ժամանակին իր պանդոկը վերադառնալով Ճամբայ ելած էր սուրհանդակի կառքով որու մէջ՝ ինչպէս կը յիշէ ընթերցողը՝ տեղ մը բռնած էր ան : Առաւօտուան ժամը վեցէն քիչ մ՛առաջ Մ. . . հասած էր , և առաջին գործն եղած էր Պ. Լաֆիթին պրած նամակը նամակատուքը յանձնել , յետոյ հիւանդապահը մտնել և Ֆանթինը տեսնել : Բայց եղեռնական տեսնին սրահէն ելլելէն անմիջապէս եաք ընդհանուր-փաստաբանը՝ առջի անգամի տպաւորութենէն ազատելէն եաք խօսիլ սկսեր էր՝ Մ. . . ի յարգի քաղաքապետին յիմարական ընթացքին նկատմամբ ցաւելով , միանգամայն յայտնելով թէ իր համոզումները որ և է փոփոխութիւն չէին կրած այս առթիւ , և առայժմ պահանջելով Շանմաթիէօի դատապարտուիլը որ յայտնապէս բուն Ժան Վալժանն էր : Ընդհանուր-փաստաբանին այսպէս պնդելը բազմութեան , տեսնին և պատուրներուն զգացումին հակառակ կերևար յայտնապէս : Համբաստանելին պաշտպանը զրեթէ գիւրութեամբ կրցեր էր հերքել այս Ճառին առարկութիւնները և հաստատել թէ Պ. Մաոըլէնի , այսինքն նոյն իսկ Ժան Վալժանին ըրած յայտարարութեանց վրայ դատը բոլորովին տարբեր կերպարան առած էր , և թէ գատաւորաց առջև կեցող ամբաստանեալը անմեղ մ՛էր : Պաշտպան փաստաբանը այս առթիւ դատաստանական սխալմունքներու վրայ քանի մը ցաւակցութիւն յայտնած էր , որոնք դժբաղդաբար ոչ այնքան նոր էին . . . : Նախագահը խօսքը եզրակացնելու տեսնն փաստաբանին հա-

մակարծիք հղած էր, և պատասխանները քանի մը րոպէի մէջ Ջանմաթիէօն անպատրաստ հրամասրակելով արձակած էին:

Բայց ծան-վալժան մը պէտք էր ընդհանուր-փոստապետին, և որովհետև Ջանմաթիէօն չունէր ալ, Մասրլէնը առնուլ ուզեց:

Ջանմաթիէօն արձակուելէն անմիջապէս ետք ընդհանուր-փոստապետը նախագահին հետ առանձին սենեակ մը դնաց: «Հոն Մ..., ի քաղաքապետը բռնել տալու հարկաւորութեան նիստամամբ խորհրդակցեցան»: Ընդհանուր-փոստապետը այս պարբերութիւնը բարձրագոյն ատեանի ընդհանուր-փոստապետին ուղղած տեղեկագրին սկզբնական ծանօթագրութեանց մէջ ամբողջապէս իր ձեռքով գրած է: Նախագահը երբ գացեր՝ի սկզբան կրած յուզմունքը դադրէ, փիլ առարկութիւն ըրաւ: Պէտք էր որ արդարութիւնը իր պարտքը կատարէր: Մանաւանդ թէ ամէն բան ըսած ըլլալու համար կը խոստովանինք թէ նախագահը թէև բաւական ուշիմ մարդ մ'էր, բայց վհատամոյն թագաւորութեան խիստ և դրեթէ հառանդուն կուսակից մ'ըլլալով, զժուարած էր երբ Մ...ի քաղաքապետը փոխանակ պատճառաբերի ըսելու կոչ ըսած էր:

Ուստի Պ. Մասրլէնը բռնելու հրամանը ղրկուեցաւ: Ընդհանուր-փոստապետը մանաւանդ սուրհանդակի մը հետ Մ... ղրկեց այս հրամանը և անոր գործադրութիւնը ոստիկանութեան տեսուչ ծավէրին յանձնեց:

Ինչպէս դիտնք արդէն, ծավէր վիլայութիւնը տալէն անմիջապէս ետք Մ... վերադարձեր էր:

Ծավէր ոտքի վրայ կեցեր երբ սուրհանդակը Մասրլէնը բռնելու և բերելու հրամանը յանձնեց անոր:

Նոյն իսկ հրամանագիրը ոստիկանութեան ծառայող վարպետ մարդ մ'էր, և երկու խօսքով հասկցուց ծավէրին ինչ որ Արասի ատեանին մէջ տեղի ունեցած էր: Հրամանագիրը ղրկողը ընդհանուր-փոստապետը ստորագրած էր, այսպէս գրուած էր,— Ոստիկան ծավէր Մ...ի քաղաքապետ և Մա-

սրլէն անուն անձը պիտի բռնէ, որու ծան վալժան անուն պատասխանատուին ըլլալը եղեռնական ժամանակին այսօրուան նահին մէջ հաստատուեցաւ»:

Ո՛վ որ ծավէրը ճանչցած չըլլար և տեսնէր զան ճիշդ հիւանդապահի նախասենեակը մտած պահուն, չպիտի դուշակէր թէ ինչ կղզար ան, և պիտի կարծէր թէ խիստ անպարբեր կը ըսպասուի մ'ուներ: Անպարբեր, հանդարտ և ծանր էր, ալևոր մազերն ալ քունեքուն վրայ կատարելապէս կակուղած էին. և իր ամբողջական յամրութեամբը քիչ մ'առաջ սանդուղէն վեր եղած էր: Եթէ մկը քաջ ճանչնար զան և ուշադրութեամբ զննելու ըլլար, սարսուռ մը պիտի զգար: Իր կաշիէ փողակապին ճարմանդը փոխանակ ծոծրակին վրայ ըլլալու ձախ ականջին վրան էր, ուսկէ կը յայտնուէր թէ անլուր կերպով յուզուած էր ան:

Ծավէր անթերի բնաւորութիւն մ'ուներ. ոչ իր պարտքին և ոչ ալ հանգամանքին վրայ ծալ չէր ընդուներ. չարագործները հետ կանոնաւորապէս, իր պատասխանատուն հետ ալ անաչառապէս կը վարուէր:

Իր փողակապին ճարմանդը անշնորհ կերպով մը դնելու համար պէտք էր պրաւուած ըլլալ այնպիսի յուզումով մը որ կրնայ ներքին երկրաշարժ անուանիլ:

Պարզապէս եկած էր. մտահոգ պահնորդապահէն տասնապատ մը և չորս զինուոր առած էր հետը. զինուորները պատրաստ էին, և հարցուցած էր դռնապանուհիին թէ ուր է Ֆանթինին սենեակը. դռնապանուհին ալ առանց կասկածելու ցոյցուցած էր, վասն զի սովրած էր տեսնելու զինուոր անձեր որոնք պարտն քաղաքապետին հետ տեսնուելու կուգային:

Ծավէր երբ Ֆանթինի սենեկին մտեցաւ, բանալին դարձուց, հիւանդապահի կամ լրտեսի պէս դուռը կամաց մը հրեց և ներս մտաւ:

Եթէ պէտք է ճիշդը ըսել, ներս չմտաւ, այլ կիսաբաց

գուռին չեփին վրայ կայնած կեցաւ. փեղջերը դլուխն էր, ձախ ձեռքն ալ մինչև կղակը կոճկուած թիկնոցին մէջ դրած էր: Արմուկին ծալին մէջէն կրնար առնուիլ եաևը պահած իր ահագին գաւազանին կապարեայ գունդը:

Այսպէս վայրկեան մը չափ կեցաւ, և ոչ ոք նշմարեց իր ներկայութիւնը: Ցանկարծ փանջին աչերը վեր վերցուց, առաւաւ գան և դրկեց Պ. Մաարլէնը որ ան ալ դառնայ և տեսնէ:

Երբ Մաարլէնի նայուածքը ծաղէրի նայուածքին հանդիպեցաւ, ծաղէրը առանց շարժելու, առանց խլրտելու, առանց մօտենալու ահարիւր կերպարան մ'առաւ: Չկայ մարդկային զղացում մը որ կարենայ ուրախութեան պէս ահարիւր ըլլալ:

Ծաղէրի դէմքը իր պնդնապարա մեզաւորը գիտ նոր գըտնող սատանայի մը դէմքին նմանեցաւ:

Երբ զղայ թէ ալ տուղապէս իր ափին մէջն էր ծանր վաչճան, դէմքին վրայ երեցաւ ինչ որ սրտին մէջ կար: Ցասակը յուզուելով երեսը եղաւ: Իր սրսին հետքը սակաւ ինչ կորուսած և պահ մը այն Շանմաթիէօին նկատմամբ սխալած ըլլալուն նուաստութիւնը կանչեցեր այն հպարտութեան առջև զոր կզդար ծաղէրը՝ նախ և առաջ լաւ մը գուշակած և այնքան ժամանակ ուղիղ ընագդում մ'ունեցած ըլլալուն համար: Ծաղէրին պոհունակութիւնը իր սիրական դիրքէն յայտնուեցաւ: Ցաղթանակին ձևութիւնը անոր նեղ ձակտին վրայ տարածուեցաւ: Այս ձևութիւնն էր այն ամէն սարսափը զոր պոհունակ դէմք մը կրնայ տարածել իր վրայ:

Ծաղէրը նոյն պահուն երկինքն էր: Առանց ճշդապէս խմանալու, այլ իր հարկաւորութեան և յաջողութեան խառնուիմոթ անհետեւութեամբը կզդար ձեռ արդարութիւնը, ըլլալը և ճշմարտութիւնը իր անձին միջոցաւ կը կատարէին իրենց երկնային պաշտօնը որ է չարութիւնը խորտակել: Եաևը և գոլորտիքը, անյատակ անդունդի մը մէջ իր հետն էին իշ-

խանութիւնը, իրաւունքը, վճռուած դատը, օրինական գիտակցութիւնը, ընկերային վրիժառութեան բազուկը, ամէն ատաղերը. բարեկարգութիւնը կը պաշտպանէր, օրէնքին շանթը կարձակէր, ընկերութեան վրէժը կառնուր, զինուղօրութեամբ բացարձակին կայակեր. փառքի մը մէջ կը կանգնէր. իր յաղթութեան մէջ կարծես թէ տակաւին թըշնամին ասպարէզ կը հրաւիրէր կռուելու: Հպարտօրէն, փառաւորապէս և ոտքի վրայ կեցած՝ երկինքէ վրայ կը տարածէր անպարտելի հրեշտակապետի մը գերմարդկային անառնութիւնը: Ընկերային թշուրը, զոր իր ոսկորուտ ձեռքը բռնած էր, անորոշապէս կը փայփայէր այն սոսկալի մթութեան մէջ որուն պաշարուած էր իր կատարած գործը: Երանութիւն և սրբատութիւն կզդար՝ իր գարշապարին տակը ունենալով ոճիրը, մոլութիւնը, ապստամբութիւնը, գատապարտութիւնը և դըժոխքը. կը ճառագայթէր, կը տատակէր, կը ժպտէր, և այս հրեշտաբարոյ տեսրը Միքայէլը անուրանալիվեհութիւն մ'ունէր:

Ծաղէրի վարմունքը ահարկու այլ ոչ բնաւ անարդ էր:

Ուղղամտութիւնը, անկեղծութիւնը, անարատութիւնը, համոզումը և պարտաւորութեան գաղափարը այնպիսի բաներ են որք սխալելով կրնան սոսկալի ըլլալ և որք տակաւին նաև սոսկալի ըլլալով իրենց վսեմութիւնը չեն կորուսեր. իրենց վեհութիւնը մարդկային խղճի յատուկ տարտափին մէջն ալ կը տեւէ. առաքինութիւններ են անոնք, բայց թերութիւն մ'ունին, որ է սխալումը: Անպարոյն մոլեռանդի մը անզգամ այլ օրինաւոր ուրախութիւնը չդիտեմ ինչ ճառագայթում մ'ունեի որ պատկառելի է տրամագին: Ծաղէրը՝ առանց ինքն ալ գիտնալու՝ գաւակցութեան արժանի էր իր տարած զարհուրելի յաղթանակին մէջ, ինչպէս են ամէն յաղթանակող ազէտները: Չկայ բան մը որ այնքան կսկծալի և տարտափելի ըլլայ որքան էր այս կերպարանը որու վրայ կերևար ինչ որ կրնար անուանիլ բարութեան ամէն չարութիւնը:

ԳԼՈՒԽ Գ.

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԻՐԱՒՈՒՆՔՆ ՏԷՐ ԿԸԼԼԱՑ

Ֆանթին դնաւ տեսած չէր ծավէրը այն օրէն՝ի վեր ուր պարոն քաղաքապետին շնորհիւը ազատած էր անոր ձեռքէն: Իր հիւանդ ուղեղը բան մը չկրցաւ հասկնալ, բայց առանց տարակուսելու կարծեց թէ զինքը առնելու և տանելու համար եկած էր ան: Շկրցաւ տանիլ այս մարդուն սոսկալի կերպարանին. զգալ կածեց թէ յետին շունչը պիտի աւանդէ, երիւ ձեռքովը երեսը ծածկեց և վշտագին ձայնով մը պոռաց.

— Ազատեցէք զիս, Պ. Մադըլէն:

Ժան Վալժան, — ալ այսուհետև ուրիշ անուն չպիտի տանք իրեն, — տեղէն ելած էր: Ամենամեղմ և ամենահանդարտ ձայնով մ'ըսաւ Ֆանթինին.

— Հանդարտ կեցէր, քեզի համար եկած չէ:

Ցետոյ դէպ՝ի ծավէրը դառնալով ըսաւ.

— Գիտեմ ինչո՛ւ համար եկած ըլլալնիդ:

Ծավէրը պատասխանեց.

— Երթանք ունեմ, շո՛ւտ:

Ծավէր չգիտեմ ինչ անասնային և մոլեգին հնչումով մը արտաբերեց այս խօսքը: Ճշդապէս չարտասանեց զայն. որ և է ուղղագրութիւն չկրնար յայտնապէս նշանակել ինչպէս որ արտասանուեցաւ այն խօսքը: Մարդկային խօսք մը չէր, այլ առիւծի մռնչուն մ'էր այն:

Սովորութեանը համեմատ չվարուեցաւ. ինչո՛ւ և ինչ բանի համար եկած ըլլալը երկարօրէն բացատրելը աւելորդ սեպեց, և ոչ ալ ցուցուց զինքը բռնելու հրամանագիրը: Ծավէրի համար Ժան Վալժան խորհրդաւոր և անըմբռնելի մարդ մը, խաւարամած ըմբիշ մ'էր զոր հինգ տարիէ՝ի վեր կըպար կերը առանց ապպալելը կրնալու: Այս ձերբակալութիւնը

չէ թէ սկիզբ այլ վերջ մ'էր: Ուստի բաւական համարեց ըսելը. Երթանք ուրեմն, շո՛ւտ:

Առանց քայլ մ'առնելու բաւած էր այս խօսքը: Ժան Վալժանին վրայ արձակեց իր այն նայուածքը զոր սիրտ մը նետելու պէս կարձակէր և որով թշուառները իր քովը կը քաշէր ուժգնակի:

Երկու ամիս առաջ Ֆանթին այս նայուածքին միևնոյն իր ոսկրնեբուն ծուծը թափանցիլը զգացած էր:

Ծավէրի ալաղաղակը լսելով Ֆանթին աչքերը բացած էր: Բայց պարոն քաղաքապետը իր քովն էր. ինչ վախ կրնար ունենալ:

Ծավէր դէպ՝ի անկիւնին մէջ տեղը յառաջացաւ և պոռաց.

— Է՛, պիտի դամ թէ ոչ:

Թշուառ կինը բոլորտիքը նայեցաւ: Պրօնուհիէն և պարոն քաղաքապետէն՝ի զատ մարդ չկար սենեկին մէջ: Ծավէր ա՞րդեօք հետ կրնար այսպէս իրեր տէր առ ծառայ խօսիլ: Իրեն հետ. ուսաի սարսռեցաւ:

Անտանելի Ֆանթին անդուր բան մը տեսաւ, այնքան անդուր որ իր տեղին տակնուվրայ սոսկալի բանտապետանոց մէջ անգամ անանկ բան մը չէր երեցած իրեն:

Ցետոյ որ լսեց Ծավէրը պարոն քաղաքապետին օձիքը բռնելով. տեսաւ որ պարոն քաղաքապետն ալ կլուխը ծռելով հնազանդեցաւ: Կարծեց Ֆանթինին թէ աշխարհս կը խաւարի:

Իրօք Ծավէրը Ժան Վալժանը օձիքէն բռնած էր:

— Պարոն քաղաքապետ, պոռաց Ֆանթին:

Ծավէրը քահ քահ խնդալով այնպիսի խնդուքմամբ, որ իր ակռաները լինդերէն կը զատէր:

— Ա՛լ պարոն քաղաքապետ չկայ հոս:

Ժան Վալժան իր թիկնոցին օձիքը բռնող ձեռքը հեռացնելու փորձ մը չընաւ, և ըսաւ.

— Ծավէր...:

— Պարոն տեսուչ անուանէ զիս, ըսաւ Ծավէրը՝ Ժան Վալժանի խօսքը ընդմիջելով:

— Պարոն, կրկնեց Ժան Վալժան, կուզէի բան մ'ըսել ձեզ առանձին:

— Ցայտնի յայտնապէս խօսէ ինչ որ պիտի ըսես, պատասխանեց Ժավէրը, ինծի հետ խօսող մը պէտք է որ բայէ 'ի բայ և յայտնապէս խօսի:

Ժան Վալժան ձայնը մեղմելով շարունակեց.

— Աղաչանք մը պիտի ընեմ ձեզ...:

— Ըսի քեզի որ բարձր խօսիս:

— Բայց պէտք է որ միայն դուք լսէք ինչ որ պիտի ըսեմ...:

— Ինծի ինչ. մտիկ չեմ ըներ:

Ժան Վալժան դեպ 'ի Ժավէրը դարձաւ և շատ ու խիստ կամայ մ'ըսաւ.

— Երէք օր չնորհեցէք ինձ: Երէք օր տուէք ինձ որ երթամ սա Թշուառ կնոջ զաւակը բերեմ: Ինչ որ պէտք է, կը վճարեմ: Եթէ կուզէք, հետս եկէք:

— Ար ծաղրես զիս, պօռաց Ժավէրը: Հաւատա որ չէի կարծեր թէ այդքան ապուշ ես: Երէք օր կուզես որ փախիս երթաս, և կըսես թէ սա աղջկին զաւակը բերելու համար պիտի երթաս: Հա՛, հա՛, լաւ, շատ լաւ:

Ֆանթինն սասանեցաւ:

— Ջաւա՛կս, ո՛վ պիտի բերէ զաւակս, պօռաց: Ուրեմն դեռ հոս չէ զաւակս: Քոյր իմ, պատասխան տուր, ո՞ւր է Գոզլէթը: Ջաւա՛կս կուզեմ, Պ. Մատըլէն, պարոն քաղաքապետ:

Ժավէրը ոտքը դետինը զարկաւ:

— Ա՛ռ քեզի հիմա ուրիշ մ'լ, պիտի պապանձի՞ս թէ ոչ, անամօթ կնիկ: Շուտիկին բերանը երթայ ասանկ քաղաք մը ուր թիապարանները պաշտօնակալ կըլլան և բոզերն ալ բամբիշներու պէս կը խնամուին: Բայց համբերութիւն, ամէն բան կարգի կը մտնէ. ժամանակը եկած է ալ:

Ժավէրը Ֆանթինին նայեցաւ ուղղակի, և Ժան Վալժանին փողակապը, շապիկը և օձիքը ափովը բռնելով կրկնեց.

— Ըսի քեզի թէ ոչ Պ. Մատըլէն և ոչ ալ պարոն քաղաքապետ կոչ հոս: Գող մը կայ, աւազակ մը կայ, Ժան Վալժան անունով եղեռնագործ մը կայ, զոր ահա բռնած եմ:

Ֆանթինն յանկարծ կանգնեցաւ իր ոսկորուտ թևերուն և ձեռներուն վրայ կռթնելով. Ժան Վալժանին նայեցաւ, Ժավէրին նայեցաւ, իրօնուհիին նայեցաւ, բերանը բացաւ կարծես խօսելու համար, կոհորդին մէջէն հռնչիւն մ'ելաւ, ականները կըձեղին, թևերը տարածեց վշտագին, ջղաձգային շարժումով ձեռները բացաւ և խղդուողի մը պէս չորս կողմը նայեցաւ կարծես բան մը կամ մարդ մը փնտռելու համար, յետոյ յանկարծ բարձին վրայ ծռուեցաւ ինկաւ:

Գլուխը անկողնին սնարին զարնուելով իր կուրծքին վրայ ինկաւ՝ բերանը բաց և աչերը մարած:

Ֆանթին մեռած էր:

Ժան Վալժան ձեռքը Ժավէրի ձեռքին վրայ դրաւ, և մանկան մը ձեռքը բանալու պէս բացաւ, յետոյ ըսաւ Ժավէրին:

— Դուն մեղսուցիր այս կինը:

— Վերջ պիտի տանք թէ ոչ, պօռաց Ժավէրը կատղութեամբ. պատճառներ լմնցնալու չեկայ հոս: Կարճ կապենք, գինուորները վարն են. շո՛ւտ ըրէ քալենք, թէ ոչ շրուշակը պատրաստ է:

Սենեկին մէկ անկիւնը երկաթեայ հին անկողին մը կար որ բաւական յոռի վիճակի մէջ էր և որու վրայ կը հանդչէին քոյրերը երբ հակելու ըլլային: Ժան Վալժան այս անկողնին մօտեցաւ, ակնթարթի մը մէջ անոր մնարի կողմին արդէն աւրուած երկաթէ ձողը քաշեց հանեց, վասն զի իր ջնջելուն նման ջիղերու համար դիւրին բան մ'էր այն, վարդոյրին երկաթէ ձողը ձեռքը առաւ և Ժավէրին նայեցաւ:

Ժավէր դեպ 'ի դուռը դնաց նահանջելով:

Ժան Վալժան երկաթէ ցուլ 'ի ձեռին յամրաքայլ դէպ 'ի Ֆանթինի անկողինը քայլեց: Երբ հասաւ անկողնին քով՝

եաևը դարձաւ և հազիւ հազ լսելի ձայնով մ'ըսաւ ծավէրին՝

— Ազէկ կընէք եթէ այս րոպէիս մէջ հանդարտ թողուք զիս։

Իրօք ծավէրը կը դողար։

Մտածեց որ երթայ զինուորները կանչէ. բայց ծան Վալժան կրնար նոյն վայրկենին փախչիլ։ Ուստի կեցաւ, դաւաղանը պզտիկ ծայրէն բռնեց և կռնակը դուռին քիւին կըթննցուց առանց նայուածքը ծան Վալժանի վրայէն հեռացնելու։

Ծան Վալժան արմունկը անկողնին սնարին դունդին և ձախատան ալ ձեռքին վրայ դրաւ, և սկսաւ Ֆանթինին նայիլ՝ որ անշարժ կը կենար երկնցած։ Այս դիրքով կեցաւ մտածումներու մէջ ընկղմած, անմռունչ և անշուշտ այս աշխարհիս իրերէն բան մը չզգալով միտքը։ Ա՛լ երեսը և դիրքը ալ միայն անմիկնելի կաբկոյթիւն մը կարտայայտէր։ Քանի մը վայրկեան այսպէս մտախոհելէն ետք դէպ 'ի Ֆանթին ծռուեցաւ և յուշ ձայնով խօսեցաւ։

Ի՞նչ ըսաւ արդեօք։ Ի՞նչ կրնար ըսել դատապարտեալ մարդ մը մեռած կնիկի մը։ Ինչո՞ր խօսեցաւ։ Աշխարհիս վրայ ոչ ոք ըսէց ինչ որ ըսաւ ան։ Մեռած կինը լսե՞ց արդեօք։ Կան այնպիսի սրտառուչ պատրանքներ որոնք դուցէ վսեմ իրութիւններ են։ Ստուգապէս պիտցուածը այս է թէ քոյր Սէնբլիս որ այս եղերութեան միակ ականատեսը եղած է, շատ անգամ պատմեց թէ երբ ծան Վալժան Ֆանթինի անկնին խօսք ըսաւ, յայտնապէս տեսաւ որ գերեզմանի զարմացումովը համակուած այն դունատ շուրթերուն և այն անդորր բիբերուն վրայ անպատում ժպիտ մը փայլեցաւ։

Ծան Վալժան երկու ձեռքովը Ֆանթինին գլուխը բռնեց և բարձին վրայ տեղաւորեց՝ իր գլուխը տեղաւորող մայրի մը պէս. յետոյ անոր շապիկին լարը կապեց և մազերը դպակին տակ հաւքից։ Ասի ընելէն ետք անոր աչերը դոցեց։

Նոյն պահուն Ֆանթինին դէմքը տարօրէն լուսաւորուած կերեւար։

Մահը մեծ լոյսին դուռն է։

Ֆանթինին ձեռքը անկողնէն դուրս կախուած էր։ Ծան Վալժան ծունր դրաւ այս ձեռքին առջև, կամայ մը վերցուց և համբուրեց զայն։

Յետոյ կանգնեցաւ, և դէպ 'ի ծավէր դառնալով ըսաւ՝

— Հիմա ալ պատրաստ եմ հետդ գալու։

ԳԼՈՒԽ Ե։

ՎԱՏԵԼՈՒՔ ԳԵՐԵԶՄԱՆ

ԾԱՎԷՐ քաղաքին բանտը դրաւ ծան Վալժանը։

Պ. Մաթըլէնի բռնուիլը Մ...ի մէջ տարօրինակ տպաւորութիւն կամ լաւ ևս է ըսել դղրդում մը տուաւ։ Տըրտմելով կսախսուինք խոստովանելու թէ երբ, ինչպէս ան, ըսուեցաւ ամենուրեք, գրեթէ ամէն մարդ մոռցաւ զան։ Երկու ժամ չանցած մոռցուեցան իր բոլոր ամէն բարութիւնն դործերը, և ա՛լ «թիւպարտ մը» սեպուեցաւ ամէնուն համար։ Պէտք է ըսել սակայն թէ Արասի դէպքին ամէն պատանները դեռ չէին իմացուած։ Քաղաքին մէջ ամենուրեք առաւօտէն մինչև իրիկուն սա խօսակցութիւնները տեղի ունեցան.

— Չգիտէիր։ Ազատ իր եղեռնագործ մ'էր ան։ — Ո՞վ. — Քաղաքապետը. — Չեմ հաւատար. Պ. Մաթըլէնը. — Այո՛։ — Իրա՛ւ կըսես։ — Անունը Մաթըլէն չէ եղեր, սոսկալի անուն մ'ունի, Պէժան է, Պօժան է, Պուժան է, ինչ է չգիտեմ։ — Տէր Աստուած։ — Բռնուեցաւ ալ։ — Բռնուեցաւ։ — Բռնուեցաւ, բանտն է, քաղաքին բանտն է մինչև որ ուրիշ տեղ մը փոխադրուի։ — Թող փոխադրուի։ — Պիտի փոխադրուի։ — Ո՛չը պիտի փոխադրուի։ — Եղեռնագան առջև պիտի դատուի ժամանակաւ ճամբու վրայ դողդոջիլն մ'ըրած ըլլալուն համար։ — Ես արդէն կը

կասկածէի իր վրայ : Շատ բարի , անթերի և վարպետ մարդ մ՚էր ան : Պատուոյ խաչը կը մերժէր . որ պղտի լակոտին որ հանդիպէր , ստակ կուտար : Միշտ կը կարծէի թէ գէշ անոյշ իւրմ՚ունի այդ մարդը :

« Երևելի » ըսուած մարդիկ մանաւանդ բոլորովին այս կարծիքը ունէին :

Պառաւ տիկին մը որ Տրէֆօ պլան լոպրին բաժանորդ էր , յետադայ խորհրդածութիւնը ըրաւ , որու խորութիւնը անկարելի է չափել :

— Ամէն ին չեմ գիտիր իր վրայ . ատով ինչքերնին գլուխնին պիտի հաւքին պուօնապարտի կուսակիցները :

Ահա այսպէս Մ . . . էն աներևութացաւ այն ուրուականը որ Պ . Մաթալէն անուանած էր : Բոլոր քաղքին մէջ միայն երիք կամ չորս հոգի չմոռցան դինքը : Ասոնց մին էր պառաւ դռնապանուհին որ ծառայած էր անոր :

Նոյն օրը իրիկուն այս չարպի պառաւ կինը իր սենեկին մէջ նստած էր . դէռ ահաբեկ էր ան և արտասուելեամբ կը մտածէր : Գործարանը առաւօտէն մինչև իրիկուն դոց մնացած էր . մեծ դուռը կղպուած էր , փողոցը Ճանճ մը չկրար : Տունին մէջ միայն երիու հոգի կար . մին քոյր Բէրբէթիւ և միւսը քոյր Սէնթլիս որոնք Ֆանթինի մարմնին քով կը հսկէին :

Երբ մտեցաւ այն ժամը ուր Պ . Մաթալէն սովորութիւն ունէր իր սենեակը մտնելու , բարեսիրտ դռնապանուհին մեքենայաբար ոտք ելաւ , դարանի մը մէջէն Պ . Մաթալէնի սենեկին բանալին և ամէն իրիկուն սենեակը մտնելու համար անոր դրծածած պղտի աշտանակը առաւ , յետոյ բանալին քևեհէ մը կախեց ուսկէ Մաթալէն կառնուր զայն . աշտանակն ալ քովը դրաւ և կարծես կսպասէր որ գայ ան : Եաքը նորէն նստաւ իր աթոռին վրայ և սկսաւ մտածել : Խեղճ պառաւ կինը այս պատահարութիւնը ըրած էր առանց ինքն ալ գիտնալու թէ ըրած է :

Երիու ժամն ետք միայն ուշաբերեցաւ և պօռաց . — Տէր

իմ Յիսուս , հիմա միտքս եկաւ . ինչու բանալին բևեհէն ձախեցի :

Նոյն պահուն խուցին պատուհանը բացուեցաւ , բայց տեղէն ձեռք մը երկնցաւ ներս , բանալին և աշտանակը առաւ և մոմը վառեց սենեկին մէջ վառող ճրագէն :

Դռնապանուհին աչերը վերցուց , և բերանաբաց մնաց , կոկորդին մէջ պահելով աղաղակ մը զոր քիչ մնաց պիտի արձակէր :

Կը ճանչնար այն ձեռքը , այն թևը և թիկնոցին թեւքանիքը :

Պ . Մաթալէնն էր ան :

Խօսել կարենալէ առաջ քանի մը րոպէ շտաբերեցաւ մնաց , ինչպէս նոյն ինքն ալ եաքէն կրսէր այս արկածը պատմելու ժամանակ :

— Տէր Աստուած , դուք էք , պարոն քաղաքապետ . կը կարծէի թէ դուք . . . :

Ձուզեց ըսել ինչ որ պիտի ըսէր , վասն զի ըսել ուզած խօսքը սկիզբին պէս յարդանօք չպիտի վերջանար : Ժան Վալժան պատաւին համար միշտ պարոն քաղաքապետն էր :

Ժան Վալժան անոր ըսելիքը ինք ըսաւ .

— Բանտն էի : Իրօք բանտն էի : Պատուհանի մը վանդակին երկաթներուն մին կարեցի . առանիքի մը վրայէն վար նետուեցայ , և հոս եկայ : Սենեակս կ՚երթամ : Գնա , քոյր Սէնթլիսը կանչէ : Անշուշտ այն խեղճ կնոջ քովն է հիմա :

Պառաւը շատպատ հնազանդեցաւ :

Ամենևին պատուէր մը չտուաւ պառաւին . ապահովապէս պիտէր թէ պառաւը աւելի աղէկ պիտի պահպանէր գինքը քանթէ Ժան Վալժան ինքզինքը :

Ամենևին չմտածուեցաւ թէ ինչպէս կրցեր էր գաւիթը մտնել առանց բանալ տալու մեծ դուռը : Բանալի մ՚ունէր զոր միշտ քովը կը պահէր և որով կսղմտկան պղտի դուռ մը կը բանար . բայց հարկաւ վրան գլուխը նայուած և այն բանալին առնուած էր քովէն : Այս կէտը բնաւ չմտորեցաւ :

Վեր եկաւ սանդուղքէն որ դէպ իր սենեակը կը տանէր։ Երբ վեր եկաւ, աշտանակը սանդուղքին վերջին աստիճանները վրայ թողուց, կամաց մը իր դուռը բացաւ, և խարխափելով դնաց պատուհանը և փեղկը դոցեց. յետոյ ետ դարձաւ, աշտանակը առաւ և իր սենեակը մտաւ։

Այս զգուշութիւնը անօգուտ եր, ընթերցողը կը յիշէ անշուշտ թէ իր պատուհանը կրնար տեսնուիլ փողոցէն։

Անգամ մը չորս դին նայեցաւ, իր սեղանին, աթոռին, նաև անկողնին նայեցաւ որու երեք օրէ՝ի վեր մարդ դպած չէր։ Վերջընթեր գիշերուան անհարգութեան ոչ մէկ հետքը մնացած էր։ Դռնապանուհին սենեակը աւլած և հաւքը առած բրած էր։ Միայն թէ մոխիրին մէջէն երկաթեայ պատուհանին երկու ծայրերը և կրակէն սեպած երկու փրանքնոց դրամը առած և մաքրելով սեղանին վրայ դրած էր։

Ժան Վալժան թուղթի կտոր մ՚առաւ և վրան սա տողերը գրեց. Ահաւասիկ առնէ են իմ եղկելութեամբ քաշածս եղեռն ծայրերը և Բըլիւ-ժէվէլէն գողցուածք եղեռն փրանքնոցը որոնց վրայօք խօսեցայ եղերական ոտքէնն առջև. և այս թուղթին վրայ դրաւ արծաթի դրամը և երկու երկաթի կտորը որպէս զի իր սենեակը մտնողները առաջին անգամ զանոնք տեսնեն։ Պահարանի մը հին շապիկ մը հանեց որ իրեն էր և զգը պատռեց։ Այս շապիկը քանի մը լաթի կտորներ եղաւ, և արծաթեայ աշտանակները անոնց մէջ փաթթեց։ Բայց ոչ կաճապարեր և ոչ ալ կը յուզուէր։ Մտածեցաւ թէ աշտանակները փաթթելու ժամանակ միտդամայն սև հացի կտոր մը կուտէր խածնելով։ Հաւանական է որ այն հացը բանտին մէջ իրեն տրուած հացն էր զոր հետը առած էր փախչելու ժամանակ։

Եաքէն կառավարութեան մարդիկ քննութեան համար երբ անոր սենեակը մտան, սենեկին տախտակամածին վրայ հացի փշրունք գտան. ասկէ հասկցուեցաւ թէ այն հացը բանտէն բերած հացն էր։

Երկու անգամ դուռը զարնուեցաւ կամաց մը։

— Մտիք, ըսաւ։

Եկողը քոյր Սէնբլիան էր։

Գուենտա էր ան. աչերը կարմրած էին, և ձեռքը բռնած աշտանակը կը դողար։ Ճակատագրին բռնաբարութիւնները յաճախութիւն մ՚ունին, որոնք՝ մարդս որքան ալ կատարեալ դործուած կամ որքան ալ անզգայ ըլլայ, անոր մարդկային բնութիւնը սրտին խորերէն կը քաշեն և կը բռնադատեն որ դուրս երևայ։ Այն օրուան բազմայոյզ դէպքերուն մէջ կրօնուհին նորէն կին մ՚եղած էր։ Լացեր էր ան, և կը դողար։

Ժան Վալժան պահ մ՚առաջ քանի մը խօսք դրած էր թուղթի մը վրայ, զոր կրօնուհիին տալու, ըսելով. — Քոյր իմ, ասի պարոն Ժոզվըդապեսին պիտի յանձնէք։

Թուղթը ծալլուած չէր։ Քոյր Սէնբլիս նայեցաւ անդամ մը։

— Կրնաք կարդալ, ըսաւ Ժան Վալժան։

Քոյր Սէնբլիս կարդաց.

« — Պաշտելի պարոն Ժոզվըդապեսին որ հսկէ ինչ որ հոս ձգած եմ։ Թող Հաձի միանդամայն վճարել իմ գանիս և այսօր մնոնդ կնոջ թաղումին ծախքը։ Աւելցածը աղքատներուն պիտի տրուի »։

Քոյրը ուզեց խօսիլ, բայց հաղիւ հաղ կրցաւ քանի մը խօսք թոթովել դրեթէ առանց արտասանելու։ Բայց վերջապէս յաջողեցաւ ըսելու.

— Մինչ պարոն քաղաքապետը չ՚փափաքիր վերջին անգամ մ՚ալ տեսնել սա խեղճ կինը։

— Ո՛չ, ըսաւ. զինուորները գիս կը փնտռեն. կրնան իր սենեկին մէջ բռնել գիս. ասով վերադառնամ պատճառած կրնանք անոր։

Հաղիւ թէ խօսքը կը լմնցնէր, և ահա սանդուղքին վրայ մեծ դղրդում մ՚եղաւ։ Քայլերու դղրդիւն մը լսուեցաւ. սանդուղքն վեր ելլողներ կային. դռնապանուհին ալ ամենաբարձր և ամենասուր ձայնով մը կըսէր.

— Սիրելի պարոն, Ատուած վկայ այսօր առաւօտէն ՝ի

վեր, իրիկուանէ՝ ի վեր, մարդ մը չեկաւ հոս. ես ալ բնաւ չհեռացայ դուռիս առջևէն։

Մարդ մը պատասխանեց.

— Բայց սա սենեկին մէջ լոյս կայ։

Ժան Վալժան և քոյր Սէնթլիս ժավէրին ձայնը ճանչցան։

Սենեակը այնպիսի կերպով շինուած էր որ դուռը բացուած ատեն աջ կողմի պատին խորշը կը պահէր։ Ժան Վալժան ճրագը անցուց և այն խորշը մտաւ։

Քոյր Սէնթլիս սեղանին քով ծունկի վրայ եկաւ։

Դուռը բացուեցաւ։

Ժավէր ներս մտաւ։

Շատ մը մարդերու փսփսուքը և դռնապանուհիին զանոնք համոզելու համար ըրած բողոքալի խօսքերը փողոցէն կը լսուէին։

Կրօնուհին աչերը չվերցուց։ Աղօթք կընէր ան։ Աջատնակը սեղանին վրան էր և քիչ մը լոյս կուտար։

Ժավէր քոյրը նշմարեց և կանգ առաւ անմիջապէս։

Ընթերցողը ինչպէս կը յիշէ, Ժավէրին հիմը, տարրը, շնչառութեան միջավայրն էր ամէն իշխանութենէ պատկառիլ։ Այս մասին բացառութիւն չէր պիտեր, ոչ առարկութիւն և ոչ սահմանադրութիւն կընդունէր։ Իրեն համար մանաւանդ ամէն իշխանութիւններու առաջինն էր եկեղեցական իշխանութիւնը, ինչպէս ուրիշ ամէն բաներու, նոյնպէս և այս կէտին նկատմամբ երկիւղածութեամբ, վարկապարակի պիտութեամբ և կանոնաւորապէս վարուող մարդ մ'էր։ Ինք այնպէս կը կարծէր թէ եկեղեցական մը չսխալըլ միտք մ'է, թէ կրօնուհի մը չմեղանչող անձ մ'է. թէ անոնց և այս աշխարհի մէջ պատ մը քաշուած էր. թէ այս պատը մէկ ուռուներէ միայն որ մի միայն ճշմարտութիւնը դուրս ելնելու համար կը բացուէր։

Երբ նշմարեց քոյրը, Ժավէրի առաջին շարժումն եղաւ հեռանալ երթալ։

Բայց ուրիշ պարտաւորութիւն մ'ալ կար որ չէր թողուր և դէպ՝ ի հակառակ կողմը կը մղէր զինքը։ Իր երկրորդ շարժումն եղաւ ձեալ և դէթ հարցում մ'ընել։ Ասի այն քոյր Սէնթլիսն էր որ իր կենացը մէջ ամենևին չէր տառած։ Ժավէր պիտէր անոր այս ճշմարտախօսութիւնը և մասնաւորապէս պատր համար կը պատկառէր անորմէն։

— Քոյր իմ, ըսաւ, միևնոյն ես այս սենեկին մէջ։

Սոսկալի վայրկեան մ'անցաւ։ Խեղճ դռնապանուհին մազ մնաց պիտի նուաղէր։

Քոյրը աչերը վերցուց և պատասխանեց.

— Այո՛։

— Ներեցէք եթէ կրկին անգամ կը հարցնեմ, վասն զի պարտքս կը կատարեմ. այս իրիկուն չտեսա՞ք անձ մը, մարդ մը, Ժան Վալժան անուն մէկը որ բանտէն փախաւ և զոր կը փնտռենք։

— Ոչ, պատասխանեց քոյրը։

Սուտ խօսեցաւ Սէնթլիս։ Երկու անգամ հետ դէնետ, վրայ վրայի, առանց դեղևելու և արտօրէն սաեց՝ անձը զոհելու պէս։

— Ներեցէք, ըսաւ Ժավէր, և յարգանօք բարևեցէն եռաք մեկնեցաւ։

Ո՛ սրբասուն աղջիկ, շատ տարիներէ՝ ի վեր արդէն հեռացած ես այս աշխարհէս. քոյրերդ կոյսերուն և եղբայրներդ հրեշտակներուն հետ միացար լոյսին մէջ. Թող արքայութեան մէջ ներուի քեզ այս սուտախօսութիւնը։

Ժավէր քոյրին տուած հաստատական պատասխանը այնքան վճռորոշական համարեց որ և ոչ իսկ նշմարեց քիչ մ'առաջ մարած և դեռ սեղանին վրայ ծխող ճրագին տարօրինակութիւնը։

Ժամ մ'եռքը մարդ մը ծառերուն և մշուշներուն մէջէն քայլելով արտօրէն կը հետանար Մ...էն դէպ՝ ի Բարիզ ուղղելով։ Ժան Վալժանն էր այս մարդը։ Իրեն հանդիպող

երկու կամ երեք սայլերդներու վկայութեամբը հաստատուած է թէ անի ծրար մ'ուներ հետը և պլոշա մը հագած էր : Ուսկէ առած էր այս պլոշան : Ոչ ոք գիտէ : Սակայն քանի մ'օր առաջ գործարանի հիւանդատունին մէջ ծեր բանուոր մը մեռած էր՝ առանց բան մը ձգելու բայ 'ի պլոշայէ մը : Գուցէ այս էր ծան վալժանին հագածը :

Վերջին խօսք մ'ալ ընենք Ֆանթինին վրայ : Ամէնքս ալ մայր մ'ունինք , որ է հողը : Ֆանթին այս մայրին յանձնուեցաւ :

Ծողովրդապետը ծան վալժանին ձգած ստակին մեծագոյն մասը կարելի եղածին չափ աշխատեցաւ աղքատներուն պահել կարծելով թէ աւելի ազէկ էր այսպէս ընելը , և գուցէ իրօք աւելի ազէկ էր : Մանաւանդ թէ ինչ տեսակ մարդերու վրայ էր խնդիրը , եղեռնագործի և պոռնիկի մը վրայ էր : Այս պատճառաւ թաղումը պարզ կերպով կատարեց , և Ֆանթինի ամենահարիւրաւոր եղածը միայն տուաւ , այսինքն հասարակաց փոսը :

Հետևաբար Ֆանթին թաղուեցաւ դերեզմանատունին այն անկիւնը որ ձրի է , ամէնուն է , բայց մկու մը չէ և ուր ազբատները կը կորսուին : Թարեթազդաբար Աստուած գիտէ թէ ո՛ւր կը պտնուի հոգին : Ֆանթին մէմուէեան և անոր ասոր ոսկրներուն մէջը պառկեցաւ . մեռելներու ոսկրներուն հետ խառնուեցաւ : Հասարակաց փոսը նետուեցաւ : Գերեզմանն ալ իր անկողնին նմանեցաւ :

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ

ԵՒ ԸՆԱԶԻՆ ՄԱՍԻՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

1. Մեժէր երեք դատողհմներուն (Furies) մին էր , որոնք այսպէս կանուանին մարդերու մէջ տեսլութիւն և կռիւներ յարուցանելնուն համար :

2. Մօն-ը-Ֆէթէթ փոխ տակ տալու նպատակաւ հիմնարկուած մեծ տուն մ'է որ բազմաթիւ ճիւղեր ունի : Ճիշ կեդրոնատունը և թէ ճիւղերը զանկ տեսակ գրաւ կընդունին , գրաւին բուն արժէքին համեմատ ապահովացմով տակ փոխ կու տան իշխանութիւններէն սկսելով մինչև յետին բանուորին :

3. Մէկ սօ տասը փարա կամ 20 սօ մէկ ֆրանգ է :

4. Ըստ առասպելաբանութեան դիհնեի ճահիճներուն և դիւաերուն մին է . իր անունը առած է Խլօրօնէզի առուակէ մը որ հիմա Մավրօնէրօ կըսուի :

Կըսուէր թէ Սմիթսը գետին ջուրը մահաբեր թոյն մ'էր և չէր կրնար միատաղայ կամ բնութեան անօթներու մէջ պահուիլ : Դաւ նուիրական էր : Կը պատմուի թէ Սմիթսը որ Օսեանխաներուն մին էր ֆիթրիթերի մեծ ծառայութեան ըրաւ Տիտանեանց դէմ ըրած պատերազմին մէջ , և տատուածները իր պատուոյը երդում ընելու արտօնութիւնը տասան անգամ , և թէ ով էր իր երդումին հակառակ վարուէր , ինը տարի տատուածութենէ կը զրկուէր :

5. Կօրիօնները ըստ առասպելաբանութեան երեք երեւելի հրեշտհներ են: Փօրսիսի և Սեմօյլ աղջկներէն էին և կանուանէին Մէտուզ , Սթենօ և Իւրիալ : Երեքին մէկ աչք ունէին , և այնքան սոսկալի էր իրենց դէմքը որ քար կը կտրէին որոնք որ անգամ մը կը նայէին անոնց . . . . :

6. Ֆրանսայի մէջ 1789ին ժողովրդային ժողովակ մը կազմուեցաւ : Այս ժողովակը բոլոր Ֆրանսայի մէջ ճիւղեր ունեցաւ : Ազգային ժողովին մէջ լուծուելիք խնդիրները և որոշումները նախ այս ժողովակին մէջ կը յայտնուէին , կորոշուէին : Յաճախակի հասարակաց կարծիքը իրենց գրաւելով մեծ դեր խաղացին Ֆրանսայի մէջ յեղափոխութեան ժամանակ : Յաղօպհնութեանը հին վանքին մէջ կը գումարուէին ժողովակին անդամները և ահա այս պատճառաւ Յակոբեան անուանեցան անդամները :

7. Սրընգահար կին ըսել է : Սիբեական ածխ , սրինգ բառէն եկած է : Հանոյեցուց ժամանակ ածխագործները սրինգ կը նուագէին , նաև բողոքելնուն կերէին :

8. Սիբեսի մէջ Գարմել լեռին վրայ ժամանակաւ կրօնական ուխտ մը հաստատուած է որոյ անդամները նոյն լեռին անունով Գարմ կըսուին : Գարմաքիւն կանուանեն այս ուխտի միաբաններուն կրօնական վիճակը :

ՅԱՆԿ ԵՒԻԹՈՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ.— ՖԱՆԹԻՆ

ԳԻՐՔ ՀՈՐԻՈՐԴ

ՅԱՆԶՆԵԼԸ ԵՐԲԵՄՆ ՄԱՏՆԵԼԻ Է

ԵՐԵՍ

ԳԼՈՒԽ Ա. Մայր մը որ ուրիշ մայրի մ՝ կը հանդիպի....5
» Բ. Երկու կասկածելի պատահարներու առաջին ծրագիրը....17
» Գ. Ընտրյալը....29

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Է Ջ

ԳԼՈՒԽ Ա. Սև ապակիի արհեստին մէջ յառաջադիմութեան մը պատմութ. 25
» Բ. Մատրէն....27
» Գ. Լաֆիլմին քով դրուած գրամները....32
» Դ. Պ. Մատրէն կը սպասուի....36
» Ե. Հարիսընին վայ անուրջ փայլակներ....40
» Զ. Ֆօշլեվան ախտարը....47
» Է. Ֆօշլեվան Բարիզի մէջ պարտիզպան կըլլայ....52
» Ը. Տիկին Վիլմիւրընէն բարոյականի համար երեսուն ֆրանք կը վաստկի....53
» Թ. Տիկին Վիլմիւրընէնին յաջողութիւնը....58
» Ժ. Վիլմիւրընէնին յաջողութեան չարունակութիւնը....61
» ԺԱ. Քրնատոս փրկիչ մեզի....68
» ԺԲ. Պ. Պամոնթապուսյի պարապութիւնը....69
» ԺԳ. Թագական ասոիկանութեան վերաբերող քանի մը խնդիրներու լուծումը....73

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

ԺԱՎԷՐ

ԳԼՈՒԽ Ա. Հանգստութեան սկիզբը....87
» Բ. Թէ ինչպէս Ժան կրնայ Շան ըլլալ....92

ԳԻՐՔ ԵՕԹԵՐՈՐԴ

ԾԱՆՄԱԹԻՒՕՅԻ ԳԱՏԸ

ԵՐԵՍ

ԳԼՈՒԽ Ա. Քայր Սկնրլես....105
» Բ. Սպօֆէր վարպետին կրօնամտութիւնը....109
» Գ. Գառնի մը ու մի փոթորիկ մը....115
» Դ. Քուռի ու մի վշտին ընդունած ձևերը....142
» Ե. Ադելընը....146
» Զ. Քայր Սկնրլես կը փոքռնի....163
» Է. Ճամբորդը համնելով նորէն մեկնելու համար զգուշութեան միջոցներ կառնու....171
» Ը. Շրի մուտք....177
» Թ. Տէյ մը ուր հետ գիտէ համազուգնեը կը կազմուին....182
» Ժ. Թիատրական պատասխանները....191
» ԺԱ. Շանմաթիւնօ հետ գիտէ կը գամնայ....201

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

ԳԻՄԱՀԱՐՈՒԹԻՄ

ԳԼՈՒԽ Ա. Թէ Մատրէն ինչ հայեցքի մէջ կը նայի իր մոգերը....208
» Բ. Գանթին երջանիկ է....211
» Գ. Ժավէր գոհ է....217
» Դ. Իշխանութիւնը իր իրաւանց սեր կը ըլլայ....222
» Ե. Վայելուչ գերեզման....227

Տպագրութիւն Տէտէեան

ԶՄԻՒՌՆԻՒ

ՑԱՆԿ ԳՐՈՑ

Դահեկան

ԱԳԱՀՆ· զուարճալի կատակերգութիւն Մոլիէրի, թարգմանեալ ի Տիգրան Ցարուխեան Տէտէեանէ ..... 5.—

ԱԳՆԷՍ· Խիստ բարոյական վէպ ի Քրիստոֆ Շմիտէ վերմանացւոյ, թարգմանեալ Յովհաննէս Պալասանեանէ .... 7.—

ԱԿԱՄԱՑ ԲԱԺԻՇԿ· Ծիծաղաշարժ կատակերգութիւն Մոլիէրի, թարգմանեալ ի Տ· Ց· Տէտէեանէ ..... 4.—

ԱՂՕԹԱԳԻՐՔ· որուն մէջ կը պարունակուին ամէն օրուան եւ դիշերուան աղօթքները, պատարագի սաներն, խոստովանութենէ առաջ եւ ետեւ, հաղորդութենէ առաջ եւ ետեւ ընելու աղօթքները

Հասարակ կազմ ..... 7.—

կիսակաշի ..... 9.—

ոսկեզօծ ..... 20.—

» թաւշապատ ..... 30.—

» » արծաթազօծեալ եւ ոսկեզօծեալ շրջանակօք ..... 50.—

» » բուն արծաթ ..... 100 է 150.—

ԱՆԳԵԳԱ ԳԱՃԻՒԼԻ, կամ Նախանձոտութեան դաղանիքը, ընտիր փոքրիկ վէպ մը, թարգմանեալ ի Տ· Ց· Տէտէեանէ 1.30

ԱՆՁԷԼՕ· Վիպակ հիւկոյի ընտիր եւ սքանչելի թատերգութենէն մը ..... 5.—

ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆ ՍԻՐՈՑ ՄԵԾԱՍՊԱՍԱՑ· բանաստեղծութիւն տէօ Կալբանական Յովհաննէս եղեւեան պատուիրեալ Խաչերէս ասանաւոր թարգմանուած ..... 2.—

ԱՑԲԵՆԱՐԱՆ· դիւրուսոյց նոր ուղղագիր ի Տ· Ց· Տէտէեանէ 1.50

ԱՐՓԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ· Հանդէս բանասիրական, պատմական, աստուածական, ընտանեկան, վիպական, եւն· աշխատասիրեալ ի Տ· Ց· Տէտէեանէ· Երկուք ու կէս տետրանը ամբողջ կազմուած ..... 25.—

ԲԱՄԲԱՑԻ (Առաքինութիւնք)· բարոյական կատակերգութիւն Քարլօ Կօլտոնի Խոտլացի հռչակաւոր կատակերգակ բանաստեղծին, թարգմանեալ իտալականէ ի պ· Գալուստեան Գ· Գալդազարեան ..... 7.—

ԴԱՂՏՆԻՔ ԲԱՐԻՕՐԻ· Էօժէն Պիւե այս անունն հռչակաւոր և ընդարձակ վէպին թատերգու թիւնը՝ ի հինգ արարուածս և ի մեստան պատկերս· թարգմանեալ՝ ի Գ· Հայկ Ցակոր Տէտէեանէ ..... 10.—

ԳԻՐՔ ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱՃԿԵՐԻՆ ԵՒ ՀԱՑԵՐԻՆ ..... 4.—

ԴԱՏԱՍԷՐՔ· զուարճալի կատակերգութիւն Ց· Պասխի յերիս արարուածս, թարգմանեալ՝ ի Գ· Մեսրոպ Ց· Նուպարեանէ ..... 5.—

ԵՂԻՇԷ· պատմութիւն վարդանանց ըստ Ագաթանգեղոսի օրինակին տպագրեալ փոքրագիր և մանր գրերով· մինչև ցարդ երեան եղած օրինակներէն ընտրելագոյնը և ուղղագոյնը կրնայ համարուիլ ..... 8.—

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ ԵՐԿՈՒՑ ԸՆԿԵՐԱԿՑԱՑ· զանազան ատաղաչափութիւնք՝ ի Գ· Թագաւոր Գարագէօզեանէ և ի Գ· Նշան Պէրպէրեանէ ..... 6.—

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ· դպրոցաց համար ընտիր ընթերցանութեան դասագիրք պատկերազարդ և խոշորագիր, յօրինեալ՝ ի Տ· Ց· Տէտէեանէ· (Բ· տպագրութիւն), հետզհետէ ընդարձակուած և փոփոխուած ..... 8.—

ՓԻՆԴՎԻՒՎ· խիստ բարոյական վէպ մը՝ ի քրիստոսի Ըմիսէ, թարգմանեալ՝ ի Տ· Ց· Տէտէեանէ· թէ՛ փքրը տղոց և թէ չափահասներու համար կարդալու արժանի գիրք մ՚է· անբիծ առաքինութեան, աղնւահոգութեան և բարեպաշտութեան օրինակ մը կրնայ ըլլալ· (Բ· տպագրութիւն)..... 5.—

ԹՇՈՒԱՌՆԵՐ· Վիկթոր Հիւկոյի ընկերային վիպասանութիւն տիեզերահռչակ, թարգմանեալ՝ ի Գ· Գր· Զիլինկիրեանէ, (10 հատոր)·

Բաժանորդագրութեան ընթացքին մէջ... 150.—

Հրատարակուելէ վերջը..... 180.—

ԼԻՕ, կամ Ափեան ծխողի մը սէրը· վիպասանութիւն Հ· տը Լաբրըթէլի, թարգմանեալ՝ ի Գ· Գրիգոր Կ· Տիլսէրեանէ ..... 8.—

ԼԸ ՊԱՐՊԱՒԼԻԷ· կատակերգութիւն Մոլիէրի մէկ արարուածով, թարգմանեալ՝ ի Գ· Տիգրան Գաբագաշեանէ· Վալերիա կատակերգութեան հետևմասեղ կազմուած ..... 4.—

ԼՈՒՔՐԻՑԻԱ ՊՕՐՃԻԱ· ընտիր թատերգութիւն Վիկթոր Հիւկոյի, թարգմանեալ՝ ի Տ· Ց· Տէտէեանէ ..... 5.—

ԾԱՂԻԿ· հանդէս բանասիրական, ազգային, գրական, վիպական, հնոց Տասը շրջան, երեք հատոր ..... 300.—

ՊԻԼԻՎԷՐԻ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ· Ցոլիաման Սուխին, Ընդվզեալ մեծահամբաւ մանուկներէն երեսկայական և խիստ զուարճալի ճամբորդութիւններ չորս մասի բաժնուած և բազմաթիւ

պատկերներով զարդարուած· Այս ճամբորդութիւններով հեղինակը աշխարհիս ամէն վիճակի մարդոց թիւնները կը պախարակէ, մարդկային ազգին արշաւի պլատեռիէն ու վատթարանալը կը ցուցնէ և առաքինութիւնները կը գովէ· Թարգմանեալ՝ ի Գ· Սարգիս Տ· Գասպարեանէ ..... 18.—

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՅՈՒՑԱԿԸ· երգախառն զուարճալի մէկ արարուածով յօրինեալ՝ ի Գ· Ցովհ· Աճէմեանէ ..... 2.—

ՀԱԶԱՐ ԵՒ ՄԻԿ ԳԻՇԵՐՆԵՐ· զուարճալի Արաբացի պատմութիւնք առասպելախառն, թարգմանեալ՝ ի Տ· Ց· Տէտէեանէ ..... 25.—

ՀԱՍԿԱՖԱՂ ԸՂՃԻԿԸ· փքրը տղայոց և աղջկանց համար թատերական անմեղ խաղ մը, թարգմանեալ՝ ի Գ· Հ· Ց· Տէտէեանէ ..... 1.—

ՀԵԳԱՐԱՆ· Սկզբնապ Գաւթի առաջին մասը, խոշորագիր և պատկերազարդ ..... 2.—

ՀԵՐՈՒԹՄԱՆ ԿԱՐԾԻՆԱՑ· Այս տետրակը Ս· Պետրոսի Հռոմ երթալը Ս· գրոց խօսքերով կը հերքէ (Բ· տպ.) ... 1.—

ՀՌՈՄԱՑ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ· Հռոմոյ մէջ քրիստոսի ծնողեան ուսումնասիրութեանը, ուսագ շարքատան օրերուն, և ուրիշ մէկ քանի պատմութեանց և արարողութեանց նկարագիրը· Ծաղկաքաղ հաւաքեալ· ի Տ· Հ· Թ· Ս ..... 1.—

ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՑ· աշխարհիկ լեզուաւ քրիստոնէական վարդապետութեան դասագիրք գպրոցաց համար ..... 4.—

ՄՈՒՍԱՑՔ Ս· ՄԵՍՐՈՊԵԱՆ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ· ըստ միաձեռակ Մեսրոպեան վարժարանի աշակերտաց արդիւնքն եղող տաղաչափութիւնք և ճառք

Ա· տետրակ ..... 4.—

Բ· » ..... 5.—

ՄՈՒԽԹԱՒՍԱՐ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ Վ. ԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ· տառկերէն լեզուաւ քրիստոնէական վարդապետութիւն յօրինեալ՝ ի Գ· Ցովհաննէս Քիւրքճեանօղլէ ..... 3.—

ՄՕՆԹԷ-ՔՐԻՍՏՈՑ ԿՈՄՍ· ընտիր վիպասանութիւն Ադէքսանդր Տիւմա զաղղիացի բազմարդիւն և տաղանդաւոր հեղինակին, թարգմանեալ՝ ի Տ· Ց· Տէտէեանէ· (6 հատոր) ..... 90.—

ՆԱՄԻՏՏԻՆ ԽՕՃԱՑԻՔՈՒԱՐՃԱՐԱՆՈՒԹԻՒՆՔ թարգմանեալ՝ ի Հ· Ց· Տէտէեանէ ..... 2.—

ՆԱՐԵԿ· խոշորագիր և պատկերազարդ ..... 20.—

—Նոյն՝ ոսկեզօծ ..... 30.—

ՈՒՄՊՔ ԳՐԱՍԻՐՈՒԹԵԱՆ· ընտիր և զբօսալի հաւաքածոյ զանազան հանելուկներու, առեղծուածներու, բանախաղերու, բառախաղերու,

թանակալնեբու , բառակալնեբու, Հոմանու-
նախաղեբու, Հոմանունակալնեբու, զուարճալի
տրամախօսութիւնեբու, և տաղաչափութիւն-
նեբու· բաց ասոնցմէ կայ նաև Հերետիկոսաբն-
նութեան պատմութիւնը, յօբինեալ ՅՆ· Կ·
Ցէտէեանէ ..... 8.—

ԹԱՓԱՑԷԼ· սիբայեն վիպասանութիւն 'ի Լամարթինէ,
Թարգմանեալ 'ի Գ· Գր· Չիլինկիբեանէ ..... 15.—

ՍԱՐՓԸ ՄԻՄՏՈՒՀ ՓԻՆՆԸՏԻՓԱԹԻՐ· ոտմարա-
կալութիւն գործնական Տաճկերէն լեզուաւ և
Հայերէն տառերով, յօբինեալ 'ի Պ· Գր·
Մկրտիչեանէ Ա· Հատոր ..... 20.—
Բ· » ..... 30.—
Գ· » ..... 20.—

ՅՕՆ ԱՊԻՆՍԻԲԱԺԸՆ ՍԻՐ ԿԻՒԶԻՇԹԻ ՕԼԱՆ
ՎԱՒԳՈՒԱԹ· Շամթոպրիանի Հայրենասիրա-
կան վէպ, Թարգմանեալ 'ի Պ· Գր·Չիլինկիբեանէ ..... 5.—

ՎԱԼԵՐԻԱՆ· կառավերգութիւն Իօժէն Ալբիպի, Թարգմա-
նեալ 'ի Պ· Տիգրան Գալարաչեանէ, լը Պար-
պուլիէի Հետ միասեղ կազմուած ..... 4.—

ՎԵՐԹԻԲ· Գերմանացի Հռչակաւոր Կէօթէի նամականիի
ձեւով սիբայեն վէպ մը, Թարգմանեալ 'ի Պ·
Մատթէոս Մամուրեանէ ..... 10.—

ՎԻԿԹՕՐԻԱ· Ընդհանուր Թագուհուն Ընդհանուր Հայ Թա-
գաւորներէ սերելը, Ընդհանրէն և Հայերէն,
'ի Պ· Սարգիս Միրզայեանէ ..... 14.—

ՓԱՑՏԵԱՑ ԽԱՉ· բարոյական վէպ Թարգմանեալ 'ի
Յունարէնէ 'ի Պ· Մաղաքիա Ցարութիւնեանէ 2,50

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻԻՆ ՀԱՑԵՐԻՆ ԼԵԶՈՒԻ· 'ի Տ·
Ց· Ցէտէեանէ (Ա· Հատ) ..... 7.—

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ· պատկերազարդ, 'ի Տ·
Ց· Ցէտէեանէ ..... 15.—

ՕՐԱՑՈՑ· պատկերազարդ 1,50

Վենետիկ, 1 Յուլիս 1863

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ՎԻԿԹՕՐ ՀՒԿՈՑԻ

ԹՂՈՒԱԹՆԵՐԸ

ԼԷ ՄԻԶԵՐԱՊԼԸ

ՏԱՍԸ ՀԱՏՈՐԻ ԲԱԺՆՈՒԱԾ

Բաժանորդագրութիւն հրատարակութեան ընթացքին՝ մէջ հանրիկ 150 դրչ.
Իւրաքանչիւր հատորը.....18 դրչ.

Բաժանորդագրութեան տեղերն են միայն Իզմիր՝ Ցէտէեան Տպագրատունը և վաճառատունը և Պ. Գր. Չիլինկիրեանին գրատունը. Պոլիս՝ Ցէտէեանց վաճառատունը, Գումրու խան թիւ 11. և Մանչեսթրի օրագրին գրատունը:

ԿԱՄՍ

ՄՕՆԹԷ-ԿՐԻՍԹՈՑ

ՎԵՑ ՀԱՏՈՐԻ ԲԱԺՆՈՒԱԾ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՏԻՓՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԻԵԱՆԻ

Կը ծախուի բոլոր Հայ գրավաճառաց քով

90 դահեկան:

2154

20133